ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ-ՇԻՐԱԿԻ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՎ

ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Տ. ՄԻՔԱՅԵԼ ԵՊՍ. ԱՋԱՊԱՀՅԱՆԻ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԱՆԻ-ՇԻՐԱԿԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

(հոդվածների ժողովածու)

Երևան
Հեղինակային հրատարակություն
2010

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

Գիրքը հրատարակության է երաշխավորել
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհուրդը

Մ151 Անի-Շիրակի պատմության էջեր: Հոդվածների ժողովածու
Կարեն Մաթեւոսյան. - Եր.:
Հեղինակային հրատարակություն, 2010.- 294 էջ:

Karen Matevosyan

PAGES FROM THE HISTORY OF ANI-SHIRAK
(Collection of Articles)

Ժողովածուն ընդգրկում է Անիի պատմությանը եւ Անիի Բագրատունյաց թագավորության կազմում եղած մի շարք վանքերի (Հոռոմոս, Բագնայր, Հառիճ, Կեչառիս) եւ բնակավայրերի (Մաղասբերդ, Թալին, Արուճ) պատմության տարբեր հարցերին վերաբերող, ինչպես նաեւ մի քանի պատմական գործիչների նվիրված հոդվածներ եւ նյութեր:

Նախատեսված է պատմաբանների եւ Հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941 (479. 25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
© Կարեն Մաթեւոսյան, 2010 թ.

ISBN 978-9939-53-819-8

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 2010:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Միջնադարյան Հայաստանի պատմության մեջ Անին բացառիկ դեր է կատարել ոչ միայն որպես երկրի քաղաքական ու հոգեւոր կենտրոն՝ թագավորանիստ եւ կաթողիկոսանիստ, այլեւ քաղաքային կյանքի, տնտեսության ու մշակույթի զարգացման առաջնակարգ վայր: Պատահական չէ, որ այս քաղաքի պատմության եւ ընդհանուր մշակութային ժառանգության ուսումնասիրությունը հայագիտության մեջ առանձին անունով անիագիտություն է կոչվում:

2010-ին լրացավ Անիի մերձակա վանքերից մեկի՝ Բագնայրի հիմնադրման 1000-ամյակը: Հոռոմոսի, Բագնայրի, Արջո Առիճի վանքերը Անիի մերձակա հոգեւոր կենտրոններն էին, մի փոքր ավելի հեռու՝ հարավ-արեւմուտքում գտնվող Խծկոնքը, Տեկորը, Մրենը, հյուսիս-արեւելքում գտնվող Մարմաշենն ու Հառիճը եւ մի քանի այլ վանքեր ու բնակավայրեր անմիջականորեն ընդգրկված էին անիական մշակութային միջավայրում ինչպես Բագրատունյաց ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում՝ ընդհուպ մինչեւ 14-րդ դարի կեսերը: Հատկանշական է, օրինակ, որ Անի քաղաքի փողոցների եւ այլ քաղաքամասերի անուններ ավելի շատ պահպանվել են Հոռոմոսի եւ Բագնայրի վիմագրերում, քան բուն քաղաքի արձանագրություններում: Իսկ Անիի մշակութային, գրական կապերը շատ ավելի հեռուներն են գնում: Հետեւաբար անիագիտական ուսումնասիրությունները թե՛ տարածական եւ թե՛ խորքային առումով ավելի լայն ընդգրկում պետք է ունենան:

1997-ին մենք հրատարակել ենք «Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը» աշխատությունը, որի առաջին մասում անդրադարձել ենք քաղաքի հոգեւոր-եկեղեցական կյանքին, Անիի կաթողիկոսական եւ եպիսկոպոսական աթոռներին, քաղաքի եկեղեցիներին ու հոգեւորականությանը, այլադավան համայնքներին, իսկ երկրորդ մասում՝ անիական ձեռագրական ժա–ռանգությանը, գրչատներին, գրիչներին ու ծաղկողներին:

Նախընթաց տասնամյակում, զբաղվել ենք 12-րդ դարի հեղինակ Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերի ուսումնասիրությամբ[1], որի ընթացքում երեւան եկան Անիի պատմությանն առնչվող զանազան նոր նյութեր: Նույն տարիներին նաեւ այլ ուսումնասիրողների ջանքերով ի հայտ են եկել պատմական նոր տվյալներ, որոնք անիագիտության տարբեր հարցերում ճշտումներ ու լրացումներ կատարելու հնարավորություն են տալիս: Այս ամենն արտացոլված է սույն ժողովածուի մեջ ընդգրկված հոդվածներում:

Ժողովածուն պարունակում է Անիի պատմությանը, քաղաքի հետ կապված մի քանի վանքերի (Հոռոմոս, Բագնայր, Հառիճ) եւ բնակավայրերի (Մաղասբերդ, Թալին, Արուճ) պատմության տարբեր հարցերին վերաբերող, ինչպես նաեւ որոշ ազնվականական տոհմերի եւ առանձին գործիչների նվիրված հոդվածներ ու նյութեր, որոնց հիմնական մասը վերջին տարիներին հրատարակել ենք գիտական պարբերականներում[2] (այստեղ ներկայացվում են մասամբ լրամշակված): Վերջում զետեղել ենք Աբրահամ Կրետացու «Պատմութիւն Անի քաղաքին» փոքրածավալ երկի մեր

---

[1] Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009:

[2] Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին (գրչության կենտրոնը եւ հարակից հարցեր), «Էջմիածին», 1998, Ա, էջ 115-124, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91 (ներկայացված է Գրիգոր Մագիստրոսի արձանագրության հատվածը), Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, «Էջմիածին», 2005, Է-Ը, էջ 59-72, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երեւան, 2008, էջ 67-93, Արուճի եւ Թալինի պատմության էջեր, «Էջմիածին», 2009, Ա, էջ 50-62, Անի քաղաքը եւ Ծառաքար-Մաղասբերդը 11-14-րդ դդ., «Հուշարձան» տարեգիրք, Դ-Ե, Երեւան, 2008, էջ 236-247, Անին մայրաքաղաք եւ կաթողիկոսանիստ, «Պատմա-բանասիրական հանդես», 2008, N 3, էջ 3-30, Հոռոմոսի վանահայրերի գավազանագիրքը, «Էջմիածին», 2009, Է, էջ 60-64, Բագնայրի վանքի հազարամյակը, «Էջմիածին», 2010, Բ, էջ 53-76:

կատարած աշխարհաբար փոխադրությունը, որը գրաբարով տպագրվել է 1870 թ.:

Ժողովածուն նվիրվում է Անիի պատմական եպիսկոպոսական աթոռի հաջորդ՝ Շիրակի թեմի հաստատման 90-ամյակին եւ Բագնայրի վանքի 1000-ամյակին, որի պատմությունը ներկայացված է ընդարձակ հոդվածով: Բագնայրի վանքի հին եւ նոր լուսանկարների տրամադրման համար շնորհակալություն ենք հայտնում Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպությանը (RAA): Խորին շնորհակալություն ենք հայտնում Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանին գրքի տպագրության համար:

ԱՆԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ



ԱՆԻՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՆԻՍՏ

Պատմիչ Վարդան Արեւելցին գրելով Անիի Բագրատունյաց թագավորության անկման մասին, նշում է, որ բյուզանդացիները վերացրեցին Անիի երկու պսակները, կաթողիկոսական եւ թագավորական գահերը. «Յոյնք... **վերացուցին ի նմանէ (**Անիից – Կ. Մ.) **զերկուսին պսակն՝ զգահ հայրապետութեան եւ զթագաւորութեան**...»[1]: Բանն այն է, որ Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը նաեւ կաթողիկոսանիստ լինելով, շատ ավելի մեծ՝ համահայկական նշանակություն ուներ, եւ բյուզանդացիների կատարածը Անիի հենց այդ՝ Հայոց աշխարհիկ եւ կրոնական կենտրոնի դերի վերացումն էր:

Անին հետազոտվել է որպես հնավայր, հայկական ճարտարապետության բացառիկ կենտրոն, բազմակողմանիորեն ուսումնասիրվել են նաեւ քաղաքի հարուստ պատմությունը, մշակութային ընդհանուր ժառանգությունը, ստեղծվել է անհագիտական պատկառելի գրականություն: Միեւնույն ժամանակ Անիի պատմության տարբեր հարցերի վերաբերյալ վերջին տարիներին երեւան են եկել պատմական որոշ նոր տվյալներ, կատարվել են տարբեր հարցերի վերաբերող նոր թվագրումներ: Դրանց մի մասը նկատի ունենալով՝ ստորեւ կներկայացնենք Անին որպես մայրաքաղաք եւ կաթողիկոսական աթոռանիստ, հատկապես անդրադառնալով վերջին իրողությանը:

Նախ տեսնենք, թե ինչպես Անին դարձավ մայրաքաղաք եւ կաթողիկոսանիստ: 885 թ. Բագրատունիների գլխավորությամբ վերականգնված Հայոց թագավորության առաջին չորս գահակալները հաջորդաբար գահանիստ դարձրեցին Բագարանը, Երազգավորսը (Շիրակավան) եւ Կարսը: Այս կացությունը, որը գալիս էր դեռեւս

---

[1] Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երեւան, 2001, էջ 104 (այսուհետեւ՝ Վարդան Արեւելցի): Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.:

Հայոց իշխանների տիրապետության շրջանից (7-րդ դ.), երբ ամեն մի ընտրված իշխանի նստավայր, նրա իշխանության օրոք դառնում էր երկրի վարչական կենտրոն, արմատապես փոխվեց, երբ Աբաս Բագրատունու (929-953) որդին՝ Աշոտ Գ Ողորմածը (953-977) Կարսից փոխադրվեց Անի եւ այստեղ 961 թ. Անանիա Ա Մոկացի (946-968) կաթողիկոսի ձեռքով թագադրվեց՝ քաղաքը հռչակելով երկրի մշտական մայրաքաղաք: Աշոտը, որ մտահոգված էր անփոփոխ մայրաքաղաք ունենալու խնդրով, մինչ այդ փորձել էր գրավել Հայոց նախկին մայրաքաղաք Դվինը, բայց ռազմական անհաջողություն կրելով՝ նոր որոշում էր կայացրել՝ ընտրելով թագավորության կենտրոնական մասում գտնվող Անին:

Այս դեպքերի մասին առավել հանգամանորեն պատմող Մատթեոս Ուռհայեցին Աշոտ Ողորմածին կոչում է Աշոտ-Գագիկ երկանունով կամ պարզապես Գագիկ[2]: Ն. Ադոնցը Մատթեոս Ուռհայեցու հայտնածը համարել է «խառնակ» տեղեկություն[3]: Սակայն Մատենադարանի երկու ձեռագրերում, որոնք պարունակում են Սամվել Անեցու Ժամանակագրության լրացումները, պահպանվել է հետեւյալ տեղեկությունը՝ «Հայոց ՆԺԱ (962). **Գագիկ թագաւոր օծաւ Հայոց, որ է նոյն Աշոտ որդի Աբասայ**»[4]: Սա հաստատում է Ուռհայեցու հաղորդածն այն մասին, որ Աշոտ Ողորմածը «Աշոտ-Գագիկ» երկանունն է ունեցել: Վերջինս միայն Գագիկ անունով է հիշվում նաեւ մանր ժամանակագրություններից մեկում[5]:

---

[2] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), (գրաբար տեքստը ըստ Ժամանակագրության Վաղարշապատի 1898 թ. հրատարակության), Երեւան, 1991, էջ 8-9, 484 (այսուհետեւ՝ Մատթեոս Ուռհայեցի):

[3] Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա, Երեւան, 2006, էջ 521:

[4] Մատենադարան, ձեռ. թիվ 7261, էջ 52բ, ձեռ. թիվ 10202, էջ 56 բ:

[5] «Գագիկ օծաւ թագաւոր 411 (962) ի թուին Հայոց» (Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 337): Այս տեղեկությունը ծանոթագրելով Վ. Հակոբյանը կարծել է, թե ժամանակագիրը շփոթմամբ նշել է ավելի ուշ՝ 989-ից թագավորած Գագիկ Ա-ին (նույն տեղում, էջ 347):

Աշոտ Ողորմածի ժամանակ Անին դեռեւս քաղաքի տեսք չուներ, եւ պատահական չէ, որ Մխիթար Անեցին նրա մասին գրում է. «Աշոտ Ողորմածն, որդի Աբասայ, թագաւորէ յԱնի՝ ամս ԻԵ (25) եւ շինէ **զՓոքր քաղաքն**»[6]: Իսկ Վարդան Արեւելցին գրում է, որ Աշոտը պարիսպ կառուցեց եւ պարսպաբուրգերի մեջ եկեղեցիներ հիմնեց՝ «...զամենայն բրգունս եկեղեցիս յօրինեաց»[7], որոնց գոյությունը հաստատվել է պեղումների ժամանակ:

Հայտնի է, որ Աշոտ Ողորմածին նախորդած եւ հաջորդած Բագրատունի թագավորներն իրենց նստավայրերում եկեղեցիներ են կառուցել (Սմբատ Ա-ը՝ Շիրակավանում, Աբասը՝ Կարսում, Աշոտ Ողորմածի որդիներ Սմբատ Բ-ը եւ Գագիկ Ա-ը՝ Անիում), մինչդեռ նա այդպես չի վարվել: Այս հարցի պատասխանը տալիս է Մատենադարանում պահվող՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի Պատմության հնագույն ընդօրինակությունը պարունակող ձեռագիրը (թիվ 2865): Այն հատվածում, ուր Ասողիկը պատմում է, որ Աբաս Բագրատունի թագավորը կառուցել է Կարսի եկեղեցին, ձեռագրի գրիչ, Անիի շրջանում ապրած Հոհանը լուսանցքում ավելացրել է հետեւյալը. «**Սա շինէ եւ զՓոքր Կաթուղիկէն Անւոյ**»[8]: Անիի պատմության համար այս վկայությունը չափազանց կարեւոր է, քանի որ այդ եկեղեցին՝ Փոքր Կաթողիկեն, փաստորեն, կառուցվել է մինչեւ Անիի մայրաքաղաք հռչակվելը: Երբ Աշոտ Ողորմածն Անիում թագադրվեց

---

[6] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երեւան, 1983, էջ 67:

[7] Վարդան Արեւելցի, էջ 95:

[8] Մատենադարան, ձեռ. թիվ 2865, էջ 196բ: Այս տեղեկությունը եղել է նաեւ Հոհանի ձեռագրից ընդօրինակված մատյաններում եւ զետեղվել Ասողիկի պատմության հրատարակության տողատակում (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 172, այսուհետեւ՝ Ասողիկ): Հոհան գրիչը Շիրակի եւ Անիի վերաբերյալ կարճ հավելումներ է կատարել ինչպես Ասողիկի, այնպես էլ նույն ձեռագրում ընդգրկված Արիստակես Լաստիվերցու պատմության մեջ (Կ. Մաթեւոսյան, Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն եւ կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Ե, էջ 102-112):

(մի արարողություն, որը կատարվում էր կաթողիկոսի ձեռքով՝ եկեղեցում), այս նորահռչակ նստավայրում եկեղեցի չկառուցեց, քանի որ իր հոր հիմնած եկեղեցին՝ Փոքր Կաթողիկեն, արդեն կանգուն էր, եւ ինքն էլ այդտեղ էր թաղադրվել[9]: Դա հավանաբար Աշոտի պարիսպներից ներս գտնվող այն հին եկեղեցին է, որն ուսումնասիրողները կոչում են «Աշոտի քաղաքի եկեղեցի» կամ պարզապես՝ «Աշոտի եկեղեցի»[10]: Այն, որ հենց այս եկեղեցին է Անիի Փոքր Կաթողիկեն, ըստ Ա. Ղուլյանի, «հաստատվում է նաեւ ճարտարապետական դիտարկմամբ»[11]:

Աշոտ Ողորմածի ժամանակ Աղթամարից Բագրատունիների տիրույթներ փոխադրված կաթողիկոս Անանիա Մոկացին հանգրվանել էր Շիրակի Արգինա ավանում: Ինչպես երեւում է, թագավորի նպատակը Անին ոչ միայն թագավորանիստ, այլեւ կաթողիկոսանիստ դարձնելն էր, եւ այդ ուղղությամբ նա որոշ քայլեր ձեռնարկեց: Անանիա Մոկացու մահից հետո Շիրակավանում գումարված եկեղեցական ժողովում նոր կաթողիկոս ընտրվեց Վահան Ա Սյունեցին (968-969): Սակայն վերջինիս աթոռակալությունը շատ կարճ տեւեց, քանի որ նա քաղկեդոնականների՝ մասնավորապես վրացիների հետ մերձեցման փորձեր կատարեց, ինչը հայ ավանդապահ հոգեւորականությունը չհանդուրժեց: Վահանի գործերը քննելու եւ նրան պարսավելու համար **969 թ. եկեղեցական ժողով գումարվեց նորահաստատ Անի մայրաքաղաքում:** Այս մասին հանգամանորեն պատմում է դեպքերին ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, ըստ որի ժողովում Վահանը աթոռանկ է հայտա-

---

[9] Կ. Մաթեւոսյան, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 155-158: Հատկանշական է, որ Աշոտ Ողորմածի որդու՝ Սմբատ Բ-ի Անիում կառուցած Մայր տաճարը աղբյուրներում սովորաբար կոչվում է Մեծ Կաթողիկե:

[10] G. Uluhogian, Les églises d’Ani d’opres le temoignage des inscriptions, “Revue des études Arméniennes”, Tome XXIII, Paris 1992, p. 406, 413.

[11] Ա. Ղուլյան, Անիի Մայր տաճարի հազարամյա խորհուրդը, «Հուշարձան» տարեգիրք Գ, Երեւան, 2005, էջ 36:

րարվում, որից հետո հեռանում է Վասպուրական: Նույն ժողովը կաթողիկոս է ընտրում Սեւանի վանահայր Ստեփանոսին՝ «...ժողովն, կամակցութեամբ Աշոտոյ Շահնշահի կաթողիկոս հաստատեաց Հայոց զՍտեփանոս վանական Սեւանայ»[12]:

Փաստորեն, **Ստեփանոս Գ Սեւանցին** (969-972), **կաթողիկոս է ընտրվել ու ձեռնադրվել Անիում**: Բայց նրա կարճատեւ աթոռակալությունը մեծ մասամբ անցել է Վասպուրականի Աբուսահլ թագավորի հովանավորությունը ստացած Վահան Սյունեցու դեմ մղված պայքարում: Վերջինս մտադիր չէր հրաժարվել կաթողիկոսությունից, որի պատճառով, փաստորեն, իշխում էին երկու կաթողիկոս, ինչպես Ստեփանոս Օրբելյանն է գրում՝ «**Ստեփանոս՝ յԱնի եւ Վահան՝ ի Վասպուրական**»[13]: Այս իրավիճակը Ստեփանոսին ստիպում է գումարել **Անիի երկրորդ եկեղեցական ժողովը:** Մաղաքիա Օրմանյանը գրում է. «Ստեփանոս փութաց երկրորդ ժողով մը գումարել կնճռոտ խնդիրը լուծելու համար, որ անշուշտ Անիի մէջ հաւաքուեցաւ...: Ժողովին... իբր հետեւանք կը ցուցուի բանակցութեան մը պէտքը, զայն անձամբ կատարել յանձն կառնու նոյնիսկ Ստեփանոս կաթողիկոս»[14]:

Անիի երկրորդ եկեղեցական ժողովն, ըստ Մ. Օրմանյանի, տեղի է ունեցել 971 թ., որից հետո Ստեփանոսը մեկնել է Վասպուրական: Հեղինակի կարծիքով, այդ ընթացքում կաթողիկոսն աթոռակալել է Անիում:

Այսպիսով, կարելի է ասել, որ Աշոտ Ողորմածը կարողացավ մի կարճ ժամանակաշրջանում (969-971 թթ.) հասնել իր հեռագնա նպատակին՝ երկրի քաղաքական եւ հոգեւոր իշխանությունը կենտրոնացնել Անիում, իրողություն, որը պատմագրության մեջ գրեթե անտեսվել է:

---

[12] Ասողիկ, էջ 181:

[13] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 290:

[14] Մ. Օրմանյան, Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, հ. Ա, էջ 1307:

Սակայն հետագա դեպքերը իրավիճակի որոշ փոփոխության բերեցին: Արծրունի թագավորը եւ Վահան կաթողիկոսը, առանց իսկ ունկնդրելու բանակցության մեկնած Ստեփանոսին ու նրա երկու ուղեկից վարդապետներին, կալանեցին նրանց եւ արգելափակեցին Աղթամարում: Քիչ անց Ստեփանոսի երկու ընկերակիցներին ազատ արձակեցին, իսկ նրան փոխադրեցին այլ վայր, ուր եւ մեկ տարի անց մահացավ: Նույն 972 թ. մահացավ նաեւ Վահան Սյունեցին:

Դրանից հետո կաթողիկոս ձեռնադրվեց Անանիա Մոկացու քրոջ որդին՝ Արշարունիքի եպիսկոպոս Խաչիկ Ա-ը (972-990), որը մինչ այդ էլ նշանակալից դեր ուներ Անիի թագավորության մեջ: Ասողիկի բնորոշմամբ նա «**միապետեալ խաղաղեցոյց զաշխարհ Հայոց**» եւ, որպես խոհեմ գործիչ, մեղմեց Բագրատունիների ու Արծրունիների միջեւ առկա հակամարտությունը: Թվում է, որ հենց այս նպատակով նա չմնաց Անիում, այլ, Մոկացու օրինակով, հաստատվեց Արգինայում: Ինչպես Ասողիկն է գրում. «Կաթողիկոս Հայոց տէր Խաչիկ... **նորոգեաց զտուն կաթողիկոսարանին ի Շիրակ գաւառի ի գիւղաքաղաքին Արգինայ...** Եւ ի նմին գեօղ շինեաց զսուրբ Կաթողիկէ եկեղեցին...»[15]: Խաչիկ Ա-ն Արգինան նորոգելու եւ այստեղ աթոռակալելու համար նվազագույնը երկու կարեւոր պատճառ ուներ. առաջինը վասպուրականցիներին հանդարտեցնելու ցանկությունն էր, երկրորդը՝ կաթողիկոսությունը քաղաքական իշխանության ազդեցությունից հեռու, ուստի հնարավորինս ինքնուրույն պահելու ձգտումը:

Աշոտ Ողորմածին հաջորդեց նրա ավագ որդին՝ Սմբատ Բ-ը (977-989), որը նախ կառուցեց Անիի մեծ պարիսպը, ապա քաղաքի կենտրոնական մասում սկսեց մեծ Կաթողիկե եկեղեցու կամ Մայր տաճարի կառուցումը Տրդատ ճարտարապետի ձեռամբ, որը Արգինայի Կաթողիկե եկեղեցու կառուցողն էր: Սա ակներեւորեն արվում

[15] Ասողիկ, էջ 184-185:

էր կաթողիկոսարանը Անի փոխադրելու նպատակով: Սմբատը, սակայն, կյանքից անժամանակ հեռանալով, չտեսավ իր ձեռնարկի ավարտը: Մահացած արքային փոխարինեց նրա եղբայր Գագիկ Ա Բագրատունին (989-1017), որի կինը՝ Կատրամիդե թագուհին ստանձնեց Կաթողիկեի շինարարության հովանավորությունը:

Խաչիկ Արշարունու մահից հետո (990 թ.)[16] հաջորդ կաթողիկոսի ընտրությունը, անհայտ պատճառով, որոշ ժամանակով հետաձգվեց (ըստ Ասողիկի եւ Սամվել Անեցու՝ 2 տարի)[17], մինչեւ որ Գագիկ Ա թագավորը կաթողիկոսության կոչեց իր վաղեմի ծանոթ եւ հովանավորյալ հոգեւորական, Սեւանի վանքի առաջնորդ Սարգսին: Դեպքերի ժամանակակից պատմիչ Ստեփանոս Տարոնեցին գրում է. «Ի ՆԽԱ (992) թուականին՝ Գագիկ արքայ Հայոց կացոյց կաթողիկոս Հայոց զՏէր Սարգիս», նաեւ ավելացնում, որ դա տեղի է ունեցել «առանց կաշառոյ եւ այլ երկնաւոր շողոքորթութեանց»[18]: Հայտնի չէ, թե ինչու է նոր կաթողիկոսի ընտրությունը հետաձգվել, սակայն Սարգիս Ա Սեւանցին (992-1019) արդեն իր աթոռակալության սկզբում Արգինայից փոխադրվեց Անի՝ մայրաքաղաքը դարձնելով նաեւ կաթողիկոսական աթոռանիստ[19]: Դրանով իրագործվեց դեռեւս Աշոտ Ողորմածի ժամանակ նախանշված ծրագիրը, եւ **Հայաստանի քրիստոնեական առաջին մայրաքաղաքներ Վաղարշապատի ու Դվինի օրինակով Անին եւս դարձավ կաթողիկոսանիստ**:

---

[16] Ասողիկ, էջ 258:

[17] Ասողիկ, էջ 258, Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 103 (այսուհետեւ՝ Անեցի):

[18] Ասողիկ. էջ 258- 259:

[19] «Սարգիս կրցած է ընտրութենէ եւ օծումէն ետքը այլեւս Արգինա չդառնալ եւ մնալ Անի, Գագիկի մօտ, որ կանուխէն ալ մասնաւոր սէր ունեցած էր Սարգսի վրայ եւ անոր կաթողիկոսութիւնն ալ յաջողցուցած էր» (Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1358): Տե՛ս նաեւ Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 26-27, Ա. Ղուլյան, նշվ. աշխ., էջ 29:

Անիի աշխարհիկ եւ հոգեւոր մայրաքաղաք լինելու իրողությունն ուշագրավ արտացոլում է գտել քաղաքի զինանշանում: Անիի ավագ դուռը զարդարող այս զինանշանին անդրադարձողները հիմնականում ուշադրություն են դարձրել հովազի (կամ առյուծի) քանդակին, մինչդեռ զինանշանի ամբողջական կառուցվածքը ներկայացնում է շեղադիր քարերից կազմված վերասլաց խաչ, որի ներքեւում երեք մուգ քարով պատկերված հիմքն է (ստիլոբատ), վրան՝ հովազապատկերը ներառող շրջանակը, իսկ դրանից վեր՝ շեղադիր քարերով բուն հավասարաթեւ խաչը: Ենթադրելի է, որ հովազը եւ խաչը համապատասխանաբար խորհրդանշում են հայոց աշխարհիկ եւ հոգեւոր իշխանությունները, որոնք կենտրոնացած էին Անիում:

ՍԱՐԳԻՍ Ա ՍԵՒԱՆՑՈՒ ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԻՈՒՄ

Գագիկ Ա-ի տիրապետությունը համարվում է Անիի Բագրատունյաց թագավորության առավելագույն վերելքի շրջանը: Նրա ժամանակ երկրի զորության եւ միասնության ապահովման գործում կարեւորագույն դեր ուներ նաեւ Հայոց կաթողիկոսությունը: Սար-

գիս Սեւանցին թեեւ ըստ Ասողիկի «անապատասէր կենաց» սիրահար էր, բայց 27-ամյա աթոռակալության ընթացքում կարողացավ հմտորեն կազմակերպել Հայոց եկեղեցական կյանքը, կաթողիկոսարանի բազմաճյուղ գործունեությունը:

Մի շարք վկայություններ կան այն մասին, որ թագավորն ու կաթողիկոսը հանդես էին գալիս միասնաբար: Հայտնի է, որ 1001թ. Տաշիրի թագավոր Դավիթ Անհողինի անհնազանդության պատճառով Գագիկ Ա-ը պատժիչ արշավանք է կազմակերպել նրա դեմ: Առճակատումը հարթվել է «միջնորդութեամբ հայրապետին՝ Տեառն Սարգսի»[20], եւ Դավիթը հնազանդության է եկել: 1006 թ. Գագիկի կնոջ՝ Կատրամիդե թագուհու հոր՝ Սյունիքի Վասակ թագավորի խնդրանքով եւ հենց Գագիկ թագավորի միջնորդությամբ Սարգիս Սեւանցին Անիում Սյունյաց եպիսկոպոս է ձեռնադրում Հովհաննեսին: Միաժամանակ Սյունիքի աթոռին են վերադարձվում Անանիա Մոկացու ժամանակ՝ Սյունյաց Հակոբ եպիսկոպոսի խռովության պատճառով նրանից խլված մետրոպոլիտության պատիվն ու արտոնությունները, ինչպես նաեւ Անիի կաթողիկոսարանի «սրբարանի սենեակում» պահվող սրբությունները՝ «Սիւնեաց սեփական խաչը, ոսկերիզ խաչվառը, թանկարժէք գաւազանը եւ պատուական գահաւորակը»[21]: Կաթողիկոսի սույն ձեռնարկն ամրացնում է հայ եկեղեցու ներքին միասնությունը, միաժամանակ Սյունիքի թագավորությունն ավելի սերտորեն կապում Անիի թագավորության հետ:

---

[20] Ասողիկ. էջ 280:

[21] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն…, էջ 304: Ուշագրավ է նաեւ Ստ. Օրբելյանի հայտնած տեղեկությունն այն մասին, որ թագավորն ու թագուհին Հովհաննես եպիսկոպոսին են նվիրել Տերունական Խաչի՝ ոսկու մեջ ագուցված մի մասունք, որը նրանց էր ուղարկել Վասիլ կայսրը (Ստեփանոս Օրբելեան, նույն տեղում): Կայսեր՝ Գագիկ թագավորին տված մեկ այլ սրբության մասին է հայտնում 14-րդ դարի կեսերի հեղինակ Նաթանայել Հավուցթառեցին (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 133-134, 141):

Սարգիս Ա-ի աթոռակալության ժամանակ շարունակվում են բյուզանդական եկեղեցու հետ եղած դավանաբանական հակադրությունները, որը հատկապես ընդգծվեց 1007 թ. ծռազատիկի հետեւանքով[22]: Իսկ երկրի ներսում գլուխ էր բարձրացրել թոնդրակեցիների աղանդը, եւ կաթողիկոսն անհրաժեշտ պայքար էր մղում նրանց դեմ[23]:

Պատմիչ Արիստակես Լաստիվերցին նշում է Սարգիս Ա-ի ժամանակ Անիի կաթողիկոսարանում գտնվող երեք նշանավոր վարդապետներին՝ գրելով. «Եւ էին յայն ժամանակի վարդապետք՝ **Սարգիս եւ Տիրանուն եւ Յենովք, որ կաթողիկոսարանին էին վարդապետք**»[24]: Կաթողիկոսն իր գործակիցներով զբաղվում էր հիմնարար խնդիրներով: Հայտնի է, որ նրա օրոք համակարգվել ու «ժամանակագրական հաջորդականությամբ դասավորելու մղումով» դասակարգվել են Հայոց եկեղեցական իրավունքի եւ ընդհանրապես հոգեւոր-եկեղեցական կյանքը կարգավորող գլխավոր վավերագրի՝ Հայոց Կանոնագրքի (Կանոնագիրք Հայոց) նյութերը՝ 40 կանոնախմբերով, իսկ նրանց վերջում ավելացվել է Հայոց կաթողիկոսների գավազանագիրքը (անվանացանկը), որի վերջին նշումը վերաբերում է հենց Սարգիս Սեւանցու ձեռնադրությանը[25]: Սարգիս կաթողիկոսի պատվերով է իր «Տիեզերական պատմությունը» գրել Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը (ավարտել է 1004 թ.), որը կաթողիկոսարանի սպասավորներից մեկն էր[26]:

---

22 Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1362-1363:

23 Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963, էջ 124 (այսուհետեւ՝ Արիստակես Լաստիվերցի):

24 Նույն տեղում, էջ 126:

25 Կանոնագիրք Հայոց (աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի), հ. Բ, Երեւան, 1971, էջ XXIII-XXV:

26 Պատմագրքի հիշատակարանում, դիմելով պատվիրատու կաթողիկոսին, նա գրում է. «...յարածուփ շրջանք եւ **հանապազորդեան հոգք եկեղեցւոյ, որ ըստ հրամանի Ձեր,** ոչ թողացուցանէին մտաց իմոց զետեղել ի պատշաճ յօրինուած բանիս» (Ասողիկ, էջ 285):

Այս նույն շրջանում Անին կառուցապատվում էր, զարդարվում հրաշագեղ եկեղեցիներով: Ինչպես ականատես պատմիչն է գրում, Քրիստոսի ծննդյան 1000-ամյակին՝ «Յայնմ ժամանակի, յորում լնոյր լրութեամբ ամն Ռ (1000) մարմնանալոյ կամ մարդանալոյ Տեառն մերոյ»[27], Գագիկ Ա թագավորը Անիում կառուցել է Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցին, որը 7-րդ դարում կառուցված Զվարթնոցի (Ս. Գրիգոր) կրկնօրինակությունն էր, կառուցված **«նոյնաձեւ չափով եւ յօրինուածով»**[28]: Սամուել Անեցին էլ իր հերթին ավելացնում է, թե Գագիկը եկեղեցին շինել տվեց **«գաղափար առեալ** զլուսազարդ զհրաշալի Սուրբ Գրիգորն՝ զշինեալն ի Ներսիսէ հայրապետէ»[29]:

Նույն շրջանում Կատրամիդե թագուհին Անիում ավարտին էր հասցնում Սմբատ Բ թագավորի հիմնադրած Կաթողիկե եկեղեցին, որը դառնում է կաթողիկոսարանի եկեղեցին[30]: Իսկ Սարգիս Սեւանցի կաթողիկոսն Անիում ձեռնարկում է Ս. Հռիփսիմյանց կույսերին նվիրված եկեղեցու հիմնումը: Շինարարության ավարտից հետո կաթողիկոսը մեծ շուքով Վաղարշապատի վկայարաններից այստեղ է փոխադրում Հռիփսիմյան կույսերի մասունքների մի մասը: Վարդան Արեւելցին այդ մասին գրում է. «Տէր Սարգիս ... **շինեաց վկայարան Սրբոց Հռիփսիմեանցն, առընթեր կաթուղիկէին Անւոյ եւ**

---

[27] Ասողիկ, էջ 282:

[28] Ասողիկ, էջ 282:

[29] Անեցի, էջ 104: Ստեփանոս Ասողիկի Պատմության հնագույն ընդօրինակությունը պարունակող ձեռագրում, համապատասխան հատվածի վերնագիրը՝ «Յաղագս շինելոյն Գագկայ արքային ի քաղաքն Անւոյ զեկեղեցին մեծ անուամբ սրբոյն Գրիգորի», Անիի շրջանում աշխատած Հոհան գրիչը լրացրել է՝ «Տրդատ վարդպետ եկեղեցոյն» (Մատենադարան, ձեռ. թիվ 2865, թերթ 241ա): Սա Տրդատի՝ Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետը լինելու վերաբերյալ պահպանված միակ վկայությունն է:

[30] Հավանաբար այդ ժամանակ է կառուցվել նաեւ կաթողիկոսարանի շենքը: Ենթադրաբար դա Ախուրյանի ձորահայաց այն կառույցն է, որը հետագայում՝ 11-րդ դարի 70-ական թվականներին, մասամբ ձեւափոխելով եւ մինարե կցելով մզկիթի է վերածել Մանուչե ամիրան:

անդ փոխեաց զնշխարս նոցա՝ բերեալ մեծաւ հանդիսիւ, եւ կարգեաց զօրն տօն մեծ»[31]: Այս արժեքավոր վկայությունը ցույց է տալիս կաթողիկոսի՝ Անին ոչ միայն կաթողիկոսարանի ներկայությամբ հաստատված եկեղեցական կենտրոն տեսնելու, այլեւ Հայոց եկեղեցու նվիրական սրբություններն ամփոփող սրբավայր դարձնելու ձգտումը: Փաստորեն, ինչպես որ Հայոց եկեղեցու բնօրրան Վաղարշապատում է Մայր տաճարը (Ս. Աստվածածին) գտնվում՝ Հռիփսիմյանց կույսերի վկայարանների հարեւանությամբ, այնպես էլ կաթողիկոսն Անիի Մայր տաճարի (Ս. Աստվածածին) մոտ կառուցում է Հռիփսիմյանց կույսերի վկայարան, սրբերի մասունքները տեղափոխելով այստեղ ու «մեծ տոն» սահմանում՝ «...Վաղարշապատի Կաթողիկէին հին սովորութեան հետեւողութեամբ», ինչպես նկատում է Մաղաքիա Օրմանյանը[32]:

Ավելացնենք, որ 11-րդ դարի սկզբին թագավորին, թագուհուն ու կաթողիկոսին հետեւելով եկեղեցիներ ու վանքեր են հիմնում Բագրատունյաց Անիի նշանավոր իշխանները. Վահրամ Պահլավունին կառուցում է Մարմաշենի վանքը (ըստ շինարարական արձանագրության կառուցվել է 988-1029 թթ.), Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը՝ Կեչառիսի վանքը (1003 թ.), նրա եղբայր՝ Քեղի ամրոցի տեր Գեւորգ իշխանը՝ Հավուց Թառի Կաթողիկեն (1002 թ.)[33], Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրի վանքը (1010 թ.) եւ այլն:

Այսպիսով, Սարգիս Սեւանցու աթոռակալության տարիներին Հայոց եկեղեցին վերելք է ապրում, ամրապնդվում է Անիի աթոռը: Բնութագրական են Արիստակես Լաստիվերցու խոսքերը՝ «...պայծառացան կարգք եկեղեցւոյ... քանզի ունէր զաթոռ հայրապետութեան Տէր Սարգիս, սնեալ սրբութեամբ ի ծոց եկեղեցւոյ... զոր շնոր-

---

[31] Վարդան Արեւելցի, էջ 96:

[32] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1376:

[33] Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երեւան, 2006, էջ 147-167:

հիւն Աստուծոյ կոչեն ըստ արժանաւորութեան եւ նստուցանեն յաթոռ մերոյ Լուսաւորչին, որ նորին կարգօքն քաղաքավարեալ ի մարմնի, բարի հանդիսիւք աւարտեաց զկեանս իւր»[34]:

Ցավոք, Հայոց եկեղեցու համար այս բարենպաստ կացությունը հիմնովին փոխվում է Սարգիս Սեւանցու հաջորդի՝ Պետրոս Ա-ի (հետագայում «Գետադարձ» մականվանված) օրոք[35]:

ԳԱԳԻԿ Ա ԲԱԳՐԱՏՈՒՆՈՒ ՄԱՀԸ ԵՒ ՊԵՏՐՈՍ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱԹՈՌԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Պետրոս Ա-ի կաթողիկոսական ձեռնադրությունը տեղի է ունեցել 1019 թ., աննախադեպ պայմաններում, նախորդ հայրապետի կենդանության ժամանակ եւ հենց նրա ձեռքով: Բուն հանդեսի մասին ժամանակով ավելի մոտ պատմիչները լռում են, միայն Վարդան Արեւելցին (13-րդ դ.) գրում է, որ Պետրոսին «Տէր Սարգիս ի կենդանութեան իւրում օծեալ էր իւրով ձեռօք յԱնի, մեծ հանդիսիւ»[36]:

Գրիգոր Լուսավորչի օրոք կաթողիկոս դարձած նրա որդի Արիստակեսից հետո այս երկրորդ դեպքն էր, երբ կաթողիկոսի կենդանության ժամանակ, նրա համաձայնությամբ ձեռնադրվում էր իր հաջորդը: Պատմիչները չեն հայտնում Սարգսի հրաժարվելու պատճառը: Ենթադրվել է, որ նա ծերության հետեւանքով է այդ քայլին դիմել[37]: Սա, իհարկե, համոզիչ բացատրություն չէ, քանի որ Սարգսի նախորդ բոլոր կաթողիկոսներն էլ (բացառյալ մի քանի նահատակները) կյանքից հեռացել են բնական մահով, խորը ծե-

---

[34] Արիստակես Լաստիվերցի, էջ 25-26:

[35] Պետրոսի ծագման մասին ուշագրավ մանրամասն է պահպանվել 1404 թ. ճառընտիրում. «…էր նա ի գաւառէն Շիրակայ, յազատ տանէ…, ի մեծաց եւ պատուաւորաց ի Կամրջաձորոյ, որ է ի յերկիրն Անւոյ…» (Մատենադարան, ձեռ. թիվ. 1520, թերթ 30բ):

[36] Վարդան Արեւելցի, էջ 98:

[37] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1377, Գ. Մագսուտեան, Ընտրեալդ յԱստուծոյ, Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութիւնը, Երեւան, 1995, էջ 68:

ության մեջ: Բացի այդ, կաթողիկոսների ցմահ աթոռակալությունը ոչ թե որեւէ մեկի ցանկության, այլ եկեղեցական ավանդությանն ու կանոնին համապատասխանող հարց էր:

Ընդունված է այն կարծիքը, որ Պետրոսը կաթողիկոս դարձավ Գագիկ Ա-ի ժամանակ: Մ. Օրմանյանն այս մասին գրում է. «Պետրոս եղավ այն անձը, որուն վրայ Սարգիս կաթողիկոս եւ Գագիկ թագաւոր իրենց մտադրութիւնը հաստատեցին, հայրապետական աթոռին արժանավոր յաջորդ մը տալու համար»[38]: Բանն այն է, որ գրականության մեջ համարվում է, որ Գագիկ Ա-ը մահացել է 1020 թ.: Իսկ Պետրոսը, Արիստակես Լաստիվերցու համաձայն՝ կաթողիկոս է դարձել 1019-ին: Սակայն պարզվում է, որ Գագիկ Ա-ն ավելի վաղ է մահացել: Երկու հիմնավոր փաստ նշելով այս տեսակետն առաջ է քաշել Կ. Յուզբաշյանը: Նա գրում է, որ Գագիկը մահացել է մոտ 1017 թվականին եւ ծանոթագրում, որ այդ հարցում պատմիչները հստակ վկայություն չունեն, ուստի օգնության են գալիս վիմագրերը: Մաստարայի 1015 թ. արձանագրության մեջ հիշվում է Գագիկը, բայց արդեն Տեկորի 1018 թ.՝ ոմն Թաթուլի արձանագրության մեջ, հիշվում է Հովհաննես (Հովհաննես Սմբատ) թագավորը: Իր հերթին Արիստակես Լաստիվերցին գրելով Գագիկին հաջորդած նրա որդիների՝ Հովհաննես Սմբատի եւ Աշոտի հակամարտության, վերջինիս Կոստանդնուպոլիս գնալու մասին, նշում է, որ դա տեղի է ունեցել մինչեւ 1018 թվականը: Այդ փաստերը նկատի ունենալով Կ. Յուզբաշյանը եզրակացնում է. «Գագիկի մահը մենք թվագրում ենք 1017 թ., թեեւ չի բացառվում նաեւ 1016 թ.»[39]:

---

[38] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1389:

[39] К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с.156-157. Տե՛ս նաեւ Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 207, Արիստակես Լաստիվերցի, էջ 28:

Կ. Յուզբաշյանի վկայակոչած փաստերն իրոք ծանրակշիռ են, իսկ տեսակետն՝ ընդունելի, մանավանդ որ Գագիկի մահվան 1020 թվականը վկայող ոչ մի որոշակի վկայություն չկա[40]: Իսկ 1017 թվականի օգտին է խոսում նաեւ Սամվել Անեցու մոտ պահպանված տվյալը: Բագրատունի թագավորների իշխանության թվականները նա քաղել է Ասողիկից, սկսելով Աշոտ Ա-ից[41]: Նրանք երկուսն էլ թագավորներին միեւնույն քանակի տարիներ են տալիս (Աշոտ Ա՝ 5 տարի, Սմբատ Ա՝ 24, Աշոտ Բ Երկաթ՝ 8, Աբաս Ա՝ 24, Աշոտ Գ Ողորմած՝ Ասողիկի մոտ՝ 25, Սամվել Անեցու մոտ՝ 27, որը Ե (5) եւ է (7) տառերի շփոթության հետեւանք է, Սմբատ Բ՝ 13): Գագիկ Ա-ի իշխանությունն ըստ Ասողիկի սկսվել է 989 թ., իսկ տարիների քանակն ամբողջական չէ, քանի որ նա իր պատմությունն ավարտել է 1004 թվականին, ինչպես հիշատակարանում է նշում՝ Գագիկի 15-րդ տարում[42]: Բայց Սամվել Անեցու մոտ Գագիկ Ա-ի համար նշվում է 29 տարի[43]: Ըստ այդմ՝ 989-ը համարելով Գագիկի թագավորության առաջին տարին («Զկնի Սմբատայ, ի նոյն օր՝ թագաւորեաց Գագիկ եղբայր նորա ի ՆԼԸ (989) թուականին, յաւուրս ձմերայնոյ»)[44], նրա 29-րդ տարին (մահը) համընկնում է 1017 թվականին:

Այն, որ Սարգիս Սեւանցին աթոռից հրաժարվել է Գագիկի մահից հետո, նաեւ տրամաբանական է, քանի որ վերջինս այս կաթողիկոսի հովանավորն էր: Միաժամանակ այդ հրաժարականի պատճառը բացահայտում է դեպքերի քննությունը, որոնց ժամանակով

---

[40] Գագիկ Ա-ի մահվան թվականի հարցում Մատթեոս Ուռհայեցու եւ Վարդան Արեւելցու մոտ ակներեւ անախրոնիզմ կա (համապատասխանաբար՝ 972 եւ 995 թ.), տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 12-13, 485, Վարդան Արեւելցի, էջ 97: Ըստ Հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմահատորյակի հեղինակների Գագիկ Ա-ի թագավորության վերջին շրջանը «համարյա մնում է մթության մեջ» (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1976, էջ 134-140):

[41] Ասողիկ, էջ 401:

[42] Ասողիկ, էջ 285:

[43] Անեցի, էջ 104: Նույնը կրկնում է Մ. Անեցին (Մխիթար Անեցի, էջ 67):

[44] Ասողիկ, էջ 255:

ամենամոտ հեղինակը Արիստակես Լաստիվերցին է, ուստի տեսնենք թե նա ինչ է հայտնում կատարվածի մասին:

Գագիկ Ա-ի մահից հետո իշխանությունը ժառանգում են նրա որդիները՝ «մարմնով հաստի եւ յայժ թանձր», բայց խելացի Հովհաննես Սմբատը եւ «քաջասիրտ» Աշոտը: Սրանց մեջ ժառանգության հարցում հակառակություն է ծագում եւ դատի պահանջ է առաջանում («Սոքա ընդ միմեանս անկեալք հակառակութեամբ վասն բաժնից երկրին՝ կարօտացան իրաւանց եւ դատաստանի»)[45]: Նկատենք, որ նման դեպքում կարող էր եղբայրների հաշտեցման միջնորդ լինել նաեւ կաթողիկոսը, բայց այդ մասին աղբյուրներում չի վկայված:

Պատմիչը շարունակելով, գրում է, որ վեճը հարթելու համար կանչում են Վրաց Գեորգի Ա (1014-1027) թագավորին, որը հաշտեցնում է եղբայրներին, որոշում Հովհաննես Սմբատին ավագության համար տալ Անին եւ նրա շրջակա գավառները, իսկ Աշոտին՝ «զներքին կողմն աշխարհին, որ հայի ի վերայ Պարսից եւ Վրաց»[46]: Բանակցության ավարտից հետո, երբ Հովհաննես Սմբատը Անի էր ճանապարհվել, Աշոտի իշխաններից մեկը Գեորգիին բողոքում է, որ Հովհաննես Սմբատը զավթել է իրեն պատկանող Շատիկ բերդը: Գեորգին զայրանալով ուղարկում է իր զինվորներին, որոնք իջեւանատանը բռնում ու իրենց թագավորի մոտ են բերում Հովհաննես Սմբատին, նրան ուղեկցողներին էլ ջարդում են, քշում մինչեւ Անի, ուր Հայ եկեղեցու նկատմամբ իրենց սանձարձակ են պահում: Գեորգին Հովհաննես Սմբատին փակի տակ է պահում, ապա նրանից երեք բերդ առնելով՝ բաց թողնում:

Ըստ պատմիչի, Աշոտը, որն իր բաժին տարածքներին ամբողջովին տիրելու խնդիր ուներ, ուղեւորվում է Կոստանդնուպոլիս, արժանանում կայսեր բարեհաճությանը, նրանից օգնական զորք ստանում եւ վերադառնալով տիրում իր գավառներին ու բերդերին

[45] Արիստակես Լաստիվերցի, էջ 27:
[46] Նույն տեղում:

եւ մեծապես զորանում: Այս նշելուց հետո Լաստիվերցին գրում է. «Մինչ ցայս վայր պատմութիւնս մեզ հեշտալի է»[47]:

Ապա թեման փոխելով պատմիչը գրում է, որ 1018 թվականին կայսրը նիկոմեդացի մի իշխան է ուղարկում, որը գալիս եւ սկսում է Թեոդոսուպոլսի վերաշինումը:

Այնուհետեւ պատմիչը գրում է, որ 1019 թ. «ձեռնադրի Տէր Պետրոս ի կաթողիկոսութիւն առ կենօք Տէր Սարգսի»[48]: Անմիջապես շարունակելով Լաստիվերցին նշում է, որ 1021 թ. կայսրը մեծ զորքով Արեւելք է գալիս եւ իջեւանում Կարնո դաշտում[49]:

Ինչպես տեսնում ենք, Արիստակես Լաստիվերցին Պետրոսի ձեռնադրությունը նշում է Գագիկի մահից ու նրա որդիների միջեւ ծագած առաջին հակամարտության մասին պատմելուց, նաեւ 1018 թ. տեղի ունեցած մի դեպքի մասին գրելուց հետո: Միաժամանակ պարզ է դառնում, թե երկրում որքան լարված վիճակ է եղել Գագիկ Ա-ի մահվանը հաջորդած շրջանում:

Այժմ վերադառնանք Սարգիս Սեւանցու հրաժարականի խնդրին: Ակներեւ է, որ արքայազուն եղբայրների հակամարտության ժամանակ նա ի վիճակի չի եղել միջնորդի, հաշտեցնողի դեր ստանձնել: Բարեբախտաբար պահպանվել է մի սկզբնաղբյուր՝ «Պատմութիւն սրբոց հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան», որը 2007-ին որպես իր գրքի հավելված հրատարակել Լ. Տեր-Պետրոսյանը եւ որտեղ միանգամայն հստակ նշվում է Սարգիս Սեւանցու հրաժարականի պատճառը: 13-րդ դարի կեսերին վերագրվող այդ երկի մեզ հետաքրքրող հատվածում նշվում է. «Ա՛ռ կաթուղիկոսութիւն եկեղեցպանն Կաթուղիկէյին, այն որ Սարգիս անուն, այր հեզ եւ առայքինի, **եւ ապա ձանձրացաւ ի ծփանաց աշխարհիս,** ընտրեն զՏէր Պետրոս, ազատ ազգէ, երեւելի շնորհօք եւ հասա-

[47] Նույն տեղում, էջ 28:
[48] Նույն տեղում:
[49] Նույն տեղում:

կաւ»[50]: Ձանձրանալ նշանակում է նաեւ նեղվել[51], «ծփանաց» (ձեռագրում՝ «ծպանց»)՝ ծուփ արմատից, նշանակում է ոչ միայն ալեկոծում, տատանում, այլեւ «խնդիր, յուզումն խնդրոց, քննութիւն», խռովահույզ[52]: Փաստորեն նորահայտ սկզբնաղբյուրը վկայում է, որ հեզ եւ առաքինի Սարգիսը ձանձրացավ կամ նեղվեց երկրի խռովահույզ, ալեկոծ վիճակից, ուստի նրա փոխարեն ընտրեցին ազատ տոհմից սերող Պետրոսին:

Հասկանալի է, որ Սարգիս Սեւանցին ձանձրանալով «ի ծփանաց աշխարհիս», չէր կարող աթոռից հրաժարվել Գագիկ Ա-ի ժամանակ: Դա տեղի ունեցավ Հովհաննես Սմբատի գահակալության սկզբում[53], հայտնի պատճառների դրդմամբ: Առաջ անցնելով ասենք, որ ինչպես երեւում է, Սարգսի հրաժարվելու եւ Պետրոսի ընտրության հարցում եկեղեցական ավանդությունը մեկ անգամ խախտած թագավորն այդ արարքը համարել է հաջողված նախադեպ: Այլապես անհասկանալի էր մնում, թե ինչպես, սովորաբար որպես երկչոտ կերպար ներկայացվող Հովհաննես Սմբատը տարիներ անց համարձակվեց աթոռից հեռացնել Պետրոսին եւ նրա կենդանության օրոք այլ կաթողիկոս հաստատել: Ճիշտ է, նրա այդ փորձը միայն կարճատեւ հաջողություն ունեցավ (որովհետեւ Պետ-

---

[50] L. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Երեւան, 2007, էջ 510:

[51] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837 (նմանահանություն, Երեւան, 1981), էջ 148:

[52] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836 (նմանահանություն, Երեւան, 1979), էջ 1028-1029:

[53] Մատթեոս Ուռհայեցին, հավանաբար Հակոբ Սանահնեցուց օգտվելով, նշում է Վասիլ Բ կայսեր Հայաստան ուղարկած եկեղեցատոնական խնդրի վերաբերող մի նամակի մասին, որի հասցեատերը Հովհաննես Սմբատ թագավորն ու Սարգիս կաթողիկոսն էին («…թագաւորն Վասիլ յուղարկեալ ի Հայք առ Յովհաննէս շահնշահն եւ առ Տէր Սարգիս կաթուղիկոսն Հայոց…», Մատթեոս Ուռհայեցի, էջ 50): Եթե Հովհաննես Սմբատը հորը հաջորդած լիներ 1020-ին, ապա նա չէր կարող համարվել 1019 թվականին աթոռից հրաժարված Սարգսի կաթողիկոսության ժամանակի թագավոր:

րոսը Սարգիս չէր), սակայն ենթադրելի է, որ Յովհաննես Սմբատին այդ քայլը կատարելու վստահություն էր տվել ժամանակին Սարգսի՝ աթոռից հրաժարվելու նախադեպը:

Վերադառնալով 1019 թվականի դեպքերին՝ նկատենք, որ Սարգիս Սեւանցու հրաժարականը[54] թերեւս ոչ այնքան նրան էր պետք, որքան Յովհաննես Սմբատին: Վերջինս գիտակցում էր, որ Աշոտի հետ խնդիրները չեն ավարտվել, իսկ նոր հակամարտության դեպքում նա այլեւս չէր ցանկանա Գեորգիի նման «հաշտարար» ունենալ: Չի բացառվում, որ այս իրավիճակում Յովհաննես Սմբատին իր ծառայությունը հենց ազնվական ծագում ունեցող Պետրոսն է առաջարկել, վստահեցնելով, որ կաթողիկոս դառնալու դեպքում նոր առճակատման ժամանակ կկարողանա զսպել Աշոտին: Հետաքրքիրն այն է, որ որոշ ժամանակ անց հենց այդպես էլ եղավ: Իր իշխանության ներսում հարցերը կարգավորելուց հետո Աշոտը 1021 թ. մեծ զորքով շարժվեց Անիի վրա: Քաղաքի պարիսպների մոտ տեղի ունեցած ճակատամարտում անեցիները ծանր պարտություն ու կորուստներ կրեցին, եւ այդ ժամանակ հաշտարար առաքելությամբ հանդես եկավ Պետրոս կաթողիկոսը: Ինչպես պատմիչ Մատթեոս Ուռհայեցին է գրում. «Հայրապետն Պետրոս եւ իշխանքն ամենայն ելին առ զԱշոտ եւ մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ Դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն Տանն Հայոց, եւ Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն Անի. եւ եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն Տանն Հայոց»[55]:

Աշոտի այս գործողությունները խրախուսում էր Բյուզանդական կայսրությունը: Հ. Բարթիկյանը հայկական եւ բյուզանդական աղբյուրների մանրամասն քննությամբ բացահայտում է այս շրջանում կայսրության վարած քաղաքականությունը, որի նպատակը Անիի

---

[54] Սարգիսը դրանից հետո տեղափոխվում է Անիի մերձակա Հոռոմոսի վանք, ապրում եւս երեք տարի, 1022 թ. մահանում ու թաղվում այդտեղ (Արիստակես Լաստիվերցի, էջ 32):

[55] Մատթեոս Ուռհայեցի, էջ 14:

Բագրատունյաց թագավորության պառակտումը, թուլացումն ու զավթումն էր: 1021 թ. ռազմական ընդհարումից ու հաշտությունից հետո Աշոտը փաստորեն դարձավ թագավորության տարածքի մեծ մասի՝ «Դրուց աշխարհի» թագավորը եւ նրան վստահեցվեց, որ Հովհաննես Սմբատի մահից հետո կդառնա «թագաւոր ամենայն Տանն Հայոց»: Աշոտին առաջնության արժանացրին բյուզանդացիները՝ նրան հորջորջելով «Մեծ Հայքի էքսուսիարխ»[56]:

Սակայն վերջինիս՝ Անիին տիրանալու մտասեւեռման հասնող ձգտումը նույն 1021 թվականին նրան դրդեց արդեն Հովհաննես Սմբատի հետ «մեծաւ երդմամբ» կայացած հաշտությունից հետո խաբեությամբ նրան ծուղակը գցել: Վարդան Արեւելցին տեղեկությունը Մխիթար Անեցու այժմ կորած պատմությունից քաղելով, նշում է, որ Աշոտը Թալինի մոտ գտնվող իր զորակայանում մահամերձ հիվանդ ձեւանալով իր մոտ է կանչում Հովհաննես Սմբատին եւ ձերբակալում: Ապա նա Հովհաննես Սմբատին տալիս է մեծ իշխան Ապիրատի (Գրիգոր Ապիրատ Մագիստրոս) ձեռքը, որ սպանի, իսկ վերջինս հոժարակամ նրան տանում է Անի եւ բաց թողնում, ասելով. «Ինչո՞ւ ձեռք բարձրացնեմ Աստծո օծյալի վրա եւ նրա տեղը մի խալագարի դնեմ» («Ձիա՞րդ ձգեցից զձեռս իմ յօծեալ Տեառն, եւ խելագար մի եդից ի տեղւոջ սորա»)[57]: Այս խոսքերը, որոնցով իշխանն արդարացնում է իր արարքը, նաեւ որոշ պատկերացում են տալիս Աշոտի ստորակաների՝ նրա նկատմամբ ունեցած

---

[56] Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Երեւան, 2002, էջ 671-672:

[57] Վարդան Արեւելցի, էջ 102-103: Այդ դեպքից հետո Հասանի որդի Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը Աշոտի վրեժխնդրությունից խուսափելու համար ընտանիքով եւ զորքով անցնում է Դվինի ամիրայի մոտ, որը սկզբում նրան լավ ընդունելով, հետո դավադրաբար սպանում է: Գրիգոր Ապիրատի Սարի զորավարը նրա ընտանիքը բերում է Անի, որտեղ Հովհաննես Սմբատը, ողբալով իշխանի մահը, նրա զավակներին առնում է իր հովանավորության տակ:

վերաբերմունքի մասին, որոնք արդեն ձանձրացել էին իրենց գերակայի անհավասարակշիռ եւ ուխտադրուժ գործողություններից:

Այսպիսով, Պետրոս Ա-ի աթոռակալությունը սկսվեց կաթողիկոսների հաջորդականության ավանդական կարգի խախտմամբ, նախորդ կաթողիկոսի կենդանության օրոք, Հովհաննես Սմբատի միջամտությամբ եւ քաղաքական լարված պայմաններում:

ԱՆԻԻ ԱԹՈՌԸ 1020-30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Անիի կաթողիկոսական աթոռը գործունեության ընդարձակ ոլորտ եւ մեծ հնարավորություններ ունեցող հաստատություն էր: Մատթեոս Ուռհայեցին, որի համար Անիի շրջանի պատմության կարեւոր սկզբնաղբյուր է ծառայել Հակոբ Սանահնեցի պատմիչի (մահացել է 1085 թ.) մեզ չհասած երկը, հավանաբար հենց վերջինից օգտվելով հետեւյալ կերպ է ներկայացնում Հայոց կաթողիկոսությունը Պետրոսի ժամանակ. «Յորժամ էր Տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն եւ ի Հայաստան աշխարհին, ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի եւ մեծանիստ եւ շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս եւ եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւորք եւ գաւառատեսուչս ի վերայ եօթն հարիւր թեմի հանապազ. երկոտասան եպիսկոպոս եւ չորս վարդապետք ի տանն հայրապետին եւ վաթսուն երէց ի կրօնաւորաց՝ եւ յաշխարհականաց՝ հինգ հարիւր. եւ **չէր նուաստ աթոռ հայրապետութեանն, քան զթագաւորութեանն Հայոց:** Նաեւ զարդարանք եկեղեցեացն եւ տան հայրապետութեանն բազում եւ անհամար եւ հրաշալի մեծութեամբ լցեալ, զոր յառաջին թագաւորացն տուեալ հաստատութեամբ առաջին հայրապետացն, որ գայր հասանէր մինչեւ ի տէր Պետրոս...»[58]:

Եթե այս նկարագրության մեջ անգամ որոշ չափազանցություն կա, ապա այն չի փոխում ընդհանուր պատկերը: Բագրատունյաց

[58] Մատթեոս Ուռհայեցի, էջ 166:

վերջին շրջանում Հայոց կաթողիկոսությունն իրոք փառավոր կացության մեջ էր, ուներ հսկայական միջոցներ ու հնարավորություններ: Ուղեւորությունների ժամանակ Պետրոս կաթողիկոսին ուղեկցում էին իր «տանեցի ազատները», հարյուրավոր հոգեւորականներ ու աշխարհականներ, նաեւ 300 հեծյալներից կազմված թիկնազոր[59]:

Բագրատունյաց թագավորության վերջին շրջանում, երկրի մասնատվածության ու թուլացման պայմաններում, ունենալով համահայկական նշանակություն եւ ազդեցության մեծ ոլորտ, կաթողիկոսական աթոռը հանդիսանում էր հայ ժողովրդին համախմբող կենտրոնն ու նրա միասնականության խորհրդանիշը: Բնականաբար այն չէր կարող դուրս մնալ բյուզանդական դիվանագիտության ուշադրությունից, որն իրականացվում էր այն ժամանակների համար հազվադեպ հատուկ եւ արհեստավարժ գերատեսչության միջոցով[60]: Բյուզանդացիները ծրագրված կերպով ինքնուրույնությունից զրկելով եւ զավթելով հայկական իշխանություններն ու թագավորությունները (Տարոն, Տայք, Վասպուրական), հերթական թիրախ դարձնելով Անին, չէին կարող աչքաթող անել Հայոց կաթողիկո-

[59] Հակոբ Սանահնեցին 1021 թ. վերջին Պետրոս կաթողիկոսի Տրապիզոն մեկնումը նկարագրելիս նշում է, որ նրա հետ էին 12 եպիսկոպոս, 80 կրոնավոր եւ երկու վարդապետ՝ «Յովսէփ Ընձուց եւ Կոզեռն Յոհաննէս եւ այլ Գճ (300) ձիաւորս ընդ նմա ի փառաւորացն»: Նույն տեղեկությունը, փոքր տարբերություններով կրկնվում է Հովհաննես Կոզեռնի տեսիլքին վերաբերող տեքստում. (…երեք հարիւր ձիաւորաւք ի փառաւորացն եւ յանուանի արանց»: (Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Ա (Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր 11-րդ դարի), Երեւան, 1995, էջ 148): Մատթեոս Ուռհայեցին Պետրոսի վերջին մեկնումը Անիից 1047 թ. հունվարին հետեւյալ կերպ է նկարագրում. «Տէր Պետրոսն… իւր տանեցի ազատօքն, փառաւոր արամբք երեք հարիւր՝ վառեալ զինուք, եւ վարդապետս եւ եպիսկոպոսունս եւ երաժիշտս եւ կրօնաւոր քահանայս հարիւր եւ քսան՝ հեծեալս ի ջորոց, հետեւակ պաշտօնեայս՝ երկերիւրս» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 114-115, հմմտ. Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ, յԵրուսաղէմ, 1869, էջ 123):

[60] Շարլ Դիլ, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, Երեւան, 2005, էջ 122-135:

սությունը: Գուցե հենց դրանով է բացատրվում այն, որ Անիի թագավորության ճակատագրին վերաբերող հայ-բյուզանդական բանակցությունների մեջ ներգրավվում է հենց կաթողիկոսը:

Դեպքերը զարգանում են հետեւյալ կերպ. 1021 թ. Վասիլ Բ (976-1025) կայսրը արշավանք է սկսում ըմբոստացած Վրաց Գեորգի Ա թագավորի դեմ, ավերածություններ գործում Տայքում եւ հարակից վրացական տարածքներում, ապա ձմեռելու համար գնում Սեւ ծովի ափ՝ Տրապիզոն: Հովհաննես Սկիլիցեսը գրում է, որ Հովհաննես Սմբատը «զինակցություն» է ցուցաբերել Վրաց թագավորին[61], մինչդեռ հայկական աղբյուրները նման տեղեկություն չունեն: Ըստ Հակոբ Սանահնեցու. «Ի թուականութեանս Հայոց ՆՀ (1021) ելանէր Վասիլ թագաւորն յԱրեւելս անթիւ բազմութեամբ զաւրօք խուժադուժ ազգաւ եւ **խնդրեաց զԱնի եւ զամենայն Տունն Շիրակայ ի Յոհանիսէ՝ որդւոյ Գագկայ:** Իսկ նա յաղագս թուլութեան եւ տկարութեան մարմնոյ խոստացաւ տալ զԱնի ի Հոռոմս զկնի մահուան իւրոյ»[62]: Եւս երեք հայ պատմիչներ, Արիստակես Լաստիվերցին, Մատթեոս Ուռհայեցին եւ Վարդան Արեւելցին, որ անդրադարձել են այս պատմությանը, կայսեր կողմից Անին պահանջելու պատճառը չեն նշում: Իսկ Հովհաննես Սմբատի՝ Անին բյուզանդացիներին կտակելու պատճառ նրանք համապատասխանաբար համարում են՝ թագավորի անժառանգ լինելը (Արիստակես Լաստիվերցի), «թուլասիրտ» լինելը (Մատթեոս Ուռհայեցի), վախը՝ Վրաց թագավորից (Վարդան Արեւելցի)[63]: Ստացվում է, որ հայերը չեն էլ իմացել, թե կոնկրետ ինչ հիմնավորմամբ է կայսրը Անին պահանջել: Խնդրի իրավական կողմն ավելի շատ բյուզանդացիներին էր հետաքրքրում, եւ նրանք յուրովի «գտել են» ոչ միայն Հովհաննես Սմբատի արարքի «պատճառը», այլեւ հնարել Բագրատունի թա-

---

[61] Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1979, էջ 146-147:

[62] Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Ա, էջ 146:

[63] Այս հարցի վերաբերյալ նշված աղբյուրների քննությունը տե՛ս Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երեւան, 1977, էջ 22-24:

գավորի՝ կայսեր մոտ անձամբ մեկնելու, Անիի բանալիները նրան հանձնելու, հպատակություն ընդունելու եւ հենց տեղում Անին կայսրությանը կտակելու փաստաթուղթը գրելու պատմությունը[64]:

Մինչդեռ հայկական բազմաթիվ աղբյուրները ոչ մի կասկած չեն թողնում, որ Վասիլ կայսեր հետ հանդիպել է ոչ թե Հովհաննես Սմբատը, այլ Պետրոս կաթողիկոսը: Վերջինս մեկ տարվա մեջ արդեն երկրորդ անգամ դառնում էր Հովհաննես Սմբատի բանագնացը: Հակոբ Սանահնեցին գրում է, որ կաթողիկոսը կայսեր մոտ էր գնացել «յաղագս սիրոյ»: Արիստակես Լաստիվերցին գրում է, որ կաթողիկոսը կայսեր հետեւից գնալով նրան է հասնում եւ հանդիպում Աստվածահայտնության տոնի օրը (այսինքն՝ 1022 թ. հունվարի 6-ին): Կայսրը հրամայում է, որ կաթողիկոսը հայ հոգեւորականների հետ կատարի ջրօրհնեքը հայկական կանոնով, իսկ այդտեղ գտնվող հույն հոգեւորականները՝ իրենց կանոնով: Ըստ հայ պատմիչների, Հայոց կաթողիկոսի կատարած արարողությունը շատ տպավորիչ է լինում, մեռոնը ջրի մեջ լցնելիս լույսի ճառագայթներ են ցոլարձակում, իսկ ծեսից հետո կայսրը մեծարում է հայրապետին[65] (այս դեպքի չափազանցված արձագանքները հետագայում ծնունդ են տալիս կաթողիկոսի «Գետադարձ» մականվանը)[66]: Հավանաբար հաջորդ օրը տեղի է ունենում նոր հանդիպում, որի մասին Արիստակես Լաստիվերցին գրում է. «Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին, եթէ գրէ գիր եւ տուր կտակ թագաւորին զի

---

[64] Հովհաննես Սկիլիցես, էջ 146:

[65] Արիստակես Լաստիվերցի, էջ 31-32:

[66] Ջրօրհնեքի ծեսը կատարող հայ հոգեւորականները կաթողիկոսի գլխավորությամբ կանգնած էին գետի հոսանքի վերին մասում, իսկ հույն հոգեւորականները՝ ստորին, որպեսզի, ըստ կազմակերպիչների մտահղացման, վերստին օրհնեն հայերի օրհնած ջուրը: Այս է պատճառը, որ դրանից քիչ անց, հույների հետ բորբոքված դավանաբանական վեճերի ու անթաքույց թշնամության մթնոլորտում ծնունդ առավ այն ավանդությունը, թե Պետրոսի կատարած ջրօրհնեքից հետո գետի հոսանքը կանգ է առել, ապա ետ դարձել, այստեղից էլ՝ «Գետադարձ» մականունը (Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1405-1407):

յետ իմոյ վախճանին՝ զիմ քաղաքս եւ զերկիրս նմա տաց ի ժառանգութիւն»[67]: Կայսեր պահանջն, այսպիսով, բավարարվում է: Հ. Բարթիկյանը գրում է, որ «այն ժամանակ Բյուզանդիային եւ ոչ մի հարեւան պետություն չէր կարող ընդդիմակայել: Հովհաննես-Սմբատը այդ ձեւով փորձեց երկարաձգել իր երկրի անկախությունը, հույս ունենալով, որ Վասիլ Բ-ին հաջորդածը Հայաստանի նկատմամբ այլ քաղաքականություն կորդեգրեր»[68]: Հիշենք, որ մինչեւ Անին կայսրությանը կտակելը 1021-ին Հովհաննես Սմբատը արդեն մի պայմանագիր էլ եղբոր՝ Աշոտի հետ էր կնքել, որի համաձայն իր մահից հետո թագավորությունը նրան էր անցնելու:

Ջրօրհնեքի հայտնի ծեսի մասին գրելուց հետո Կիրակոս Գանձակեցին նշում է, որ «հրամայեաց կայսրն հայրապետին դնել զաթոռ իւր ի Սեբաստիա եւ անտի հովուել զհօտ իւր», որից ենթադրվել է, թե Տրապիզոնի պայմանագրից հետո կաթողիկոսը խուսափել է Անի գալուց, սակայն պատմիչի հիշյալ տեղեկությանն անմիջապես հաջորդող բառերը՝ «Եւ անդ եկաց հայրապետն մինչեւ ցվախճան իւր»[69], վկայում են, որ նա շփոթել է Պետրոս Ա-ի Սեբաստիայում հաստատվելու ժամանակը, որը տեղի է ունեցել շատ ավելի ուշ: Իսկ Տրապիզոնից Պետրոսը, ինչպես Արիստակես Լաստիվերցին է գրում, վերադարձել է «ի տուն իւր»[70], այսինքն՝ Անի:

Կարելի է ենթադրել, որ տրապիզոնյան հանդիպումները, կայսերական հյուրընկալության ճոխությունը խորը տպավորություն են թողել կաթողիկոսի վրա եւ կանխորոշել նրա հետագա քաղաքական կողմնորոշումը: Ազնվական տնից սերող Պետրոսը, որն այդ ժամանակ միջին տարիքի տղամարդ պետք է լիներ եւ ընդամենը երկու տարի առաջ էր կաթողիկոսական գահին բազմել, ընդունվել

---

[67] Արիստակես Լաստիվերցի, էջ 32:
[68] Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, էջ 671:
[69] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 95:
[70] Արիստակես Լաստիվերցի, էջ 32:

ու դրվատանքի էր արժանացել ժամանակի հզորագույն պետության կայսեր կողմից:

Անի վերադառնալով, անկախ Հովհաննես Սմբատի կտակի գոյությունից, որի պատասխանատուն թագավորն ինքն էր, կաթողիկոսը կարող էր ավելի ինքնավստահ զգալ եւ բավարարել իր հետաքրքրությունները: Իսկ դրանք, պարզվում է, միշտ չէ, որ հոգեւոր ոլորտից էին: Արիստակես Լաստիվերցին գրում է. «յոյժ գանձուց սիրօղ էր Պետրոս, որ եւ բազումք վասն այնր եպերէին զնա»[71]: Կաթողիկոսի նվիրատուներից մեկը, Գրիգոր Պահլավունին (1045-ից հետո՝ Մագիստրոս) իր ընծայած թանկագին խաչազարդ գավազանի հետ նաեւ մի մեծարական բանաստեղծություն է ձոնել հայրապետին[72]:

1033 թ., Քրիստոսի խաչելության 1000-ամյակին, տեղի է ունենում արեւի խավարում (ստույգ՝ հունիսի 29-ին)[73], որը մեծ տպավորություն է թողնում ժամանակակիցների վրա: Թագավորն ու կաթողիկոսը Անիից հատուկ պատվիրակություն են ուղարկում Սեւանի վանք՝ Հովհաննես Կոզեռն վարդապետի մոտ՝ կատարվածի մեկնաբանությունն իմանալու համար: Վերջինս կանխատեսում է մոտալուտ բազում դժբախտություններ, որպես հետեւանք բարքերի համընդհանուր անկման ու անբարեպաշտության՝ քննադատելով անգամ եկեղեցու առաջնորդին[74]:

Նույն թվականին Պետրոս կաթողիկոսը, անհայտ պատճառով ընդհարվելով Հովհաննես Սմբատի հետ, ծածուկ թողնում է Անիի իր

---

[71] Արիստակես Լաստիվերցի, էջ 82:

[72] Գրիգոր Մագիստրոսի թղթերը (աշխատասիրությամբ՝ Կ. Կոստանեանցի), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 31-32:

[73] Բ. Թումանյան, Հայ աստղագիտության պատմություն, Երեւան, 1968, էջ 138-139:

[74] «Եւ ահա յայսմ հետէ բազում հերձուածք մտանեն յեկեղեցի Աստուծոյ ի ծուլութենէ հայրապետաց, վասն զի թուլամորթին եւ տկարանաց եւ հաւատոյ քննութիւն ոչ առնեն եւ կան յիմարեալք: Յաղագս արծաթոյն թողուն ի բաց զհաւատն…» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 78):

աթոռը եւ տեղափոխվում կայսրության տիրապետության տակ անցած Վասպուրականի Ձորավանք՝ այստեղ մնալով ավելի քան երեք տարի[75]: Այն փաստը, որ Պետրոսը Հովհաննես Սմբատից կամ անեցիներից դժգոհելով[76] չի գնում, ասենք, Աշոտ Դ-ի կամ հայ մյուս գահակալների մոտ, այլ ապավինում է կայսերական կուսակալին, վկայում է բավական խորը հակասության մասին:

Թագավորն ու ավագանին վերադարձի պահանջով բազմիցս դիմում են կաթողիկոսին, բայց ապարդյուն: Միայն 1036 թ., Վասպուրականի բյուզանդական կուսակալի միջամտությամբ, Պետրոսը վերադառնում է Անի, բայց քաղաք գալուց հետո, կարճ ժամանակ անց, թագավորի հրամանով ձերբակալվում ու արգելափակվում է Բջնիում: Նույն տարվա վերջերին մայրաքաղաքում գումարվում է եկեղեցական ժողով, որը Պետրոսին համարում է աթոռանկ եւ կաթողիկոս է ձեռնադրում Սանահինի վանքի առաջնորդ Դեոսկորոսին: Նման որոշման կայացման համար Պետրոսի դեմ արված մեղադրանքները պետք է որ զորավոր եղած լինեն (թեեւ ստույգ հայտնի չէ, թե որոնք էին այդ մեղադրանքները), բայց վճռորոշ էր նաեւ Հովհաննես Սմբատի դիրքորոշումը:

Դեոսկորոսը, որի մասին պատմիչները հիմնականում դրվատանքով են խոսում, Անիում նոր եպիսկոպոսներ է ձեռնադրում, առաջ քաշում Պետրոսի կողմից մերժվածներին: Սակայն հայ ավանդապահ հոգեւորականությունը ըմբոստանում է Անիում կայացված որոշման դեմ, ինչպես Մատթեոս Ուռհայեցին է գրում՝ «եպիսկոպոսքն եւ վարդապետքն Հայոց աշխարհին՝ նզովիւք փակեցին զթագաւորն եւ զամենայն նախարարսն Հայոց՝ վասն հակառակութեանն, որ եղեւ ի մէջ եկեղեցւոյ»[77]: Արքունիքը ստիպված է լինում

---

[75] Այս դեպքերը հանգամանորեն քննել է Մ. Օրմանյանը (Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1413-1417):

[76] Հնարավոր է, որ հենց այդ ժամանակ է տեղի ունեցել անեցիների այն ընդվզումը Պետրոսի դեմ, որի մասին վկայում է Գրիգոր Մագիստրոսն իր մի քանի թղթերում (Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 5-7, 34-36):

[77] Մատթեոս Ուռհայեցի, էջ 86:

տեղի տալ: Մեկ տարի եւ երկու ամիս գահակալելուց հետո Դեոսկորոսն աթոռանկ է արվում, վերադարձվում Սանահին եւ կաթողիկոսական աթոռին 1038 թ. վերջերին վերականգնվում է Պետրոսը:

ԱՆԻԻ ԶՐԿՎԵԼԸ ԹԱԳԱՎՈՐԱԿԱՆ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԱՀԵՐԻՑ

1040-41 թթ. մահանում են անհաշտ եղբայրները՝ նախ՝ Աշոտը, ապա՝ Հովհաննես Սմբատը, եւ երկրում տիրում է անհաստատ կացություն: Անզավակ Հովհաննես Սմբատի կյանքի վերջին տարիներին նրա արքունիքում առաջնակարգ դեր էր ստացել գրականության մեջ հիմնականում Վեստ Սարգիս անունով հիշատակվող գործիչը, որն Արիստակես Լաստիվերցու վկայությամբ թագավորի մահվան ժամանակ նրա հոգաբարձուն էր[78] եւ փորձել է թագավորել Անիում: Սակայն, ինչպես Մատթեոս Ուռհայեցին է գրում, «ոչ ընդունեցին զնա ազգն Բագրատունյաց, վասն զի Հայկազն էր»[79]: Այս գործչին մեր պատմիչները, բացառությամբ Սամվել Անեցու, հիմնականում խիստ պարսավանքի են ենթարկում, մեղադրելով ինչպես իշխանությունը բռնազավթելու, այնպես էլ հետագայում բյուզանդասեր ընթացք որդեգրելու համար:

Որոշ քաղաքական պայքարից հետո սպարապետ Վահրամ Պահլավունու ավագությամբ հանդես եկող Պահլավունիների զորեղ տան ջանքերով 1042 թ. Անիում Բագրատունյաց գահին է նստում Աշոտի 18-ամյա որդին՝ Գագիկ Բ-ը (1042-1045): Օծումը կատարվում է Անիի Մայր տաճարում, Պետրոս կաթողիկոսի ձեռքով: Գագիկ Բ-ի թագադրությունը կարեւոր էր առաջին հերթին այն պատճառով, որ դրանով թագավորության երկու մասերը միավորվեցին: Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Ժողովեցան ամենայն նախարարքն Հայոց առ հայրապետն Տէր Պետրոս եւ օծին զԳագիկ

[78] Արիստակես Լաստիվերցի, էջ 57:
[79] Մատթեոս Ուռհայեցի, էջ 94-95:

թագաւոր ի վերայ ամենայն Տանն Հայոց, շնորհօք Հոգւոյն Սրբոյ եւ հրամանաւ մեծի իշխանին, որ էր ազգաւ հայկազնեան եւ հայրենեօք Պահլաւունի, որոյ անուն ըստ նախնոյն իւրոյ Գրիգոր ճանաչի, եւ էր յազգէն սրբոյն Գրիգորի»[80]: Ուշագրավ է, որ 2004 թ. Մարմաշենի մոտ հայտնաբերված մի արձանագրության մեջ Գրիգոր Պահլավունու հայրը՝ Վասակը կոչվում է «Հայոց ասպետ»[81]: Թեեւ պատմիչներն այդ մասին ոչինչ չեն գրում, բայց չի բացառվում, որ Անիի թագավորության վերջին շրջանում այստեղ վերականգնվել է թագադիր ասպետի ինստիտուտը եւ հանձնվել Պահլավունիներին (Արշակունիների ժամանակ թագադիր ասպետները Բագրատունիներն էին): Հենց այս համատեքստում պետք է հասկանալ Մատթեոս Ուռհայեցու վերոնշյալ հաղորդումը, թե Գագիկը օծվել է «հրամանաւ» մեծ իշխան Գրիգոր Պահլավունու: Առաջ անցնելով ասենք, որ Գագիկը գահին բազմելուց քիչ անց ընդհարվում է նույն Գրիգոր

---

[80] Մատթեոս Ուռհայեցի, էջ 96-97: Ուռհայեցու Ժամանակագրության այս հատվածում «հրամանաւ մեծի իշխանին» բառերից հետո հետագայում ընդմիջարկություն է արվել՝ «որով եւ օծեաց զնա սրբակեացն մեծն Մարցէն»: Այս հարցին հանգամանորեն անդրադարձել է Հ. Բարթիկյանը, նախ ապացուցելով, որ սա ընդմիջարկություն է, ապա՝ որ «Մարցէն» սխալ արտագրություն է, սկզբնապես եղել է «Մսրցին», եւ այն վերաբերում է Գրիգոր Վկայասերին, որը որոշ ժամանակ Եգիպտոսում (Մսր) աթոռակալելով կարող էր մեծ Մսրցի կոչվել: Իսկ ընդմիջարկության իմաստն այն է, որ Գագիկ Բ-ն, իր հերթին, հետագայում օծել տվեց Գրիգոր Վկայասերին (Հ. Բարթիկյան, Ուռհայեցու երկում հանդիպող «Մարցէ» անվան մասին, «Պատմաբանասիրական հանդես», 1973, N 2, էջ 163-167): Այս ենթադրության օգտին է խոսում Սիմեոն Երեւանցու Ջամբռում եղած մի հատված, որը թեեւ խառն ու սխալ տեղեկություններ է պարունակում, սակայն այստեղ Գրիգոր Վկայասերը համարվում է «Մսրում» աթոռակալած կաթողիկոս. «Նստին ներհակ իրերացն, Պետրոս ի յԱնի, Գրիգոր Վկայասէրն ի Մսր…» (Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Ս. Աթոռոյս, շարագրեցեալ Սիմէօնէ կաթուղիկոսէ, Վաղարշապատ, 1873, էջ 7):

[81] Ա. Մանուչարյան, Նորահայտ հիշատակություն՝ «Հայոց ասպետ» վիմագրությամբ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Բ, Երեւան, 2007, էջ 157-158:

Պահլավունու հետ, եւ վերջինս իր բարեկամ Սարգիս վարդապետ Անեցուն գրած մի նամակում դժգոհում է, որ Գագիկը հետ է կանգնում Աստծու առաջ տված երդումից[82] (թերեւս նկատի ունի թագադրության ժամանակ տված երդումը):

Հնարավոր է, որ Գրիգոր Պահլավունու՝ թագավորի նկատմամբ ունեցած որոշակի հանձնառությամբ, կամ «թագադիր ասպետի» հանգամանքով էր պայմանավորված նաեւ այն, որ չնայած գժտվածությանը, երբ 1044-ին Գագիկը Կոստանդնուպոլիս մեկնելով բյուզանդացիների լարած ծուղակն ընկավ, նրան հետ բերելու հույսով կայսրության մայրաքաղաք գնաց ոչ այլ ոք, քան Գրիգոր Պահլավունին[83]:

Բայց մինչ այդ Անիում ծավալվում են դրամատիկ իրադարձություններ: Անիի փոքր թագավորության դեմ դուրս է գալիս բյուզանդական դիվանագիտության հզոր մեքենան, որը, Հովհաննես Սմբատի կտակը որպես հաղթաթուղթ ունենալով, ի վերջո հասնում է իր նպատակին: Անիի պատմության այս շրջանի քաղաքական անցքերը հանգամանորեն ուսումնասիրված են, ուստի այստեղ դրանց չենք անդրադառնում: Սակայն շատ հետաքրքիր է հետեւել Պետրոսի գործունեությանը, որն այս շրջանում կատարեց Հայ եկեղեցու ավանդական կարգերից շեղվող եւս մի քայլ: Մրենի արձանագրություններից մեկը, որը Գագիկ Բ-ի կողմից՝ վանքի որոշ հարկերը թողնելու մասին է, սկսվում է հետեւյալ կերպ. «ՆՂ (1041) թուականութեանս Հայոց **ի հայրապետութեան Տէր Պետրոսի եւ Խաչկա**

---

[82] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 63: Գրիգոր Պահլավունին Պետրոս կաթողիկոսին հասցեագրած նամակում Գագիկից ու արքունիքից դժգոհում է, նշելով, որ իր արած բարիքի դիմաց իրեն չարով են հատուցում (նույն տեղում, էջ 11):

[83] Կոստանդնուպոլսում համոզվելով, որ Գագիկն այլեւս չի վերադառնալու եւ բյուզանդական իշխանության հաստատումն անխուսափելի է, Գրիգոր Պահլավունին կայսրին է հանձնում իր կալվածք Բջնին, դրա փոխարեն ստանում հողեր Մեսոպոտամիա (Միջագետք Հայոց) բանակաթեմում, միաժամանակ ստանում է մագիստրոսության պատիվ ու կուսակալի պաշտոն:

Հայոց կաթողիկոսաց այս իմ հրամանք են Գագկա Շահանշահի որդոյ Աշոտո, ազատեալ եմ զՄրենոյ զհարկն...»[84]:

Ընդունված է եղել այն կարծիքը, որ Պետրոսն իր քրոջ որդուն՝ Խաչիկին (Խաչիկ Բ Անեցի) տեղապահ է նշանակել այն ժամանակ, երբ բյուզանդացիները իրեն դուրս են բերել Անիից (ըստ Լաստիվերցու՝ Արծն ուղարկելով, ըստ Ուռհայեցու՝ Կոստանդնուպոլիս կանչելով), եւ ինքն էլ մտածել է, թե գուցե հույներն այլեւս իրեն չեն թողնի Անի վերադառնալ[85]: Բայց ինչպես տեսնում ենք, արդեն Գագիկ Բ-ի գահակալության սկզբում Խաչիկը հիշատակվում է որպես Պետրոսի աթոռակից կաթողիկոս: Արձանագրության մեջ նշված Հայոց ՆՂ թվականն ընդգրկում է 1041 թ. մարտի 11-ից 1042 թ. մարտի 10-ն ընկած ժամանակաշրջանը: Նույն ՆՂ թվականի մի հիշատակարան թույլ է տալիս ասելու, որ Պետրոսն իր քրոջորդուն աթոռակից է դարձրել Հովհաննես Սմբատի մահից հետո[86]:

Այսպիսով, Պետրոս Ա-ն օգտվել է հենց իր աթոռակալությամբ առաջացած նախադեպից եւ իր կենդանության օրոք որոշել հաջորդ կաթողիկոսին: Բայց, ինչպես Մաղաքիա Օրմանյանն է նկատում, «Պետրոսի այդ ըրածը հիմնովին կը տարբերէր Սարգիս կաթողիկոսի իրեն համար ըրածէն: Սարգիս պաշտօնապէս գործէ քաշուելով ամենայն ինչ Պետրոսի կը թողուր, մինչ Պետրոս աստիճանն ու գործը իրեն վրայ պահելով, իրեն լիազօր տեղակալ եւ փո-

---

[84] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 197:

[85] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1443:

[86] «...ի թուականութեանն Հայոց ի ՆՂ (1041) եւ ի կաթողիկոսութեանն Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ վերադիտողի, յորժամ Յաւանէս Հայոց թագաւորն վախճանեցաւ ի Քրիստոս եւ ետ զթագաւորութիւնն իւր՝ որդւոյ եղբաւր իւրոյ, որ կոչի Գագիկ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 87): Ինչպես տեսնում ենք, հիշատակարանը գրվել է Հայոց ՆՂ թվականին, երբ մահացել էր Հովհաննես Սմբատը, իշխանությունը անցել էր Գագիկ Բ-ին, եւ կաթողիկոսն էր Պետրոսը:

խանորդ կամ աթոռակից մը կը հաստատէր»[87]: Պետրոսի կատարածը տարբերվում էր նաեւ նրանով, որ իր հաջորդին որոշելիս նա ոչ պատահականորեն կանգ էր առել հարազատ քրոջ որդու թեկնածության վրա: Դա հավանաբար արվել էր նախորդ ժամանակաշրջանի խռովահույզ իրադարձությունների կրկնությունից ապահովագրվելու եւ վստահելի գործակից ունենալու համար: Դիտելի է նաեւ, որ Պետրոսը փայլուն կերպով էր ընտրել այդ գործի իրականացման պահը. մահացել էր Հովհաննես Սմբատը, գահի շուրջը ստեղծվել էր անորոշ վիճակ, որի հաղթահարումը տեղի ունեցավ պատանի Գագիկի թագադրությամբ: Կարելի է ասել, որ այս իրավիճակում Պետրոսն իր աթոռակցին ու հաջորդին որոշել ու կաթողիկոսական օծման է արժանացրել ժամանակի քաղաքական թույլ իշխանությունից միանգամայն անկախ, իր իսկ հայեցողությամբ:

Գագիկ Բ-ի իշխանությունը չճանաչող Բյուզանդիան մեծացնում է ճնշումը Անիի Բագրատունյաց թագավորության դեմ, սեփական ուժերի հետ մեկտեղ նրա դեմ դուրս բերելով Դվինի ամիրային եւ Դավիթ Անհողինին: Ի վերջո կայսր Կոստանդին Թ Մոնոմախը (1042-1054) իշխանության գալուց անմիջապես հետո, հաշտություն կնքելու եւ բարեկամություն հաստատելու պատրվակով Գագիկին հրավիրում է Կոստանդնուպոլիս (1044), բայց տեղ հասնելուն պես նրան արգելափակում եւ այլեւս թույլ չի տալիս հայրենիք վերադառնալ, պահանջում է Անին փոխանակել կայսրության այլ քաղաքի հետ: Առանց գահակալի մնացած Անին փորձում է դիմադրություն ցույց տալ: Իրավիճակն այստեղ տնօրինում են «քաղաքի գլխաւորքն»[88]: Հույների արարքից վիրավորված անեցիների շրջանում առաջ են գալիս տարբեր խմբակցություններ, որոնք մտածում են քաղաքը հանձնել Դավիթ Անհողինին կամ Վրաց Բագրատ թա-

[87] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1443:
[88] Արիստակես Լաստիվերցի, էջ 62:

գավորին, անգամ Դիվինի Աբուլասվար ամիրային, որի կինը Գագիկ Բ-ի քույրն էր[89]: Այդ ժամանակ տեսնելով անեցիների տրամադրությունները, վճռական քայլերի է դիմում Պետրոս կաթողիկոսը. «Իբրեւ ետես հայրապետն Պետրոս զայսպիսի խորհուրդ, թէ ո՛ւմ եւ իցէ՝ ի գնալ է քաղաքս, առաքէ առ այն (բյուզանդական կուսակալը – Կ. Մ.), որ ունէր զիշխանութիւն արեւելից կողմանն, որ նստէր ի քաղաքն Սամուսատ... եւ գրէ, թէ՝ Ծանո՛ թագաւորին, թէ մեզ զինչ հատուցանէ փոխարենս, եւ ես տաց զքաղաքս եւ զայլ ամուրս որ յաշխարհիս են: Իսկ նա, իբրեւ լուաւ, փութապէս ծանոյց թագաւորին. եւ լուեալ թագաւորին, գանձիւք եւ իշխանութեամբ հաճեալ զկամս նորա, եւ այսու տիրեցին Անւոյ եւ ամենայն աշխարհին»[90]: Պատմիչի խոսքերը մեկնաբանության կարիք չունեն, միայն նկատենք, որ Պետրոսն Անին բյուզանդացիներին հանձնելու միանձնյա որոշողը չէր, այստեղ իրոք կար բավական ուժեղ հունասեր խմբակցություն, որն էլ կատարեց կայսրության ցանկությունը:

Անի եկած բյուզանդական առաջին կուսակալ Իասիտեսը (Լաստիվերցին նրան կոչում է Ասիտ) «եկեալ անչափ պատուով մեծարէ զհայրապետն Պետրոս»[91]: Սակայն Պետրոս կաթողիկոսի այդ մեծարական վիճակը շատ կարճ տեւեց: Իասիտեսի՝ Դվինի ամիրայի դեմ ձեռնարկած անհաջող արշավանքից հետո (1046-ի աշուն) նրան փոխարինեց Կատակալոն Կեկավմենոսը, որը բացահայտեց բյուզանդական քաղաքականության իրական դեմքը: Քրիստոնյա հզոր հարեւանի հովանու տակ ապահովաբար ապրելու մասին որոշ հայ գործիչների՝ այդ թվում Պետրոս Ա-ի հույսերը խաբկանք դուրս եկան: Կատակալոն Կեկավմենոսը քաղաքից հեռացրեց կաթողիկոսին՝ հայտնելով, թե կայսրը հրամայել է, որ նա հաստատվի

---

[89] Արիստակես Լաստիվերցի, էջ 62, К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов, с. 167-168.
[90] Արիստակես Լաստիվերցի, էջ 62-63:
[91] Նույն տեղում, էջ 63:

Արծն քաղաքում. «...խաբանօք հանէ զնա (Պետրոսին) ի քաղաքէն, ասելով եթէ հրամայեալ է քեզ թագաւորն տեղի բնակութեան ի Կարին գաւառի յԱրծին աւանի»[92]: Փաստորեն Գագիկ Բ-ին գահից զրկելուց եւ Անին զավթելուց հետո բյուզանդացիները ձեռնարկեցին Հայոց կաթողիկոսությունը կազմալուծելու գործը, որի առաջին քայլը կաթողիկոսին աթոռանիստ վայրից հեռացնելն էր:

Պետրոսը կանխազգում է, որ կարող է այլեւս իրեն չթույլատրվի Անի վերադառնալ եւ որոշ նախապատրաստություն է տեսնում, կաթողիկոսական օծում ստացած Խաչիկին թողնում է քաղաքում, գաղտնի մեռոն օրհնում եւ թաքցնում, որ բյուզանդացիների ձեռքը չընկնի[93]: Այս ամենից հետո է, որ Պետրոսը հանդիսավոր շքախմբով, կաթողիկոսարանի կարեւոր պաշտոնյաների եւ մեծաթիվ հոգեւորականների ուղեկցությամբ թողնում է Անին եւ ուղեւորվում Արծն: Սակայն արդեն մայրաքաղաքից հեռացած կաթողիկոսի հետ հույները վարվում են առանց այլեւայլությունների: Ըստ Լաստիվերցու՝ Արծնում Աստվածահայտնության տոնի օրը (1047 թ. հունվ. 6) «հասին կալանաւորք» եւ Պետրոսին տարան Կարինի բերդերից մեկը, իսկ նրա քրոջ որդի Խաչիկին Անիից բերեցին Սեւ քար կոչվող բերդը եւ նրանց արգելափակված պահեցին մինչեւ Զատիկ (1047 թ. ապրիլի կեսեր), որից հետո տարան Կոստանդնուպոլիս:

Կայսրության մայրաքաղաքում Պետրոսին պատշաճ ընդունելության են արժանացնում: Նա այստեղ մնում է երեք տարի, ինչպես Արիստակես Լաստիվերցին է վկայում՝ կայսրը «բազում պատուով եւ մեծարանօք ընկալաւ եւ առատ ռոճկօք հրամայեաց պաշտել զնա. բայց առ իւր պահեաց զնա ամս երիս, քանզի **կասկածէր թողուլ ի Հայս՝ թէ երթեալ ապստամբեցուցանէ զԱնի**»[94]: Պատմիչի վերջին խոսքերը հաստատում են, որ երբեմնի հունասեր հայրապետն արդեն վտանգ էր ներկայացնում հենց հույների համար:

---

[92] Նույն տեղում:
[93] Մատթեոս Ուռհայեցի, էջ114:
[94] Արիստակես Լաստիվերցի, էջ 82:

Ի վերջո, Ատոմ Արծրունու միջնորդությամբ, Պետրոսը իրավունք է ստանում հեռանալ Կոստանդնուպոլսից եւ նրան թույլատրվում է հաստատվել Սեբաստիայում: Ըստ էության բյուզանդացիները Հայոց կաթողիկոսի հետ վարվում են այնպես, ինչպես մինչ այդ վարվել էին հայկական մեծ ու փոքր թագավորությունների տիրակալների հետ, նրանց հեռացնելով սեփական կալվածքներից ու բուն երկրից: Ինչպես երեւում է, Սեբաստիայում հաստատված կաթողիկոսը զգալի չափով մեկուսացման մեջ է եղել, քանի որ անգամ նրա մահվան թվականի մասին տեղեկությունները բավական տարբեր են: Գրականության մեջ ընդունված է Պետրոսի մահվան տարեթիվ համարել 1058 թ., որը գալիս է Մաղաքիա Օրմանյանից: Նա տատանվելով տարբեր աղբյուրների հաղորդած 1053 կամ 1054 եւ 1058 թվականների միջեւ, ընտրել է վերջինը[95]: Ռ. Վարդանյանը Արիստակես Լաստիվերցու եւ Մատթեոս Ուռհայեցու հայտնած տվյալները համադրելով Պետրոսի մահվան թվական է առաջարկում 1053 թ.[96]: Սամվել Անեցու Ժամանակագրության հնագույն օրինակում (1176 թ.) Պետրոսի տարիները հասնում են մինչեւ Հայոց ՇԳ (1054) թվականը (Մատենադարան, ձեռ. 5619, էջ 97ա): 1057 թ. գրված մի հիշատակարանում, ուր առաջին անգամ հիշվում է Խաչիկ Անեցին որպես միանձնյա աթոռակալ, նշվում է. «Ի կաթողիկոսութեանն տեառն Խաչկա, **յորժամ ի Թաւբլուրի վանսն էր**»[97]: Հայտնի է, որ Պետրոսի մահից անմիջապես հետո Խաչիկին տարել են Կոստանդնուպոլիս եւ պահել երեք տարի, որից հետո նրան թույլատրել են հաստատվել Թավբլուրում: Այսինքն, հիշատակարանից դատելով, Պետրոսը մահացել է 1057 թվականից առնվազն երեք տարի առաջ: Ա. Մաթեւոսյանը Պետրոս Ա-ի տարեթվեր է նշել 1019-1054 թթ.[98]: Կարծում ենք, որ Սամվել Անեցու հնագույն ընդօրինա-

---

[95] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1460:
[96] Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երեւան, 1999, էջ 563:
[97] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 100:
[98] Նույն տեղում, էջ 102:

կությունը եւ 1057 թ. հիշատակարանը նկատի ունենալով պետք է հենց այս թվագրումն ընդունել եւ Պետրոսի մահվան թվական համարել 1054-ը:

Ինչ վերաբերում է Պետրոս Ա-ի գործունեության գնահատականին, ապա իրողությունն այն է, որ նա կաթողիկոսական աթոռին բազմեց մի բարդ ժամանակաշրջանում, երբ կաթողիկոսը, ով էլ որ լիներ, դժվար թէ կարողանար խուսափել քաղաքական հարցերի մեջ ներքաշվելուց: Պարզապես Պետրոսն այն անձն էր, որ քաղաքականության մեջ մտավ հոժարությամբ եւ ոչ առանց անձնական շահադիտության: Դրանով հանդերձ նրա բյուզանդասիրությունը երբեք դուրս չեկավ քաղաքական ոլորտից, եւ նա Հայոց եկեղեցու դավանանքն անսակարկելի պահեց: Համենայն դեպս ո՛չ Արիստակես Լաստիվերցին, որը կաթողիկոսի համարձակ քննադատն է, ո՛չ էլ մեկ այլ միջնադարյան հեղինակ, ակնարկ անգամ չունեն, որ Պետրոս Ա-ը բյուզանդացիների հետ առնչված լինի եկեղեցական, դավանաբանական հարցերով:

Պետրոսի մահից հետո միանձնյա աթոռակալ դարձած Խաչիկին, որ «Անեցի» մականունն ունեցող առաջին կաթողիկոսն է, բյուզանդացիներն այդպես էլ թույլ չեն տալիս այլեւս ոտք դնել հայրենի քաղաք եւ անցնում են բացահայտ հալածանքների: Մատթեոս Ուռհայեցին այս կապակցությամբ գրում է. «...**յորժամ մեռաւ տէր Պետրոսն, յայնժամ յարեան Հոռոմք ի վերայ սուրբ աթոռոյն** եւ կամեցան եղծանել զնա եւ կամեցան առ հասարակ դարձուցանել զՀայք ի հաւատն անօրէն Քաղկեդոնի»[99]: Բյուզանդացիները նախ անմիջապես Սեբաստիայից Կոստանդնուպոլիս են տանում Խաչիկին, ապա կողոպտում այստեղ եւ Անիում պահված կաթողիկոսարանի գանձերը[100]: Նրանք առանձնակի ջանադրությամբ փորձում են տիրանալ Պետրոս կաթողիկոսի գանձերին եւ դրանց տեղն իմանալու համար խոշտանգում են շատերին («արարին Հոռոմք

[99] Մատթեոս Ուռհայեցի, էջ150:
[100] Արիստակես Լաստիվերցի, էջ 82:

խնդիր բազմութեան գանձուցն ոսկւոյ եւ արծաթոյ Տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի եւ բազումս ի խոշտանգս մատնեցին ի Սեբաստիա»)[101]:

Բյուզանդական կրոնական ճնշումն արտահայտվում էր Հայ եկեղեցուն ներկայացված դավանաբանական պահանջով (Քաղկեդոնի ժողովի ընդունում)՝ Հայաստանում քաղկեդոնական եպիսկոպոսությունների հիմնադրմամբ եւ քաղկեդոնականություն ընդունած մարդկանց եւ հատկապես ազնվականներին որոշակի արտոնությունների տրամադրմամբ:

Հույներն աննախադեպ ճնշում են գործադրում Հայոց կաթողիկոսի վրա՝ «ընդ հարկիւ կամէին արկանել զնա... Եւ ապա ի հարց եւ ի փորձ արկեալ, եւ սպառնալիս եւս յաւելուին՝ եթէ ոչ ելանիցես աստի, եթէ ոչ զիրամայեալսն ի մէնջ յանձն առնուցուս»[102]: Սակայն Խաչիկ Անեցին անդրդվելի է մնում: Հաստատակամ կաթողիկոսի եռամյա տառապանքներն ավարտվում են, երբ նախկին գահակալ Գագիկ Բ-ի, Կարսի թագավոր Գագիկ Աբասյանի եւ ուրիշների միջնորդությամբ հաջողվում է նրան դուրս բերել կայսրության մայրաքաղաքից եւ բնակության տեղ ապահովել Փոքր Հայքում՝ Թավբլուրում: Մի քանի տարի այստեղ բնակվելուց եւ 1064 թ. Անիի՝ սելջուկյան գրավման ու ավերման կսկիծն ապրելուց հետո, Խաչիկ Անեցին վախճանվում է 1065 թ.:

Սակայն կայսրության վարած քաղաքականությունից անկախ, հայ ժողովրդի գիտակցության մեջ Անին շարունակում էր երկրի օրինական կաթողիկոսանիստ համարվել: Արիստակես Լաստիվերցին, խոսելով բյուզանդական տիրապետման մասին, գրում է. «Այժմ թագաւորն անկեալ ի պատուոյ, իբրեւ զգերի կալանաւոր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս եւ **հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրեւ զկին նորա-**

[101] Մատթեոս Ուռհայեցի, էջ 150:
[102] Արիստակես Լաստիվերցի, էջ 83:

հարսն՝ մնացեալ ի յայրիութեան»[103]: Այսինքն՝ հայրապետական աթոռանիստն Անին էր, միայն թե այնտեղ չէր աթոռակալը: Իսկ Մատթեոս Ուռհայեցու հայտնածից երեւում է, որ Անիի սելջուկյան զավթումից հետո Թավբլուրում գտնվող Խաչիկ կաթողիկոսը ողբում է նույն այդ աթոռի ավերումը՝ «սուգ ունէր Տէր Խաչիկ ի սրտի իւրում եւ յիշեալ **զաւերումն հայրապետական աթոռոյն Տանն Հայոց»**[104]: Պատահական չէ, որ աղբյուրները Խաչիկ Անեցուն համարում են «պանդխտության» մեջ գտնվող կաթողիկոս[105]:

Խաչիկ Անեցու մահից հետո բյուզանդացիները դիմեցին ծայրահեղ քայլի՝ Հայոց կաթողիկոսությունն ընդհանրապես վերացնելու համար արգելեցին նոր կաթողիկոսի ընտրությունը: Մեծ ճիգերի գնով միայն հայ ազնվականությանը հաջողվեց 1066 թ. իրականացնել նոր կաթողիկոսի՝ Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգորի (Վկայասեր) ընտրությունը, որը նույնպես հաստատվեց Հայաստանի սահմաններից դուրս, Ծամնդավում: Գրիգոր Բ Վկայասերը (1066-1105), սակայն, հեռու էր կաթողիկոսության վարչական գործերից եւ ամբողջովին տարված էր սուրբգրական ու վարքագրական գործերի՝ հունարենից հայերեն թարգմանելու աշխատանքով: Այս իրողությունը տարակուսանք է հարուցում այն առումով, որ պետականությունից զրկված, քաղաքականապես պառակտված եւ բյուզանդացիների հարուցած դավանաբանական խնդիրների հանդիման գտնվող հայ ժողովրդի հոգեւոր հովիվը, փաստորեն, կաթողիկոսի հանգամանքը պահպանում է սոսկ անվանապես: Գրիգոր Վկայասերի օրոք հանդես են գալիս մի քանի

---

[103] Արիստակես Լաստիվերցի, էջ 60:
[104] Մատթեոս Ուռհայեցի, էջ 164:
[105] Մատթեոս Ուռհայեցի, էջ 166, Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 419: Կ. Մութաֆյանը Թավբլուրը Խաչիկ Անեցու «աքսորավայրն» է համարում (Կ. Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երեւան, 2001, էջ 367):

այլ՝ չորս կամ հինգ կաթողիկոսներ (նախկինում չտեսնված մի բան), որոնց ձեռնադրությանը նա չի ընդդիմանում[106]:

Անին այդ նույն ժամանակ աստիճանաբար բուժում էր սելջուկյան ավերումից ստացած վերքերը: Կրոնական տեսակետից անեցիների համար ծանր հարված էր հատկապես նվաճողների կողմից Մայր տաճարի վերածումը մզկիթի: Բայց քաղաքի երիտասարդ ամիրա Շադդադյան Մանուչեն (որի մայրը Աշոտ Դ-ի դուստրն էր) փորձում է լավ հարաբերություններ հաստատել քաղաքացիների եւ սելջուկյան արշավանքից համեմատաբար քիչ տուժած Հասանյան տան՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի որդի Վասակի եւ սրա որդի Գրիգորի հետ:

Ահա այս պայմաններում, 1072 թ. Անի է գալիս կաթողիկոս Գրիգոր Վկայասերը: Պետրոսի հեռանալուց 26 տարի անց Հայոց կաթողիկոսը կրկին ոտք է դնում նախկին աթոռանիստ կենտրոնի նվիրական հողին: Վկայասերի այցելության շարժառիթը զուտ անձնական էր. նա եկել էր ծերացած մորը տեսության: Սակայն անեցիներն այս այցելությունից նշանակալի արդյունք քաղեցին, քանի որ կաթողիկոսն այստեղ եպիսկոպոս ձեռնադրեց Հասանյան Վասակի եւ իր քրոջ որդի Բարսեղին՝ նրան օժտելով «ընդարձակ իշխանութեամբ հսկողութեան Հայաստանի գաւառներու վրա իբր կաթողիկոսական փոխանորդ...»[107]: Դրանից որոշ ժամանակ անց՝ 1081 թ. Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ Բարսեղը Հաղբատում հանդիսավորապես ձեռնադրվում է Հայոց կաթողիկոս ու փառավոր երթով ուղեւորվում Անի: Բարսեղի կաթողիկոսական ձեռնադրության եւ Անիում հաստատվելու մասին բավական հանգամանորեն ու ոգեշնչված պատմում է Մատթեոս Ուռհայեցին. «...ի յամի ՇԼ (1081) արքեպիսկոպոսն Շիրակայ, որ էր ի քաղաքն Անի, որոյ անուն ասէին տէր Բարսեղ, յարուցեալ գնաց յաշխարհն Հայոց ի յԱղուան

---

[106] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1494-1496, 1515-1518, 1521-1525, 1532-1534:

[107] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1507:

գաւառի՝ ի Լոռէ քաղաք առ թագաւորն Հայոց Կիւրիկէ... եւ խնդրէր Բարսեղ առնել ձեռնադրութիւն կաթողիկոսութեան Հայոց: Զոր ժողովեալ թագաւորն Կիւրիկէ զեպիսկոպոսունս Աղուանից աշխարհին, եւ բերեալ զտէր Ստեփանոս կաթուղիկոսն Աղուանից ի վանքն, որ կոչի Հաղբաթ, **ձեռնադրեցին զտէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշխարհին Հայոց...: Յայսմ ժամանակի նորոգեալ եղեւ աթոռ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի...** Եւ ելեալ գայր Բարսեղ կաթուղիկոսն Հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի... եւ **նստուցին զտէր Բարսեղ յաթոռ տեառն Պետրոսի: Եւ եղեւ օրն այն օր մեծ եւ ուրախութիւն ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»**[108]:

Այսպիսի տեւական ջանքերով անեցիներին հաջողվում է կարճ ժամանակով վերականգնել Անիի կաթողիկոսական աթոռը: Հայ եկեղեցու ընդհանուր վիճակն այդ ժամանակ աննախադեպ էր: Պետականության անկման եւ Գրիգոր Վկայասերի թույլ կառավարման հետեւանքով առաջացել էին մի քանի հակաթոռ կաթողիկոսություններ, որոնց դեմ ոչ մի քայլ չէր ձեռնարկվում: Բարսեղ Անեցին 1090 թ. ուղեւորվում է սելջուկյան պետության սուլթան Մելիքշահի մոտ, նրանից արտոնություն ստանում հակաթոռ կաթողիկոսությունների դեմ գործելու համար, եւ հասնում է նշանակալից հաջողության:

1105 թ. Բարսեղ Անեցին գալիս է Կիլիկիայի սահմանամերձ Քեսունի հայկական իշխանություն, Կարմիր վանք, որտեղ մահամերձ Գրիգոր Վկայասերը նրան հայտնում է իր վերջին կամքը, ըստ որի Բարսեղից հետո Հայոց կաթողիկոս պետք է ձեռնադրվի իր քրոջ թոռը՝ Գրիգորը: Դրանից քիչ անց Գրիգոր Վկայասերը մահանում է, եւ 1105 թվականից Բարսեղը դառնում է միանձնյա աթոռակալ: Այդ ժամանակ նրա առաջ հարց է բարձրանում՝ վերադառնալ Անի՞, թե՞

[108] Մատթեոս Ուռհայեցի, էջ 236-238:

մնալ Քեսունի շրջանում, ուր գտնվում էր ժամանակի Հայոց ամենազորեղ իշխանությունը՝ Գող Վասիլ իշխանի գլխավորությամբ: Հավանաբար նկատի ունենալով այն հանգամանքը, որ նախկինում Հայոց քաղաքական եւ եկեղեցական իշխանությունները գտնվել են մեկ կենտրոնում, Բարսեղը որոշում է մնալ: Այս որոշումից դժգոհում են Հայաստանի խոշոր վանքերի առաջնորդները, բնականաբար, նաեւ անեցիները:

1113 թ. մայիսին դժբախտ պատահարի զոհ է դառնում Բարսեղ Անեցին, փուլ է գալիս նորաշեն մի տուն եւ մահացու վիրավորում այդտեղ գտնվող հայրապետին: Մահամերձ կաթողիկոսը հասցնում է երիտասարդ Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրել եւ դեպքից երեք օր անց մահանում է: Գրիգորը, որը հայտնի է Գրիգոր Գ Պահլավունի անունով, այդ ժամանակ տարբեր աղբյուրների համաձայն 15 կամ 17-18 տարեկան էր: Բարսեղի մահից մի քանի օր անց նա Հայոց կաթողիկոս է ձեռնադրվում եւ աթոռակալում մինչեւ 1166 թվականը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌՆ ԱՆԻՈՒՄ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԸ 12-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Գրիգոր Գ Պահլավունու՝ այդքան վաղ տարիքում կաթողիկոս ընտրվելուց դժգոհ Վասպուրականի Դավիթ եպիսկոպոսը 1114 թ. իրեն կաթողիկոս է հռչակում՝ հիմք դնելով Աղթամարի հակաթոռ կաթողիկոսությանը: Հետաքրքիր է, որ իր կաթողիկոսության լեգիտիմացման համար նա առաջին հերթին դիմում է անեցիներին, բայց մերժում ստանում[109]: Քեսունի Կարմիր վանքում գումարվում է եկեղեցական ժողով, որը բանադրանքի է ենթարկում Դավթին:

---

[109] Վարդան Արեւելցին գրում է. «Դաւիթ... ոչ եղեւ ընկալեալ, թէեւ շատից եղեւ աշխատ ընծայիւք եւ աղաչանաւք՝ մանաւանդ ի յԱնւոյ գլխաւորացն» (Վարդան Արեւելցի, էջ 120):

1116-1117 թվականներին խաչակիրների հետ հակասություններ-ի պատճառով կտրուկ փոխվում է քաղաքական իրավիճակը, մեկը մյուսի հետեւից վերանում են Կիլիկիայի սահմանամերձ գավառներ-ի հայկական իշխանությունները: Քեսունի իշխանությունն անցնում է Եդեսիայի կոմսին: Գրիգոր Գ Պահլավունին ստիպված թողնում է Կարմիր վանքն ու տեղափոխվում Տլուք գավառի Ծովք փոքրիկ ամրոց, ուր իշխում էր նրա եղբայր Վասիլը: Հայոց կաթողիկոսական աթոռը զրկվելով քաղաքական հենարանից, հայտնվում է դժվարին կացության մեջ:

Ահա նման պայմաններում Գրիգորը բանակցություններ է սկսում 1110 թ. մահացած Մանուչեի որդու, Անիի նոր ամիրա Աբուլասվարի հետ՝ աթոռը Անի փոխադրելու համար: Անիի Մայր տաճարի քահանա Սամվել Անեցին, որն իր Ժամանակագրությունը գրել է հենց Գրիգոր Գ Պահլավունու պատվերով, միակ հեղինակն է, որ հայտնում է այդ մասին: Նա գրում է. «**Բայց սրբազան հայրապետն**… **Տէր Գրիգորիս, վասն զի ուխտ սիրոյ ունէր առ Ապլասուար՝ վասն իւր սեփհական աթոռոյս, գալ այսրէն նորա յաւժար կամակցութեամբ**…»[110]: Սակայն Անիում ծավալվող քաղաքական անցքերն ակամա խափանում են այս կարեւոր ձեռնարկը:

Անիի պատմության մեջ 12-րդ դարը բնորոշվում է որպես մի շրջան, երբ Վրաց թագավորները պայքարում էին քաղաքը Շադդադյան ամիրաներից խլելու համար: Երեք անգամ՝ 1124-26, 1161-64, 1174-76 թվականներին քաղաքն անցնում է վրացիներին եւ կրկին վերադարձվում Շադդադյաններին: Ահա այս բազմամյա հակամարտության սկիզբն էր, որ ժամանակով համընկավ կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու՝ Անիում հաստատվելու ցանկության հետ: Աբուլասվարից դժգոհ անեցիների հրավերով Վրաց Դավիթ Դ Շինարար (1089-1125) թագավորը 1024 թ. գրավեց քաղաքը, ամիրային ընտանիքով հանդերձ գերեց, ուղարկեց Վրաստան, ուր բոլորը

[110] Անեցի, էջ 127:

մահացան: Դրանից հետո Աբուլասվարի որդիներից մեկը՝ Փատլունը, համախմբելով համակիր մահմեդական ուժեր, մեծ վնասներ հասցրեց Անիին եւ ի վերջո կարողացավ երկու տարի անց հետ ստանալ քաղաքը:

Այս իրադարձությունները խափանեցին Գրիգոր կաթողիկոսի եւ Շադդադյանների պայմանավորվածությունը: Սամվել Անեցին խոսելով 1124-26 թթ. դեպքերի մասին, թեեւ հիմնավորապես պատճառաբանում է անեցիների վարքագիծը, բայց հետո, փաստորեն, մեղադրում է իր համաքաղաքացիներին, որոնց ընդվզման հետեւանքով երկիրը մատնվեց թշվառության, իսկ կաթողիկոսն էլ չկարողացավ Անիում հաստատվել: Ըստ պատմիչի՝ Ապուսուարի դեմ անեցիների ընդվզման մասին լսելով՝ կաթողիկոսը «խիստ զայրացավ»[111]:

Այսպիսով 1120-ական թվականներին Գրիգոր Գ Պահլավունու՝ Անիում հաստատվելու ծրագիրը ձախողվում է, սակայն կաթողիկոսը մշտական կապ է պահպանում քաղաքի հետ: Պատահական չէ, որ նա ժամանակագրություն է պատվիրում հենց քաղաքի Մայր տաճարի քահանա Սամվել Անեցուն:

Գրիգոր Գ Պահլավունին երկրորդ անգամ փորձում է Անի տեղափոխվել 1149-50 թվականներին, ինչի մասին տեղեկացնում է Սմբատ Սպարապետը: Պատմիչը հայտնում է, որ Իկոնիայի սուլթանի արշավանքի հետեւանքով քրիստոնյա իշխանների ձեռքին գտնվող մի շարք բերդերի գրավման պատճառով Գրիգոր կաթողիկոսը որոշում է դիմել Վրաց թագավորին եւ տեղափոխվել Անի: Ըստ պատմիչի՝ քաղաքն այդ ժամանակ Վրաց տիրապետության տակ էր, սակայն իրականում Անին պատկանում էր Շադդադյաններին, որոնք որոշ կախման մեջ էին Վրաց թագավորից:

Կաթողիկոսը Անի գնալու համար ճանապարհ է ելնում, սակայն նախ հյուրընկալվում է Թլպաշար ամրոցում, որի լատին տիրուհին տեղեկանալով նրա մտադրության մասին, խոստանում է Հայոց կա-

[111] Անեցի, էջ 127:

թողիկոսին հատկացնել Հռոմկլա անառիկ ամրոցը: Գրիգոր Գ-ն ուրախությամբ ընդունում է այդ առաջարկը եւ կարճ ժամանակ անց տեղափոխվում Հռոմկլա[112]: 1150 թ. Գրիգոր Գ Պահլավունին Հռոմկլայում հիմք է դնում մի կայուն կաթողիկոսանիստ կենտրոնի[113]: Դրանից հետո Գրիգոր Գ. Պահլավունու եւ նրա հաջորդների՝ կաթողիկոսներ Ներսես Շնորհալու (1166-1173), Գրիգոր Տղայի (1173-1193) եւ մյուսների համար աթոռի՝ Անի փոխադրության հարցն օրակարգից դուրս է գալիս, բայց այդ գաղափարը շարունակում է հարատեւել Անիում: Այստեղ բավական զորացել էր քահանայական դասը, որը գլխավորում էր Անիի արքեպիսկոպոսը: Վերջինս հատուկ հեղինակություն էր վայելում նաեւ համահայկական եկեղեցական գործերում: Ինչպես Մաղաքիա Օրմանյանն է գրում. «Անւոյ արքեպիսկոպոսները լիազոր իշխանութեամբ գլխաւորութիւնը կը պահէին բոլոր Հայաստանի մէջ **եպիսկոպոս յարեւելս հիւսիսոյ** կոչմամբ եւ միայն մեծագոյն իրողութեանց մէջ յարաբերութիւն ունէին Հռոմկլայի աթոռին հետ»[114]:

Շատ կարեւոր էր նաեւ Անիի աթոռակալի տոհմական ծագումը: Հիշյալ շրջանում Անիի արքեպիսկոպոսները Պահլավունիների հետ խնամիացած Հասանյան (Ապիրատյան) իշխանական տոհմի ներկայացուցիչներն էին, փաստորեն Հռոմկլայում գտնվող կաթողիկոսների հետ ազգակցական կապ ունեին եւ եթե վերջիններս իրենց համարում էին Գրիգոր Լուսավորչի տոհմակիցներ, ապա այդ առավելությունից զուրկ չէին նաեւ անեցի աթոռակալները:

Այս պայմաններում է, որ անեցիները կաթողիկոսական աթոռը վերադարձնելու ուղղությամբ նոր փորձ են կատարում: Շարժումը գլխավորում է քաղաքի Բարսեղ արքեպիսկոպոսը, որը պատմութ-

---

[112] Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 168-169:

[113] Կաթողիկոսական աթոռը մնում է Հռոմկլայում մինչեւ 1292 թ., երբ եգիպտացիները գրավում են ամրոցը, գերում կաթողիկոսին: Դրանից հետո աթոռը տեղափոխվում է Կիլիկիայի հայկական թագավորության մայրաքաղաք Սիս:

[114] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1784:

յան մեջ հայտնի է **Բարսեղ Բ Անեցի** անունով: Այս եռանդուն գործիչը Բարսեղ Ա Անեցու եղբայր Գրիգոր իշխանի որդի Հասան մագիստրոսի որդին էր: Նա առաջին անգամ հիշվում է Անիի պարսպի բուրգերից մեկի 1160 թ. շինարարական արձանագրության մեջ:

Բարսեղ Բ Անեցին լավ հարաբերություններ էր պահպանում ինչպես Վրաց թագավորների, այնպես էլ Անիի Շադդադյան ամիրաների ու տեղի մահմեդականների հետ[115]: Հայտնի է, որ 1174 թ. Բարսեղը Վրաց թագավորի օգնությամբ գերությունից փրկագնել է եղբորը՝ իշխան Ապիրատին: Նրա օրոք Անիում ու նրա շրջակայքում վերելք է ապրում հոգեւոր եկեղեցական կյանքը, կառուցվում ու նորոգվում են բազմաթիվ եկեղեցիներ: Հավանորեն այս ժամանակ է կառուցվում Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու շքեղ գավիթը, ուր 1184 թ. իր եւ ծնողների հիշատակին նվիրված խաչքար է կանգնեցնում Բարսեղը[116]: 1186 թ. անեցիները մահմեդական ավազակներց զենքի ուժով գրավում են Ծառաքարը (Մաղասբերդ), որը Բարսեղի սեփականությունն էր[117]: 1191թ. նա մահմեդականներից գնում է Լմբատավանքը («ՈԽ (1191) կամաւ Աստուծոյ ես տէր Բարսեղ, որ գնեցի զվանքս յանաւրինաց…»[118]):

Իսկ ի՞նչ հարաբերությունների մեջ էր Բարսեղ Բ Անեցին Հռոմկլայի աթոռի հետ: Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի օրոք՝ 1177 թ. բյուզանդական Մանուել Ա Կոմնենոս կայսրից հույն եւ հայ եկեղեցիների միության խնդիրն արծարծող նամակ է ստացվում: Գրիգոր Տղան այս մասին ծանուցում է Հայաստանի եպիսկոպոսներին ու հոգեւորականությանը, որոնցից մերժողական պատասխան է ստանում: Այդ գրությունը ստորագրած հոգեւորականության անվանացանկը սկսվում է Բարսեղ Բ Անեցու անունով:

---

[115] Ներսես Լամբրոնացին Կիլիկիայի Լեւոն Երկրորդ իշխանին գրած թղթում Բարսեղին պարսավում է Անիի մահմեդական իշխանավորների հետ ջերմ հարաբերություններ ունենալու համար:

[116] Դիվան հայ վիմագրության, պր. Ա, էջ 31 :

[117] Վարդան Արեւելցի, էջ 136:

[118] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 164:

1178 թ. ապրիլին Հռոմկլայում գումարվում է եկեղեցական մեծ ժողով, որի հայաստանցի մասնակիցներից առաջինը դարձյալ հիշվում է Բարսեղը՝ «**Բասիլիոս արքեպիսկոպոս թագաւորանիստ Անի քաղաքի**»: Ժողովը բավական երկար է տեւում եւ ի վերջո ավարտվում է անարդյունք, քանի որ հոգեւորականության ավանդապահ մասը դավանաբանական գլխավոր հարցերում մնում է անզիջում, իսկ ժողովի արդյունքում ստորագրված փաստաթուղթն այդպես էլ չի հասնում Կոստանդնուպոլիս: Հատկանշական է, որ փաստաթղթի տակ Բարսեղի ստորագրությունը Հայոց եւ Աղվանից կաթողիկոսների ստորագրություններից հետո երրորդն է (այնուհետեւ գալիս են Անտիոքի, Երուսաղեմի, Տարսոնի, Եդեսիայի, Տփղիսի, Սյունիքի, Կեսարիայի արքեպիսկոպոսների ստորագրությունները): Այս փաստը եւս ցույց է տալիս Անիի արքեպիսկոպոսի գրաված բացառիկ դիրքը: Ժողովից հետո Բարսեղը վերադառնում է Անի, իսկ Հռոմկլայի աթոռը հետագայում եւս շարունակում է քայլեր ձեռնարկել եկեղեցիների միավորման ուղղությամբ՝ այս անգամ արդեն կապեր ստեղծելով լատինական՝ կաթոլիկ եկեղեցու հետ:

Հյուսիսային Հայաստանի հոգեւորականության շրջանում աստիճանաբար խորանում է այն համոզումը, որ անհրաժեշտ է սեփական կաթողիկոսական աթոռ ունենալ՝ հեռու մնալով այլ ազդեցություններից ու դավանաբանական վեճերից: Այս խնդրի իրականացման համար լավագույն թեկնածու է համարվում Անիի արքեպիսկոպոսը: Երբ 1193 թ. մահանում է Գրիգոր Տղան, Հայաստանում առաջ է քաշվում Բարսեղ Անեցու թեկնածությունը, բայց այն ընդունելություն չի գտնում կիլիկեցիների մոտ: Հռոմկլայում կաթողիկոս է ձեռնադրվում երիտասարդ եպիսկոպոս Գրիգոր Ե-ը, որը մեկ տարի անց Լեւոն Բ-ի (1198-ից՝ թագավոր) ճնշման զոհն է դառնում: Կիլիկյան զորացած արքունիքն ուղղակիորեն միջամտում է կաթողիկոսության գործերին: 1194 թ. վերջերին Սսում գումարվում է եկեղեցական ժողով, որը Լեւոն Բ-ի ցուցումով կաթողիկոս է ձեռնադրում Գրիգոր Զ Ապիրատին (1194-1203): Ընտրությունը կատար-

վում է առանց Հայաստանի հոգեւորականության կարծիքը հաշվի առնելու: Վերջիններս նախ հանդիմանական նամակ են հղում Լեւոնին՝ նշելով, որ չեն ճանաչում նոր կաթողիկոսի իշխանությունը, առաջարկում են նոր ընտրություն՝ առաջադրելով Բարսեղի թեկնածությունը եւ պահանջում արքունիքից հեռացնել Ներսես Լամբրոնացուն, որին կատարված դեպքերի գլխավոր մեղավորն են համարում: Լեւոնը միջանկյալ լուծում է գտնում, Լամբրոնացուն հեռացնում է, բայց Գրիգոր Ապիրատին թողնում է աթոռի վրա:

Դրանից հետո է, որ 1195 թ. Հայաստանի հոգեւորականության որոշմամբ Անիում կաթողիկոս է ձեռնադրվում Բարսեղ Բ Անեցին: Հռոմոսի վանահայր Պետրոսի 1195 թ. արձանագրության մեջ կարդում ենք՝ «**Ի թւ. ՈՒԴ** (1195) **յառաջին ամի կաթողիկոսութեան տեառն Բարսղի**...»[119]:

Ինչպես նշվեց, Հռոմկլայի կաթողիկոսական աթոռը գտնվում էր Կիլիկիայի հայոց իշխան եւ որոշ ժամանակ անց թագավոր դարձած Լեւոն Երկրորդի վերահսկողության ներքո, որը միանձնյա էր որոշում գահակալներին, հաշվի չառնելով տեղի հոգեւորականության, առավել եւս Հայաստանի հոգեւորականության կարծիքը: Մաղաքիա Օրմանյանի գնահատմամբ, նաեւ այդ էր պատճառը, որ Բարսեղի Բ Անեցու կաթողիկոս հռչակվելուց հետո Հռոմկլայի աթոռը նրա դեմ վճիռ չի արձակում: Պատմաբանը գրում է. «Կիլիկիոյ իշխանապետն ու կաթողիկոսը... չհամարձակեցան Բարսեղի դէմ վճիռ արձակել... եւ մտադրութիւն իսկ չդարձուցին Հայաստանի մէջ կատարուած իրողութեան: Այսպէս երկու կաթողիկոսներ, իրարու հակառակ, բայց հակառակութիւննին ծածկելով, կրցան միասին ապրիլ ու գործել...: Բարսեղ, սովորաբար Բարսեղ Բ Անեցի ճանչցուած, ոչ հակաթոռ, այլ աթոռակից մը պէտք է ըսուի, քանի որ իր տիտղոսն ու պաշտօնը կանոնապէս չմերժեցան ու չդատապարտեցան»[120]:

---

[119] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք..., էջ 150:
[120] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1784-1785:

Այսպիսով, Բարսեղ Ա Անեցու 1105 թ. Անիից հեռանալուց 90 տարի անց՝ 1195 թ. անեցիները մի վերջին անգամ վերականգնում են Անիի կաթողիկոսական աթոռը: Շուտով Անին վերջնականապես ազատվում է ամիրայական տիրապետությունից եւ, դատելով Հոռոմոսում գրված մի հիշատակարանից եւ մի քանի այլ փաստերից, 1198 թ. վերջերին, առանց դիմադրության դռները բացում Զաքարե եւ Իվանե Զաքարյանների գլխավորած հայ-վրացական զորքերի առաջ[121]: Այսպիսով, Անիում վերականգնվում է թե՛ կաթողիկոսական աթոռը, թե՛ քրիստոնեական իշխանապետությունը: Սակայն Զաքարյանները, որոնք Վրաց պետության պաշտոնյաներ էին, հավանաբար հայ-վրացական միջեկեղեցական հարաբերությունների սրումից խուսափելու համար Անիում կաթողիկոս ունենալու հարցում շահագրգռություն չեն ցուցաբերում:

Բարսեղի մահից հետո, որը տեղի է ունեցել մինչեւ 1203 թվականը, Անիում այլեւս նոր կաթողիկոս չի ձեռնադրվում, այլ միայն եպիսկոպոս՝ նույն Հասանյան տոհմից, կաթողիկոսի եղբայր Ապիրատ իշխանի որդի Սարգիսը (Սարգիս Ա):

Ամփոփելով կարող ենք ասել, որ Անին Հայոց պատմության մեջ բացառիկ դեր է ունեցել ոչ միայն Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք (961-1045 թթ.), այլեւ Հայոց կաթողիկոսության աթոռանիստ վայր լինելու շնորհիվ (992-1046 թթ.): Հայաստանը նվաճելու ձգտող Բյուզանդական կայսրությունը պայքար է մղել Բագրատունյաց թագավորության դեմ եւ հաջողության հասել

[121] Կ. Մաթեւոսյան, Անիում Զաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, N 1, էջ 280-283: Ա. Շահնազարյան, Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 140-142:

հիմնականում դիվանագիտական ճանապարհով: Հայոց թագավորությունը վերացնելուց հետո կայսրությունը գործողությունների է դիմել կաթողիկոսին եւ կաթողիկոսական աթոռը Անիից եւ բուն Հայաստանից դուրս բերելու, նրա ազդեցությունը թուլացնելու ուղղությամբ:

Բյուզանդական տիրապետության ավարտից հետո (1064 թ.) անեցիները կարճ ժամանակով (1081-1105 թթ.) վերականգնել են Անիի կաթողիկոսական աթոռը: 12-րդ դարի ընթացքում եղել են կաթողիկոսական աթոռը Անի վերադարձնելու նոր փորձեր, որոնք հաջողության չեն հասել, թեեւ Բարսեղ Բ Անեցի եպիսկոպոսը 1195 թ. հռչակվել է կաթողիկոս եւ մինչեւ իր մահը կրել այդ կոչումը:

ՀԱԶԱՐԱՄՅԱ ԲԱԳՆԱՅՐԻ ՎԱՆՔԸ

Անիից շուրջ 7-8 կմ արեւմուտք՝ Արջո Առիճ (Ալաջա) լեռան ստորոտում է գտնվում Բագնայր (Բգներ) հնագույն բնակավայրը, որի անունը, ինչպես Բագարան, Բագավան տեղանունները, հավանաբար ծագում է բագին բառից, այսինքն՝ դեռեւս հեթանոսական ժամանակներում այս վայրը հայերի համար պաշտամունքային կենտրոն է եղել[1]: Սակայն Բագնայրն ավելի շատ հայտնի է միջնադարյան վանքով, որը կառուցել է Բագրատունյաց թագավորության հեղինակավոր զինվորական գործիչ Սմբատ Մագիստրոսը:

Պատմիչ Սամվել Անեցին իր ժամանակագրության մեջ Հայոց ՆԾԹ (1010) թվականի դիմաց գրում է. «Սմբատ Մագիստրոսն շինեաց զիրեշտակաբնակ եւ զփափագատենչ վանքն՝ որ Բագնայր յորջորջիւր՝ ժողովե տղարանց աստուածայնոց»[2]: Սամվել Անեցու ժամանակագրության 1893 թ. վաղարշապատյան հրատարակության մեջ իրադարձությունների մեծ մասի վերաբերյալ նշված է միայն Փրկչական թվականը, որն այդ երկում երկու տարով առաջ է այժմ գործող թվականից[3]: Ըստ այդմ, հիշյալ հրատարակությունից օգտվողները Բագնայրի վանքի կառուցումը նշում են 1012 թվականին (այդպես է նշված Հայկական սովետական հանրագիտարա-

---

[1] Բնակավայրն այժմ թուրքերը Ղոզլիճա կամ Գոզլուճա են կոչում: 1970 թ. հրատարակած գրքում Հովի. Մարզպանյանը բնակավայրը կոչում է «30-40 ցած տանիքներէ բաղկացած գիւղ» (Յ. Մարզպանեան, Բաղդատական ակնարկ մը կրօնական ճարտարապետութեան վրայ եւ հայ ճարտարապետութեան տեղը անոր մէջ, Իսթանպուլ, 1970, էջ 151):

[2] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 105, հմմտ. ժամանակագրության 1176 թ. հնագույն ընդօրինակությունը՝ Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 94ա:

[3] Լ. Խաչիկյան, Վ. Հակոբյան, Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, ՀՍՍՌ ԳԱ հասարակական բաժանմունքի Տեղեկագիր, 1949, թիվ 2, էջ 82:

նում եւ այլուր), մինչդեռ ճիշտ է փաստի արձանագրումը Հայոց թվականով, որը նույնպես նշված է Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ (ձեռագրերում), եւ տվյալ դեպքում ՆԾԹ (1010) թվականն է: Այդպես են իրողությունն ընդունել նաեւ միջնադարյան հեղինակները: Սամվել Անեցուց օգտվելով՝ Սմբատ Մագիստրոսի ձեռամբ Բագնայրի վանքի կառուցման մասին հայտնում են Հովհաննես Սարկավագի Ժամանակագրության շարունակողը («ՆԾԹ (1010) թուին Սմբատ Մաքրաստրոսն շինէ զԲգնայրն տուն Աստուծոյ»)[4], նաեւ պատմիչներ Կիրակոս Գանձակեցին[5] եւ Մխիթար Այրիվանեցին[6]: Բագնայրի վանքի առաջին հետազոտող եւ 1864 թվականին վիմագրերը հրատարակող Մխիթարյան միաբան Ներսես Սարգիսյանը, որն օգտվել է Սամվել Անեցու երկի ձեռագրերից, նույնպես վանքի հիմնադրման մասին գրում է, որ թվականը «երաշխաւորեալ է մեզ ի Սամուէլէ՝ ի ՆԾԹ (1010) թուականիս»[7]:

Բագնայրի կառուցման թվականին հանգամանորեն անդրադարձանք, որովհետեւ այդ ճշտված տվյալի հիման վրա կարող ենք արձանագրել, որ 2010 թվականին լրացավ այս նշանավոր վանքի 1000-ամյակը:

ԲԱԳՆԱՅՐԻ ՎԱՆՔԸ ԿԱՌՈՒՑՈՂ ՍՄԲԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ

Բագնայրի վանքը կառուցող իշխանը՝ Սմբատ Մագիստրոսը, առաջին անգամ հիշատակվում է 998 թ. Ծմբո գյուղի մոտ տեղի ունեցած մահմեդականների դեմ մղված հաղթական ճակատամար-

---

[4] Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1951, էջ 25:

[5] Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 89:

[6] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 57:

[7] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 178: Նույն թվականն է գրում Սամվել Անեցու ձեռագրերից օգտված Ղ. Ալիշանը (Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 111), տե՛ս նաեւ Յ. Մարզպանեան, նշվ. աշխ., էջ 152:

տում, որտեղ հայ-վրացական միացյալ բանակի կազմում Վահրամ Պահլավունու եւ Աշոտ մարզպանի հետ գլխավորում էր Անիի թագավորության 6000-անոց զորամասը[8]: Ո՞ր տոհմից էր սերում Սմբատ Մագիստրոսը: Պատմագրության մեջ նա համարվում է սպարապետ Վահրամ Պահլավունու որդին: Սակայն սկզբնաղբյուրների քննությունից պարզվում է, որ Վահրամ Պահլավունին Սմբատ անունով որդի չի ունեցել եւ Սմբատ Մագիստրոսը միանգամայն այլ իշխանական տան ներկայացուցիչ է:

1004 թվականին իր «Տիեզերական պատմությունը» ավարտած Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը գրում է այն մասին, որ Մամլան ամիրան հսկայական բանակով հարձակվել է Դավիթ Կուրապաղատի իշխանության վրա, իսկ վերջինս դիմել է Հայոց եւ Վրաց թագավորներին՝ օգնության խնդրանքով: Գագիկ Ա Բագրատունին (989-1017) հատկացրել է վեց հազար զինվոր, որոնց գլխավորում էին երեք զորավարներ: Ասողիկի պատմության հրատարակության մեջ կարդում ենք. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հատեալ զգունդ ՁՌ (6000) զընտիր ընտիր վառելոցն՝ գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ զՄարմաշէն եւ զԲրգներն շինեաց, եւ Սմբատայ մաժիստռոսի, որդւոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»[9]:

Այստեղ ընդմիջարկության գոյության մասին կռահել է դեռ Ն. Ակինյանը: Նա գրում է. «Ինձի կը թուի թէ Ասողիկի բնագիրը ունեցած է լուսանցագրութիւններ, որոնք սխալմամբ բնագրին մէջ առնուած են. կառաջարկեմ կարդալ. «...որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ

[8] Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 270, Կ. Մաթեւոսյան, Սմբատ Մագիստրոս, «Հանդէս ամսօրեայ», 2008, էջ 173-186:

[9] Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 270: Տողատակում հրատարակիչը նշում է, որ օգտագործված որոշ օրինակներում եղել է այլ տարբերակ. «...իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ. եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ. եւ մարզպանին Աշոտոյ Պալհաւունւոյ, որ զՄարմաշէն շինեաց. որ զԲրգներն շինեաց» :

զՄարմաշէն շինեաց, եւ Սմբատա մաժիստռոսի որդւոյ Վահրամայ, որ զԲրգներն շինեաց, եւ մարզպանին Աշոտոյ»[10]:

Մատենադարանում պահվող Ասողիկի Պատմության հնագույն ձեռագիրը (թիվ 2865), որը 13-րդ դարից է, ընդօրինակված Հոհան Շիրակացի[11] գրչի ձեռքով, վերջնականապես պարզում է հարցը: Այնտեղ հեղինակային բնագրի հարեւանությամբ իրոք տեսնում ենք գրչի մի լուսանցագիր հավելում Մարմաշենի եւ Բագնայրի մասին, որը հաջորդ գրիչները ներմուծել են բնագրի մեջ եւ շփոթի առիթ ստեղծել: Ահավասիկ իրականում ինչ է գրել Ասողիկը. «Եւ Գագկայ յամենայն զաւրացն Հայոց հատեալ զգունդ վեցհազար զընտիր ընտիր վառելոցն, **գումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ որդւոյ Գրիգորոյ, եւ Սմբատայ մաժիստռոսի որդւոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ**»[12]: Այս հատվածից աջ՝ լուսանցքում, Վահրամի անվան հավասարությամբ սկսվում է յոթ կարճ տողերից բաղկացած Հոհան գրչի մանրատառ հավելումը. «**Պալհաւունոյ որ զՄարմաշէն շինեց: Որ զԲգնէրն շինեց**»[13]:

Սույն հավելմամբ Անիի շրջանում ապրած գրիչը ցանկացել է պատմիչի գրածին ավելացնել իրեն հայտնի փաստերն այն մասին, որ Վահրամ Պահլավունին Մարմաշենն է կառուցել, իսկ Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը, այդ պատճառով երկու տվյալն առանձնացրել է վերջակետով: Բայց հետագայի ընդօրինակողներն այդ տողերը՝ որպես միասնական միտք, ներմուծել են պատմության բնագրի մեջ, մի դեպքում՝ Վահրամի հոր անունից հետո (ինչպես Ասողիկի հրատարակության մեջ է), մյուս դեպքում՝ Աշոտ մարզպանի

---

[10] Ն. Ակինեան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 358:

[11] Կ. Մաթեւոսյան, Յոհան գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն եւ կատարած հավելումները, «Էջմիածին», 2008, Զ-է, էջ 102-112:

[12] Մատենադարան, ձեռ., թիվ 2865, էջ 236ա: Այս եւ հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են - Կ. Մ.:

[13] Նույն տեղում:

անունից հետո (ինչպես հրատարակության տողատակում նշված օրինակում)[14]:

Այժմ տեսնենք, թե կարո՞ղ էր արդյոք Սմբատ Մագիստրոսը Վահրամ Պահլավունու որդին լինել: Ասողիկը նշում է, որ Հայոց բանակը ղեկավարել են երեք հոգի՝ Գրիգորի որդի իշխանաց իշխան Վահրամը, Վահրամի որդի Սմբատ Մագիստրոսը, Աշոտ մարզպանը: Եթե Սմբատը Վահրամ Պահլավունու որդին լիներ[15], պատմիչը նրա անունը չէր կրկնի, այլ կնշեր իշխանաց իշխան Վահրամը եւ նրա որդին՝ Սմբատ Մագիստրոսը: Բայց Ասողիկը լավ էր ճանաչում իր ժամանակակիցներին: Ծմբոյի ճակատմարտի մանրամաս-

[14] Ուշագրավ հանգամանք է այստեղ նաեւ այն, որ Ասողիկի բնագրում, փաստորեն, չի օգտագործված «Պահլավունի» տոհմանունը: Այն նշված է հետագայի հավելման մեջ: Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն նվիրված մենագրության մեջ Լ. Խաչերյանը, հանգամանորեն քննելով Պահլավունիների մասին վաղ հիշատակությունները եւ նրանց իսկ թողած բոլոր արձանագրությունները, հանգում է այն եզրակացության, որ նրանք բավական ուշ են որդեգրել այդ տոհմանունը: Հեղինակի համար առեղծված է մնում, թե ինչպե՞ս է որ 1004 թ. իր Պատմությունն ավարտած Ասողիկը նշել է Պահլավունի տոհմանունը, եւ ակամա դա համարում է այդ անվան ամենավաղ հիշատակությունը (Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Լոս Անճելէս, 1987, էջ 30): Ասողիկի Պատմության հնագույն ձեռագիրը պարզություն է մտցնում նաեւ Պահլավունյաց տոհմաբանությանն առնչվող այս էական հարցում՝ փաստելով, որ պատմիչն այդ տոհմանունը չի հիշատակել:

[15] Վ. Վարդանյանը լիովին համոզված լինելով, որ Սմբատ Մագիստրոսը Վահրամ Պահլավունու որդին է, Ասողիկի Պատմության այդ հատվածից ընդհանրապես հանել է երկրորդ «Վահրամ» անունը եւ հատվածը թարգմանել հետեւյալ կերպ. «Գագիկը Հայոց զորքից առանձնացնում է (զռ) վեց հազար ամենաընտիր եւ զինավառ մի գունդ, հանձնում Մարմաշենն ու Բրգները կառուցող Գրիգոր Պահլավունու որդի իշխանաց իշխան Վահրամի եւ նրա որդի Սմբատ մագիստրոսի ձեռքը, ապա նաեւ Աշոտ մարզպանի…» (Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երեւան, 2000, էջ 331): Ավելացվել են բնագրում չեղած «նրա որդի» բառերը, միեւնույն ժամանակ կարծես ստացվում է, որ Մարմաշենն ու Բագնայրը Վահրամի հայր Գրիգորն է կառուցել:

ները նկարագրելով՝ նա նշում է՝ քանի որ Հայոց եւ Վրաց զորաբանակները թագավորներ չէին գլխավորում, ամեն տոհմ մարտի էր նետվում ինքնուրույն. «Իսկ զօրն Հայոց եւ Վրաց, զի ոչ թագաւոր զոք ունէին... **իւրաքանչիւրքն ըստ տոհմից եւ աւագութեան գնդից դիմէին**, առիւծաբար մռնչելով՝ յանտառացեալ բազմութիւն բանակին Պարսից»[16]: Սա եւս ցույց է տալիս, որ ճակատամարտի զորահրամանատարներին թվարկելիս պատմիչը տարբերակել է նրանց ըստ տոհմերի:

Վիմագիր եւ մատենագրական աղբյուրներում հիշատակվում են Վահրամ Պահլավունու երկու որդիները՝ Գրիգորը եւ Ապուղամրը: Գրիգորը, հավանաբար ավագն էր, քանի որ պապի անունն էր կրում: Հայտնի է, որ նա ծանր հիվանդություն ուներ: Ապուղամրը 1031 թ. Անիի Առաքելոց եկեղեցուն նվիրատվություն է կատարել եղբոր առողջության եւ երկարակեցության համար («վասն եղբաւր իմ Գրիգորոյ առողջութեան եւ կենաց յերկարութեան»)[17]: Բայց Ապուղամրը Գրիգորից ավելի վաղ է մահացել, դատելով Վահրամ Պահլավունու՝ 1031-1033 թթ. ժամանակամիջոցին գրած մի արձանագրությունից[18]: Ն. Ակինյանը, Սմբատին անդրադառնալով, գրում է. «Վահրամ, որ յիշած է իր արձանագրութիւններու մէջ իր եղբայրներու եւ զաւակներու անունները, խօսք չէ ըրած ամենեւին Սմբատիս մասին»[19]: Սակայն ավանդույթի ուժն այնքան մեծ է եղել, որ այս կարեւոր դիտարկումն անելով հանդերձ, նա Սմբատին համարել է Վահրամ Պահլավունու որդի:

---

[16] Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 272-273:

[17] Դիվան հայ վիմագրության, պր. Ա, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 12:

[18] Նույն տեղում, էջ 32, Վ. Վարդանյան, Պահլավունիները Հայոց պետականության եւ հոգեւոր անաղարտության պահապաններ, Երեւան, 2008, էջ 54:

[19] Ն. Ակինեան, նշվ. աշխ., էջ 358: Նկատենք, որ Սմբատ անունն ընդհանրապես չի հանդիպում Պահլավունիների տոհմում:

Ուսումնասիրողները, ցավոք, աչքաթող են արել եւս մի էական հանգամանք: Հայտնի է, որ Վահրամ Պահլավունին եւ իր որդի Գրիգորը զոհվեցին 1045 թ. աշնանը բյուզանդացիների՝ Դվինի ամիրայի դեմ կատարած արշավանքի ժամանակ: Վահրամն այդ պահին տարիքն առած մարդ էր (նրա տարիքի մասին ուղղակի վկայություններ չեն պահպանվել): Եթե ենթադրենք, թե իր մահվան ժամանակ նա ութսուն տարեկան էր, ինչպես Կ. Կոստանյանցն է գրում՝ «1047-ին պատերազմի մէջ մեռաւ... ութսունամեայ ծերունին Վահրամ»[20], ապա 1045-ից 80 տարի հետ գնալով կգտնենք նրա ծննդյան թվականը՝ 965, եւ պարզ կլինի, որ Ծմբոյի ճակատամարտի ժամանակ՝ 998 թվականին, նա 33 տարեկան էր: Մոտավոր ելակետ ունեցող այս հաշվարկի մեջ մեկ-երկու տարվա տեղաշարժը առաջ կամ հետ չի կարող էական նշանակություն ունենալ: Իրողությունն այն է, որ Ծմբոյի ճակատամարտի ժամանակ Վահրամ իշխանաց իշխանն այնքան երիտասարդ էր, որ չէր կարող զորավարության տարիքի, առավել եւս՝ մագիստրոսի պատվաստիճանի հասած որդի ունենալ:

Դատելով Ծմբոյի ճակատամարտի ժամանակ Սմբատի մագիստրոս[21] լինելու հանգամանքից, կարելի է ասել, որ նա նվազագույնը Վահրամ Պահլավունու սերնդակիցն էր, կամ, հավանաբար, ավելի տարեց մարդ էր: Նրանց տարիքի հարաբերակցության մոտավոր կողմնորոշիչ կարող է լինել նաեւ այն, որ Սմբատը որպես տոհմական վանք Բագնայրը կառուցել է 1010 թվականին, իսկ

[20] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջաբանով եւ ծանոթագրութիւններով Կ. Կոստանեանցի, Ալէքսանդրապոլ, 1910, էջ 292:

[21] Մագիստրոսը բյուզանդական արքունիքի կողմից օտարերկրացիներին տրվող բարձրագույն պատվաստիճանն էր (Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երեւան, 2002, էջ 669): Արզականի 1001 թ. մի արձանագրության մեջ մագիստրոս պատվաստիճանով է հիշվում Հասանի որդի Գրիգոր (Ապիրատ) իշխանը, որը մի քանի տարի անց կառուցեց Կեչառիսի վանքը:

Վահրամը՝ Մարմաշենը՝ 1029 թվականին, ինչպես տեղի շինարարական արձանագրության մեջ է նշված[22]:

Արդյո՞ք Բագնայրի վանքը տեղեկություններ պահպանել է Սմբատ Մագիստրոսի տոհմակիցների վերաբերյալ: Ցավոք, վանքի ամենահին թվակիր արձանագրությունը 1042 թվականից է: Սակայն պահպանվել է ավելի վաղ գրված մի անթվական արձանագրություն: Այստեղ իշխան Վասակ Պահլավունու դուստր (Գրիգոր Մագիստրոս Պահլավունու քույր) Սեդան հայտնում է վանքին կատարած նվիրատվության մասին, որն արել է ի հիշատակ իր հոր՝ «Քրիստոսի զորական» Վասակի: Հայտնի է, որ մահմեդական հրոսակների դեմ կռվի ելած Վասակը սպանվել է 1021 թ., հետեւաբար Սեդայի արձանագրությունը գրվել է այդ կամ հաջորդ թվականին՝ հոր կորստյան անմիջական տպավորության տակ:

Տեսնենք, թե Բագնայրում ինչ «կարգավիճակով» է հանդես գալիս Վասակ Պահլավունու դուստրը: Նա գրում է. «Ես Սեդա տիկնաց տիկին… զուգակից **Վահրամայ իշխանաց իշխանի, որդւոյ Աշոտոյ իշխանաց իշխանի**…»[23]: Այսինքն, նա հարս էր եկել մի իշխանական տուն, որի ավագ ներկայացուցիչը Աշոտ իշխանաց իշխանն էր, իսկ կրտսերը՝ իր ամուսին Վահրամը: Նկատենք, որ այս արձանագրությունը գրվել է վանքի հիմնադրումից ընդամենը մեկ տասնամյակ անց, եւ կարելի է ենթադրել, որ նրա մեջ հիշված անձինք Սմբատ Մագիստրոսի տոհմակիցներն են: Մասնավորապես, չի բացառվում, որ Վահրամ իշխանաց իշխանը, Աշոտ իշխանաց իշխանի ավագ որդին լինելով[24], ստացել է իր Վահրամ պապի անունը, որը կարող է նույնանալ Սմբատ Մագիստրոսի հոր հետ: Այլ կերպ ասած՝ հնարավոր է, որ Բագնայրի հիմնադիր Վահրամի որդի Սմբատ Մագիստրոսը եւ Աշոտ իշխանաց իշխանը եղբայրներ էին: Այդ դեպ-

---

[22] Մարմաշեն - 1000, «Հուշարձան» տարեգիրք Բ, Երեւան, 1993, էջ 160 :

[23] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 113:

[24] Վահրամի ավագության օգտին է խոսում այն, որ նրան կնության է տրվել ժամանակի ամենանշանավոր իշխաններից մեկի դուստրը: Սեդայից բացի, Վասակ Պահլավունու այլ դուստր աղբյուրներում չի հիշվում:

քում միանգամայն հասկանալի կդառնա, թե ինչու է այս տան հարսը՝ Վասակ Պահլավունու դուստրը, նվիրատվություն արել Բագնայրին: Հիշենք, որ այս շրջանում այլ իշխանական տներ նույնպես վանքեր ու եկեղեցիներ էին հիմնում եւ հետամուտ էին դրանց բարգավաճմանը: Մի բան պարզ է, որ Բագնայրի կառուցումից (1010 թ.) մինչեւ Վահրամ իշխանաց իշխանի կնոջ արձանագրության ժամանակը (1021-1022 թթ.) այնքան կարճ միջոց է, որ դժվար թե Սմբատ Մագիստրոսի տոհմի հետ կապ չունեցող մեկն այդքան տիրաբար (հանդիսավոր արձանագրությամբ) ներկայանար այս վանքում:

Հնարավոր է, որ իշխանաց իշխան Վահրամի եւ Սեդայի զավակն էր Սմբատ պատրիկը («զՍմբատ որդի Վահրամայ»), որի մասին նշված է Մատենադարանի ձեռագրերից մեկի 1077 թ. հիշատակարանում[25]:

Սմբատ Մագիստրոսի մասին մեր խոսքն ամփոփելով՝ նկատենք, որ Բագրատունյաց Հայաստանի իշխանական տների մասին ցայժմ եղած պատկերացումները մեծ մասամբ գտնվում են ավանդական պատմագրության ազդեցության տակ, որտեղ զգալիորեն ուռճացված է Պահլավունյաց տոհմի դերը: Կասկածից վեր է, որ այդ տոհմը բացառիկ դիրք ուներ Անիի թագավորության մեջ, սակայն դա չի նշանակում, որ մյուս իշխանատոհմերը պետք է արհես-

[25] Ձեռագիր Ավետարանի (Մատենադարան, ձեռ. թիվ 275) 1077 թ. հիշատակարանի համաձայն՝ այն գրել է տվել Վահրամի որդի Սմբատ պատրիկը: Հիշատակարանի սկզբում Սմբատը հիշում է իր պատրոնին, որը Կարսի վերջին թագավոր Գագիկի դուստր Մարիամն էր, իսկ վերջում գրիչն ավելացնում է. «զՍմբատ որդի Վահրամայ՝ քրիստոսասէր եւ բարեյաղթող պատրկին յիշեսջիք ի Տէր եւ զծնաւղս իւր եւ եղբարս՝ զննջեցեալսն ի Քրիստոս» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 110): Այստեղից երեւում է, որ այդ ժամանակ Սմբատ պատրիկը բավական առաջացած տարիքում էր, երբ կորցրել էր ծնողներին ու եղբորը: Հնարավոր է, որ Սմբատ պատրիկի անունը ծագում է իր մեծանուն նախորդի՝ Սմբատ Մագիստրոսի անունից (Կ. Մաթեւոսյան, Սմբատ Մագիստրոս, էջ 173-186):

տականորեն կցվեն Պահլավունիներին: Ժամանակին այդպես է եղել Կեչառիսի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի պարագայում, որին մենք անդրադարձել ենք առանձին ուսումնասիրությամբ[26]: Կարծում ենք, որ Անիի Բագրատունյաց թագավորության պատմության մեջ այսուհետեւ իր տեղը պետք է ունենա նաեւ Բագնայրի հիմնադիր Սմբատ Մագիստրոսի տոհմը:

ՎԱՆՔԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բագնայրն Անիին շատ մոտ գտնվելով (վանքից պարզորոշ երեւում է Անիի համայնապատկերը), ժամանակին հոգեւոր-եկեղեցական եւ վարչական առումով սերտորեն կապված էր քաղաքի հետ: Վանքի հնագույն եւ գլխավոր եկեղեցին, որ կառուցել է Սմբատ Մագիստրոսը, **Սուրբ Աստվածածինն** է: Այդ անունով վանքն էլ կոչվում է Բագնայրի Սուրբ Աստվածածին, իսկ 13-րդ դարի վիմագրերում սրան զուգահեռ կիրառվում է «Մայր Լուսո» անունը, ինչպես Ղ. Ալիշանն է գրում՝ «իբր սեփական նմին մակդիր»[27]: Եկեղեցին պատկանում է 7-րդ դարի հայ ճարտարապետության մեջ տարածում գտած «գմբեթավոր դահլիճ» տիպին, ունեցել է երկու մուտք՝ արեւմուտքից եւ հարավից, գլանաձեւ թմբուկով բարձրադիր գմբեթ:

1909 թվականի հուլիսին Բագնայր այցելած Թորոս Թորամանյանն իր գրառումներում մասնագիտորեն նկարագրել եւ գնահատել է Բագնայրի վանքը, որն այսօր մի եզակի աղբյուր է, եթե նկատի ունենանք, որ վանքն այժմ հիմնավորապես ավերված է, իսկ դրանից առաջ, որքան մեզ հայտնի է, այլ մասնագետների ուսումնասիրությանը չի արժանացել: Թ. Թորամանյանը հենց սկզբում գրում է. «ԺԱ-րդ դարու հայ ճարտարապետության բոլոր բնորոշ

---

[26] Կարեն Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երեւան, 2008, էջ 67-93:

[27] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 111:

հատկությունները իր վրա կամփոփե բուն տաճարը ս. Աստվածածին անունով»[28]: Այնուհետեւ բոլորածեւ գմբեթը եւ մի քանի այլ մանրամասներ նկարագրելուց հետո ճարտարապետն անդրադառնում է Բագնայրի կառույցների մի առանձնահատկությանը. «Այստեղ ոչ միայն մայր տաճարի մեջ, այլ ամբողջ տաճարներուն գավիթներուն մեջ նկատելի է մի բան, հյուսիսային կողմերը պատուհան ամենեւին չունին երեք եկեղեցիներն ալ, իսկ հարավային կողմերն ալ թեեւ ունին, սակայն դրսի կողմի բացվածքները չափազանց նեղ են (Աստվածածնի տաճարի գմբեթը միայն բացառություն է, դրսանց համեմատաբար լայն է), ասոր պատճառը թերեւս ձմեռվան սաստկությունն է: Արեւմտյան մեծ գավիթին պատուհաններն ալ 13-15 սմ լայնություն ունին, թեեւ այստեղ հյուսիսային կողմն ալ պատուհան ունի երեք հատ՝ երեք որմնակամարներու ներքեւ»[29]:

Անդրադառնալով գլխավոր եկեղեցու շինարարական արվեստին՝ Թ. Թորամանյանը գրում է. «Տաճարի որմնասյուները լիովին կհիշեցնեն Անիի Մայր եկեղեցվո որմնասյուները, գրեթե նույնչափ ալ մաքուր շինված: Հատակի վրա սալերը դեռ մասամբ կմնան: Արեւելյան կողմը սեղանին երկու քովերը փոքր մատուռ պահարանները երկհարկանի են. արեւելյան խորանը բոլորովին քանդված է եւ տեղացիներու ըսելով վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ (1878 թիվ) թնդանոթի ռումբով է քանդված, մեջը թուրքեր ապաստանած ըլլալուն համար»[30]:

---

[28] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների երկրորդ ժողովածու, Երեւան, 1948, էջ 195:

[29] Նույն տեղում:

[30] Նույն տեղում: Մեկ այլ առիթով Թ. Թորամանյանը գրում է, որ Բագնայրի տաճարը «մի ժամանակ ծեփած եւ նկարած է եղեր գմբեթով միասին, հյուսիսային պատի վրա դեռ կան նկարներու հետքեր» (Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 200): Սրանք հավանաբար ավելի ուշ շրջանում են արվել:

Եկեղեցուն արեւմուտքից կից գտնվող քառակուսի հատակագծով գավիթի (18x18 մ) կառուցման վերաբերյալ տվյալներ չկան, սակայն այստեղ եղած հնագույն նվիրատվական վիմագիրը, որ պատկանում է Դվալի որդի Մխիթարին, 1201 թվականից է[31], ուստի կառուցվել է դրանից առաջ: Այս շինության ճարտարապետությունն ու հարդարանքը արժանացել են Թ. Թորամանյանի հիացմունքին: Նա գրում է. «Բագնայրի շինությանց այս կտորի մեջ ամենամեծ տեղը կբռնե Աստվածածին տաճարին արեւմտյան գավիթը թե՛ մեծությամբ, թե՛ ճոխությամբ: Ձեւը գրեթե քառակուսի է, չորս միջին մեծ սյուներու վրա կազմված է ստալակտիտ քանդակված գմբեթ մը, իսկ մյուս մասերը զանազան ձեւով առաստաղներ են: Աննման ճարտարությամբ շինված է գավիթի արեւելյան կողմի տաճարի դռան առջեւի մասի առաստաղը: Մարդ պահ մը չուզե աչքերուն հավատալ, երբ կտեսնե, թե զանազան գույնի քարերով ինչպես կազմած են կամարիկներ, եւ այդ քարերուն երբեմն լայնությունը 5-10 սանտիմետրը չանցներ, երկար շերտեր քաշված եւ իրարու միացուցած են կաղապարի վրա, բայց այնպիսի ճարպիկությամբ, որ դեռ մինչեւ այսօր քարերուն գույներն միայն կորոշին անոնց տարբեր կտորներե կազմած ըլլալը»[32]: Առաստաղի մյուս հատվածներն էլ ունեն տարբեր, բազմագույն քարերով կազմված զարդարանք: Գավիթի հատակը երկու աստիճանով ցածր է եղել եկեղեցուց[33]: Եռամաս գավթի կենտրոնական հատվածն ավելի լայն է՝ 5.6 մ, կողայինները՝ 3.6 մ[34]:

Ս. Աստվածածնի հարավարեւելյան անկյունից դեպի հարավ եղել են զույգ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցի-մատուռներ, որոնց

---

[31] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 180:

[32] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 196:

[33] Գավթի ներսում եղել է երկու գերեզմանաքար, որոնց մասին Թ. Թորամանյանը գրում է. «Գավիթի մեջ տաճարի դռան առջեւ երկու գերեզման կա, որ այժմ եզդիներ ուխտատեղի շինած խունկ կծխեն» (Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 200):

[34] Յ. Մարզպանեան, նշվ. աշխ., էջ 152:



մուտքի դիմաց՝ Ս. Աստվածածնի եկեղեցու հարավային պատի հավասարությամբ, կառուցված է եղել սյունասրահ (տե՛ս հատակագիծը): Այն գավիթի դեր է կատարել երկու փոքր եկեղեցիների համար: Դրանցից առաջինի անունը եւ կառուցողն անհայտ են, բայց հավանաբար կառուցվել է 1010-1021 թթ. ժամանակամիջոցում, քանի որ նրա պատի վրա է Սեդա Պահլավունու արձանագրությունը:

Մյուս փոքր եկեղեցին կոչվել է **Ս. Գրիգոր**: Այն կառուցել է Ազիզ անունով մի կին, ի հիշատակ իր որդի Գրիգորի, որի մասին է վկայում կառույցի 1145 թ. արձանագրությունը[35]: Սա Անի-Շիրակում Շադդադյան ամիրաների տիրապետության շրջանից հայտնի ամենավաղ եկեղեցաշինական արձանագրությունն է[36]: Երկու մատուռների արանքում պատրաստված է եղել փոքր խորան:

---

[35] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 188, տեքստը տե՛ս ստորեւ:

[36] Անիում այս շրջանի ամենավաղ շինարարական արձանագրությունը վերաբերում է Ս. Սարգիս եկեղեցու նորոգմանը՝ 1151 թվականին (Դիվան հայ վիմագրության, պր. Ա, էջ 56):



Վանական բուն հուշարձանախմբից մոտ 200 մ հյուսիս-արեւելք կառուցված են եւս երկու փոքր եկեղեցի, որոնցից մեկը՝ **Ս. Երրորդությունը** կենտրոնագմբեթ, արտաքինից եռանկյունաձեւ խորշերով տարանջատված վեցանիստ, բոլորաձեւ կառույց է եւ պահպանվել է մինչեւ մեր օրերը[37]: Մուտքի բարավորի վրա ունի 1223 թվակիր արձանագրություն[38]: Բագնայրից մի քանի կիլոմետր հյուսիս գտնվում է Արջո Առիճի վանքը (այժմ ավերակ)[39]:

Բագնայրը միջնադարյան Հայաստանի առավել մեծաթիվ վիմագիր արձանագրություններ ունեցող վանքերից մեկն է: Բագնայրի վիմագրերը տեղում կատարված ընթերցմամբ ունեցել են երկու հրատարակություն՝ Ն. Սարգիսյանի եւ Կ. Բասմաջյանի[40] կողմից:

---

[37] Կառույցի տրամագիծը 6 մ է, խորաններից յուրաքանչյուրի չափը՝ 1,6 մ, գմբեթի տրամագիծը 3,3 մ, ունի եռաստիճան գետնախարիսխ (Յ. Մարզպանեան, նշվ. աշխ., էջ 154-155) :

[38] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 154, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 189:

[39] 19-րդ դարի կեսերին այստեղ եղած Ն. Սարգիսյանը գրում է. «Արջոյ-առիճ, ուխտս Աստուածածնի եւ Լուսաւորչի, այժմ՝ Ալաճա, կիսաժամու հեռի ի Ղօզլիճայէ (Բագնայր – Կ. Մ.) ըստ հիւսիսոյ նորա եւ ժամաւ յԱնւոյ յարեւմուտս...»: Նա նաեւ ներկայացնում է վանքի պատերից արտագրած 13-րդ դարի 9 արձանագրություն (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 190-192): Արջո Առիճի դպրոցի մասին են վկայում մի քանի ուշագրավ հիշատակարաններ (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Արջո Առիճի դպրոցը 13-րդ դարում, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1984, N 3, 67-70):

[40] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 178-189 , Կ. Բասմաջեան, Հայերէն արձանագրութիւնք Անւոյ, Բագնայրի եւ Մարմաշինու, Պարիս, 1931, էջ 136-191 (արձանագրությունները ներկայացված են նաեւ ֆրանսերեն թարգմանությամբ): Տե՛ս նաեւ Մ. Գեւորգեանց, Համառօտ տեղագրութիւն հնութեանց Մեծին Շիրակայ եւ մայրաքաղաքին Անւոյ, Աղեքսանդրապոլ, 1903, էջ 97-111 (սխալաշատ հրատարակություն է):

Իսկ գիտական հրատարակության (լուսանկարներով եւ գծանկարներով) հնարավորություն այլեւս չկա, քանի որ վանքի գլխավոր շինություններից այժմ միայն երկու կիսավեր պատ է կանգուն մնացել: Դրանց վրա եղած արձանագրությունները վերջին տարիներին լուսանկարել են Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) անդամները:

ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՏԱՐԵԹՎԵՐԸ

Բագնայրի վանքի պատմության վերաբերյալ հայ մատենագիրների երկերում տեղեկություններն աղքատիկ են: Հայտնի է, օրինակ, որ 1046 թ. սկզբին բյուզանդացիների հարկադրմամբ Անիից հեռացող Պետրոս Ա Գետադարձ (1019-1054) կաթողիկոսին ուղեկցողների մեջ է եղել Մխիթար Բագնայրեցին[41], որը վանահայրն էր կամ վանքի նշանավոր վարդապետներից մեկը:

Բագնայրի վանքի պատմության էջերին կարելի է ծանոթանալ՝ հիմնական ուղենիշ ունենալով նրա վիմագրական հարուստ ժառանգությունը: Բագնայրի վիմագիր արձանագրությունների մեծ մասը թվակիր են, կան նաեւ անթվականները, որոնցից հնագույնի մասին (Սեդա իշխանուհու արձանագրություն) խոսվեց վերեւում: Մյուսների պարունակած տեղեկությունները ներկայացնում ենք ստորեւ ժամանակագրական կարգով ներառելով նաեւ այն անթվականները, որոնց մեջ եղած վանահայրերի անունները թույլ են տալիս որոշելու դրանց մոտավոր ժամանակը: Իսկ վերջում ներկայացնում ենք անթվական արձանագրությունների պարունակած տեղեկությունները:

---

41 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), (գրքում զետեղված է ժամանակագրության գրաբար տեքստը Վաղարշապատի 1898 թ. հրատարակությունից), Երեւան, 1991, էջ 114:

1042 թ. - եկեղեցու արեւելյան կողմում գտնվող նվիրատվական արձանագրությունը պատկանում է ոմն Գրիգորի, որը Ծաղիկ մականունն ուներ: Արձանագրության սկզբում նշում է ժամանակի կաթողիկոսին՝ Պետրոս Ա Գետադարձին եւ թագավորին՝ Գագիկ Բ - Բագրատունուն (1042-1045)[42]: Գրիգորն իր եւ իր որդիների անունից վանքին է նվիրել Անիում գտնվող «Վասլի փնդուկի» (Վասիլի պանդոկի) դիմաց եղած իր գանձագին (գնած) կուղպականին (կրպակների շարքը)[43]: Արձանագրության մեջ նշվում է Բագնայրի վանահայր Ստեփանոսը, որը միաբան եղբայրների հետ հանձն է առել ամեն տարի Պողոս եւ Պետրոս առաքյալների տոնի օրը բոլոր եկեղեցիներում («յամէն եկեղեցիսդ»)[44] պատարագել Գրիգորի հանգուցյալ եղբոր՝ Մուկաթլի համար, իսկ Գրիգորի մահից հետո՝ նրա համար[45]:

---

[42] «Ի ՆՂԱ (1042) թւ ի հայրապետութեան Տեառն Պետրոսի Հայոց կաթաղիկոսի եւ ի թագաւորութեանն Գագկա Շահանշահի որդւո Աշոտոյ…» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 178):

[43] Հետաքրքիր է, որ կուղպականու տեղը նշելու համար հիշատակված պանդոկի տերը՝ Վասիլը, այդ ժամանակ ողջ էր, եւ հավանաբար Գրիգորը նրանից որոշ կախում ուներ, քանի որ արձանագրության մեջ նա, ի թիվս նվիրատվության այլ պատճառների, նշում է «վասն Վասլին արեւշատութեան…» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 178):

[44] Տվյալ դեպքում նկատի են առնվում եկեղեցու բոլոր խորանները: Այս շրջանում Անիում եւ այլուր ամեն մի եկեղեցու ներսում գտնվող, պատարագի սեղան ունեցող բոլոր խորանները կամ ավանդատները համարվում էին «եկեղեցի»: Այստեղից է ծագում նաեւ Անիում «հազար ու մեկ» եկեղեցու գոյության մասին ավանդությունը, որովհետեւ մեկ եկեղեցու մեջ երբեմն պատարագի սեղանով բազմաթիվ խորաններ կային (այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 176-188):

[45] «…կամ եղեւ իմ՝ Գրիգորո Ծաղկանս եւ իմ որդեացս որ տուի զիմ գանձագին կուղպականին, որ Վասլին փընդկին ընդդէմ է՝ ի Բգնայրին վանս՝ ի Սուրբ Աստուածածինն ի ձեռն առաջնորդի հաւր Ստեփաննոսի… եւ միաբան եղբարքս կամաւ յանձն առին, որ ամենայն ամի զՊաւղոսի եւ զՊետրոսի տաւնին աւուրն պատարագն յամէն եկեղեցիսդ իմ եղբաւրն Մուկաթլի արասցէն եւ յետ վախճանի իմոյ՝ ինձ մատուսցեն…» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 178-179, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 138):

Այս արձանագրության հարեւանությամբ եղել է մեկ ուրիշ նվիրատվական արձանագրություն, որի բովանդակությունը չի պահպանվել, բայց որի սկսզբում նշվում են նախորդ արձանագրության մեջ հիշված կաթողիկոսի եւ թագավորի անունները, այսինքն՝ այն գրված է եղել 1042-1045 թվականների միջոցում[46]:

1145 թ. - Ս. Գրիգոր մատուռի վրա. «Ի ՇՂԴ (1145) թվ. ես Ազիզս մեղուցեալ աղախին Քրիստոսի աւ(ր)հնեցի զեկեղեցիս զՍուրբ Գրիգոր ի յիշատակ որդւո իմո Գրիգորո ի ձեռն հաւր... մաւր Ա (1) եւ առաջնորդ սբ...»[47]: «Օրհնեցի եկեղեցիս» ասելով Ազիզ տիկինը նկատի ունի եկեղեցին օրհնել տալը, որը կատարել է վանահայրը:

1152 թ. - Նույն մատուռի վրա պահպանվել է մեկ այլ արձանագրության միայն թվականը. «Ի ՈԱ թվ (1152)»[48]:

Բագնայրի վիմագիր տարեգրությունը, 11-րդ դարի կեսերին ընդհատվելով, շարունակվում է 13-րդ դարի սկզբին, երբ Անին ու նրա շրջակայքն անցել էին Զաքարյանների տիրապետության տակ, եւ բուռն զարգացում ապրեցին: Անիի եպիսկոպոսությունն այդ շրջանում գլխավորում էին Հասանյան (Ապիրատյան) տոհմից սերող եպիսկոպոսները, որոնցից վերջինը Ապիրատի որդի Սարգիսն էր (վերջին անգամ հիշվում է Հոռոմոսում՝ 1215 թ. եւ Անիում՝ 1220 թ.)[49]: Սակայն այս նույն շրջանում հանդես է գալիս մի տոհմ, որի ներկայացուցիչներն իրենց համարում էին սպարապետ Վահրամ Պահլավունու սերնդից (Ապուղամր Մագիստրոսի որդիներ Ղարիբ Մագիստրոս եւ Գրիգոր եպիսկոպոս) եւ նորոգում են Մար-

---

[46] Նույն տեղում:

[47] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 188:

[48] Նույն տեղում:

[49] Սարգիս եպիսկոպոսի մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 73--83: Այստեղ Անիի եպիսկոպոսների գավազանագրքում (էջ 104-105) մենք չենք նշել Սարգսի հիշատակությունը 1215 թվականին, քանի որ համապատասխան արձանագրության թվականը չկար Ն. Սարգիսյանի մոտ, սակայն այն տեսել եւ հրատարակել է Ժ-Մ. Թիերին (J-M. Thierry, Le couvent Arménien d' Horomos, Louvain-Paris, 1980, p. 54-55):

մամշենի վանքը, որը գյուղացիների բնակավայր էր դարձել[50]: Նրանցից Գրիգորը, որն արդեն 1216 թ. Անիի եպիսկոպոսանիստ Ս. Առաքելոց եկեղեցու արձանագրության մեջ իր մասին գրում է «Ես տէր Գրիգոր որդի Ապուղամրի ժառանգորդ սեփհական հայրենի Ա-թոռոյս մայրաքաղաքիս Անիո, արհիէպիսկոպոս այսմ նահանգի»[51], մի քանի այլ արձանագրություններում նույնպես ընդգծում է Անիի աթոռը ժառանգելու իր տոհմական իրավունքը, իսկ 1225 թ. եղբոր՝ Ղարիբ Մագիստրոսի պատերազմում զոհվելուց հետո իր անվանը կից սկսում է կրել Մագիստրոս պատվանունը, որով հիշվում է մի քանի արձանագրություններում եւ «Բագնայրի ավետարանի» հիշատակարանում (1232 թ.)[52]: Այս ձեռներեց գործիչն առաջին անգամ հիշատակվում է 1213 թ. Արջո Առիճում, երկրորդ անգամ՝ 1215 թ. Բագնայրում, որը կոչում է իրենց ընտանիքի «սեփական ուխտը»[53]: Սա նշանակում է, որ այս նոր տոհմը, որն իրեն հռչակել էր Վահրամ Պահլավունու սերունդ (չի բացառվում, որ Պահլավունիների հետ խնամիական կամ ինչ-ինչ կապեր ունեցած լինեն), իր վերելքը սկսել է՝ առաջին հերթին տեր դառնալով Արջո Առիճի եւ Բագնայրի վանքերի առաջնորդությանը:

1201 թ. - Դվալի որդի Մխիթարը նվիրել է Անիում Ս. Առաքելոց եկեղեցու մոտի փոքր փողոցում կամ նրբանցքում («զուկակ»)[54]

---

[50] Մարմաշենի արձանագրության մեջ Գրիգոր եպիսկոպոսը նշում է, որ ինքն ու եղբայրը 1225 թ. նախաձեռնել են վանքի նորոգումը. «Իսկ ի ՈՀԴ (1225)... խորհուրդ բարի ի միտ արկեալ՝ ազատել զսա (եկեղեցին - Կ. Մ.) ի (տղ)մուտ եւ ի զազիր մթնազգածութենէն, հասուցանել նախկին փառաւորութեանն՝ հանեալ արտաքս զշինականսն» (Մարմաշեն - 1000, «Հուշարձան» տարեգիրք Բ, էջ 161): Վերջին բառերը ցույց են տալիս, որ Գրիգորի տոհմն այստեղ նոր է հայտնվել, այլապես տոհմական վանքի գլխավոր եկեղեցին չէր դառնա շինականների կացարան:

[51] Դիվան հայ վիմագրության, պր. Ա, էջ 14:

[52] Անիի Գրիգոր Ա (Մագիստրոս) եպիսկոպոսի գործունեության մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 76-87, 104-106:

[53] Նույն տեղում, էջ 104-105:

[54] Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երեւան, 1978, էջ 86:

գտնվող իր անշարժ գույքը (անվանումը չի պահպանվել): Ստացել է տարեկան երեք պատարագ, երկուսը՝ իր, մեկը՝ կնոջ համար[55]:

1206 թ. - Գրիգորի որդի Գիշուկը վանքին նվիրել է երկու արտ[56], վանահայր Սիմեոնը («հայր Սիմեւոն վարդապետս») եւ միաբանները հատկացրել են տարեկան երեք պատարագ, մեկը՝ Գիշուկին, մեկական՝ նրա ծնողներին ու եղբայրներին:

1209 թ. - Աբրահամի որդի Խաչերես Լոռեցին նվիրել է Անիում գտնվող ութ կուղպակ, երեք տուն եւ ուշագրավ մանրամասներով նշում է դրանց գտնվելու տեղերը («...ետու զիմ գանձագին եւթն կուղպակն ի շարի, վեց ի վերեւն եւ մին՝ ի ներքեւն, մզքթին ընդդէմ եւ երեք տուն ի ներքսեւն»), նաեւ մեկ այգի Մարմետում[57], որոնց դիմաց վանահայր Սիմեոնից եւ միաբանությունից ստացել 20 պատարագ իր եւ հարազատների համար[58]: Արձանագրության սկզբում օգտագործված է մի ձեւակերպում, որը հանդիպում ենք նաեւ հետագայի մի շարք արձանագրություններում, որտեղ հիշվում է Անիի արքեպիսկոպոսը՝ «ՈԾԸ (1209) ի յամս աստուածապատիւ Տեառն

---

[55] «ՈԾ (1201) ես Մխիթար որդի Դըւալին, ետու ի սուրբ ուխտս Բագնայր զիմ աշխատո... ի Սուրբ Առաքելոց զուկակին եւ հայր եւ այլ եղբարքս փոխարէն հատուցին ի տարին Բ (2) աւր պատարագ ինձ՝ Մխիթարա եւ մին աւր՝ ամուսնոյ...» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 141-142, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 180):

[56] «Ա (1) արտ ի Տափիս, Ա (1)՝ ի Մաննեխուտին» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 181, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 143):

[57] Մարմետը նույնացվում է Երվանդաշատի հետ (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 738): Այստեղ եղած այգի է հիշվում նաեւ Բագնայրի մի անթվական արձանագրության մեջ՝ «Մարմետ ի վերա Երասխա...» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182):

[58] «Ես Խաչերեսս որդի Աբրահամու Լաւռեցի ետու զիմ գանձագին եւթն կուղպակն... ի Սուրբ Աստուածածինս ի ձեռն հաւր Սիմեւոնի եւ սուրբ եղբայրութեանս, եւ զայգին, որ Մարմետ եւ սոքա փոխարէն հատուցին ինձ Ի (20) աւր ժամ, Ը (8)՝ ինձ, Ե (5)՝ Աբրահամու, Գ (3)՝ Դինարկանն, Բ (2)՝ Հրանուշին, Բ (2)՝ Արքայութեան...» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 144, Ն. Սարգիսյանի մոտ թերի է՝ նշվ. աշխ., էջ 179-180):

Սարգսի, որդոյ Ապիրատի»[59]: Արձանագրությունը շարունակել է Խաչերեսի դուստր Մամ Խաթունը, որը Բագնայրին նվիրել է Անիում գտնվող իր «կուղպակն, որ ի Փողոցկտերն է, ի Բազըզնոց…»[60]: Հայտնի է, որ Մամ Խաթունը մահացել է 1219 թ., անժամանակ, բայց պատգամել է, որ իր հիշատակին իր դրամով կառուցվի Անիի պարսպի բուրգերից մեկը[61]:

1210 թ. - Հասանի որդի Պարսիմոն[62], որն իրեն կոչում է «ռաիս մեծանուն գեաղջն Աւշականո», այսինքն՝ Օշականի գյուղապետն էր, արձանագրությունը սկսում է Անիի հոգեւոր իշխանության (Ապիրատի որդի Սարգսի) մասին նախորդ արձանագրությանը շատ մոտ ձեւակերպմամբ, որին անմիջապես հաջորդում է աշխարհիկ իշխանության հիշատակությունը. «…եւ ի պետական իշխանութեան շահընշահ Զաքարիահ»: Նվիրատվությունը Պարսիմոյի հայրեանի (սեփական) այգին է՝ «զայգին զՎարդենց Նորքն», որի դիմաց իր եւ իր հարազատների (Խուրթ եւ Սեդա) համար տացել է 14 պատարագ Ղազարոսի հարության տոնի օրը: Արձանագրության մեջ վա-

---

[59] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 179:

[60] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 145, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 180: «Փողոցկտերը» հավանաբար երկհարկանի կրպակներով փողոց է եղել եւ վերաբերել է կտուրներով անցնող փողոցին (փողոցկտուր): Իսկ «Բազըզնոցը» կամ այլ արձանագրություններում «Բազ» կամ «Բազազ» փողոց կոչվածը բազազների, գործվածքներ պատրաստողների ու վաճառողների (կերպասագործների կամ ջուլհակների) փողոց եւ թաղ է եղել (տե՛ս Գ. Գրիգորյան, Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին, Ս. Էջմիածին, 2002, էջ 22, 26, 27):

[61] «Ի ՈԿԸ (1219) թ… Ես Մամ Խաթունս, դուստր Խաչերեսին Լաւռեցւո, անժամ ի Քրիստոս գնացի, յիմ հաւրն ի հալալ դրամէն, որ ինձ տուեալ էր, անհիշատակ էի, շինեցի զբուրջնս յիշատակ ինձ առ Քրիստոս…» (Դիվան հայ վիմագրության, պր. Ա, էջ 3):

[62] Արձանագրության մեջ գրում է. «ես Պարսիմո որդի Հասանա»: Վերջինս 1207 թ. նվիրատվություն է կատարել նաեւ Բագնայրից ոչ հեռու գտնվող Արջո Առիճի վանքին, ուր իր մասին գրում է. «Ես Պարսամաւ ծառա Քրիստոսի, որդի Հասանա»: Երկու արձանագրություններում էլ հիշվում է Պարսիմոյի եղբայր Խուրթը (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 179-180):

նահոր անունը եղծված է, բայց հավանորեն նշված է եղել Սիմեոնը[63]:

Պարսիմոյի արձանագրությունը շարունակել է նրա ենթականերից մեկը, որը նշում է. «Ես Մրուան միաբանեցա սրբոցս՝ հետ իմ պարոնին եւ ետուն ինձ աւր մի պատարագ անխափան», իսկ դրանից ներքեւ պահպանվել է վիմագիր գրչի անունը՝ «Ռայբիկ գրիչ»[64]:

1211 թ. - նախորդ արձանագրությունից մեկ տարի անց Օշականի մեկ այլ գյուղապետ Արտաշիրը նվիրել է իր գանձագին այգին «որ Աշոտոնց կոչի» եւ ստացել ութ պատարագ, երեքը՝ իր, երկուական՝ Աբասի եւ Սոսի եւ մեկը՝ Գնտունի համար: Արձանագրությունը սկսվում է նախորդ երկու արձանագրությունների նման՝ Անիի եպիսկոպոսի՝ Ապիրատի որդի Սարգսի հիշատակմամբ, որին հաջորդում է առաջնորդ վանահոր հիշատակությունը («ի յառաջնորդութեան հայր Սիմեւոնի»)[65]:

1215 թ. - Ապուղամրի որդի Գրիգորը թողել է կանոնագիր արձանագրություն, որտեղ սահմանում է Բագնայրում միաբանության մահացած անդամների համար մատուցվելիք պատարագների քանակը. «ՈԿԴ (1215) կամաւ Հոգոյն Սրբոյ, ես՝ տէր Գրիգոր, վերայդիտող մայրաքաղաքին Անոյ, հաստատեցաք ի մեր սեփական ուխտս սուրբ եղբայրութեամբս հանդերձ. եթե ոք ի միաբանացս փոխի ի

---

63 Կ. Բասմաջյանը վանահոր անունը կարդացել է Համամոնի. «ի ձեռն բարէսէր Համամոնի եւ սուրբ եղբայրութեան» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 146): Ն. Սարգիսյանը վանահոր անունը բաց է թողել (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 180): Բագնայրի վանահայրն այդ շրջանում Սիմեոնն էր, որի անունը նախորդ եւ հաջորդ արձանագրություններում գրված է «Սիմեւոն»: Բարեբախտաբար այս արձանագրությունը պահպանվել է ցայժմ եւ 2008-ին Սամվել Կարապետյանի կատարած լուսանկարից երեւում է, որ անունը դեռեւս հնում ջնջված է եղել (թերեւս դրանում եղած գրչական սխալի պատճառով): Լուսանկարից դատելով՝ առաջարկում ենք հետեւյալ վերծանությունը՝ «ԲԱՐԷՍԷՐ ՀԱԻՐ ՍՄԷՈՆԻ»:

64 Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 147:

65 Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 148: Ն. Սարգիսյանը գրում է, որ իր այցելության ժամանակ առաջնորդի անունը կրով ծեփված է եղել (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 181):

Քրիստոս պատարագ մատուցեն հաւրն՝ Դ (4) Խ (քառասունք), երիցոյն եւ աբեղին Գ (3) Խ (քառասունք), աշխարհական աբեղին Բ (2) Խ (քառասունք) եւ ամենայն եղբայր աւր մի պատարագ, եւ որ չկարէ՝ Ժ (10) կանոն աղաւթք արասցէ, եթե ոք յայս կարգելոցս պակասեցուսցէ խղճին ի մեղաց պարտական է առաջի Աստուծոյ:

Տեր Աստուած ողորմեա Մարգարէին, ամեն»[66]:

Վանական միաբանությունների մահացած անդամների համար մատուցվող պատարագների մասին այսօրինակ կանոնագիր արձանագրություններ կան նաեւ Հոռոմոսում ու Արջո Առիճում[67]:

1215 թ. Ապուղամրի որդի Գրիգորը Հոռոմյանց Կոստանդի որդի Հովհաննես քահանային վաճառել է Գայլառիճ գյուղի կեսը («գնեցի զԳայլառճի կեսն»), որն այն նվիրել է Բագնայրի վանքին եւ ստացել 40 պատարագ, 20-ը՝ իր, մնացածն իր հարազատների համար[68]:

1223 թ. - Ս. Երրորդություն մատուռի մուտքի բարավորի վրա պահպանվել է «Ի փառս ամենասուրբ Երրորդութեանն՝ Հաւր եւ

---

[66] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 152, հմմտ. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 183: Արձանագրության վերջում նշված է վիմագիր գրչի անունը: Չի բացառվում, որ վերջինս Անիի Բեխենց վանքում աշխատած գրիչ եւ մանրանկարիչ Մարգարեն է (նա հիշվում է Հառիճում 1209 թ. եւ Անիում 1211 թ. (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 354):

[67] Արջո Առիճում նախ նշվում է Գրիգոր եպիսկոպոսը՝ «որ էր ժառանգորդ սուրբ ուխտիս», ապա տեղի վանահայր Գրիգորը եւ Գերսամ վարդապետը, իսկ Հոռոմոսում նույնանման արձանագրությունը 1195 թվականից է, եւ այն գրել է վանահայր Պետրոսը (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 150, 191): Քանի որ Բագնայրում, Գրիգորից բացի, այլ հոգեւորական չի նշվում, պետք է կարծել, որ այդ ժամանակ նա նաեւ վանքի վանահայրն էր:

[68] «ՈԿԴ (1215) ի յամս աստուածապատիւ հոգեւոր տեառն Գրիգորոյ, որդոյ Ապուղամրի, ես Յոհաննէս քահանայ որդի Կոստանդի Հոռոմեանց գնեցի զԳայլառճի կէսն ի տէր Գրիգորոյ, որդոյ Ապուղամրի եւ ետու ի Սուրբ Աստուածածինս...»: Արձանագրության մեջ թվարկվում են պատարագ ստացող Սիրվարդը, Կոստանդը, Տիրամայրը, Խոցադեղը, Միխելը (Միքայել) Խաչերեսը, Կատան, Տալիթիա տիկինը (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 150, Ն. Սարգիսյանի մոտ նվիրատվության տեղանունը չկա, հմմտ. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., 183-184):

Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ես մեղուցեալ եւ ան... թուին ՈՀԲ (1223)»[69] արձանագրությունը, որից էլ հետագայում բխեցրել են եկեղեցու անունը՝ Ս. Երրորդություն, թեեւ այն պայմանական է, քանի որ այս նախաբանով արձանագրություն կարող էր գրվել նաեւ ուրիշ անուն ունեցող եկեղեցում:

1226 թ. - Ս. Երրորդություն մատուռի մոտ կանգնեցվել է մեծ խաչքար, որի վրա նշված է եղել 1226 թվականը[70]: Բնակավայրից դուրս եղել է մեկ այլ մեծ խաչքար, որի կանգնեցնողն ու պատրաստողը, ըստ անթվական արձանագրության, Մովսես քահանան էր[71]:

1229 թ. - Զաքարե եւ Իվանե Զաքարյանների մորեղբայր Խոռասի առաջին կնոջ՝ Խուբլու Խաթունի արձանագրության մեջ նշվում է, որ նա, կորցնելով երիտասարդ որդուն՝ Սասնային, նրա հիշատակի համար վանքին նվիրել է Մոգուաց գյուղի իրեն պատկանող առանձնացված մասը, նաեւ կառուցել Ս. Սիոն մատուռ-տապանատունը, որի դիմաց ստացել է տարեկան 40 պատարագ՝ 20-ը՝ իր եւ տասական՝ Խոռասի ու Սասնայի համար[72]:

1232 թ. - Հոռոմոսում նշանավոր գրիչ Իգնատիոսի ձեռամբ գրվել է մի շքեղ ձեռագիր (Մատենադարան թիվ 1519), որը նվիրվել

---

[69] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 154, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 189: Հ. Մարզպանյանը կարդացել է ՈԼԲ, քանի որ եկեղեցին համարում է 1183 թվականին կառուցված (Յ. Մարզպանեան, նշվ. աշխ., էջ 157):

[70] «Թւիս ՈՀԵ (1226)» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 155):

[71] «(Շն)որհիւն Քրիստոսի ես (Մո)ւսէս քահանա (կազ)մեցի սուրբ նշան(ս եւ կան)կնեցի սա բարեխ(աւս ա)ռ Քրիստոս՝ ինձ եւ ծնող(աց իմո)ց...» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 190):

[72] «(Ես Խ)ուբլու Խաթունս (կողակից) բարէպաշտ իշխանին Խաւա(ռսայ ետու զիմ բա)ժին հայրենիքն ի Մոգուաց, որ է ի հնցէ... զատեալ եւ բաժանեալ սահմանաւքն... ի Բագնայրս, յաղագս յիշատակաց մերոց եւ անդրանկին մերոյ՝ Սասնային, որ կիսաւրեայ փոխեցաւ ի Քրիստոս եւ սուգ մեծ եթող ծնողաց իւրոց, յորոյ ի յիշատակ շինեցի (զՍուրբ) Սիոն, ի վերայ տապանատանս: ...Հայր Սիմեւոն եւ այլ սուրբ եղբարքս յանձն առին յամէն ամի Խ (40) աւր պատարագել զՔրիստոս. Ի (20) աւր՝ Խաթունին, Ժ (10) Խաւռասին, Ժ(10) Սասնային...» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 156): Ն. Սարգիսյանի մոտ մատուռի անունը բացակայում է, հմմտ. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., 179):

է Բագնայրի վանքին եւ հայագիտության մեջ հայտնի է «Բագնայրի ավետարան» անունով: Ձեռագրի հիշատակարանը ընդարձակ տեղեկություններ է տալիս ստացող Խոռասի եւ նրա ընտանիքի վերաբերյալ[73]: Նշվում է նրա անդրանիկ որդու՝ Սասնայի մահվան մասին, որը գերեզման է դրվել «ի հանգստարանի ի հրեշտակաբնակ ուխտին Բագնայր»[74]: Դրանից երկու տարի հետո մահացել է Խոռասի կինը՝ Խուբլու Խաթունը (որը քրիստոնեություն ընդունած պարսիկ էր) եւ հուղարկավորվել Բագնայրում, նույն տապանատանը («որ կայ ի տապանի հանգստարանի անդրանկին իւրոյ»)[75]:

Հիշատակարանում նշվում են նաեւ Խոռասի երկրորդ կինը՝ Զմրուխտ Խաթունը, որը նույնպես քրիստոնեություն ընդունած նախկին մահմեդական էր[76], Խոռասի մյուս որդին՝ Վասակը, հանգուցյալ Սասնայի կինը՝ Թայիկ Թագուհին, որի մասին Խոռասն ասում է. «…սիրելի դստրեկի իմոյ Թայիկ Թագուհո, ամուսնոյ անդ-

---

[73] Այստեղ նշվում է, որ Խոռասը Զաքարե եւ Իվանե Զաքարյանների մորեղբոր՝ Ամիր Սարգսի որդին էր, որը Զաքարեի մահից հետո դարձել էր նրա որդի Շահնշահի որդու՝ Զաքարիայի դաստիարակը (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 178-179): Խոռասյանների տոհմի մասին տե՛ս Հ. Մարգարեան, Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԸ, Պէյրութ, 1998, էջ 31-32:

[74] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 179:

[75] Նույն տեղում: Խուբլու Խաթունի ծագման մասին հիշատակարանում նշվում է. «յազգէ գոլով պարսիկ, իսկ ի կոչմանէ եւ ի շնորհացն Աստուծոյ ճշմարիտ աղախին գոլով Քրիստոսի»:

[76] «…ազգաւ տաճիկ գոլով, յազնուական եւ փառաւորագոյն յազգէ ի մեծ նախարարացն Պարսից» (նույն տեղում): Զմրուխտ Խաթունն է տվել այս մատյանի նկարազարդման համար անհրաժեշտ ոսկին, որի մասին նշվում է ձեռագրի խորաններից մեկում (նույն տեղում, էջ 180): Այս խորանները ժամանակին հանված են եղել ձեռագրից եւ Մատենադարան են մուտք գործել ավելի ուշ, այլ թվահամարով (9871), Կ. Մաթեւոսյան, Չորս խորան «Բագնայրի ավետարանից», ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1985, N 10, էջ 93-97:

ռանկի իմոյ, որ էր զարմ եւ շառաւեղ թագաւորացն Հայոց»[77]: Իսկ ձեռագրի՝ Բագնայրի վանքին ընծայվելու մասին հիշատակարանում Խոռասի անունից ասվում է. «Եւ աւանդեցի զսա ի սուրբ մենաստանն ի Բագնայրն կոչեցեալ վանք, ի տէրութեան տեղւոյն տեառն Գրիգորայ, որ Մագիստրոսն ասի, վերայդիտող աթոռոյս Անւոյ, եւ յառաջնորդութեան հաւր Սիմեովնի եւ այլ համակամ եղբարց սրբոց»[78]: Այս մեծարժեք ձեռագիրը հետագայում գերեւարվել է, սակայն փրկագնվել եւ վերադարձվել է Բագնայրի վանք:

1233 թ. - Ծմակ գյուղի ավագերեց Սարգիսը նվիրել է Շնջանկի ներքին կողմում գտնվող իր գանձագին այգին՝ ծաղկոցով եւ հարակից հողակտորներով, եւ ստացել տարեկան ութ օր պատարագ: Արձանագրության սկզբում նշում է. «Ի տերութեան տեղոյս Գրիգորի Մագիստրոսի, որդոյ Ապուղամրի եւ յառաջնորդութեանս հաւր Սիմէոնի…»[79]:

Նույն՝ 1233 թվականին գրված մեկ այլ արձանագրությամբ Չեչկանց տոհմից Ավետեացի որդի Մխիթարի[80] որդի Վահրամը (Վարհամ) կնոջ՝ Փառանցի հետ նվիրել է Անիում գտնվող իր գանձագին կուղպակը՝ «զիմ գանձագին կուղպակն, ի Փողոցկտերն, որ ի Թորոսոնց կուղպակին վերա է», այսինքն՝ այն եղել է երկրորդ հար-

[77] Նույն տեղում, էջ 179: Թայիկի անվանը կից գրված «Թագուհին» պետք է նրա մականունը համարել: Բագնայրում պահպանվել են Թայիկ Թագուհու հոր՝ Շարափշահի, մոր՝ Թագուհու եւ հենց իր արձանագրությունները, որոնցից երեւում է, որ հավանաբար Կյուրիկյաններից սերող այս տոհմը, հիշյալ շրջանում Բագնայրի խնամակալներից էր:

[78] Նույն տեղում, էջ 179:

[79] Շարունակության մեջ՝ «Ես Սարգիս Ծմակին աւագերեց, որդի Գրիգոր քահանայի ետու զիմ գանձագին հայրենիք այգին զՇնջանկի զներքի դեհն, իւր ծաղկոցովն, իւր չորեսին ափներովն ի Սուրբ Մայրս Լուսոյ…», ապա ութ պատարագի մասին գրելուց հետո ավելացնում է. «եւ այլ ետու զՔարգզեմայ տներն, զի ուր ինձ վախճան լինի, գիշերապաշտաւն եւ մատաղ առնեն» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 185, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 157):

[80] Մխիթար Չեչկանցը Անիի երազահանի (1222 թ.) թարգմանիչներից մեկն է (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 132):

կում, եւ մի տուն ու դրա վրա իր շինած կուղպակը՝ «եւ զայն տունն, որ Սեւքթենց հմնակից է, եւ ի վերայն կուղպակն իմ շինած»: Դրա դիմաց վանահայր Սիմեոնն ու միաբանները հատկացրել են ամեն տարի 12 պատարագ, ութը՝ Վահրամին, երեքը՝ Փառանցին, մեկը՝ Մամքանին[81]:

1234 թ. - Ապիրատի որդի Շարափշահը, որը հանդես է գալիս որպես վանքի խնամակալներից մեկը, նվիրել է Շիրակվանում (Շիրակավան) գտնվող ջրաղացի երեք ակ, նաեւ «Խաչին մարգ» հողամասը եւ ստացել 18 պատարագ իր ու մերձավորների համար. «Ես Շարափշահ, որդի Ապիրատին ետու ի մեր սեփական եկեղեցիս ի Սուրբ Աստուածածինս Գ (3) ակն ջաղաց ի Շիրակուանին եւ զԽաչին մարգն եւ սպասաւորքս՝ հայր Սիմեոն եւ այլ միաբանքս, փոխարէն հատուցին ինձ ԺԸ (18) աւր ժամ, Ժ (10) աւր՝ ինձ, Գ (3)՝ Կութէլին, Բ (2)՝ Կիւրիկէի, Ա (1)՝ Հասանա, Բ (2)՝ Ամիխաթունին»[82]:

Այս արձանագրության մոտ, նույն շրջանում պետք է գրված լինի Շարափշահի կնոջ՝ Թագուհու արձանագրությունը, որով վանքին է նվիրել Անիի Սառաճ փողոցի[83] իր կրպակը, մի մարգ, նաեւ «մեծածախ» խաչ ու Ավետարան[84]: Սրանց մոտ գրված է նաեւ Շարափշահի եւ Թագուհու դստեր արձանագրությունը, որը վերեւում

---

[81] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 184, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 158:

[82] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 185-186, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 161-162:

[83] Սառաճ փողոցը (արձանագրության մեջ՝ «Սառըճփողոց») համետագործների, թամբագործների փողոցն է:

[84] «Ես՝ Թագուհի, զուգակից Շարափշահին, ետու խաչ մեծածախ եւ Աւետարան, Սառըճփողոցին կողպակ՝ ի վերի, Շիրակուանին զմարգն, որ ճլուտ կոչի, փոխարեն հատուց ինձ՝ Զ (6) աւր պատարագ, Ե (5)՝ ինձ, Ա (1)՝ աւրն՝ Մամուզին»: Հրատարակություններում կուղպակի տեղը նշվում է հետեւյալ բառանջատմամբ. «Սառըճփողոցին կողպակի վեր, ի Շիրակուանին զմարգն» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 161-162, հմմտ. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 186): Ստացվում է, որ Շիրակվանի մարգը գտնվում է Սառաճ փողոցի կրպակից վեր: Մեր կարծիքով՝ նվիրատուն նշում է նախ Սառաճ փողոցի կուղպակը, որը եղել է վերին հարկում (ի վերի), ապա՝ Շիրակվանի մարգը:

նշված Խոռասի հարսն է՝ Սասնայի այրին՝ Թայիկ Թագուհին. «Ես Թաիկ Թագոհի դուստր Շարափշահի ետու երկու կուղպակ յիմ կուղպակնոյն, որ ի Նալպնդնոցին եւ Առաքեալ եւ հայր Սիմեոն եւ այլ միաբանքս փոխարէն հատուցին ինձ Ը (8) աւր պատարագ…»[85]:

1236 թվականից հետո պիտի գրված լինի հաջորդ արձանագրությունը (անթվական է), քանի որ այստեղ Սիմեոն վանահայրը նշում է. **«դառն ժամանակի հանդիպեցաք՝ սովո եւ սրո եւ գերութեան»**, որը կարող էր տեղի ունենալ 1236 թ. մոնղոլների կողմից Անիի գրավման հետեւանքով: Արձանագրության մեջ նշվում է, որ Վարդի որդի Խաչերեսը ժամանակին վանքին է նվիրած եղել Անիի «Գաղտ դռան» մոտ գտնվող իր կառուցած տները, իսկ վերոնշյալ դժբախտությունների ժամանակ վանահայրն ու միաբանները վանքի կարիքների համար դրանք վաճառել են («ծախեցաք եւ ի սրբոցս ի պէտս անցուցաք»), ուստի փոխարենը տարեկան երեք պատարագ են հատկացնում՝ երկուսը՝ Խաչերեսի, մեկը՝ նրա կնոջ՝ Մլքերի համար[86]:

1206-1236 թթ. անթվական արձանագրություններ

Ինչպես վերը տեսանք, Բագնայրի **Սիմեոն Ա** վանահայրը հիշվում է 1206-1211 թվակիր արձանագրություններում, որից հետո 1215-ին հանդես է գալիս Աբուղամրի որդի Գրիգորը՝ որպես առաջնորդ եւ վանքի պատրոն, իսկ **Սիմեոն Բ** վանահայրը հիշվում է 1229-ից մինչեւ 1236-ին հաջորդած մի քանի տարիները: Բագնայրի անթվական արձանագրությունների մի մասում նշված է Սիմեոն վանահոր անունը, եւ անհնար է որոշել՝ Սիմեոն Ա-ն է, թե՞ Սիմեոն Բ-ը, սակայն պարզ է, որ դրանք գրվել են նրանց վանահայրության

[85] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 163, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 186: Արձանագրության մեջ հիշված «Նալպնդնոցը» (Նալպանդնոց) Անիի պայտարների փողոցն է (Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 30, Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 86):

[86] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 160-161,Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 184:

օրոք, այսինքն՝ մոտավորապես 1206-1236 թթ. ժամանակամիջոցում:

Վարդառյուծը, Աշակը (Արշակ) եւ Խորենը «ի ձեռն հաւր Սիմեւոնի» նվիրել են «զՎարդենաց նորքն» եւ ստացել տարեկան 12 պատարագ, յուրաքանչյուրին՝ չորսական[87]:

Պողոս երեցը «յառաջնորդութեան հաւր Սիմէոնի» նվիրել է Աշնակում գտնվող իր այգին ու հնձանը, ստացել տասը պատարագ, որից չորսը հոր՝ Ղազարի, երկուսն իր կնոջ՝ Տիրանցի համար[88]:

Գորգկանի դուստր Ավագ տիկինը նվիրել է ամուսնության ժամանակ իր ծնողներից ստացած «կէս ակն ձիթհանքն», վանահայր Սիմեոնը եւ միաբանները հատկացրել են տարեկան հինգ օր պատարագ[89]:

Աստվածատուրի որդի Խաչեղբայրը եւ նրա կին Սիսմամը արձանագրության մեջ նշում են վանքի գերեզմանոցում իրենց կառուցած մի մատուռի եւ դրան արված նվիրատվությունների մասին. «...շինեցաք զգերեզմանաց մին եկեղեցին եւ տուաք զմեր տաճարն եւ զսարաւոյթն եւ ի ներքեւն տուն, ի Սուրբ Աստուածածինս եւ հայր Սիմէոն եւ այլ եղբարքս փոխարէն հատուցին յամէն ամի Ձ (6) աւր ժամ, Գ (3) աւր՝ Խաչեղբաւրն, Գ (3)՝ Սիսմամին...»[90]:

Մոտավորապես 1240-50-ական թթ. արձանագրություններ

Բագնայրի անթվական արձանագրությունների մեջ կարեւորությամբ առանձնանում է մեկը, որով վանահայր Քրիստափորը,

---

[87] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 181, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 149:

[88] «(Յամի) հոգեւոր տեառն Գրիգորի եւ յառաջնորդութեան հաւր Սիմէոնի ես Պաւղոս էրէց ետու իմ այգին ի ծաղկոցն, որ յԱշնակ, հնծանովն գեղին դեհս...» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 154, հմմտ. Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 181):

[89] «Հայր Սիմէոն, միաբանքս, փոխարէնս հատուցին մեզ յամենայն ամի հինգ աւր պատարագ. զերեք աւրն՝ Աւագ տիկնայ, եւ զմինն՝ Գորգկանն, եւ զմէկն՝ Թաճերոյն»: Վերջում նշված է վիմագիր գրչի անունը՝ «Մանասէ գրիչ» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 165, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 185):

[90] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 183, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 164:

Գամաղիել վարդապետը եւ բոլոր միաբանները սահմանում են, որ մահացած միաբանի կտակը ոչ ոք իրավունք չունի փոխել կամ վերացնել, ո՛չ պատրոնը, ո՛չ վանահայրը ո՛չ միաբանները. «Անուամբն Աստուծոյ բնակիչք Սուրբ Ուխտիս՝ տէր Քրիստափոր եւ Գամաղիէլ վարդապետս, ամենայն միաբանաւքս զայս կտակ անջնջելի հաստատեցաք, եթէ ոք ի միաբանացս փոխի առ Քրիստոս, զինչ որ անդարձ առնէ, եւ իւր հոգոյն տեսող, մի՛ ոք իշխեսցէ խափանել, ո՛չ - պատրոն, ո՛չ հայր, ո՛չ միաբան, ապա եթէ լուծանեն, յերից սուրբ ժողովոցն նզովեալ եղիցին հոգւով եւ մարմնով: զՅովսէփ գրիչ Տէր յիշեա»[91]:

Այս արձանագրությունը հետաքրքիր է նաեւ այն իմաստով, որ նշում է վանքում որոշումներ կայացնելու գործում ազդեցություն ունեցողներին՝ առաջին տեղում դնելով պատրոնին, որին հետեւում են վանահայրը, ապա՝ միաբանները: Կ. Բասմաջյանն արձանագրության մոտավոր ժամանակ է նշում 1235 թ.[92], բայց այդ ժամանակ վանահայրը Սիմեոնն էր: Մենք ավելի հավանական ժամանակ ենք համարում 1240-50-ական թվականները, որը մոնղոլական արշավանքին հաջորդած համեմատաբար ամուլ, սակավ արձանագրություններով ժամանակ էր (այդ պատճառով այլ արձանագրություններում չեն հիշվում Քրիստափորն ու Գամաղիելը), սրված էր նաեւ սոցիալական իրավիճակը, որի հետեւանքով կարող էին մահացած միաբանների թողած կտակի հարցում խնդիրներ ծագել եւ այն անձեռնմխելի պահելու անհրաժեշտություն առաջանալ:

1242 թ. - Մշեցի Մանկտավագը (արձանագրության մեջ՝ «Մանգտսվասգ») Խամարտոլի որդին, նվիրել է 100 դահեկան եւ միաբաններից (վանահոր անունը չի նշվում) ստացել տարեկան երկու պատարագ Սուրբ Սարգսի տոնին: Այս արձանագրությունը ար-

[91] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 166, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 183:
[92] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 166:

ժեքավոր է այն իմաստով, որ պարզում է նշված շրջանում մեկ պատարագ ստանալու համար անհրաժեշտ վճարը՝ 50 դահեկան:[93]:

Հնարավոր է, որ վանքի համար այս դժվարին ժամանակներում է գրվել նաեւ անթվական արձանագրություններից մեկը, ըստ որի վանքին պատկանած Պիչարենց հյուրատունը վաճառվել է եւ ծմակեցի Կոստերն այն 800 արծաթե դրամով (սպիտակ) գնել ու վերադարձրել է վանքին. «…ես Կոստերս Ծմակեցի… զհիւրատունն, որ Պիչարենց կոչի, որ ծախել էին վանէցիքն, ես դարձուցի ի վանքս եւ ետու գին Պ (800) սպիտակ: Հայրս եւ վարդապետքս եւ այլ եղբարքս փոխարէն հատուցին ինձ ի տարին Բ (2) ա(ւր)…»[94]:

Այս եւ նախորդ արձանագրությանը, որոնցում նշվում է մեկ պատարագի համար անհրաժեշտ գումարային հատկացման չափը, անդրադարձել է Թ. Ավդալբեկյանը: Միջնադարյան Հայաստանում պատարագ ստանալու համար անհրաժեշտ վճարի չափի որոշմանը նվիրված ուսումնասիրության մեջ նա քննության է առել 15 վանքի 12-14-րդ դարերի վիմագրեր եւ պարզել, որ մեկ պատարագի միջին արժեքը (փողով արտահայտված) կազմել է 20-25 դահեկան[95]: Ուսումնասիրողի կազմած ցուցակից երեւում է, որ հիշյալ 15

---

[93] «ՈՂԱ (1242) Կամաւ անեղին Աստուծոյ ես Մանգտսվասգ, որդի Խամարտաւլին Մշեցի միայբանեցա Սուրբ Աստուածածնիս եւ ետու ընծայ Ճ (100) դահեկան: Հայրս, միւս վարդապետքս եւ այլ միայբանքս փոխարէն հատուցին ինձ ի տարին Բ (2) աւր պատարագ…» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 186): Կ. Բասմաջյանի մոտ արձանագրության սկիզբը թերի է «Չ…», իսկ վերջում հարցականով նշված է գրչի անունը «Դաւիթ (?) գրիչ» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 180):

[94] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 187:

[95] Թ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Երեւան, 1969, էջ 324: 20 դահեկանն այդ ժամանակ կարող էր 88,8-ից 85 գրամ ոսկի լինել (Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 87): Սակայն ոսկու արժեքով դահեկանն այդ ժամանակ ավելի շուտ հանդես էր գալիս որպես արտարժույթ, իսկ իրական վճարումները կատարվում էին արծաթե դրամով: Դահեկանի հարաբերակցությունը դրամի հետ այն ժամանակ կազմել է 1-ը առ 10, այսինքն՝ մեկ պատարագի 20-25 դահեկան միջին արժեքը հավասար էր 200-250 արծաթե դրամի (Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 331):

վանքերի մեջ մեկ պատարագի համար ամենից բարձր արժեք նշված է Բագնայրի արձանագրություններում (մեկում՝ 50, մյուսում՝ 40)՝ միջին արժեքը՝ 45 դահեկան, երկրորդ տեղում Նորավանքն է՝ 36 դահեկան[96]:

Իհարկե միայն այս երկու արձանագրության տվյալներն ունենալով չի կարելի ասել, որ Բագնայրում եղել է պատարագի համար սահմանված կայուն բարձր գին եւ այլ՝ գույքային նվիրատվությունների ժամանակ, այն դրանից ցածր չի եղել, սակայն որոշակի տատանումները նկատի ունենալով հանդերձ, պետք է ընդունենք, որ վաճառաշահ Անիին մոտ գտնվող եւ անեցիների շրջանում մեծ համարում ունեցող այս վանքն այլ տեղերի համեմատ պատարագի հատկացման համար, իրոք, ավելի բարձր պահանջներ է ներկայացրել իր նվիրատուներին:

1261 թ. - Գրիգոր Ա Մագիստրոսի որդի Ապուղամրը գնել է հավանաբար Տիգրան Հոնենցի տոհմին պատկանած Կաղղուց գյուղի կեսը[97] («գնեցի զկէս Կաղղուցն ի Տիգրանանց») եւ հանուն իր եղբայր Վահրամ իշխանի նվիրել Բագնայրին, որը կոչում է «մեր սուրբ ուխտս»[98]:

1262 թ. - Նույն Ապուղամրը նվիրել է Կաղղուց գյուղի երկրորդ կեսը, իր մոր՝ Մամքանի համար (որը, փաստորեն, Անիի եպիս-

---

[96] Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 324:

[97] Տիգրան Հոնենցը 1215 թ. Անիում կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ վանքի եկեղեցուն տված բազմաթիվ նվիրատվությունների շարքում նշում է «Կաղղուց կէսն» (Դիվան հայ վիմագրության, պր. Ա, էջ 63): Եթե Հոնենցի հետնորդները 1261 թ. այն վաճառել են Ապուղամրին, նշանակում է Գր. Լուսավորչի վանքի պարոններն էին եւ ազատորեն տնօրինում էին նրա ունեցվածքը:

[98] «ՉԺ (1261) Կամաւն Աստուծոյ ես՝ Ապուղամր, որդի Մաքիստրոսի, որ գնեցի զկէս Կաղղուցն ի Տիգրանանց եւ ետու ի Սուրբ Աստուածածինս, ի մեր սուրբ ուխտս, որ զփոխարէնն մաւտ ի Քրիստոս, ի Վարհամ իշխանն՝ ի յիմ եղբայրն վճարէ: Հաստատ է մինչ ի գալուստ Որդոյն Աստուծոյ, բոլոր ամէն գեղէ: Սիմէոն գրիչ» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 169):

կոպոս Գրիգոր Ա (Մագիստրոս) եպիսկոպոսի կինն էր), որի մասին արձանագրությունը նախորդին շատ մոտ շարադրմամբ գրել է միեւնույն Սիմեոն վիմագիր գրիչը[99]:

1262 թվականը բավական հարուստ է արձանագրություններով: Դրանցից մեկի սկզբում վերոնշյալ Ապուղամրի եղբայր, Անիի եպիսկոպոս Սարգիս Բ-ը[100] անվանվում է Բագնայրի տերը, այսինքն՝ պատրոնը. «ՉԺԱ (1262) Ի վերադիտողութեան մայրաքաղաքիս Անու տէր Սարգսի, տեառն տեղւոյս...»: Արձանագրության մեջ հիշվում են նաեւ Բագնայրի վանահայր Աբրահամը եւ Հովսեփ փակակալը: Արձանագրությունը տեղեկացնում է, որ Մանկիկ երեցի որդի Գարեգին (Գարեգոյն) երեցը եւ կինը՝ Մարիամը, վանքին են տվել իրենց գանձագին Նորաղբույրիկ գյուղը՝ անդաստաններով, գնված մեկ մագաղաթյա Տոնական եւ մեկ ոսկեկազմ Ավետարան («գանձագին գեղն զՆորաղբոյրիկ, իւր ամենայն անդաստանաւքն, որ բնական լեալ է, մի Տաւնական մակաղաթ, մի Աւետարան ոսկէտուփ»), որի դիմաց վանահայր Աբրահամը, Հովսեփ փակակալն ու միաբանները հատկացրել են վեց պատարագ՝ երկուական՝ Գարեգինին եւ Մարիամին, մեկական՝ «Մանկանն ու Թաճերուն»: Արձանագրությունը գրել է Սիմեոն գրիչը[101]:

Աբրահամ վանահայրը հիշվում է նույն թվականի մեկ այլ արձանագրության մեջ, որի հեղինակը մեզ արդեն ծանոթ Թայիկ Թագուհին է. «ՉԺԱ (1262) Շնորհիւն Աստուծոյ ես Թաիկս, դուստր Շարապշահին ետու զիմ գանձագին հայրէնիքն՝ զՆորսն ի մեր ուխտս՝

---

[99] «ՉԺԱ (1262) Կամաւն Աստուծոյ ես՝ Ապուղամր, որդի Մաքիստրոսի, թոռն Վարհամ իշխանին, վասն ի Քրիստոս յոյսոյն ետու զիմ գանձագին հայրենիքն՝ զԿաղղուց կէսն, իւր հողովն եւ ջրովն, ի Սուրբ Աստուածամայրս, ի մեր սուրբ ուխտս, որ մաւտ ի Քրիստոս՝ զփոխարենն ի յիմ մայրն վճարէ, ի Մամքան: Հաստատ է մինչ ի Քրիստոս: զՍիմէոն գրիչ յիշ(եցէք)» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 171):

[100] Սարգիս Բ եպիսկոպոսի մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 87-94, 107-108:

[101] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 187, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 172-173:

ի Բագնայրս, ի Սուրբ Աստուածածինս»[102]: Շարունակության մեջ նշվում է, որ վանահայրն ու միաբանները հատկացրել են տարեկան 10 օր պատարագ՝ «...Ը (8) աւրն ինձ առնեն՝ Թաիկանս, եւ Բ (2) աւրն՝ Գրիգորու»[103]:

Նույն՝ 1262 թվականին, Բագնայրում ընդարձակ արձանագրությամբ հանդես է գալիս վերը նշված Խոռաս Ա-ի թոռը՝ Սասնայի եւ Թայիկի որդին՝ Խոռաս Բ կրտսերը, որի անդրանիկ որդին՝ հոր անունով Սասնայ կոչված, մահացել էր կես տարեկան հասակում: Խոռասը նախ պատմում է իր պապի գնած ու «սիկէլով» (վճիռ, հրաման, կնիք)[104] իրեն տրված Աշնակ գյուղի մասին, որ հետո անցել է Շահնշահ Ա Զաքարյանին[105], իսկ ինքը, կնոջ ակնեղենը վերջինիս տալով, հետ է ստացել ու այդտեղից իր որդի Սասնայի բա-

---

[102] Արձանագրության մեջ նշված Նորսի վերաբերյալ կարծիքներ են եղել, թե այն կարող էր նշանակել նորատունկ այգիներ, «տեղամաս, հանդամաս կամ նույնիսկ գյուղանուն» (Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երեւան, 1978, էջ 241-242): Արձանագրության վերջում նշված «Հաստատ է ամենայն անդաստանաւքն, հողովն եւ ջրովն» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 170) ձեւակերպումը սովորաբար օգտագործվում է նվիրաբերված գյուղի պարագայում: Բացի այդ, հանդամասի հատկացման դիմաց անհնար էր, որ նվիրատուն Բագնայրում տասը պատարագ ստանար: Ըստ այդմ, այստեղ հիշված Նորսը պետք է փոքր գյուղի անուն հասկանալ:

[103] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 187: Արձանագրության վերջում նշվում է Սիմեոն գրիչը (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 170): Քանի որ Թաիկը այրիացել էր շատ երիտասարդ հասակում, հնարավոր է, որ այստեղ նշված Գրիգորը նրա երկրորդ ամուսինն էր: Նկատենք, որ 1269 թ. Թայիկը («ես Թաիկ Թագոհի, դուստր Շարապշահին») նվիրատվություն է կատարել Հոռոմոսի վանքին, որտեղ հիշում է իր որդի Հազարբեկին («Հազարպէկ») (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 158), որը հավանաբար նրա երկրորդ ամուսնությունից ծնված զավակն էր:

[104] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Երեւան, 1981, էջ 713:

[105] Շահնշահ Ա Զաքարյանը մահացել է 1261 թ., այն բանից հետո, երբ իմացել է, թե մոնղոլներն ինչպիսի դաժանությամբ են սպանել իր ավագ որդի Զաքարիային (Կիրակոս Գանձակեցի, էջ 393): Նշանակում է Խոռասն Աշնակը Շահնշահից հետ է ստացել դրանից առաջ (երբ դեռ իր որդին՝ Սասնայը, չէր ծնվել), բայց այդ պատմությունը հարկ է համարել արձանագրել Բագնայրում 1262 թ.:

ժինը տվել Բագնայրին. «ՉԺԱ (1262) Կամաւն Աստուծոյ ես Խաւռազ, մեծ Խաւռազիս թոռն, Սասնիս որդիս, իմ անդրանիկ որդին՝ Սասնայն, որ կէս տարեկան ի Քրիստոս փոխեցաւ, յիմ գանձագին՝ Հէրէնեցն յԱշնկու, որ իմ պապն գնել էր ու սիկէլով յիս տվել, ինչ իմ պապն մեռաւ, ես Խաւռազ, իմ կնոչն զբաժինքն՝ ակն ու մարգարիտ՝ իմ պարոնին տվի, Շահնշահի, ու կրկին զԱշնակ գնեցի ու զիմ որդոյն բաժինն՝ զՍասնին՝ ի Բգնէրս տվի՝ յԱստուածածինս. Վերի էգին՝ իւր ընձանովն, «Բ (2) շինական՝ զՄեհրեւան ու զԽաչատուր՝ Դուլուսին փեսայն, իւրեանց հողովն ու ջրովն…»[106]: Այնուհետեւ նշվում են մյուս նվիրատվությունները՝ ջրաղաց Տիգնիսում, ընդարձակ խոտհարք եւ արծաթե սկիհ[107]:

Արձանագրության երկրորդ մասում վանքի պատրոն, Անիի Սարգիս Բ եպիսկոպոսը, Բագնայրի վանահայր Աբրահամը, փակակալ Հովսեփն ու միաբանները հայտնում են, որ նվիրատվությունների դիմաց հատկացնում են տարեկան հնգական պատարագ Սասնային եւ Խոռասին[108]:

---

[106] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 188-189, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 174-175: Ենթադրվել է, որ Բագնայրի վանքին է տրված եղել ամբողջ Աշնակ գյուղը (Հ. Մարգարեանա, նշվ. աշխ., էջ 32): Սակայն մեզ թվում է, որ Բագնայրի վանքին ամբողջ Աշնակ գյուղը չի տրվել, այլ այնտեղից միայն մանուկ Սասնայի բաժինը («զիմ որդոյն բաժինն»), որը Խոռասն արձանագրության սկզբում կոչում է «յիմ գանձագին՝ Հէրէնեցն յԱշնկու», հետո մանրամասնում՝ «զվերի էգին՝ իւր ընձանովն, Բ (2) շինական՝ զՄեհրեւան ու զԽաչատուր՝ Դուլուսին փեսայն, իւրեանց հողովն ու ջրովն»: Արձանագրության շարունակության մեջ նշվում են վանքին տրված մի շարք այլ նվիրատվություններ, որոնց բոլորի դիմաց ստացվել է ընդամենը 10 պատարագ, որը նույնպես վկայում է, որ վանքին ամբողջ գյուղը չի տրվել:

[107] «…ի Տգնիս զջաղացն, յիմ խոտահարն՝ Ճ (100) բարդ խոտի տեղ, որ վանքս ընձէ, մի սկի արծաթի…» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 188-189, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 174-175):

[108] Արձանագրության վերջում հիշվում է գրիչը՝ «զՍիմէոն պտռող յիշեցէք, աղաչեմ» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 189, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 175):

1266 թ. - Խոռաս Բ-ը մեկ այլ արժեքավոր նվիրատվությամբ Բագնայրին է նվիրում իրեն պատկանող Զրծորիկ վանքը, որի անունն այլ աղբյուրներում չի հիշատակվում, իսկ անունը հուշում է, որ այն գուցե գտնվում էր մի ձորի մեջ, ջրամերձ տեղում: Ի տարբերություն վերը նշված 1261-1262 թթ. բազմաթիվ արձանագրությունների, որոնց գրիչը Սիմեոնն էր, այս մեկը գրել է Իսրայել վիմագիր գրիչը, որն արձանագրություններ ունի նաեւ Անիում (1269) եւ Հոռոմոսում (1273)[109]. «...Ես Խաւռաս, որդի Սասնահին, ետու ի մեր սեփական սուրբ ուխտն Բգների՝ Սուրբ Աստուածածին՝ զմեր զգանձագին զՋրծորիկ վանքն իւր սահմանաւքն՝ ջաղացովն եւ պահեզսն... եւ զԱղի աղբերն զպահէզն, որ իմ պապն գնեալ էր եւ ինձ տվեալ...»: Աբրահամ վանահայրն ու միաբանները հատկացրել են տասը պատարագ[110]:

1269 թ. - Բագնայր գյուղից դուրս մեծ խաչքարի վրա պահպանված է եղել փոքրիկ չափածո արձանագրություն[111]:

1271 թ. - Աբրահամ վանահոր անվան հիշատակությամբ վերջին արձանագրությունը պատկանում է Ղազարի որդի Ալեքս վաճառականին: Նա նվիրել է Անիի Բազազ փողոցի կրպակը եւ արծաթե սկիհ («...էտու նվեր ի Բազազ փողոցին կուղպակ մի, սկի մի արծաթի»), որի դիմաց Աբրահամ վանահայրը, Գորգ (Գեւորգ) վարդապետն ու միաբանները հատկացրել են 12 պատարագ[112]:

---

[109] Տե՛ս Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Երեւան, 1963, էջ 201: Այս Իսրայելը եւ 1215 թ. Անիում Տիգրան Հոնենցի նշանավոր արձանագրությունը գրած Իսրայել գրիչը տարբեր մարդիկ են:

[110] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 189, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 177-178:

[111] «Ով Սուրբ Նշան Տէրունական, Երկրպագուացս լեր պահապան, Աւուր վերջի մեծի ծագման: Թւիս ՉԺԸ (1269)» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 178-179):

[112] «...ի տարին ԺԲ (12) պատարագ. Ա (1)՝ Ղազարու, Ա (1)՝ Խոցադեղին, Ա (1)՝ Թէտեցն, Ա (1)՝ Թամամին, Ա (1)՝ Թագերոյն, Ա (1)՝ Վարդէ տիկնա, Ա (1)՝ Էբրիանոսի, Գ (3) Խոցադեղին, Ա (1)՝ Մի...» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 179-180):

1262-1271 թթ. ժամանակամիջոցին (Աբրահամ վանահոր ժամանակին) են վերաբերում երկու անթվական արձանագրություն. Խաչոտի որդի Սարգիսը տվել է «...ձիթահնաց աղցաւղի քար եւ յամէն ամի Ե (5) լիտր ձէթ», ստացել տարեկան երկու պատարագ[113]: Խաչտուրը տվել է «զՄուլուքին հողն, որ Թեղենեաց այգոյն ի հետ է», ստացել երկու պատարագ, մեկական՝ իր եւ Տիկնոջ համար[114]:

1278 թ. - Վերեւում հիշված Գեւորգ վարդապետը ստացել է Ներսես Շնորհալու՝ Մատթեոսի ավետարանի մեկնությունը՝ որպես «յետին ստացիչ» (հետագայի ստացող): Հիշատակարանում նա պարզաբանում է ձեռագրի ստացման նպատակը՝ «**ի վարժումն հետեւողաց բանասիրաց, յաւգուտ անձանց եւ եկեղեցւոյ**», որը մի անուղղակի վկայություն է Բագնայրի վանական դպրոցի մասին: Հիշատակարանի վերջում Գեւորգ վարդապետը նշում է. «թվին ՉԻԷ (1278) ի հրեշտակաբնակ ուխտիս Բգնայրս գրեցի, ուր էր հանգիստ մեր, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, զոր հաստատուն պահեսցէ Միածինն իւր, մինչ ի գալուստն իւր միւս անգամ»[115]:

1308 թ. - «Բագնայրի ավետարանի» հետագայի հիշատակարանը տեղեկացնում է, որ այդ թվականին Գեւորգ Ներսիսանցի զավակները, 600 արծաթե դրամ վճարելով, գրավից ազատել ու Բագնայրի վանք են վերադարձրել այդ նշանավոր ձեռագիրը («...թափեցաք զԱւետարանս ի յանիրաւ վաշխոյ... (վե)րստին ընծայեցաք ի Սուրբ Աստուածածինն, արձան յաւիտենից...»)[116]: Ժամանակի հոգեւոր իշխանության եւ վանքի պատկանելության մասին հիշա-

---

[113] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 186, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 167:
[114] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 186:
[115] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 488:
[116] Հիշատակարանում նշվում են Գեւորգի կինը՝ Մամախաթունը, ավագ որդին՝ Մխիթարը (նրանք բոլորը մահացած են եղել), մյուս որդիները՝ Աղբերոս, Սարգիս, Պարոն: Հիշատակարանը գրել է Գելանի որդի Ստեփանոս գրիչը (Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 890-892):

տակարանում ասվում է. «ի հայրապետութեան մերո նահանգիս Շիրակ գաւառիս, հեզի եւ մարդասիրի՝ տէր Յովհաննիսի, որդոյ Ա-պուղամրի, իշխեցող տեղւոյս»[117]: Այստեղից երեւում է, որ Գրիգոր Ա-ից սկսած Անիի եպիսկոպոսական աթոռն զբաղեցնող տոհմի ներկայացուցիչները դեռեւս մնում էին Բագնայրի պատրոնները:

1317 թ. - Վանքի մոտով անցել է անուշահամ ջրի առու, որը սկիզբ է առել մոտ 1 կմ հեռու գտնվող ժայռի միջից դուրս եկող աղբյուրից[118], եւ որին կից եղել է հետեւյալ արձանագրությունը. «ՉԿԶ (1317) Յովսէփ յիշեցէք ի Տէր», սրա մոտ՝ «զնկարիչ սբ նշանացս զՅովսէփ անարժանս (յ)իշեցէք ի Քրիստոս»[119]:

1340-ական թթ. - «Բագնայրի ավետարանի» թերի պահպանված հետագայի հիշատակարաններից մեկը տեղեկացնում է, որ այդ ժամանակ (հիշատակվում են Շահնշահ Գ Զաքարյանը եւ նրա եղբայր Շրվանշահը, որոնք գործել են 1340-50-ական թվականներին) ձեռագիրը գերեվարված է եղել, սակայն մի վարդապետի (անունը չի պահպանվել) միջնորդությամբ, ոմն Աղբուղա այն հավանաբար Ուրծում փրկագնել ու վերադարձրել է Բագնայրին: Հիշատակարանում հիշյալ վարդապետը գրում է. «Արդ ես, նվաստս ի Քրիստոս... վարդապետս... ուրախութեամբ ետու ի ձեռն բարեպաշտ եւ քրիստոսայսէր պարոն Հընտուպէկին, որ էր **տէր տեղոյն** եւ հասուցէ ի դուռն սուրբ եկեղեցոյն Աստուածածնին՝ յիշատակ անջինջ եւ բարեխաւս առ Քրիստոս՝ Աղբուղային եւ մեզ...»[120]:

1350-ական թթ. - «Բագնայրի ավետարանի» մեկ այլ հետագայի հիշատակարան տեղեկացնում է, որ Բագնայրում ձեռագիրը նորոգել է տվել Գրիգոր Խուցեսի որդի Պարոնը, որը գրում է. «Արդ ես՝ մեղուցեալ Պարոն տեսի զսուրբ Աւետարանս եւ ոչ վստահացայ ի յարծաթն կամ յոսկին իմ, այլ յողորմութիւնն Աստուծոյ ապաւինե-

---

[117] Նույն տեղում:
[118] Մ. Գեւորգեանց, նշվ. աշխ., էջ 97:
[119] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 181:
[120] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց Օ. Եգանեան, Երեւան, 2009, էջ 208:

ցայ… եւ նորոգեցի զսայ ի հալալ վաստակոց իմոց, յիշատակ ինձ եւ ննջեցելոցն իմոց»[121]: Պարոնը հիշում է նաեւ եղբոր՝ Ասիլի անունը՝ նրան կոչելով «առաջնորդ եւ հիմն քաղաքիս Անոյ, իրաւարար եւ արդարադատ ամենայն քաղաքին»[122]: Սարգիս գրչի այս հիշատակարանում շատ արժեքավոր է Բագնայրի Պողոս վանահոր հիշատակումը՝ «Յիշեցէք եւ զառաջնորդ սուրբ ուխտիս՝ զՊաւղոս հայրն, որ աւժանդակ եւ աւգնական եղեւ նորոգման սուրբ Աւետարանիս»[123]: Նա, փաստորեն, Բագնայրի վերջին վանահայրն է, որի անունը բանասիրությանը նոր է հայտնի դառնում:

Բագնայրի անթվական արձանագրությունների մեծագույն մասն անկասկած պատկանում են 13-րդ դարին, բայց հնարավոր է մի քանիսն ավելի վաղ կամ ուշ գրված լինեն: Ստորեւ ներկայացնում ենք այդ արձանագրությունների պարունակած հիմնական տեղեկությունները:

Անթվական արձանագրությունների մի մասն ուշագրավ են այն առումով, որ վերաբերում են Անիում գտնված ինչքի նվիրատվությանը եւ ինչպես վերեւում բերված մի քանի արձանագրությունները, երբեմն հետաքրքիր տեղագրական տվյալներ են պարունակում: Այսպես, ոմն Խաչոտը նվիրել է իր գանձագին տունը, որը գտնվում էր Անիի Աբուղամրենց Ս. Գրիգոր եկեղեցու մոտ (նաեւ մի արծաթե սկիհ), որի դիմաց ստացել է տարեկան երկու պատարագ[124]: Առյուծ անունով մեկը նվիրել է իր տունը, որը գտնվել է Անիի «Քահանենց»

---

[121] Նույն տեղում, էջ 209: Հիշատակարանում Պարոնը նշում է իր հանգուցյալ հարազատներին, որոնց գերեզմանները Բագնայրում էին:

[122] Նույն տեղում: Ասիլը 1357 թ. Անիում ստացել եւ նորոգել է Կիլիկիայից այստեղ բերված մի արքունական Ավետարան: Նրա գործունեության մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 311-312, 364:

[123] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, հ. Ե, էջ 209: Գ. Հովսեփյանի «Յիշատակարանք ձեռագրաց»-ում հիշատակարանի այս հատվածը չկա:

[124] «Ես Խաչոտս, ծառա Քրիստոսի, ետու ի Սուրբ յԱստուածածինս զիմ զգանձագին զտունն մաւտ ի յԱպուղամրենց Սուրբ Գրիգոր եւ սկի արծաթի…» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 180-181):

կոչված եկեղեցու դիմաց, ստացել է մեկ պատարագ[125]: Ոմն Սարկավագ նվիրել է Անիում գտնվող իր «ձիթահնաց կէս ակն, որ ի Կարուց դրանն» եւ ստացել երեք պատարագ[126]: Մեկ այլ արձանագրության մեջ հիշվում է Անիի «Ձորդռան» (հավանորեն Ախուրյանի կամրջով քաղաք մտնող դուռն է) մոտ գտնված այգին. «Ես Սերոբս որդի Ռատին Երեւանեցի ետու զիմ այգին որ ի Ձորդռանն է»[127]: Թադեոսի որդի Հովհաննեսը տվել է Անիի մոտ գտնվող իր ջրաղացի մի մասը. «...ետու զիմ ջաղացն, որ ի Գլիձորին զձախ աղացն», ստացել հինգ պատարագ[128]: Առաքելի որդի Հովհաննեսը տվել է նույն Գլիձորում գտնվող իր «կէս ակն ջաղացն..., որ կոչի Հատաւրինիկ», ստացել երկու պատարագ[129]: Հավանորեն Անիում են գտնվել նաեւ անթվական արձանագրություններում նշված՝ վանքին նվիրված մի շարք տները[130]:

Անթվական արձանագրություններում հաճախ են հիշատակվում այգիների եւ հողերի նվիրատվություններ, ընդ որում՝ բավական լայն աշխարհագրությամբ՝ Բագարան, Մարմետ, Օշական, Ագարակ, Թամիր (Արագածոտնում): Ոմն Բախտիարը նվիրել է իր այգին «ի Բագրանի, որ կոչի Տափկենց» եւ ստացել չորս պատարագ[131]: Այս արձանագրության մոտ եղել է մեկ ուրիշը, որտեղ գրողի անունը չի պահպանվել, եւ որտեղ ասվում է վանքին տրված՝ Ա-

---

[125] «Ես Առիւծս ետու զիմ տուն ի սուրբ ուխտս, որ ընդդէմ Քահանենց եկեղեցոյն, պատարագի ինձ Քրիստոս աւր Ա (1)» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 187):

[126] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 185:

[127] Նվիրատուն ստացել է տարեկան չորս պատարագ (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 180): Կ. Բասմաջյանի մոտ՝ «Էրեւանեցի» (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 147):

[128] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 186:

[129] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 186-187:

[130] Գոհարիկը տվել է իր տները, ստացել երկու պատարագ (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 185): «Թորոսոնց» Մխիթարը տվել է իր տունը, ստացել երկու պատարագ (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 186):

[131] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 181-182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 183:

գարակում գտնվող Շահկան հողի եւ Առիճքում գտնվող վանքի օ-տարված այգու վերադարձի մասին[132]: Աշնակցի Վարդաշահը տվել է իր այգին, ստացել երկու պատարագ[133]: Ավետիսն ու Հազարդեղը նվիրել են Թամիրում գտնվող Ուղտանատ կոչվող այգու կեսը եւ ստացել մեկական պատարագ[134]: Պողոսի որդի Պետրոսը տվել է իր այգին «ի յԱւշական, մաւտ ի Վարդեանց…», ստացել տարեկան վեց պատարագ[135]:

Հասան Կողբացին՝ Մխիթար ռայիսի որդին եւ Համելի թոռը գրում է. «…վասն փրկութեան հոգոց մերոց ետու զմեր գանձագին հայրենիք Ակինն զկես դանկն՝ ի սուրբ ուխտս եւ՝ լերամբքն», որի դիմաց ստացել է 10 պատարագ, ութը՝ իր եղբայր Համելի, երկուսը՝ Կատայի համար[136]: Ոմն Սարգիս նվիրել է իր այգին «ի Մարմետ, ի վերա Երասխա» եւ ստացել երեք պատարագ[137]: Նվիրատուներ Սի-մեոն երեցի եւ նրա որդի Թաթուլի արձանագրության միայն սկզբի մասն է պահպանվել[138], իսկ իրեն Շահեր Կիրակոս անվանող նվի-րատուի արձանագրությունը թերի է. «…էտու զիմ գանձագին հո-

---

[132] «…գնեցի զՇահկանն զհողն, որ յԱգրկին եւ ետու ի սուրբ ուխտս յիշատակ հոգո իմո, ի յԱռիճք զսեփական այգին, որ ի բազում ժամանակաց աւտարացեալ էր, վերստին, հանդերձ միաբանաւքս, վերստին՝ ի սուրբ ուխտս» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 184):

[133] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 185:

[134] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 188:

[135] «…ի տարին Զ (6) աւր պատարագ. Ա (1)՝ ինձ, Ա (1)՝ Ասուրաստանա, Ա (1)՝ իմ հաւրն, Ա (1)՝ Հարկեւորին, Ա (1)՝ Քոյրկանն, Ա (1)՝ Յայսմկանն» (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 183, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 188):

[136] Նվիրատուի անունը Ն. Սարգիսյանը գրում է «Կողբցի», բնակավայրի անունը՝ «Սկինն», Կ. Բասմաջյանը՝ «Կողոբցի» եւ՝ «Ակինն»: Դանկը ամբողջն է՝ բաժանված 6 մասի: Տվյալ դեպքում կես դանկ ասելով՝ նվիրատուն նկատի ունի կա՛մ բնակավայրի կեսը, կա՛մ մեկ վեցերորդ մասի կեսը, որին կցել է նաեւ իրեն պատկանող լեռնամասը (Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 189, Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 185):

[137] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 182, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 185:

[138] Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 181, Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 182:

ղերն լեր…»[139]: Երկու այլ բեկորների վրա պահպանվել են մեկում՝ ոմն Գրիգորի, մյուսում՝ Հովհաննեսի անունները[140]:

ԲԱԳՆԱՅՐԻ ՄԻԱԲԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՆԱՀԱՅՐԵՐԸ

Բագնայրի վանահայրերին անդրադառնալով՝ Ղեւոնդ Ալիշանը նշում է, որ շուրջ 50 արձանագրություններում «հազիւ երեք կամ չորք վանահարք յիշին» եւ բերում այս ցանկը՝

1042 Ստեփանոս

1209-1242 Սիմէոն, որ յաճախ յիշի յարձանս, ի սորա ժամանակի երեւին եւ Տէր Քրիստափոր եւ Գամաղիէլ վարդապետք…

1262-6 Աբրահամ, առ որով եւ Յովսէփ փակակալ»[141]:

Այժմ առկա նյութերն ի մի բերելով կարող ենք ներկայացնել Բագնայրի վանահայրերի հետեւյալ ցանկը.

1. Ստեփանոս 1042
2. Սիմեոն Ա 1206-1211
3. Գրիգոր 1215
4. Սիմեոն Բ 1229 - մոտ 1238 թ.
5. Քրիստափոր (մոտավորապես 1240-50-ական թթ.)
6. Աբրահամ 1262-1271
7. Պողոս 1350-ական թթ.

Բագնայրի արձանագրություններում նկատվում է մի օրինաչափություն, գրեթե ամենուր վանահոր անունից հետո նշվում է «ամենայն եղբարքս» կամ «միաբանքս», այսինքն՝ վանքի բոլոր գործերում եւ նվիրատուների առջեւ ստանձնած պարտավորությունների մեջ միաբանության բոլոր անդամներն էական մասնակցություն են ունեցել: Վանահայրերից բացի, վանքն ունեցել է հեղինակավոր հոգեւորականներ, վարդապետներ, որոնցից անվանապես հիշատակ-

[139] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 189:
[140] Կ. Բասմաջեան, նշվ. աշխ., էջ 191:
[141] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 121:

վում են Մխիթարը (1046 թ.), Առաքելը (13-րդ դ. 20-ական թթ.), Հովսեփ փակակալը (1262 թ.), Գեւորգ վարդապետը (1271-1278 թթ.):

Բագնայրը ամենից շատ վիմագիր գրիչների անուններ պահպանած վանքերից է: Ս. Բարխուդարյանը գրում է. «Ինչպես Բագրատունյան Անին էր կուլտուրայի օջախը, որտեղից այն տարածվում էր Հայաստանի այլ վայրերը, այնպես էլ գրիչների կուլտուրան ծավալվում էր այնտեղից: ...Ըստ վայրի ամենաշատ անուններ (գրիչների - Կ. Մ.) տալիս է Անին՝ 8, Հոռոմոսը՝ 7 և Բագնայրը՝ նույնպես 7...»[142]: Բագնայրում հիշված վիմագիր գրիչներն են Ռայբիկը (1210 թ.), Մարգարեն (1215 թ.), Մանասեն (1206-1236 թթ.), Դավիթը (1242 թ.), Հովսեփը (մոտ. 1240-1250 թթ.), Սիմեոնը (5 մեծ արձանագրություն է գրել 1261-1262 թթ.), Իսրայելը (1266 թ.)[143]: Չի բացառվում, որ նրանցից ոմանք միաբանության անդամ են եղել:

Անկասկած Բագնայրի վանքը նաեւ ձեռագրական մշակույթի կենտրոն էր: Ինչպես տեսանք, վանքին ձեռագրերի նվիրատվության մասին նշվում են մի քանի վիմագիր արձանագրություններում, իսկ 1232 թ. գրված «Բագնայրի ավետարանը» այս վանքի նշանավոր սրբությունն էր, որը գրավից ազատվել է 1308 թ., ապա որոշ ժամանակ անց գերեվարվել եւ 14-րդ դարի կեսերին փրկագնվելով վերադարձվել է Բագնայր: Այստեղ ձեռագրում հիշատակարաններ են գրել Ստեփանոս (Գելանի որդի) եւ Սարգիս գրիչները:

Ուշագրավ է նաեւ Գեւորգ վարդապետի 1278 թ. հիշատակարանը, ուր նշվում է, որ Ներսես Շնորհալու գործը նա ստացել է «ի վարժումն հետեւողաց բանասիրաց, յաւգուտ անձանց եւ եկեղեցւոյ»[144]: Այն, որ վանքում պահվել են նաեւ այլ արժեքավոր մատյաններ, երեւում է 1305 թ. մի հիշատակարանից, որտեղ խոսվում է մի

---

[142] Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 204:

[143] Տե՛ս Կ. Բասմաջեան, Հայոց հին գեղարուեստի վարպետները, Փարիզ, 1926, էջ 9-11: Թերեւս վիմագիր գրիչ է եղել նաեւ վանքին ջուր մատակարարող աղբյուրի մոտ 1317 թ. արձանագրություն գրած Հովսեփը:

[144] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 488:

ձեռագրի «ստոյգ եւ ընտիր» նախօրինակի մասին, իսկ առավել հետաքրքրականն այն է, որ այդ օրինակը հատուկ անունով կոչվել է «Բագնայրեցի»[145]:

Հայտնի չէ, թե երբ են միաբանները լքել Բագնայրի վանքը: Քանի որ այն Անիի մերձակա մյուս վանքերի՝ Արջո Առիճի եւ Հոռոմոսի նման մեծապես կապված էր քաղաքի հետ թե՛ եկեղեցական-վարչական, թե՛ տնտեսական առումով, ուստի անեցիների հարկադրական արտագաղթը, որն աղետալի չափերի հասավ 14-րդ դարի երկրորդ կեսին, պետք է նաեւ շրջակա վանքերի անկման պատճառ դառնար: Սակայն հարկ է նշել, որ ըստ որոշ հիշատակարանների տվյալների, Հոռոմոսի վանքը գործել եւ առաջնորդներ է ունեցել նաեւ 15-19-րդ դարերում[146]: Ցավոք, Բագնայրի մասին նման տեղեկություններ չունենք, եւ վանքի վերաբերյալ առայժմ հայտնի վերջին տվյալը «Բագնայրի ավետարանի» նորոգումն է, որը կատարվել է այստեղ 14-րդ դարի 50-ական թվականներին եւ որին մասնակցել է վանքի հայտնի վերջին վանահայր Պողոսը:

20-րդ դարի սկզբներին կատարված լուսանկարներից երեւում է, որ չնայած կիսավեր, բայց վանքի բոլոր հիմնական կառույցները կանգուն էին: Ըստ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) տվյալների՝ Բագնայրի եկեղեցիները չարամտորեն քանդվել են 1950-60-ական թվականներին: Այժմ կանգուն է մնացել համալիրից հյուսիս-արեւելք գտնվող Ս. Երրորդություն փոքր եկեղեցին, իսկ գլխավոր Ս. Աստվածածին եկեղեցուց ու գավթից՝ միայն երկու կիսավեր պատ:

---

[145] Եսայու մարգարեությունն ընդօրինակած մի գրիչ իր ունեցած նախօրինակի մասին հայտնում է. «...կատարեցաւ տառս... ի ստոյգ եւ ընտիր աւրինակէ, որ կոչի Բագնայրեցի, զոր սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մայրաքաղաքն Հաղբատ» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 34):

[146] Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի վանքի պատմության նոր էջեր (ԺԴ-ԺԹ դդ.), «Էջմիածին», 1993, Դ-Ե-Զ, էջ 72-79:

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ԵՒ ՆՐԱ ՏՈՀՄԸ 11-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Բագրատունյաց ժամանակաշրջանի իշխանական տների պատմությունը դեռեւս ամբողջովին չի ուսումնասիրվել: Առավել հայտնին Պահլավունիներն են: 11-12-րդ դդ. մեկ այլ իշխանական տան՝ Հասանյանների կամ Ապիրատյանների վերաբերյալ մինչեւ այժմ կատարված միակ ուսումնասիրությունը պատկանում է Ներսես Ակինյանի գրչին՝ զետեղված Ներսես Լամբրոնացուն նվիրված մենագրության Գ մասում, որը վերնագրված է «Ազգաբանութիւն Պահլաւունեաց, Հասանեանց, Թոռնիկեանց եւ Հեթումեանց»[1]: Չնայած այս ուսումնասիրության առկայությանը, հետագա շրջանի աշխատություններում Հասանյանները կամ Ապիրատյանները, որպես առանձին իշխանատոհմ, գրեթե անտեսվել են[2]: Որոշ դեպքերում նրանք նույնացվել են Պահլավունիների հետ[3]:

Ն. Ակինյանը վերնագրում իշխանական տունը Հասանյան կոչելով տեքստում եւ տոհմածառում նրանց անվանում է Ապիրատյաններ, թերեւս նկատի ունենալով մեծ իշխան Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի առանձնահատուկ դերը տոհմի հաստատման գործում:

---

[1] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 327-457:

[2] Հայ Ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ այս տոհմը հիշատակվում է միայն մեկ անգամ. «Աշոտ Գ-ից սկսած հայ թագավորները սկսեցին ազատների (մանր ազնվականության) միջավայրից առաջ քաշել նոր իշխանական տներ: Աննշան դիրք ունեցող որոշ իշխանական տներ, օրինակ, Պահլավունիներն (Աբուղամրենք) ու մասամբ Ապիրատյանները, շուտով բարձր դիրքի տիրացան» (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երեւան, 1976, էջ 267): Հետագա շարադրանքում, սակայն, ոչինչ չկա իշխանական տան մասին, չի հիշատակվում անգամ մեծ իշխան Գրիգոր Ապիրատի անունը:

[3] Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, Լ. Խաչերեան, Գրիգոր Պահլավունի Մագիստրոս, Լոս Անճելըս, 1987, էջ 20, Ռ. Մաթեւոսյան, Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երեւան, 1990, էջ 175:

Սակայն բոլորովին վերջերս Գրիգոր Ապիրատի հոր եւ եղբոր մասին ի հայտ եկած մի տեղեկություն փոխում է իրավիճակը եւ թույլ է տալիս նոր մոտեցմամբ քննել ինչպես տոհմի հիմնադրման հարցը, այնպես էլ Գրիգոր Ապիրատի վերելքի մասին Մխիթար Անեցու թողած հայտնի վկայությունը:

Մխիթար Անեցու Պատմությունից (ավարտվել է 1193 թ.), ցավոք, պահպանվել է միայն սկզբնամասը[4]: 13-րդ դարում Մխիթարի երկից օգտվել են Վարդան Արեւելցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը: Հատկապես Վարդանը երբեմն առանձին հատվածներ բառացի արտագրել է Մխիթար Անեցուց եւ այս ճանապարհով մեզ հասցրել այդ հետաքրքրական պատմության առանձին բեկորներ: Մխիթար Անեցու Պատմությունից քաղված հենց այդպիսի մի հատվածում պահպանվել է եզակի վկայություն Ապիրատ մեծ իշխանի մասին: Հատվածը վերաբերում է Գագիկ Ա Բագրատունու (989-1017)[5] մահից հետո գահը ժառանգած նրա ավագ որդու՝ Հովհաննես Սմբատի (1017-1041) եւ վերջինիս կրտսեր եղբոր՝ Աշոտի միջեւ ծագած գահակալական պայքարից հետո տեղի ունեցած մի դեպքի: 1021 թ. Պետրոս Ա կաթողիկոսի (1019-1054)[6] եւ իշխանների միջնորդությամբ կայացած հաշտությամբ որոշվել էր, որ Հովհաննես Սմբատը պետք է թագավորի Անիում ու նրա շրջակայքում, իսկ Աշոտը՝ թագավորության մնացյալ տարածքներում, որը պատմիչները կոչում են «Դրուց աշխարհ»: Մխիթար Անեցուց օգտվելով Վարդան Արեւելցին պատմում է, որ Թալինի ստորոտում գտնվող իր զորակայանում հիվանդ ձեւանալով՝ Աշոտը խաբեությամբ կանչում ու ձերբակալում է Հովհաննես Սմբատին, նրան տալիս Ապիրատ իշխանին, որ սպանի, իսկ սա հոժարակամ նրան

---

[4] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի, Երեւան, 1983 (այսուհետեւ՝ Մխիթար Անեցի):

[5] К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., Москва, 1988, с.156.

[6] Կ. Մաթեւոսյան, Անին մայրաքաղաք եւ կաթողիկոսանիստ «Պատմաբանասիրական հանդես», 2008, N 3, էջ 25:

տանում է Անիի իր աթոռը, ասելով, որ չի կարող Աստծո օծյալի վրա ձեռք բարձրացնել եւ նրա տեղը դնել մի խելագարի. «Նոյն այրն (ի-մա՝ Մխիթար Անեցին) ասէ եւ յաղագս թագաւորին Յովաննիսի, եթէ եղբայր նորա Աշոտ ի յոտս Թալնայ կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ ի մահ, կոչէ զթագաւորն առ ինքն, փորելով ի սնարիցն կուսէ որոգայթս. եւ այնու ըմբռնեալ՝ տայ ի ձեռս մեծ իշխանին Ապիրատն կոչեցելոյ, սպանանել զնա. եւ նա յօժար կամօք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր յԱնի, ասելով. Զիա՞րդ ձգեցից զձեռս իմ յօծեալ Տեառն, եւ խելագար մի եդից ի տեղւոջ սորա»[7]:

Հաջորդ նախադասությունը վերաբերում է Ապիրատ իշխանի զորացմանը, Կեչառիսի վանքը կառուցելուն. «**Զսմանէ** (Ապիրատի մասին – Կ. Մ.) **ասեն յաննշանից մեծացեալ, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց, որ եւ շինեաց զսուրբ ուխտն Կեչառուս**, որպէս Վարհամ իշխանն՝ զՄարմաշէն»[8] (այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ.): Անեցի պատմիչի՝ Ապիրատ իշխանի մասին գրած «յաննշանից մեծացեալ» խոսքերը, ուսումնասիրողները, որպես կանոն, վերագրել են նրա տոհմական ծագմանը: Սակայն, ինչպես ստորեւ կտեսնենք, այդ խոսքերը վերաբերում են Գրիգոր Ապիրատին ոչ որպես տոհմապետ, այլ անհատ, որն իր հոր ավագ որդին ու նրա իշխանության ժառանգորդը չլինելով, «ոչ նշանավորներից» առաջադիմել ու հաջողության էր հասել սեփական խելքով ու առատաձեռնությամբ:

Թշնամացած Բագրատունի եղբայրների միջեւ հայտնված մեծ իշխան Ապիրատի արարքը թանկ է նստում նրա վրա: Սակայն հետագա անցքերի մասին գրելուց առաջ տեսնենք թե ավելի վաղ շրջանի ինչ փաստեր են հայտնի նրա մասին: Այդպիսիք պահպան-

---

[7] Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երեւան, 2001, էջ 102-103 (այսուհետեւ՝ Վարդան Արեւելցի):

[8] Վարդան Արեւելցի, էջ 102-103, աշխարհաբարը՝ էջ 139-140:

վել են վիմագիր արձանագրություններում, որտեղ իշխանն, ի տարբերություն պատմիչների երկերի, հիշատակվում է Գրիգոր անունով եւ **մագիստրոս** պատվաստիճանով: Հնագույն վկայությունը պահպանվել է Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցող Գորգ (Գէորգ) քահանայի 1001 թ. արձանագրության մեջ, որը 2002 թ. հրատարակել է Գ. Սարգսյանը: Այստեղ Գագիկ Ա թագավորի անունից հետո հիշատակվում է Գրիգորը. «...Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԱՇԽԱՐՀԱԿԱԼԻ, **ԳՐԻԳՈՐԻ՝ ՀԱՅՈՑ ՄԱԳԻՍՏՌՈՍԻ**...»[9]:

Երկրորդ արձանագրությունը գրված է հենց Գրիգորի կողմից, Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր մեծադիր եկեղեցու 1003 թ. շինարարական արձանագրության մեջ. «...Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԷՏՈՒԹԵԱՆ Տ(ԵԱՌ)Ն ՍԱՐԳՍԻ, **ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՌՈՍ**, ՈՐԴԻ ՀԱՍԱՆԱ, ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՍ՝ ԻՆՁ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹ(ԻՒ)Ն ԵՒ ԻՄ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ...»[10]:

Հավանաբար Կեչառիսի մոտերքում է եղել Գրիգոր Ապիրատի նստավայր ամրոցը: Վանքից ոչ հեռու, հարավարեւմտյան ուղղությամբ գտնվող «Խաչեր» անվանվող բարձունքի վրա (Կոտայքի թեմի այժմյան առաջնորդարանի շենքի մոտ) բոլորովին վերջերս բացվել են 11-12-րդ դդ. թվագրվող մի ամրոցի ավերակներ: Իսկ այդ վայրից շուրջ 2-3 կմ արեւելք, Թեղենիսի արեւմտյան բազուկներից մեկի հարթ գագաթին, որը տեղացիները կոչում են «Բերդի գլուխ», հայտնաբերվել են մեկ այլ ամրոցի ավելի ամբողջական

---

[9] Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երեւան, 2002, էջ 111:

[10] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259, Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 159: Արձանագրության թվականի եւ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունով արձանագրության քննությունը տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հազարամյա Կեչառիսի հիմնադրման պատմությունից, «Էջմիածին», 2004, Ա, էջ 77-91:

պահպանված ավերակներ[11]: Ավելացնենք, որ բուն Կեչառիսի վանքի տեղում հավանաբար եղել է հին սրբավայր, որից պահպանվել է 952 թ. արձանագրությամբ մի խաչքար[12]:

Գրիգոր իշխանին Ապիրատ անունով հիշում է նաեւ Մխիթար Այրիվանեցին, որը հավանաբար օգտվել է Մխիթար Անեցուց, բայց նաեւ մի լրացուցիչ տվյալ է հայտնում. «Ապիրատ իշխան 12 000 հեծելի (տէր). **սա շինեաց զԿեչառուս եւ եհան զառուն Երեւանայ**»[13]: Այրիվանեցին ավելացնում է իշխանի շինարարական ձեռնարկների թիվը, նշելով Երեւանի ջրանցքի շինարարությունը: Այս տեղեկության հիման վրա Երեւանը համարվել է Գրիգոր Ապիրատի տիրույթը[14]:

Այսպիսով՝ Գագիկ Ա-ի ժամանակ նրա ստորակա գլխավոր իշխաններից մեկն էր Հասանի որդի Գրիգորը, որը մագիստրոսական պատվաստիճան ուներ արդեն 1001 թվականին: Ըստ Հ. Բարթիկյանի, նշված ժամանակաշրջանում մագիստրոսը բյուզանդական արքունիքի կողմից օտարերկրացիներին տրվող ամենաբարձր պատվաստիճանն էր, որը կրողը նաեւ ամենամյա դրամական վարձատրություն էր ստանում[15]:

Ն. Ակինյանը ենթադրել է, որ Գրիգորը մագիստրոսի պատիվ ստացել է 1001 թ., երբ բյուզանդական Վասիլ Բ կայսրը (976-1025) Հայաստան է եկել[16]: Սա շատ հավանական է, քանի որ Դավիթ Կուրապաղատի մահից հետո (1000 թ.) երբ նրա տիրույթները ժառանգած կայսրը եկավ Հայաստանի արեւմտյան շրջաններ, շրջակայքի

---

[11] Գ. Սարգսյան, Հ. Մելքոնյան, Երկու նորահայտ ամրոց Ծաղկաձորում, «Հայ արվեստ», 2007, թիվ 3-4, էջ 32:

[12] Կանգնեցնողն է՝ «Գուրգեն որդի Վասակա» (Գ. Սարգսյան, Վիմագրական էսքիզներ, «Պատմաբանասիրական հանդես», 2008, 2, էջ 200):

[13] Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 58:

[14] Թ. Հակոբյան, Երեւանի պատմությունը, Երեւան, 1969, էջ 212-213:

[15] Հ. Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երեւան, 2002, էջ 669:

[16] Ն. Ակինյան, Գրիգոր Ապիրատ, որդի Հասանայ, Մագիստրոս, «Ակօս», 9, 1945, էջ 12-13:

մեծ ու փոքր իշխանավորները շտապեցին նրա մոտ եւ զանազան տիտղոսներ ու պատիվներ ստացան: Այս մասին հայտնում է դեպքերին ժամանակակից Ասողիկը, ըստ որի, կայսեր մոտ է գալիս Նփրկերտի ամիրան եւ ստանում «զմաժիստռոսութեան պատիւն», նույնը ստանում է Վրաց Գուրգեն թագավորը, բայց դժգոհ է մնում՝ «անարգանս իւր համարեալ զմաժիստռոսութեան պատիւն»: Գագիկ Ա-ը կայսեր մոտ չի գնում՝ «իբրեւ փոքրութիւն համարեալ զգնալն իւր առ նա», բայց նաեւ արգելք չի հանդիսանում, որ իր հպատակները գնան, ինչպես օրինակ իր քրոջ որդի Աբուսահլը[17]: Հավանական է, որ հենց այս ժամանակ է մագիստրոսության պատիվ ստացել նաեւ բազմաքանակ հեծելազոր ունեցող Գրիգորը: Բայց որպեսզի նա այդ պատվին արժանանար, պետք է ազնվատոհմ լիներ եւ որոշակի դիրք ունենար: Ն. Ակինյանն այստեղ է փնտրում Գրիգորի նաեւ Ապիրատ անվան ծագումը, գրելով. «Անունս կարելի չէ ստուգաբանել հայերէն ապիրատ բառով: Թերեւս աղաւաղուած ձեւն ըլլայ **ապիպատ** պատուանունին, արտասանուած նախ **ապիրպատ**, ապա **ապիրատ**, որուն նպաստած կարող է ըլլալ ապիրատ բառը: Բայց թէ Ապիրատ ընդունա՞ծ էր Բիւզանդիոնի արքունիքեն «ապիպատ» տիտղոսը, չէ վկայուած: ...Գրիգոր եւ Ապիրատ մէկ անձնաւորութեան կրած երկանուններն են»[18]:

Հայկական աղբյուրներում Ապիրատ անունով հիշատակվող առաջին մարդը Գրիգոր իշխանն է, ուստի այդ տարօրինակ անվան ծագումը հավանաբար կապված է հենց նրա կենսագրության հետ, բայց առայժմ հիմնավոր բացատրություն չունի[19]: Այն կարծիքը, թե

---

[17] Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 276-278:

[18] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 373:

[19] Հ. Աճառյանը գրում է. «ԱՊԻՐԱՏ, արդյոք հայերեն ապիրատ «անարդար» բա՞ռն է. եւ ինչպե՞ս կարող էր այսպիսի մի հոռի ածական մարդու անուն դառնալ: Այս անունը գործածական էր մեր մեջ ԺԱ-ԺԳ դարերում»: (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1942, էջ 193):

այդպիսի անուն եղել է նաեւ վրացիների մոտ, չի հաստատվում[20]: Ինչպես տեսանք, Կեչառիսում նա իրեն կոչում է «Հասանի որդի Գրիգոր Մագիստռոս» (1003 թ.), Գորգ քահանան նրան անվանում է «Գրիգոր՝ Հայոց Մագիստռոս» (1001 թ.): Ստորեւ կտեսնենք, որ իշխանին Գրիգոր Մագիստրոս անունով է հիշատակում նաեւ նրա դուստրը՝ Տեկորի 1042 թ. արձանագրության մեջ:

Իշխանին միայն Ապիրատ անունով հիշատակող առաջին պատմիչները՝ Մատթեոս Ուռհայեցին եւ Մխիթար Անեցին, իրենց երկերը գրել են իշխանի մահից համապատասխանաբար շուրջ 110 եւ 170 տարի անց: Հնարավոր է, որ պատմիչները նախընտրել են իրեն Գրիգոր Մագիստրոս անվանող իշխանի երկրորդ՝ Ապիրատ անունը նշել, նույնանուն Գրիգոր Մագիստրոս Պահլավունի (Բջնեցի) հանրահայտ իշխանի անվան հետ շփոթությունից խուսափելու համար:

Հետեւելով Ն. Ակինյանին, վիմագրերում Գրիգոր Մագիստրոս, իսկ պատմիչների մոտ Ապիրատ անվանվող իշխանին, սկզբնաղբյուրների ներդաշնակեցման համար նպատակահարմար ենք գտնում այսուհետեւ կոչել Գրիգոր Ապիրատ:

---

[20] Հ. Աճառյանը գրում է, որ Ապիրատ անունը հանդիպում է նաեւ «Վրաց մեջ» (Հ. Աճառյան, նույն տեղում), վկայակոչելով Վարդան Արեւելցու պատմության մի հատված, որտեղ գրված է, թե Գրիգոր Բջնեցին իր հետ վերցնում է «Վրաց Ապիրատ իշխանին» ու երկու այլ մագիստրոսների եւ կռիվ մղում սելջուկների դեմ (Վարդան Արեւելցի, էջ 142): Սակայն շարունակության մեջ «Վրաց իշխանի» անունը Լիպարիտ է: Սա հայտնի դեպք է, վկայված նաեւ այլ աղբյուրներում եւ վերաբերում է 1048 թ. Բասենի դաշտում տեղի ունեցած ճակատամարտին, որին բյուզանդական կողմից մասնակցում էին Կատակալոն, Ահարոն, Գրիգոր մագիստրոսները եւ Վրաց Լիպարիտ իշխանը (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 449): Արեւելցու պատմության հրատարակության համար հիմք ծառայած ձեռագրերում հավանորեն գրչական սխալ է սպրդել եւ Լիպարիտը դարձել է Ապիրատ, հետեւաբար «Վրաց մեջ» Ապիրատ անուն չկա:

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏԻ ՀԱՅՐԸ ԵՒ ԵՂԲԱՅՐԸ

Փորձենք պարզել Գրիգոր Ապիրատի տոհմական ծագումը: Ինչպես տեսանք, Կեչառիսի շինարարական արձանագրության մեջ նա հիշատակում է հորը՝ Հասանին: Մատթեոս Ուռհայեցին նույնպես նշում է նրա անունը. «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ»[21]:

Ն. Ակինյանը գրում է. «Հասան. սա հայրն էր Ապիրատի. իր մասին աւելի բան չենք գիտեր»[22]: Բարեբախտաբար բոլորովին վերջերս Մատենադարանի ձեռագրերից մեկում (թիվ 3681) հայտնաբերվեց Հասանի անվան մեկ այլ հիշատակություն Հավուց թառի առաջնորդ Նաթանայելի (14-րդ դ.) Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ կատարած հավելման շնորհիվ: Պարզվում է, որ Հասանի զավակն է եղել նաեւ Քեղի (Գեղի) ամրոցի տեր իշխան Գեւորգը, որը 1002 թ. կառուցել է Հավուց թառի Կաթողիկե եկեղեցին: Մինչեւ այժմ Մխիթար Այրիվանեցու կարճ հաղորդմամբ հայտնի՝ «Շինի եւ Հաւուց թառն ի Գէորգեայ իշխանէն Քեղւոյ»[23] տեղեկությունը Նաթանայելը հարստացրել է Գեւորգ իշխանի ծագման մասին չափազանց արժեքավոր վկայությամբ՝ «**Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին...**»[24]:

Գրիգոր Ապիրատի եւ Քեղի ամրոցի տեր Գեւորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտման շնորհիվ պարզ է դառնում, որ Հասանը նույնպես իշխան էր, եւ որ Մխիթար Անեցու՝ Գրիգոր Ապիրատի վերաբերյալ ասածը՝ «յաննշանից մեծացեալ», չի վերաբերում նրա տոհմի ծագմանը: Միաժամանակ հիմնավորված են դառնում Հասանի որդիների զորության մասին վկայութ-

---

[21] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, էջ 16 (այսուհետեւ՝ Մատթեոս Ուռհայեցի):

[22] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 373:

[23] Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, էջ 57:

[24] Մատենադարան, ձեռ. թիվ 3681, թերթ 78ա:

յունները: Մասնավորապես պատմիչների հաղորդումները, թե Գրիգոր Ապիրատը տեր էր 12 000 հեծյալի, չափազանցություն էր թվում: Մինչդեռ այժմ պարզ է դառնում, որ Հասանի որդիների իշխանությունը տարածվում էր Վարաժնունիքից (Կեչառիս) մինչեւ Երեւան, որտեղ ջրանցք էր կառուցել Գրիգոր Ապիրատը, հասնում Հավուց թառ ու Քեղի, որը սահմանակից էր Դվինի ամիրայությանը: Այսպիսի տարածքի վրա իշխողները կարող էին նշանակալից զինուժ ունենալ: Համեմատության համար նշենք, որ Բջնիի տեր Վասակ Պահլավունու (Գրիգոր Մագիստրոս Պահլավունու հոր) մասին ասվում է, որ նա իր տրամադրության տակ ուներ «...արք իբրեւ հինգ հազար»[25]:

Գեւորգի մասին ավելացնենք, որ Նաթանայել Հավուցթառեցու հայտնածի համաձայն իշխանը ոչ միայն կառուցել է Հավուց թառի ինը խորանով Կաթողիկե եկեղեցին (այժմ՝ ավերված է), այլեւ վանքին զգալի նվիրատվություններ կատարել, այդ թվում Գողթ (Կոխթ) գյուղը, որ նա գնել էր Գագիկ Ա թագավորից ու նրա որդուց՝ Հովհաննես Սմբատից: Նաթանայելը գրում է. «**Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին վերըստին նորոգեց զնախադրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ եւ շինեց զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Թ**(9) **խորանաւ:** Եւ արար գանձագին զմերձակա գեղն զԿոխթ ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք եւ ետ ի հայրենե(ա)ց իւր զԳետոց վանսն եւ զՀովայսն վանքագեղ եւ ժողովեաց ԳՃ (300) կրաւնաւոր»[26]:

---

[25] Մատթեոս Ուռհայեցի, էջ 16:

[26] Մատենադարան, ձեռ. թիվ 3681, թերթ 78ա, Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երեւան, 2006, էջ 147-167: Գանձագին արված Գողթից բացի իշխանն իր սեփականությունից վանքին է նվիրել Կոտայքի Ովա գյուղը (Հովհաննես Դ Ովայեցի կաթողիկոսի ծննդավայրը), որպես «վանքագեղ»:

Նաթանայել եպիսկոպոսը Գեւորգ իշխանի մասին վկայություն է թողել նաեւ մի հիշատակարանում, ըստ որի Հավուց թառը «նորոգեաց սպարապետն Հայոց Գորք իշխանն»[27]:

Գեւորգ իշխանի ժամանակ Հավուց թառի ծաղկման մասին նշում է նաեւ Մանուել Բջնեցին (15-րդ դ.) իր գանձում. «Ձմեծդ մենաստան, զոր կանգնաեց արքայն եւ Գէորգ իշխան...»[28]: Նրա մոտ բավական խառն են տեղեկությունները վանքի նշանավոր «Ամենափրկիչ» կոչվող սրբազան խաչի վերաբերյալ, որի կապակցությամբ նշում է բյուզանդական Վասիլ կայսեր եւ Գեւորգ իշխանի անունները, բայց հիմնական դերը վերապահում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն, որը հետագայում առաջացած ավանդության արդյունք է[29]:

Հնարավոր է, որ այդ ավանդության առաջացմանը նպաստել է Հավուց թառում «Գրիգոր Մագիստրոսի» անունով եղած 1013 թվականի արձանագրությունը (քարը կորել է, պահպանվել է միայն տեքստը), որը վերաբերում է «Ամենափրկիչի» նվիրատվությանը: Որոշ ուսումնասիրողներ այն կեղծված արձանագրություն են համարել[30]: Արձանագրության տեքստը հավանաբար հետագայում միջամտության է ենթարկվել: Սկզբում ասվում է. «ԹՈՒԻՆ ՆԿԲ (1013) Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՆ ԳԱԳԿԱՅ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆՆ ՏԵԱՌՆ ՍԱՐԳՍԻ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՑԻ ՁԵԿԵՂԵՑԻՍ ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ ԻՄՈՑ...»[31], այնուհետեւ երկարաբան ոճով պատմվում է շրջակայքի «գանձագին» արվելու եւ վանքին

---

[27] Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 663:

[28] Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը եւ նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երեւան, 1987, էջ 92:

[29] Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքի..., էջ 165-166:

[30] Ն. Ակինյան, Գրիգոր-Ապիրատ, որդի Հասանա, Մագիստրոս, էջ 118, Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, ՀՅ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ., 1988, թիվ 4, էջ 70:

[31] Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 6:

նվիրաբերվելու[32], ինչպես նաեւ Քրիստոսի՝ փայտից փորագրված «անձեռագործ սուրբ պատկերի» նվիրատվության մասին:

Գեւորգ իշխանի տոհմաբանության մասին նորահայտ տեղեկության շնորհիվ ակներեւ է, որ եթե Հավուց թառում եղել է 1013 թվականի մի արձանագրություն Գրիգոր Մագիստրոսի անունով, ապա նա վանքի հովանավոր իշխանի եղբայր Գրիգոր Ապիրատն է, որն, ինչպես տեսանք, 11-րդ դարի աղբյուրներում հիշատակվում է միայն Գրիգոր Մագիստրոս անունով: Հնարավոր է, որ հենց այդ անունն էլ շփոթեցրել է հետագայի հեղինակներին, որոնց իմացած «Գրիգոր Մագիստրոսը» միայն Պահլավունի (Բջնեցի) իշխանն էր, ուստի «Ամենափրկիչին» վերաբերող պատմությունները «ծաղկեցրել են» հենց Պահլավունի իշխանի կենսագրության տվյալներով:

Վերադառնալով Մանուել Բջնեցու հաղորդմանը՝ նշենք, որ թեեւ նա երկար բարակ պատմելով Գրիգոր Մագիստրոս Պահլավունու մասին, այնուամենայնիվ գրում է, որ Ամենափրկիչն ընծայել են Վասիլ կայսրն ու Գեւորգ իշխանը («Մեզ տըւեալ ընծա յարքայէն Վասլայ եւ Գորգ իշխանայ»): Բայց ավելի ուշագրավ է իշխանի ծագման մասին հեղինակի ակնարկը՝ «...**Գէորգ իշխանի՝ ոստ Բագրատունի**»[33]: Դժվար է ասել, արդյոք 15-րդ դարում ապրող հեղինակն ունեցել է որեւէ աղբյուր այդ արտահայտության համար, թե՞ այն պարզապես թելադրվել է չափածո ստեղծագործության գովաբանական ոճով:

Ցավոք, հայտնի չէ Հասանի հոր անունը: Հրապուրիչ է թվում ենթադրել, թե Հասանի նախնիներից էր Աշոտ Երկաթի (914-929)

---

[32] Արձանագրության շարունակությունը՝ «...գանձագին արարի զվայրս սորա լերամբն եւ դաշտամբն եւ ամենայն կազմութեամբն որ ի սմա», համեմատելի է Վահրամ Պահլավունու՝ Մարմաշանի 1029 թ. արձանագրության մի հատվածին՝ «...լիացուցաք ամենայն գոյիւք, լերամբք եւ դաշտաւք, աւանդեցաք ի սա գեղս եւ ագարակս գանձագինս...» (Աբէլ Մխիթարեանց, Տեղագրութիւն Մարմաշինոյ վանացն ի Շիրակ, Վաղարշապատ, 1870, էջ 10):

[33] Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 91:

հավատարիմ զորական, ականատես պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու բնութագրմամբ՝ թագավորի պատվավորներից («ոմն ի պատուաւորաց») Գեւորգը (հետագայում ենթադրաբար Մարզպետունի կոչված): Ուշագրավ է, որ նա հիշվում է հենց Քեղի ամրոցում, երբ մոտեցող արաբներին պարտության է մատնում բերդից դուրս գալով ու համարձակորեն նրանց վրա հարձակվելով[34]: Սակայն այդպիսի ենթադրության համար լրացուցիչ փաստարկներ են պետք: Նկատենք, որ այս Գեւորգի ժառանգների մասին ոչինչ հայտնի չէ[35]:

Ինչ վերաբերում է տոհմանվանը, ապա մինչեւ այժմ մասնագիտական գրականության մեջ հավասարապես կիրառվող «Հասանյան» կամ «Ապիրատյան» տարբերակներից պետք է ընտրել առաջինը: Բանն այն է, որ մինչ այժմ Գրիգոր Ապիրատն էր համարվում տոհմը բարձրացնող, հետեւաբար իշխանական տան հիմնադիր, բայց այժմ նրա եւ Քեղիի տեր Գեւորգ իշխանի եղբայրներ լինելու հանգամանքի բացահայտմամբ մեծանում է Հասանի կշիռը որպես տոհմապետ: Նշենք նաեւ, որ այս տոհմի կրտսեր ներկայացուցիչներին անդրադառնալիս պատմիչները նրանց նախնիների թվարկումը հասցնում են մինչեւ Հասանի անունը: Օրինակ, Մատթեոս

---

[34] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (գրաբար, աշխարհաբար) աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երեւան, 1996, էջ 356-357:

[35] Մ. Չամչյանը գրում է, թե Աշոտ Գ-ը (953-977) Գեւորգի որդուն՝ «զԳոռ յազգէ Մարզպետունեաց» դարձրել է սպարապետ, որը «ժողովեաց զօր բազում մինչեւ ցքառասուն եւ հինգ հազար» (Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 837): Սա արձագանքն է Ուռհայեցու հայտնած մի տեղեկության. «…ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական գունդն քառասուն եւ հինգ հազար…» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 8): Ենթադրելի է, որ Մ. Չամչյանի օգտագործած ձեռագրում «զմարզպետական գունդն» ձեւակերպման երկրորդ բառը եղծված է եղել եւ կարդացվել «զմարզպետական Գոռն»: Այլապես դժվար է բացատրել, թե ինչ Գոռի մասին է խոսքը, որին չի հիշատակում եւ ոչ մի պատմիչ, ոչ մի սկզբնաղբյուր: Հիշյալ դարաշրջանի հայկական աղբյուրներում այդպիսի անձնանուն ընդհանրապես չի հանդիպում:

Ուռհայեցին Գրիգոր Ապիրատի թոռանը ներկայացնում է հետեւյալ կերպ՝ «...քաջ զորականն եւ մեծ հաւատացեալն **Գրիգոր, որդի Վասակայ, որդի Ապիրատին՝ որդւոյ Հասանայ,** յազգէ քաջանց...»[36]: Պատմիչը եւ նրան հետեւելով Սմբատ Սպարապետը, նույն հետադարձ թվարկումն են անում այս Գրիգորի եղբորը՝ Բարսեղ Ա Անեցի կաթողիկոսին ներկայացնելիս[37]:

Քեղիի տեր Գեւորգ իշխանի ժառանգների մասին մինչ այժմ ոչինչ հայտնի չէր, սակայն հոր անվան հայտնի դառնալով այժմ հնարավոր է նրանց փնտրել հենց նույն տոհմական վանքում՝ Հավուց թառում: Վանքի տարածքում սելջուկյան տիրապետության շրջանից պահպանված միակ արձանագրությունը, որը խաչքարի վրա է, հետեւյալ բովանդակությունն ունի. «Յիշէ Քրիստոս **զՀասան**, զորդի **Սմբատա**, զծառա քո եւ ողորմեա նմա, ամեն, թվ. ՇԼ (1081) էր»[38]: Եթե նկատի ունենանք հայկական իշխանական տոհմերի մոտ ավագ թոռանը պապի անունով կոչելու կայուն սովորությունը[39], ապա կարող ենք ենթադրել, որ Գեւորգ իշխանի որդին կրել է պապի անունը՝ Հասան, եւ նրա ժառանգներն են Սմբատն ու նրա որդի Հասանը: Անուղղակիորեն այս ենթադրության օգտին է խոսում այն, որ Գրիգոր Ապիրատի երկու որդիները Ապլջահապ եւ Վա-

---

[36] Մատթեոս Ուռհայեցի, էջ 288:

[37] Նույն տեղում, էջ 226, Սմբատայ Սպարապետի տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 82:

[38] Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 17: Գ. Հովսեփյանը, որ վանքը Պահլավունիներինն էր համարում, Հասանին եւ Սմբատին այդ ազնվականական տոհմի ներկայացուցիչներ է կարծում (նույն տեղում, էջ 20):

[39] Կիլիկյան հայկական ազնվական տոհմերին անդրադառնալով Լ. Տեր-Պետրոսյանը գրում է. «Մեծ հոր եւ անդրանիկ թոռան անունների նույնությունը քարացած ավանդույթ էր հայ միջնադարյան ազնվական գերդաստաններում: Համենայն դեպս Ռուբինյան եւ Հեթումյան ընտանիքների ազգաբանությունն այս առումով համարյա բացառություն չի ճանաչում. բոլոր այն դեպքերում, երբ հաստատված է, որ թոռն անդրանիկն է, նա անպայման կրում է պապի անունը...» (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, Երեւան, 2007, էջ 79):

սակ անուններն ունեին: Գրիգոր Ապիրատն իր զավակներից մեկին հոր անունով Հասան չի անվանակոչել ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ իր ավագ եղբոր՝ Գեւորգի որդին արդեն կրում էր այդ անունը:

Կարծում ենք, որ հենց այս համատեքստում պիտի որոնել Գրիգոր Ապիրատի մասին ասվածը, թե նա «**յաննշանից մեծացեալ**, եւ վասն խելացի եւ առատ ձեռացն մինչեւ լիներ տէր երկոտասան հազար հեծելոց»: Հավանորեն նա Հասանի կրտսեր որդին էր, եւ մինչ Գեւորգը ավագության իրավունքով ժառանգել էր հոր իշխանությունն ու Քեղի բերդը, իր որդուն էլ կոչել նրա անունով՝ Հասան, կրտսեր Գրիգորն իր խելքով ու ձեռներեցությամբ «ոչ նշանավորներից», կամ «փոքրերից» բարձրացել ու տեր էր դարձել բազմաքանակ հեծելազորի:

Հավուց թառի խաչքարի առնչությամբ ավելացնենք, որ այն հավանաբար պատահականորեն չի կանգնեցվել հատկապես 1081 թվականին: Այդ տարի Գրիգոր Ապիրատի թոռը՝ Բարսեղը, Հաղբատում կաթողիկոս ձեռնադրվելով, մեծ շուքով եկավ Անի, եւ ինչպես Մատթեոս Ուռհայեցին է գրում՝ «...եղեւ օրն այն օր մեծ եւ ուրախութիւն ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»[40]: Եթե Հավուց թառի արձանագրության մեջ հիշված Սմբատը Քեղիի տեր Գեւորգի թոռն էր, ապա նրա ու Բարսեղի պապերը, փաստորեն, եղբայրներ էին, եւ հավանական է, որ Սմբատի որդի Հասանը 1081-ին խաչքար կանգնեցնելով յուրովի արձագանքել է կաթողիկոսական աթոռի՝ Անիում վերահաստատվելու տոնին, որի գլխավոր դերակատարն իր տոհմակիցն էր:

[40] Մատթեոս Ուռհայեցի, էջ 236-238:

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏԻ ՎԱԽՃԱՆԸ

Ինչպես Մխիթար Անեցու հայտնածից իմացանք, Գրիգոր Ապիրատը Հովհաննես Սմբատ թագավորին Աշոտի դատաստանից ազատելով տանում է Անի: Աշոտի տեսանկյունից՝ դավաճանական, իսկ Հովհաննես Սմբատի տեսանկյունից վեհանձն այդ արարքից հետո Գրիգոր Ապիրատը հայտնվում է դժվարին կացության մեջ: Նա այլեւս չէր կարող վերադառնալ իր գերակայի մոտ (իշխանի կալվածքները գտնվում էին «Դրուց աշխարհում»), ոչ էլ կարող էր Անիում մնալ, քանի որ դրանից կարճ ժամանակ առաջ Աշոտի զորքի հետ ծանր կորուստներ էր պատճառել անեցիներին[41]: Այս իրավիճակում, հատկապես Աշոտի վրեժխնդրությունից խուսափելու համար, Գրիգոր Ապիրատը հարկադրված էր ընտանիքով ու զորքով հեռանալ Բագրատունիների տիրույթներից: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ նա ապաստան է գտնում Դվինի ամիրա Ապուսուարի մոտ, որը Շադդադյան Աբուլասվար (Աբու-լ-Ասվար) ամիրան է: Ըստ պատմիչի, սա սկզբում լավ է ընդունում Ապիրատին, սակայն չարախոս մարդիկ նրան զգուշացնում են, որ բազմաքանակ զորքով իր մոտ գտնվող իշխանը վտանգ է ներկայացնում, եւ նա դավադրաբար սպանում է Ապիրատին: Իշխանի զորավար Սարին վերցնում է Ապիրատի կնոջն ու երկու որդիներին եւ գալիս Անի, որտեղ Հովհաննես Սմբատ թագավորը գրկաբաց է ընդունում նրանց եւ գավառներ ու իշխանություն շնորհում: Պատմիչը գրում է. «Իսկ յայսմ աւուրս Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ, սա վասն Աշոտոյ միաբանութեանն, զոր ունէր յառաջագոյն, երկյուղեալ ի թագաւորէն Յովհաննիսէ, ապստամբեալ փախեաւ ի նմանէ եւ գնաց ի Դուին քաղաք, առ Ապուսուար զօրաւարն

[41] «Եւ եղեւ յաւուր այնմիկ սաստիկ պատերազմ եւ դարձուցին զքաղաքն ի փախուստ, մինչ զի փախուցեալքն ոչ ժամանէին մտանել ի քաղաքն, այլ յԱխուրան գետն անկանէին, եւ դարձաւ Աշոտ մեծաւ յաղթութեամբ» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 14):

Պարսից եւ երկոտասան հազար ձիաւորք ընդ նմա. եւ Ապուսուար մեծարեալ զնա բազում աւուրս: Յայնժամ մատեան առ Ապուսուար չարախօսք ոմանք եւ ասէն, եթէ «Այսպիսի այր յաղթող եւ զօրաւոր եւ զօրօք բազմօք եկեալ է առ քեզ, կորուստ գործէ քեզ եւ ամենայն տանս Տաճկաց»: Յայնժամ ոխս առեալ ամիրային ի սիրտ իւր եւ գաղտ յայլ զօրացն ի զրոյց սիրոյ կոչեաց զԱպիրատն եւ ի ծածուկ կորոյս զայնպիսի այր քաջ, հզօր եւ անուանի ի մէջ ամենայն աշխարհին Հայոց:

Իսկ իշխան ոմն Սարի անուն, որ էր զօրավար մեծ իշխանին Ապիրատին, առեալ զկին եւ զորդիս նոցա եւ զհեծելագունդ զօրսն եւ գնաց ի քաղաքն յԱնի. եւ թագաւորն Յովհաննէս կարի յոյժ ապաշաւէր զանիրաւ մահն Ապիրատին Հայոց իշխանին: Եւ որդեաց նորա Ապլջահապայ եւ Վասակայ, եւ Սարէ եւ զմենայն զօրացն տայր թագաւորն Հայոց գաւառս եւ զիշխանութիւնս»[42]:

Եթե հայտնի չլիներ Մխիթար Անեցու պատմածը Թալինի դեպքի մասին, Ուռհայեցու հաղորդածի սկիզբն ու վերջը ոչ մի կերպ չէր կապակցվի: Այսինքն, եթե Ապիրատը ապստամբել ու փախել էր Հովհաննես Սմբատից, ինչու պիտի վերջինս այդպես ողբար իշխանի «անիրաւ» կորուստը եւ նրա զավակներին էլ կալվածքներ ու իշխանություն տար:

Ուռհայեցին եւ Մխիթար Անեցին այս դեպքերի թվականը չեն նշում: Բայց Ուռհայեցու մոտ այս տեղեկությունը զետեղված է մի հատվածում, ուր խոսվում է 1021 թ. տեղի ունեցած անցքերի մասին: «Թագաւորք վերջինք Բագրատունիք» բնագրի վերջում ավելացված անանուն հեղինակի փոքր ժամանակագրության մեջ արձանագրված է Ապիրատի մահվան թվականը. «ՆՀ (1021) Թուրքն եհար զԱպիրատն»[43]: Այս տեղեկությունը, նույն թվականով, մուծված

---

[42] Մատթեոս Ուռհայեցի, էջ 16-17: Ապիրատի հետ պատահածի մասին Ուռհայեցուց օգտվելով հակիրճ պատմում է նաեւ Սմբատ Սպարապետը (Սմբատայ Սպարապետի տարեգիրք, էջ 6):

[43] Մանր ժամանակագրություններ, 13-18-րդ դդ., հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երեւան, 1956, էջ 502:

է նաեւ Սամվել Անեցու Ժամանակագրության այն օրինակում, որը շարունակել է Ստեփանոս Օրբելյանը. «Թուրքն էհար զԱպիրատն»[44]:

Հարկ է նշել, որ Աբուլասվար Շադդադյանի իշխանության սկիզբը Դվինում համարվում է 1021 կամ 1022 թվականը[45]: Փաստորեն, Գրիգոր Ապիրատն Աբուլասվարի մոտ է գնացել նրա Դվինում հաստատվելու առաջին տարում[46]:

Գրիգոր Ապիրատի սպանության պատմության մեջ շատ պարզունակ է թվում պատմիչի բացատրությունը, թե Շադդադյան ամիրան իշխանին սպանում է «չարախոս մարդկանց» լսելով[47]: Հայ իշխանը Դվին մեկնելով որոշ երաշխիքներ պիտի ունենար: Չի բացառվում, որ Աբուլասվարը Գրիգոր Ապիրատին սպանել է Աշոտի դրդմամբ կամ էլ վերջինիս հաճոյանալու համար: Մի բան հստակ է, որ հետագայում նրանց հարաբերությունները սերտացել են այնքան, որ Աշոտն իր դստերը (որն իր մոր՝ Կատրամիդեի անունն էր

---

[44] Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, հրատարակության համար պատրաստեց Ա. Աբրահամյանը, Երեւան, 1942, էջ 12:

[45] Մունաջջիմ Բաշիի վկայությամբ Աբուլասվարը մահացել է 1067 թ. նոյեմբերին, իսկ նրա իշխանությունը տեւել է 46 տարի: Այս մասին նշելով Ա. Տեր-Ղեւոնդյանը գրում է. «…ուստի 46 տարի ետ գնալով կստանանք մոտավորապես 1022 թ., որպես Դվինում նրա իշխանության սկիզբը» (Ա. Տեր-Ղեւոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երեւան, 1965, էջ 209): Գուցե մեկ տարվա տարբերությունն այստեղ այնքան էլ կարեւոր չէ, սակայն Աբուլասվարի մահվան թվականից նրա իշխանության տարիների թվով հետ գնալու դեպքում ստանում ենք 1021 թ. (1067-46=1021):

[46] Աբուլասվարից առաջ Դվինում մի կարճ շրջան անիշխանություն է եղել (Ա. Տեր-Ղեւոնդյան, Արաբական ամիրայությունները…, էջ 208):

[47] Եթե Ապուսուարի մտավախությունը Դվինում քրիստոնյա զորքի ներկայությունը լիներ, ապա պիտի միայն Ապիրատի սպանությամբ չբավարարվեր: Սակայն ուրիշ զոհեր չեն եղել: Ըստ երեւույթին ժամանակակիցների համար պարզ եւ որոշ իմաստով հասկանալի է եղել, որ Գրիգոր Ապիրատն իր գերակային՝ Աշոտին դավաճանելու համար վերջինիս վրեժխնդրության զոհն է դարձել: Իսկ իշխանի ընտանիքն ու զորքը անարգել հեռացել են Դվինից եւ գնացել այնտեղ, ուր նրանց (արդեն առանց Ապիրատի) պատրաստ էին գրկաբաց ընդունելու՝ Անի:

կրում)[48] կնության է տվել Աբուլասվարին[49]: 1030-ականներին այս ամուսնությունից ծնված նրանց որդին՝ Մանուչեն, Անիի տերը դարձավ 1065-ին[50]: Հետաքրքիր է, որ վերջինիս եւ Գրիգոր Ապիրատի զավակների միջեւ հետագայում թշնամություն չի եղել: Դվինում կատարված դեպքից շուրջ չորս տասնամյակ անց, երբ սելջուկների ձեռքն անցած Անին հանձնվեց Մանուչեին, վերջինս քաղաք հրավիրեց Գրիգոր Ապիրատի որդուն՝ տարեց Վասակին եւ նրա որդի Գրիգորին: Երիտասարդ ամիրան քաղաքից դուրս գալով եւ ընդառաջ գնալով դիմավորեց նրանց ու բերեց Անի: Իսկ վերջիններս, ընդունելով Մանուչեի գերիշխանությունը, հավատարմորեն ծառայեցին նրան:

ԳՐԻԳՈՐ ԱՊԻՐԱՏԻ ԶԱՎԱԿՆԵՐԸ

Կեչառիսի 1003 թ. արձանագրության մեջ Գրիգոր Ապիրատը հիշատակում է իր որդիներին, հետեւաբար ենթադրելի է, որ Ապլջահապն ու Վասակն այդ ժամանակ արդեն ծնված էին (եթե ուրիշ զավակներ չի ունեցել): Դատելով Ուռհայեցու մոտ նրանց անունների հիշատակման հերթականությունից, Ապլջահապն ավագն է եղել:

Սակայն նրանց անդրադառնալուց առաջ հիշատակենք Գրիգոր Ապիրատի դստերը, որն իր մասին հիշեցնում է Տեկորի 1042 թ. արձանագրության մեջ. «Ես **Տիկ(ն)աց Տիկին, դուստր Քրգորոյ Մագիստռոսին** եւ ամուսին Սարգսի Արեւելից Վեստիս...»[51]: Ուսումնասիրողները հաճախ նրա հորը թյուրիմացաբար նույնացրել են Գրի-

---

[48] Նրա անունը հիշվում է Կատա կրճատ ձեւով (Վարդան Արեւելցի, էջ 126, Կ. Մաթեւոսյան, Անի. եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 347-348):

[49] Արիստակիսի Լաստիվերցւոյ Պատմութիւն (աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի), Երեւան, 1963, էջ 62, К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов и Византия, с. 167-168.

[50] Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 86:

[51] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 135:

գոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) հետ[52], մինչդեռ Պահլավունի իշխանը մագիստրոսի պատիվ ստացել է ավելի ուշ՝ 1045-ին:

Ոմանց կարծիքով արձանագրության մեջ բացակայում է իշխանուհու անունը, «Տիկնաց տիկինը» համարում են մեծարական դիմելաձեւ, ինչպես օրինակ Գրիգոր Պահլավունու քույրն է Բագնայրի արձանագրություններից մեկում գրում. «ես Սեդա տիկնաց տիկին»[53]: Սակայն կար նաեւ «Տիկնացտիկին» անձնանուն, կրճատ ձեւը՝ Տիկնաց[54], եւ Գրիգոր Ապիրատի դուստրը, մեր կարծիքով, հենց այդ անվան կրողն էր:

Ն. Ակինյանը գրում է. «1021-ին երբ Ապիրատ սպանուեցաւ Ապուսուարէն, Վասակ եւ Ապլջահապ վերադարձան Անի. Յովհ. Սմբատ սիրով ընդունեցաւ զանոնք եւ յանձնեց հաւանօրէն անոնց քրոջ, որ կինն էր Վեստ Սարգսի»[55]: Սակայն դժվար է ստույգ ասել, որ 1021-ին Տիկնացտիկինն արդեն Վեստ Սարգսի կինն էր: Գրիգոր Ապիրատի մահից հետո, երբ նրա զավակներն Անի եկան, Հովհաննես Սմբատն իր խնամակալության տակ առավ նրանց եւ հնարավոր է, որ հենց այդ ժամանակ էլ իշխանադստերն ամուսնացրեց Սարգսի հետ, որը մեկն էր «ի գլխաւոր ազատացն Հայոց»[56]:

Հովհաննես Սմբատի մահվան ժամանակ Վեստ Սարգիսը նրա հոգաբարձուն էր[57]: Նա տեր էր մի շարք բերդերի, կառուցել է Խծկոնքի վանքը, իսկ Ծառաքարի վանքը բերդի վերածել (բերդը հիշատակվում է նաեւ Մաղասբերդ անունով): 1033 թ. արեւի խավարման մեկնաբանությունը ստանալու համար Անիից Սեւան՝ Հովհաննես Կոզեռնի մոտ մեկնած պատվիրակների մեջ Մատթեոս Ուռ-

---

[52] Լեո, Անի, Երեւան, 1963, էջ 322-327, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 148, К. Юзбашян, Армянские государства эпохи Багратидов..., с 161.

[53] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 113:

[54] Հ. Աճառյանը «Տիկնաց» անձնանվան մասին գրում է. «անշուշտ տիկնաց տիկին ձեւից՝ կրճատմամբ» (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երեւան, 1962, էջ 153):

[55] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 390:

[56] Արիստակիսի Լաստիվերցւոյ Պատմութիւն, էջ 57:

[57] Նույն տեղում:

հայեցին Վեստ Սարգսին կոչում է «Մեծն Սարգիս»[58]: Հովհաննես Սմբատի մահից հետո նա փորձեց գրավել թագավորական գահը, բայց անհաջողության մատնվեց: Թագադրությունից հետո Գագիկ Բ-ը (1042-1045) նրան պատժեց, բայց հետո գործակցեց նրա հետ: Առերես թագավորին հպատակվելով Վեստ Սարգիսը գլխավոր անդամներից մեկն էր այն խմբավորման, որը կողմ էր Անին կայսրությանը հանձնելուն: Հայտնի չէ, թե Անիի բյուզանդական նվաճումից հետո ինչ է եղել Վեստ Սարգսի հետ: Սակայն հետաքրքիր է, որ հետագայում նրան պատկանած Ծառաքար բերդն անցել է իր կնոջ՝ Տիկնացտիկնոջ տոհմակիցներին՝ Հասանյաններին[59]:

Այժմ տեսնենք թե ինչ ճակատագիր ունեցան Գրիգոր Ապիրատի որդիները՝ **Ապլջահապը** եւ **Վասակը**, որոնց Հովհաննես Սմբատը 1021-ին «գավառներ եւ իշխանություն» շնորհեց: Հավանաբար այս ժամանակ էլ նրանք խնամիացան Պահլավունիների հետ, կնության առնելով Գրիգոր Պահլավունու (Բջնեցու) երկու դուստրերին:

1045-ին Անին ընկնում է բյուզանդական տիրապետման տակ, Կոստանդին Մոնոմախ (1042-1054) կայսեր հրավերով Կոստանդնուպոլիս մեկնած Գագիկ Բ-ին արգելվում է Հայաստան վերադառնալ: Մեկ տարի անց բյուզանդացիները Անիից հեռացնում են նաեւ Պետրոս կաթողիկոսին:

Գրիգոր Պահլավունին կայսրությանն է թողնում հայրենի կալվածքը՝ Բջնին, որի դիմաց կայսրից մագիստրոսի պատվաստիճան

---

[58] Մատթեոս Ուռհայեցի, էջ 76:

[59] Անեցիների՝ 1186 թ. Ծառաքարի գրավման առնչությամբ պատմիչները նշում են, որ բերդը Անիի Բարսեղ Բ եպիսկոպոսի տոհմի սեփականությունն էր (Մխիթար Անեցի, էջ 109-110, Վարդան Արեւելցի, էջ 136): Հնարավոր է, որ Տիկնացտիկին անունը պահպանվել է Հասանյանների կամ Վեստ Սարգսի տան աղջիկների մեջ: 12-րդ դարի վերջին Տիկնացտիկին անունով ազնվազարմ նվիրատու է հիշվում Կեչառիսում եւ Հավուց թառում: Նրա հոր անունը Սարգիս էր, իսկ որդունը՝ Կուկոր («պարոն Կուկոր»): Տե՛ս Գ. Սարգիսեան, Վիմագրագիտական նորոյթներ, «Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 250:

է ստանում[60], նշանակվում Տարոնի ու Հայկական Միջագետքի կուսակալ եւ փաստորեն դառնում է Հայաստանում ամենաազդեցիկ հայազգի գործիչը[61]:

Այդ շրջանում կայսրությունն ընդգծված պայքար էր սկսել Հայոց եկեղեցու դեմ[62]: Խաչիկ Անեցու մահից հետո (1065) բյուզանդացիները փորձում են արգելել նոր կաթողիկոսի ընտրությունը, բայց հայության միասնական ջանքերով հաղթահարվում է այդ արգելքը: Գրիգոր Մագիստրոս Պահլավունու Վահրամ որդին Գրիգոր անունն ընդունելով դառնում է Հայոց կաթողիկոս (Գրիգոր Բ Վկայասեր՝ 1066-1105):

Ավելի վաղ Գրիգոր Մագիստրոս Պահլավունին փորձել է արքունիքում ունեցած իր կապերն օգտագործելով արտոնություններ ստանալ Հայաստանի առանձին վանքերի համար: Այդ առանձնաշնորհին արժանացել են երկու վանք՝ Մարմաշենը, որ հիմնել էր իշխանի հորեղբայր սպարապետ Վահրամ Պահլավունին եւ Կեչառիսը, որի հիմնադիր Գրիգոր Ապիրատի երկու զավակներն իր փեսաներն էին:

Գրիգոր Ապիրատի որդիների եւ Գրիգոր Բջնեցու դուստրերի ամուսնության մասին[63] Ն. Ակինյանը գրում է. «Վկայուած է, թէ Վասակի կինը Գրիգորի դուստրն է, բայց լռած է պատմութիւնը ի մասին Ապլջահապի: Մինչ Վասակ մնաց Արեւելք (Անի, Խաչէնք), Ապլջա-

---

[60] «Գրիգոր որդի քաջին Վասակայ… գնաց առաջի թագաւորին եւ… տայ զբանալին Բջնոյ զթագաւորն եւ զամենայն զիւր զհայրեանի ժառանգութիւնն եւ… առնու զպատիւ **մագիստրոսութեան** եւ տեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց…», Արիստակիսի Լաստիվերցւոյ Պատմութիւն, էջ 62:

[61] Մխիթար Այրիվանեցին այս իրավիճակն ընդհանրացնելով գրում է. «Իսկ Մոմնոմախն, որ կալաւ զԳագիկ թագաւորն՝ ետ զիշխանութիւն երկրիս Գրիգորոյ Մագիստրոսի…» (Մխիթար Այրիվանեցի, էջ 58):

[62] Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 36-47, 193:

[63] Այդ ամուսնությունները տեղի են ունեցել առնվազն 1030-ական թվականներին, եթե նկատի ունենանք Գրիգոր Պահլավունու տարիքը, որը 1021 թվականին՝ Գրիգոր Ապիրատի, ու նաեւ իր հոր՝ Վասակի մահվան ժամանակ, բավական երիտասարդ էր:

հապ կերեւայ թէ 1045-ին իր աներոջ հետ գաղթեց Միջագետք եւ տիրացաւ այնտեղ Ծովք ամուր բերդին»[64]: Ն. Ակինյանի այն ենթադրությունը, որ հենց Գրիգոր Ապիրատի որդի Ապլջահապն է եղել Գրիգոր Բջնեցու դուստրերից մեկի ամուսինը, որից ծնվել են նրանց Ապիրատ, Գրիգորիս, Վահրամ, Վասակ զավակները, միանգամայն տրամաբանական է: Բնութագրական է հատկապես Ապիրատ հազվագյուտ անունով անդրանիկ որդու անվանակոչությունը, որի մասին նրա զավակը՝ Ներսես Շնորհալին գրում է. «**Զնախնական անուն առեալ, որ Ապիրատն էր յորջորջեալ**»[65] («Նախնական», այսինքն՝ նախնյաց, հայրենի)[66]: Սակայն տարօրինակ է, որ Ապլջահապ անունն այս տոհմի սերունդների մեջ այլեւս չի կիրառվել:

Ապլջահապին չի հիշատակում նաեւ իր տոհմի անցյալը հանգամանորեն ներկայացնող Ներսես Շնորհալին, որի պապն էր: «Վիպասանութիւն նախնի ըստ Հոմերի սկսեալ ի վերուստ» երկում Ներսես Շնորհալին պատմում է իր տոհմի մասին, գովաբանական ոճով անդրադառնում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու գործունեությանը, նկարագրում նրա Վահրամ որդու կաթողիկոսանալը, որի քրոջ թոռն էր ինքը: Շնորհալին, որ այնքան սիրով է հիշատակում իր հորը՝ Ապիրատին, զարմանալիորեան չի տալիս նրա հոր անունն այն դեպքում, երբ նշում է Ապիրատի մայրական գծով պապին՝ Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն ու անգամ վերջինիս հորը՝ Վասակին[67]:

Քանի որ կաթողիկոսական իշխանությունը շարունակելու տեսակետից Ներսես Շնորհալու համար չափազանց կարեւոր էր իր եւ ավագ եղբոր՝ Գրիգորի (հետագայում՝ Գրիգոր Գ Պահլավունի, նաեւ «Փոքր Վկայասեր» կոչված) Պահլավունյաց, այսինքն Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմից սերված լինելն ընդգծելը, նա հատուկ տեղ է

---

[64] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 379-380, Բ. Կիւլէսէրեան, Ծովք (Ծովք-Տլուք եւ Հռոմ-Կլայ), Վիեննա, 1904, էջ 10-16:

[65] Ներսեսի Շնորհալւոյ Բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 601:

[66] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 401:

[67] Ներսեսի Շնորհալւոյ Բանք չափաւ, էջ 587-588:

տալիս դրան[68], սակայն խոստովանում է, որ մայրական գծով են կապված եղել Պահլավունիներին:

Պատմիչ Սամվել Անեցին, որն իր ժամանակագրությունը կազմել է Գրիգոր Գ-ի պատվերով, 1113 թ. տեղի ունեցած նրա աթոռակալությունը ներկայացնելով, կաթողիկոսի ծագման մասին միայն նշում է. «...Տէր Գրիգորիս մեծաշուք պատուով նստեալ յաթոռ վիճակի Սրբոյն Գրիգորի Հայաստանեայցս լուսաւորչի. **որ յազգէ նորին հարազատութեան ճանաչի**»[69]:

Անիի պատմության դրվագները ներկայացնելիս Սամվել Անեցին ընդհանրապես չի նշում Գրիգոր Գ-ի արական գծով նախնիներից որեւէ մեկին[70]:

Հետաքրքիր է, որ «Պատմութիւն Սրբոց Հարցն մերոց» ուշագրավ բնագրում Գրիգոր Գ-ի հայր Ապիրատ իշխանը համարվում է ոչ թե Գրիգոր Վկայասերի քրոջ զավակը, այլ եղբորորդին[71]: Կաթողիկոսական իշխանության փոխանցումը այսօրինակ ուղիղ (արական գծով) ժառանգականությամբ շատ ցանկալի պիտի լիներ Գրի-

---

[68] Հատկանշական է 1166 թ. ապրիլի 17-ին Հռոմկլայում կաթողիկոսական ձեռնադրության ժամանակ Ներսես Շնորհալու արտասանած ճառի այն հատվածը, որը վերաբերում է նրա նախնիներին՝ Գրիգոր Լուսավորչից մինչեւ Գրիգոր Վկայասեր եւ Բարսեղ Անեցի (Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի թուղթք, Վենետիկ, 1875, էջ 8):

[69] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 122, Հմմտ., Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 101բ-102ա:

[70] Հասանյանները չեն հիշատակվում նաեւ այլ առիթներով: Օրինակ, գրելով, որ Մարմաշենը հիմնադրել է Վահրամ Պահլավունին, Բագնայրը՝ Սմբատ Մագիստրոսը, Խծկոնքը՝ «մեծապատիվ» Վեստ Սարգիսը եւ այլն, Սամվել Անեցին ոչինչ չի գրում Կեչառիսի հիմնադրման կամ Հավուց թառի մասին: Հայտնի է, որ ժամանակագրությունը կազմելիս Սամվել Անեցին առաջնորդվել է պատվիրատուի նախասիրություններով ու ցուցումներով (Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցին Անիի պատմության մասին, «Էջմիածին», 2006, Բ-Գ, էջ 72-85):

[71] «Իսկ տէր Վահրամ (Գր. Վկայասեր – Կ. Մ.) եւ զմանուկն Գրիգորիոս, զորդի Ապիրատին եղբօրորդոյ իւր, յանձնեալ տէր Բարսղի ուսման դպրութեան, զի ետ մահուան իւրոյ նստուցէ աթոռն» (Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ Հայերը, հ. Բ, հավելված 1, էջ 512):

գոր Գ-ի եւ նրա եղբոր՝ Ներսես Շնորհալու, ինչպես նաեւ նույն տոհմից սերող մյուս կաթողիկոսների համար: Հնարավոր է, որ նրանց ժամանակ էլ շրջանառվել է Գրիգոր Վկայասերի եւ Ապիրատի հոր եղբայրներ լինելու մասին կեղծ տեղեկությունը, որը տեղ է գտել վերոնշյալ բնագրում:

Չի բացառվում, որ իր հետնորդների կողմից մոռացության մատնված Ապլջահապը[72] բավական վաղ է մահացել: Նման ենթադրության օգտին է խոսում այն, որ նրա կրտսեր եղբայր Վասակն իր ամենակրտսեր որդուն (դատելով Ուռհայեցու թվարկումից)[73] կոչել է Ապլջահապ, գուցե ի հիշատակ մահացած եղբոր:

Հավանաբար Ապլջահապի զավակները մանուկ հասակից մնացել են մայրական պապի՝ Գրիգոր Մագիստրոս Բջնեցու խնամքին: Մասնավորապես այդ իմաստը կարելի է տեսնել Ներսես Շնորհալու խոսքերում, որը Գրիգոր Բջնեցու՝ իր հոր՝ Ապիրատի նկատմամբ վերաբերմունքը բնութագրում է «**Հօրն մերոյ նա հայր եղեալ, ըստ**

---

[72] Եթե մի պահ ենթադրենք, որ Գրիգոր Բջնեցու դստեր ամուսինը Ապլջահապը չէր, ինչն ակնարկում է Վ. Վարդանյանը («Ծովքի Պահլավունիները դարաշրջանի որոգայթներում», ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, թիվ 8, Երեւան, 2007, էջ 47-48), այլ մեկ ուրիշը, միեւնույն է, նրա անունը, փաստորեն, իր սերունդները մոռացության են մատնել, որի ստույգ պատճառն անհայտ է: Բայց որ այդ մարդն Ապլջահապն էր, երեւում է ոչ միայն այն բանից, որ նա իր ավագ որդուն իր հոր անունով Ապիրատ է կոչել, այլեւ հարակից փաստերից: Հայտնի է, օրինակ, որ Գրիգոր Գ կաթողիկոսը 1120-ական թվականներին մտադիր էր հաստատվել Անիում: Մինչ այդ Անիում աթոռակալած վերջին կաթողիկոսը Ապլջահապի եղբայր Վասակի որդի Բարսեղ Ա-ն էր (որն Անիից հեռացել է 1105-ին): Սամվել Անեցին գրում է, որ Գրիգոր Գ-ն Անիի, այսինքն Բարսեղ Ա-ի աթոռը համարում է իր «սեփական» աթոռը: Դա անհնարին կլիներ, եթե նա Բարսեղի տոհմակիցը չլիներ: Իսկ Ներսես Շնորհալին Բարսեղ Ա Անեցուն համարում է իր նախնին եւ «արենառուն», այսինքն արյունակիցը (Ներսեսի Շնորհալւոյ Հայոց կաթողիկոսի թուղթք, էջ 8, Անեցի, էջ 127):

[73] Մատթեոս Ուռհայեցի, էջ 238:

մայրականն մեջնորդեալ»[74] բառերով: Այսինքն, մայրական պապն է, որ հայրություն է արել իր հորը:

Հատկանշական է, որ Գրիգոր Բջնեցու որդին՝ Գրիգոր Վկայասերը, նույնպես շատ կապված է եղել հատկապես իր այս քրոջ ընտանիքի ու նրա չորս զավակների հետ: Վկայասերն էր, որ նրանցից մեկին՝ Գրիգորիսին, իր հետ Կոստանդնուպոլիս տարավ, ապա կաթողիկոս դարձրեց Եգիպտոսում եւ շուտով պաշտոններ ապահովելով այնտեղ ուղարկեց նրա եղբայրներին՝ Վահրամին եւ Վասակին[75], հոգ տարավ նաեւ եղբայրներից ավագի՝ Ապիրատի զավակների համար, կտակելով, որ նրա Գրիգոր որդուն (Գրիգոր Գ) փոխանցվի հայրապետական աթոռը: Իսկ երբ հանգամանքների բերումով այդ պատգամի կատարումը տեղի ունեցավ Գրիգորի համար շատ վաղ տարիքում (1113 թ.), ժամանակակիցները չառարկեցին գլխավորապես այն պատճառով, որ նրան համարեցին «ընտրեալ ի սուրբ ազգէ»[76], այսինքն՝ Ս. Գրիգոր Լուսավորչի տոհմից:

Գրիգոր Գ-ից սկսած կաթողիկոսական այս տոհմի ներկայացուցիչները հայրապետական աթոռն իրենց ձեռքում պահեցին 90 տարի, մինչեւ Գրիգոր Զ Ապիրատ (1194-1203): Նրանք իրենց համարում էին Ս. Գր. Լուսավորչի տոհմակիցներ՝ Պահլավունիներ եւ բազմում կաթողիկոսական աթոռին տոհմական ժառանգականության իրավունքով[77]:

---

[74] Ներսեսի Շնորհալւոյ Բանք չափաւ, էջ 587-588:
[75] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 380-385:
[76] Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 422:
[77] Հաջորդաբար կաթողիկոս դարձան Գրիգոր Գ Պահլավունին՝ 1113-1166 թթ. եւ նրա եղբայր Ներսես Դ Կլայեցին (Շնորհալի)՝ 1166-1173 թթ.: Սրանց Վասիլ եղբոր որդին էր կաթողիկոս Գրիգոր Դ Տղան (1173-1193), Վասիլի դստեր որդին էր Գրիգոր Ե Քարավեժ (1194) կաթողիկոսը, իսկ Զորավար եղբոր որդին էր Գրիգոր Զ Ապիրատը (1194-1203): Զորավարի դստեր՝ Շահանդուխտի եւ իշխան Օշինի որդին էր Կիլիկիայի հայտնի եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացին (1153-1198): Նրա եղբայրներից մեկը Ապիրատ անունն էր կրում:

Ն. Ակինյանն այս տոհմի ներկայացուցիչներին անվանում է «պատվաստված Պահլավունիներ»[78]:

Գրիգոր Ապիրատի կրտսեր որդին՝ Վասակն իր որդիների հետ առաջնակարգ դեր ստացավ Անիում հատկապես բյուզանդացիների հեռանալուց հետո, Շադդադյանների տիրապետության շրջանում: 1064 թվականին Անին գրավեց սելջուկ սուլթան Ալփասլանը եւ քիչ անց այն տվեց Աբուլասվարի՝ Աշոտ Դ-ի աղջկանից ծնված որդուն՝ Մանուչեին: Վերջինիս տիրապետության եւ Հասանյաններին քաղաք հրավիրելու մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Վարդան Արեւելցու պատմության մեջ: Նա գրում է, որ Մանուչեն «...յաւելոյր ի պարիսպն Անւոյ եւ յամրութիւնս նորա. եւ ած ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանսն, որպէս եւ **մեծաւ հանդեսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր ի ներքս զԳրիգոր զորդին Վասակայ, զթոռն Ապիրատին.** զոր ասեն ունել ի գլուխ ազատականացն հինգհարիւր թագս երեւելիս. զի տէր էր մեծ զօրաց եւ բազում ազատաց: Եւ էր եղբայր տէր Բարսղի, որ զկնի Գէորգեայ ձեռնադրեցաւ ի Հաղբատ կաթողիկոս հրամանաւ եւ կամօք Մանուչէին եւ ամենայն Հայոց: Եւ շինեցաւ քաղաքն Անի ոչ ինչ պակաս քան զառաջինն»[79]:

Շատ հնարավոր է, որ այս հատվածը եւս Վարդան Արեւելցին քաղել է Մխիթար Անեցու պատմությունից: Այդ մասին է հուշում նախորդ հատվածի հետ համեմատությունը: Երկու դեպքում էլ պատմիչն օգտագործում է «ասում են թե» արտահայտությունը («զսմանէ ասեն», «զոր ասեն»), մեծարական խոսքերով է ներկայացնում

---

[78] «Պատուաստուած Պահլավունիներ» վերնագրի տակ Ն. Ակինյանը գրում է. «Պահլաւունիներու արական գիծը շիջաւ Գրիգոր Մագիստրոսի թոռներու մէջ, որոնք չթողուցին ժառանգ: Բայց պահլաւական արիւնը պատուաստուեցաւ ուրիշ իշխանական տուներու, որոնք պարծեցան պահլաւունի ծագումով: Այդ պատուաստումը կատարուեցաւ միջնորդութեամբ Բջնեցի Գրիգոր Մագիստրոսի երեք դուստրերու, որոնք հարս գացին Ապիրատեանց եւ Թոռնիկեանց» (Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 372-373):

[79] Վարդան Արեւելցի, էջ 108:

Հասանյանների զորությունը (մի դեպքում նշելով տասներկու հազար հեծյալներին, մյուս դեպքում՝ հինգ հարյուր «թագակիր» ազատներին): Նկատենք, որ Մխիթարի ժամանակ Անիի եպիսկոպոսն այս նույն տոհմի ներկայացուցիչ Բարսեղ Բ Անեցին էր: Եւ վերջապես, Անիի կյանքի մասին Մխիթարի պատմությունն էր ամենահավաստի աղբյուրը, որին կարող էր վստահել Վարդան Արեւելցին: Հատվածի ավարտական նախադասությունն էլ դրա հավաստումն է: Մանուչեի ժամանակ Անիի վերաշինումը «ոչ պակաս քան նախկինը», մի պատասխանատու հայտարարություն էր, որ 13-րդ դարում ապրող Վարդան Արեւելցին դժվար թե իրեն թույլ տար, եթե լավատեղյակ աղբյուրից չքաղեր այդ միտքը:

Հիշյալ հատվածը մի շարք կարեւոր հանգամանքներ է պարզում: Նախ այն, որ բյուզանդական տիրապետության շրջանում եւ Ալփասլանի սելջուկյան ներխուժումից հետո Վասակն ու նրա որդի Գրիգորը կարողացել են պահպանել իրենց զինական ուժն ու զորությունը[80]: Նրանք նոր պայմաններին հարմարվելով եւ համաձայնության գալով Մանուչեի հետ, վերադարձալ են Անի: Դա տեղի է ունեցել Մանուչեի իշխանության անցնելուց կարճ ժամանակ անց, քանի որ արդեն 1072 թ. Վասակի որդին՝ Բարսեղը, Անիում եպիսկոպոս է ձեռնադրվել:

Վկայությունից պարզվում է, որ Անի վերադառնալու ժամանակ թեեւ Վասակը ողջ էր, սակայն գուցե ծերության պատճառով, առաջնությունը զիջել էր ավագ որդուն՝ Գրիգորին: Նույն հատվածից երեւում է, որ Բարսեղի կաթողիկոսական ձեռնադրությունը (1081) տեղի է ունեցել նաեւ Մանուչեի «հրամանաւ եւ կամօք»:

Մինչեւ Վասակի որդիներ Գրիգորի ու Բարսեղի գործունեությանը ծանոթանալը անդրադառնանք Բաղաց (Սյունիքի) թագավորության վերջին գահակալներից մեկի՝ Սենեքերիմի սպանության

---

[80] Հայտնի է, որ Հայաստանում բյուզանդական տիրապետությունը հատկանշվում էր հայկական զինվորականության կազմալուծման քաղաքականությամբ (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, էջ 434-435):

մասին Վարդան Արեւելցու եւ Մխիթար Այրիվանեցու մոտ պահպանված մի տեղեկության, որն առանձին մեկնաբանության կարիք ունի:

Վերը նշված՝ Մանուչեի ժամանակ Հասանյանների Անի գալու մասին հատվածից անմիջապես առաջ Վարդան Արեւելցու մոտ կարդում ենք հետեւյալը. «Ի հինգ հարիւր քառասուն եւ երեք (1094) թուին առաքեաց Փատլուն ամիրայն Գանձակայ զՎասակ Պահլաւ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի, ամենայն զօրօքն Առանայ յանառիկ յամուրսն Բաղաց եւ Կապանին, որ եւ խաբեութեամբ հնարեալ մտին անդր եւ սպանեալ զՍենեքերիմ արքայն Հայկազնի...»[81]: Սենեքերիմի սպանության մասին ավելի հանգամանորեն պատմում է Ստեփանոս Օրբելյանը, ըստ որի, այն տեղի է ունեցել ոչ թե Վասակի, այլ նրա որդու՝ Գրիգորի հարկադրական մասնակցությամբ (այդ մասին՝ քիչ հետո): Սակայն այս հատվածը հետաքրքրական է նրանով, որ այստեղ Վասակի հայրը՝ Գրիգոր Ապիրատը, ներկայացվում է Գրիգոր Մագիստրոս անունով, ինչպես որ վերը նշված 11-րդ դարի արձանագրություններում: Այս տեղեկությունն Արեւելցին վստահաբար Մխիթար Անեցուց չի քաղել, քանի որ վերջինս, ինչպես տեսանք, իշխանին կոչում է Ապիրատ:

Գրիգոր Մագիստրոս անվան առկայությունն այս հատվածում ոմանց թյուրիմացության մեջ է գցել, ենթադրել տալով, որ խոսքը նույնանուն Պահլավունի (Բջնեցի) իշխանի մասին է, մանավանդ որ Վասակի անվան կից նշված է «Պահլաւ»: Սակայն Գրիգոր Մագիստրոս Պահլավունու Վասակ անունով որդին հեռավոր Անտիոքի դուքսն էր եւ դավադրաբար սպանվել է 1078 թվականին[82]: Հ. Մանանդյանը գրում է. «Վարդանը եւ Մխիթար Այրիվանեցին կարծում են սխալմամբ, որ այս արշավանքի ժամանակ Փատլունի զորա-

[81] Վարդան Արեւելցի, էջ 108:

[82] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ Հայերը, հ. Ա, Երեւան, 2005, էջ 418-419:

վարն էր Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վասակ Պահլավունին»[83]: Սակայն հիշյալ պատմիչները չեն սխալվում, պարզապես նրանց ունեցած սկզբնաղբյուրը Գրիգոր Մագիստրոս նախնական անունով է կոչել Վասակի հորը՝ Գրիգոր Ապիրատին: Իսկ Վասակին նրանք իրավունք ունեին նաեւ «Պահլաւ» կոչելու, քանի որ վերջինիս մայրը Գրիգոր Բջնեցու դուստրն էր: Սխալմունքը միայն նրանում է, որ հիշյալ դեպքերի մասնակիցը ոչ թե Վասակն էր (նա այդ ժամանակ 90-ամյա ծերունի կլիներ), այլ նրա որդին՝ Գրիգորը:

ՎԱՍԱԿԻ ՈՐԴԻՆԵՐԸ՝ ԻՇԽԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՒ ԲԱՐՍԵՂ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

Վասակը ունեցել է չորս որդի՝ Գրիգոր, Բարսեղ, Հասան, Ապլջահապ: Ինչպես վերը տեսանք, սրանցից առաջինը հիշվում է պապի անունով անվանակոչված Գրիգորը, որի գլխավորությամբ Հասանյանների այս ընտանիքը Անի է վերադարձել Մանուչե ամիրայի հրավերով: Երկրորդ հիշատակվողը Բարսեղն է, որն Անիի եպիսկոպոս է դարձել 1072 թվականին, իր մորեղբոր՝ կաթողիկոս Գրիգոր Վկայասերի կամքով. «...Տէր Գրիգորիս (Վկայասերը – Կ. Մ.) գնացեալ ի մայրաքաղաքն Հայոց, որ կոչի Անի, եւ անդ ձեռնադրեաց եպիսկոպոս զԲարսեղն՝ զքեռորդին իւր՝ զորդի Վասակայ, որդւոյ Ապիրատին, որդւոյ Հասանայ»[84]:

Դրանից շատ չանցած՝ 1081 թ. Գրիգոր Վկայասերի համաձայնությամբ Բարսեղը Հաղբատում հանդիսավորապես ձեռնադրվում է Հայոց կաթողիկոս ու փառավոր երթով ուղեւորվում Անի, որի մուտքի մոտ նրան դիմավորում են իր ազգակիցներն ու ցնծացող ժողովուրդը. «...ի վանքն, որ կոչի Հաղբաթ, ձեռնադրեցին զտէր Բարսեղ կաթուղիկոս յաթոռ սրբոյն Գրիգորի՝ ի վերայ ամենայն աշ-

---

[83] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երեւան, 1977, էջ 88, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երեւան, 1962, էջ 50:

[84] Մատթեոս Ուռհայեցի, էջ 226, Սմբատ Սպարապետ, էջ 82:

խարհին Հայոց... Յայսմ ժամանակի նորոգեալ եղեւ աթոռ սրբոյն Գրիգորի ի քաղաքն Անի... Եւ ելեալ գայր Բարսեղ կաթուղիկոսն Հայոց ի թագաւորաբնակ քաղաքն Անի, եւ ելեալ ամենայն Տունն Շիրակայ գնալ ընդ առաջ նորա, **եւ ահա գայր Վասակ՝ հայրն տէր Բարսղի եւ եղբարք նորա՝ Հասան եւ Գրիգոր եւ Ապլջահապ, արք քաջք եւ հզօրք՝ հանդերձ եպիսկոպոսօք, եւ նստուցին զտէր Բարսեղ յաթոռ տեառն Պետրոսի:** Եւ եղեւ օրն այն օր մեծ եւ ուրախութիւն ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»[85]**:**

Այստեղ ուշադրության է արժանի ոչ միայն Բարսեղի տոհմակիցների թվարկումը, այլեւ այն, որ պատմիչն Անիի աթոռը համարում է քաղաքից հեռացած վերջին կաթողիկոս Պետրոսի (Գետադարձ) աթոռը:

Մինչեւ Գրիգոր Վկայասերի մահը՝ 1105 թ., Բարսեղ Ա Անեցին համարվում է նրա աթոռակիցը, որից հետո՝ մինչեւ 1113 թ.՝ միանձնյա կաթողիկոս, թեեւ ձեռնադրությունից անմիջապես հետո նա իր ձեռքն է վերցնում կաթողիկոսական վարչական իշխանությունը:

Հայաստանեայց եկեղեցու ընդհանուր վիճակն այդ ժամանակ աննախադեպ էր, առաջացել էին մի քանի հակաթոռ կաթողիկոսություններ[86]: Բարսեղ Անեցին կաթողիկոսական աթոռն ամրապնդելու եւ եկեղեցու դրությունը բարվոքելու համար 1090 թ. մեծ պատվիրակությամբ ուղեւորվում է սելջուկյան պետության տիրակալ Մելիքշահի մոտ, նրանից ստանում անհրաժեշտ արտոնություններ, որոնք շուտով գործադրում է հակաթոռ կաթողիկոսությունների դեմ[87]: Ինչպես Սամվել Անեցու ժամանակագրության լրաց-

---

[85] Մատթեոս Ուռհայեցի, էջ 236-238:

[86] Մ. Օրմանյանը գրում է. «Այս շփոթ կացութեան մէջ Բարսեղն էր միայն, որ իրաւ հայրապետական պաշտօն կը վարէր, իր հօտին հոգածութիւնն ունէր եւ անոր ներքին եւ արտաքին պէտքերը լրացնելու կ'աշխատէր»: (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Ս. էջմիածին, 2001, էջ 1536):

[87] Մատթեոս Ուռհայեցի, էջ 256-258:

նողներից մեկն է գրում, Բարսեղը հնազանդեցնում է «զամենայն հակառակսն»[88]:

Բարսեղ Անեցու գործունեությունը բավական լավ է ուսումնասիրված[89], ուստի այստեղ դրան չենք անդրադառնում: Նշենք միայն, որ մինչ Բարսեղը Անիում քայլ առ քայլ ամրապնդում է եկեղեցու դիրքերը, վերականգնում կաթողիկոսարանի դպրոցը, այն հանձնելով ժամանակի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագին[90], հոգ տանում ժողովրդի հոգեւոր կորովը պահպանելու մասին[91], նրա եղբայր Գրիգոր իշխանն իր զինվորական ծառայությունն էր կատարում Շադդադյանների մոտ՝ երբեմն հարկադրված լինելով գործել նաեւ իր հայրենակիցների դեմ:

Ստեփանոս Օրբելյանը Բաղաց թագավորության կործանմանն անդրադառնում է երկու անգամ, հակառակ հերթականությամբ: Նախ «Սյունիքի թագավորները» բաժնում (գլ. ՃԹ) պատմում է Սենեքերիմ թագավորի սպանության մասին (շուրջ 1094 թ.), իսկ ավելի ուշ, Կապանի գրավման եւ թագավորության անկման բաժնում (գլ. ԿԱ) տեղեկացնում է, թե ինչպես էր Սենեքերիմը, մի հարցում խոստումնազանց լինելով, մահմեդականների թշնամությունը հարուցել[92]:

---

[88] Անեցի, էջ 117:

[89] Մ. Օրմանյան, Ազգապատում, էջ 1506-1576, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 47-58:

[90] Կ. Մաթեւոսյան, Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, «Էջմիածին», 2005, Է-Ը, էջ 59-72:

[91] Վարդան Արեւելցու վկայությամբ 1094 թ. մեծ հանդիսավորությամբ Անի է բերվում մի նշանավոր սրբություն՝ Նունեի խաչը, որը Հայաստան էր տեղափոխվել դեռևս Սահակ Պարթեւի ժամանակ, պահվել տարբեր տեղերում: Այն Անի բերելով Բարսեղ կաթողիկոսն այստեղ դրա համար հատուկ տոն է սահմանում (Վարդան Արեւելցի, էջ 115):

[92] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 332-333, Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 277-278:

Օրբելյանը գրում է, որ Մելիքշահի մահից հետո Գանձակի ամիրան Սենեքերիմին պաշարում է բերդում: Ամիրայի հետ էր «Շիրակայն իշխանն՝ Գրիգոր Ապիրատեան»[93]: Տեսնելով բերդի անմատչելիությունը՝ ամիրան Գրիգորին ուղարկում է Սենեքերիմի մոտ, համոզելու, որ իր մոտ գա, որից հետո նրան պարգեւներով ազատ կարձակի, իհարկե, չմոռանալով Գրիգորին սպառնալ, որ եթե Սենեքերիմին չբերի, կյանքից կզրկվի: Գրիգորը բերում է Սենեքերիմին, ամիրան դրժում է խոստումը, սպանում թագավորին եւ հեռանում իր երկիրը: Սենեքերիմի որդիները, Սյունյաց մեծամեծները գալիս սգում են թագավորի կորուստը եւ նրա դին տանում են հողին հանձնում Վահանավանքում[94]: Սյունյաց գահը ժառանգում է Սենեքերիմի որդի Գրիգորը:

Հասանյան Գրիգոր իշխանի վարքն այս պատմության մեջ պայմանավորված էր նրա ծառայության բնույթով: Նա իր զորականներով պետք է ծառայեր Անիի ամիրային, եւ հենց այդ պարտականությունը կատարելիս էլ, որոշ ժամանակ անց, զրկվեց կյանքից:

Գրիգորի մահվան մասին (1099 թ.) պատմում են Մատթեոս Ուռհայեցին եւ Վարդան Արեւելցին: Վերջինս, մեր կարծիքով, օգտվել է Մխիթար Անեցու պատմությունից: Այստեղ Գրիգորը ներկայացվում է որպես քաջ պատերազմող, ցույց է տրվում նրա վայելած մեծ հեղինակությունը: Բուն դեպքը տեղի է ունենում Անիի ամիրայության սահմանները ներխուժած ասպատակիչների դեմ մղված կռվում, որի մասին Վարդան Արեւելցու մոտ կարդում ենք. «…ազգ մի սկիւթական, որ ի վաղեաց ժամանակաց ղօղեալ կեայր առ Վրկանօք, անուն գլխաւորին Ելխազի կոչեցեալ, որ եկն եօթն հազարաւ ընդ միջոցս աշխարհի մինչեւ յԱնի քաղաք պատերազմաւ. եւ մեռաւ անդ եղբայր նորա, որ նման էր Գողիադու հսկայի, ի Գրիգորոյ որդւոյ Վասակայ, թոռին Ապիրատին, որ զկնի աւուրց նահատակեցաւ

[93] Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, էջ 320:
[94] Նույն տեղում, էջ 320-321, Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 270:

ի Կաղզուանն, զերծուցեալ ի մահուանէ զամիրայն Անւոյ զՄանուչէ. եւ տարեալ թաղեցին զնա ի Կեչառուս. եղբայր Տէր Բարսղի կաթողիկոսի. եւ Մանուչէ եւ ամենայն զօր բանակին Հայոց զկնի դիոյն»[95]:

Գրիգոր իշխանի հանդիսավոր հուղարկավորությունը Կեչառիսում վկայում է, որ Գրիգոր Ապիրատի հիմնադրած այդ վանքը նրա որդի Վասակի տոհմաճյուղի հանգստարանն էր:

Գրիգորի մահվան մասին փոքր ինչ այլ կերպ է պատմում Մատթեոս Ուռհայեցին: Նախ իշխանին կոչում է «Գրիգոր կուրապաղատ արեւելից», ապա նշում, որ նա զորքով գնաց Կաղզվան, այնտեղ պարտության մատնեց թուրքերին, որից հետո Անի վերադառնալու ճանապարհին սպանվեց դարանակալ մի թուրքի արձակած նետից. «…դարձեալ գնալով ի քաղաքն Անի, յայնժամ մի ոմն ի դարանի կայր ի թուրք զորացն ընդ ծառով միով, եւ գաղտ նետիւ հարեալ զնա ի բերանն եւ ի սաստիկ խոցոյն ի յերկիր անկեալ աւանդեաց զհոգին, եւ եղեւ սուգ մեծ Շիրակայ եւ ամենայն Տանն Հայոց»[96]:

Այսպիսով Արեւելցին եւ Ուռհայեցին միմյանց լրացնելով ներկայացնում են Գրիգորի մահվան հանգամանքները: Զարմանալի է, բայց փաստ, որ Վասակի ավագ որդու՝ Գրիգորի սպանությունից

---

[95] Վարդան Արեւելցի, էջ 113-114, աշխարհաբարը՝ էջ 153: Ներկայացնում ենք այս հատվածի մեր կատարած աշխարհաբար թարգմանությունը, քանի որ հրատարակության մեջ եղած թարգմանությունը բնագրից իմաստային լուրջ շեղումներ ունի (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Վարդան Արեւելցին Անիի պատմության մասին, «Էջմիածին», 2002, էջ 92-95): «…Սկյութական մի ցեղ, որ վաղ ժամանակներից աննկատ ապրում էր Վրկանից աշխարհի մոտ, որի առաջնորդի անունը Ելխազի էր, յոթ հազար հոգով, պատերազմելով (Հայոց) աշխարհի միջով գալիս է մինչեւ Անի քաղաքը, եւ այդտեղ նրա եղբայրը, որ նման էր հսկա Գողիաթին, սպանվում է Վասակի որդի եւ Ապիրատի թոռ Գրիգորից, որը օրեր անց նահատակվում է Կաղզվանում, մահից փրկելով Անիի ամիրա Մանուչեին, եւ նրան՝ Բարսեղ կաթողիկոսի եղբորը՝ տանում թաղում են Կեչառիսում եւ դիակի հետեւից գնում էին Մանուչեն եւ հայոց բանակի ամբողջ զորքը»:

[96] Մատթեոս Ուռհայեցի, էջ էջ 288-289:

շուրջ մեկ տասնամյակ անց (մոտ. 1110 թ.) Վասակի եղբոր՝ Ապլջահապի ավագ որդու՝ Ապիրատ իշխանի սպանությունը տեղի է ունեցել ճիշտ նույն ձեւով՝ դարանակալ թշնամուց նետահարությամբ, որը պատկերավոր կերպով նկարագրել է նրա որդին՝ Ներսես Շնորհալին[97]:

Կարծես թե ճակատագրական մի բան կա այս տոհմի պատմության մեջ, սկսած Գրիգոր եւ միաժամանակ Ապիրատ առեղծվածային անունով անհայտ մեկի, միանգամից մագիստրոսի պատվաստիճանով պատմական թատերաբեմ իջնելուց, նրա եղերական մահից մինչեւ նրա անունով անվանակոչված ավագ թոռների՝ Գրիգորի եւ Ապիրատի նույնանման սպանությունը: Ակամա այդ տխուր օրինաչափությունների շարունակողը եղավ նաեւ Գրիգոր իշխանի եղբայրը՝ Բարսեղ Ա Անեցին, որը կաթողիկոսի համար անսովոր վախճան ունեցավ: 1113 թ. մայիսին նա զոհ գնաց մի դժբախտ պատահարի, անսպասելիորեն փլված շենքում մահացու վիրավորվելով: Սակայն մինչեւ մահկանացուն կնքելը Բարսեղը հասցրեց կատարել 1105 թվականին մահվան մահճում գտնվող Գրիգոր Վկայասերին տված խոստումը[98] եւ Ապիրատ իշխանի որդուն՝ 15

---

[97] Շնորհալին գրում է, որ այն օրը, երբ իր եղբայրը քահանայական ձեռնադրության արժանացավ, եւ իրենք ուրախության մեջ էին, գույժ ստացան իրենց հոր մահվան մասին, որը տեղի էր ունեցել Ծովք ամրոցում, հետեւյալ կերպ. «Թագնաբար անդ դարանեալ, / Հագարացի ոմն նստեալ, / Ըզլայնալիճն լի քարշեալ, / Թէ երբ նայի դետակն առեալ: / Յորժամ ետես ունայնացեալ, / Ի վահանէն, որով ծածկեալ, / Երեքթեւեան եռաթունեալ, / Յանկարծակի ըզնա հարեալ… / Եւ զյաղթանդամն ջախջախեալ…» (Ներսեսի Շնորհալւոյ Բանք չափաւ, էջ 602-603):

[98] Բարսեղն Անիից Քեսուն է գալիս Գրիգոր Վկայասերի կանչով եւ 1105 թ. դառնալով միանձնյա աթոռակալ, որոշում է մնալ Քեսունի շրջանում: Գրիգոր Դարանաղեցին գրում է, որ «յորժամ հեռացաւ Տէր Բարսէղն… ի յԱնւոյ», դրանից Հայաստանում դժգոհեցին «մեծամեծ հռչակաւոր վանորէից եպիսկոպոսքն»: Հետաքրքիր է, որ նրա թվարկած հինգ վանքերից երկուսը Հասանյան տան հոգեւոր կենտրոններն էին՝ Կեչառիսը եւ Հավուց թառը (Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, Երուսաղեմ, 1915, էջ 303):

կամ 17-ամյա Գրիգորին եպիսկոպոս ձեռնադրել: Բարսեղի մահից մի քանի օր հետո, նրա պատգամի համաձայն, Գրիգորը ձեռնադրվեց կաթողիկոս (Գրիգոր Գ Պահլավունի) եւ շարունակեց Գրիգոր Բ Վկայասերից սկզբնավորված «Պահլավունյաց» կաթողիկոսական տոհմը:

Հասանյանները որպես աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդներ լայն գործունեություն են ունեցել Անիում նաեւ 12-րդ դարում[99], որն առանձին քննության նյութ է:

Ամփոփելով կարող ենք ասել, որ հայտնի եւ նորահայտ նյութերի շնորհիվ ուրվագծվում է Անիի Բագրատունյաց թագավորության իշխանական տներից մեկի սկզբնավորման պատմությունը: Քեղի ամրոցի իշխան Հասանի ավագ որդին՝ Գեւորգը ժառանգել է հոր իշխանությունը, 1002 թ. կառուցել է Հավուց թառի Կաթողիկե եկեղեցին, իսկ կրտսեր որդին՝ Գրիգոր Ապիրատն իր խելքով եւ ձեռներեցությամբ կարողացել է ավելի մեծ դիրքի հասնել, արժանանալ մագիստրոսության պատվաստիճանի եւ «մեծ իշխան» հորջորջման: 1003 թ. Գրիգոր Ապիրատը կառուցել է Կեչառիսի Ս. Գրիգոր մեծադիր եկեղեցին: 1021 թ. Բագրատունի Հովհաննես Սմբատ եւ Աշոտ Դ եղբայրների միջեւ ծագած գահակալական կռիվներից հետո, Աշոտի լարած խարդավանքի ժամանակ հրաժարվելով թագավորասպան դառնալուց, Գրիգոր Ապիրատն ընտանիքով ապաստանել է Դվինի ամիրայի մոտ, սակայն այստեղ դավադրաբար սպանվել է: Նրա ընտանիքը տեղափոխվել է Անի, ուր Հովհաննես Սմբատ

---

[99] Անիի Հասանյանների մասին տե՛ս Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 394-397, Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի…, էջ 102, 120, 155-156, 166, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 62-82, 116-120: Մեր կարծիքով Հասանյանների տոհմից է եղել նաեւ Մաղարդավանքի առաջնորդ Գրիգորիսը, որը հիշվում է «Էջմիածնի Ավետարանի» 1173 թ. հիշատակարանում եւ մեկ այլ ձեռագրի անթվական հիշատակարանում, ուր անվանվում է «Գրիգորէս, որդի Ապիրատին»: Հետաքրքիր է, որ այդ ձեռագիրը Մաղարդավանքին նվիրողը բնակվում էր «մերձ առ դղեկին Քեղայոյ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 213, 312):

թագավորն ստանձնել է մահացած իշխանի զավակների խնամակալությունը: Գրիգոր Ապիրատի դուստրը կնության է տրվել Վեստ Սարգիս իշխանին, իսկ որդիները՝ Ապլջահապը եւ Վասակը կնության են առել Գրիգոր Պահլավունի (Բջնեցի) իշխանի երկու դուստրերին: Առաջինի ընտանիքը 1045 թվականից հետո բյուզանդական ծառայության անցած եւ մագիստրոս դարձած Գրիգոր Պահլավունու հետ տեղափոխվել է հարավ՝ Միջագետք Հայոց, վայելելով նրա ու 1066-ին կաթողիկոս դարձած նրա որդու՝ Գրիգոր Վկայասերի հովանավորությունը: Այս ընտանիքի անդամներն ու ժառանգները մայրական գծով Պահլավունի լինելու շնորհիվ Հայոց եկեղեցուն հաջորդաբար հինգ կաթողիկոս են պարգեւել: Իսկ Վասակի ընտանիքը մնացել է Անիում եւ այստեղ առաջնակարգ դիրք գրավել:

Վերջում զետեղում ենք Հասանյանների տոհմածառը, մասամբ լրացնելով նախկինում Ներսես Ակինյանի կազմածը[100]:

---

[100] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, ներդիր 402-403 էջերի միջեւ: Ն. Ակինյանը Հասանյանների տոհմածառի ստորին մասում զետեղել է 12-րդ դարի վերջերին եւ 13-րդ դ. սկզբում Շիրակում հայտնված մի տոհմի անդամների անունները, ոմն Ապուղամրի գլխավորությամբ, որի զավակներն իրենց համարում էին սպարապետ Վահրամ Պահլավունու սերունդ եւ այդ մասին արձանագրություն ունեն Մարմաշենում: Այս տոհմը կապ չունի Հասանյանների հետ (Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 76): Նույն տոհմածառում որպես Ապլջահապի որդի Վասակի որդիներ են նշվում Ապլղարիպը եւ Լիկոսը (նույն տեղում, էջ 384-385), որոնք իրականում Գրիգոր Մագիստրոս Բջնեցու Վասակ որդու զավակներն են (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, էջ 423): Մենք ավելացրել ենք տոհմապետ Հասանի որդի Գեւորգ իշխանի ճյուղը, 12-րդ դարում ապրած Հասան Մագիստրոսի եւս մի որդու եւ փեսայի անունները (Մանր ժամանակագրություններ, հ. 2, էջ 502), կիլիկյան տոհմաճյուղում՝ Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի քրոջը, որի ամուսինն էր Կիլիկիայի Հայոց իշխան Մլեհը (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Բ, էջ 152), միաժամանակ յուրաքանչյուր գործչի անվանը կից նշել ենք նրա հիշատակության թվականները (կաթողիկոսների դեպքում՝ աթոռակալության տարիները):


Դասամ
Գեւորգ 1002
Գրիգոր Ապիրատ Սագիստրոս 1001, 1003, †1021
Դասան (էնթեռդրյալ)
Սմբատ 1081
Դասամ 1081
Վասակ կինը՝ Գրիգոր Սագիստրոս Դաւիլակունու դուստրը 1021, 1081
Ապլշահապ 1081
Դասամ 1081
Գրիգոր Կուրապատրատ 1181, †1099
Բարսեղ Ա Ամեցի կթղ. 1081 - 1113
Դասամ մագիստրոս
Դուստր ամուսինը՝ Ամիր Դասամ
Ապլղաթիբ 1178
Գրիգոր- Ապիրատ 1165, 1178
Սարգիս Ա Ամիր արքեպս. 1187, 1220
Բարսեղ Բ Ամեցի Ամիր արքեպս. 1160, 1199
Ապլշահապ կինը՝ Գրիգոր Սագիստրոս Դաւիլակունու դուստրը 1021
Գրիգորիս կթղ. Եգիպտուսում
Դուստր Տիկնաց, 1042 ամուսինը՝ Վեստ Սարգիս
Դուստր վանքեն ամուսինը՝ Շորտուանել
Գրիգոր Գ Դաւիլակունի կթղ. 1113-1166
Ներսես Դ Շնորհալի կթղ. 1166-1173
Ապիրատ †1110 (մոտ.) կինը՝ Վանեցի
Վասակ †1137
Վահրամ †1141
Վասիլ 1149 կինը՝ Մարենիկ
Դուստր ամուսինը՝ Սլեհ
Դուստր
Գրիգոր Դ Տղա կթղ. 1173-1193
Գրիգոր Ե Քարավեժ կթղ. 1194
Դուստր Մարիամ
Զորավար
Գրիգոր Զ Ապիրատ կթղ. 1194-1203
Դուստր Հաճանդուխտ ամուսինը՝ Օշին
Վասիլ
Միքայել
Դուստր Թագուհի ամուսինը՝ Բակուրամ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՀԼԱՎՈՒՆՈՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՉԱՌԻՍՈՒՄ

Կեչառիսի վանքը միջնադարյան Հայաստանի ամենանշանավոր եկեղեցական, հոգեւոր եւ մշակութային կենտրոններից էր: Վանքի հնագույն եւ գլխավոր **Սուրբ Գրիգոր** մեծադիր եկեղեցին կառուցել է Բագրատունյաց պետության մեծ իշխան Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը: Եկեղեցու հիմնադրման մասին է վկայում հարավային մուտքի բարավորի վեցտողյա արձանագրությունը.

ՆՁԲ (1033) Թ. ՀԱ(ՅՈՑ). Ի ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵ
ԱՆ ԳԱԳԿԱ ԵՒ Ի ՀԱՅՐԱՊԷՏՈՒԹԵԱՆ Տ(ԵԱՌ)Ն
ՍԱՐԳՍԻ, ԵՍ ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՌՈՍ, ՈՐԴԻ ՀԱՍԱՆ
Ա, ՇԻՆԷՑԻ ԶԷԿԷՂԷՑԻՍ՝ ԻՆՁ Ի ԲԱՐԷԽՈՍՈՒԹ(ԻՒ)Ն ԵՒ Ի
Մ ՊԱՏՐՈՆԻՆ ԵՒ ԻՄ ՈՐԴԵԱՑՆ. ՈՐՔ ԸՆԹԷՌՆՈՅՔ Զ
ԻՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԷՑԷՔ Ի Ք(ՐԻՍՏՈ)Ս ԱՂԱՉԵՄ:

Նկատի ունենալով արձանագրության մեջ 1017 թ. մահացած Գագիկ Ա Բագրատունի թագավորի եւ 1019 թ. կաթողիկոսական աթոռից հրաժարված Սարգիս Ա Սեւանցու անունների առկայությունը, դեռեւս Ղեւոնդ Ալիշանը, այնուհետեւ Գարեգին Հովսեփյանը եւ Ներսես Ակինյանն առաջարկել են արձանագրության սկզբում նշված ՆՁԲ (1033) թվականը համարել գրչական սխալ եւ սրբագրել ՆԾԲ (1003)[1]:

Հայ պատմիչները եկեղեցու կառուցման թվականը չեն հայտնում իսկ Գրիգոր Ապիրատին հիշատակում են միայն Ապիրատ ա-

---

[1] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 259, Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 159, Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 374: Հավանաբար արձանագրության տեքստը թելադրվել է փորագրող վարպետին, որի դեպքում Զ (Զա) եւ Ծ (Ծա) տառ-հնչյունների շփոթությունը միանգամայն հնարավոր է: Հայկական վիմագրերում նման սխալներ էլի են հանդիպում:

նունով եւ նշում, որ նա «**շինեաց զսուրբ ուխտն Կեչառու**...»[2]: Կեչառիսի կառուցման վերաբերյալ հայտնի է նաեւ Սիմեոն Երեւանցու «Ջամբռում» տեղ գտած վկայությունն, ըստ որի եկեղեցին «սկզբնապես հիմնվել է 444 (995) թվին Ապիրատ իշխանի կողմից»[3]: Սիմեոն Երեւանցին թվական նշելու համար որեւէ աղբյուր պիտի ունեցած լիներ, որը ցավոք առայժմ հայտնի չէ: Կարելի է ենթադրել, որ 995-ը եկեղեցու հիմնարկեքի թվականն է, իսկ ավարտվել է շինարարությունը 1003-ին:

Կեչառիսի վանքի պատմությանն անմիջականորեն առնչվում է նաեւ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (Բջնեցու) անունը: Գրիգոր Ապիրատի մահից հետո (1021) Գրիգոր Պահլավունին իր հովանավորության տակ առավ նրա երկու որդիներին՝ Ապլջահապին եւ Վասակին, որոնց կնության տվեց իր երկու դուստրերին, իսկ 1045 թ. Բագրատունյաց պետության անկումից հետո բյուզանդական կայսրից ստացավ մագիստրոսության պատիվ. «Գրիգոր որդի քաջին Վասակայ... գնաց առաջի թագաւորին եւ... տայ զբանալին Բջնոյ զթագաւորն եւ զամենայն զիւր զհայրեանի ժառանգութիւնն եւ... առնու զպատիւ **մագիստրոսութեան** եւ տեղիս բնակութեան ի սահմանս Միջագետաց...»[4]: Գրիգոր Պահլավունին նշանակվեց Տարոնի ու Հայկական Միջագետքի կուսակալ:

Այդ շրջանում կայսրությունը պայքար էր սկսել Հայոց եկեղեցու դեմ: կաթողիկոսական աթոռը հեռացվել էր Անիից (1046 թ.), դավանաբանական հողի վրա հայերի նկատմամբ սկսվել էին բազմապիսի հալածանքներ[5]: Նման պայմաններում Գրիգոր Մագիստ-

---

[2] Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), Երեւան, 2001, էջ 103, Հմմտ. Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 58:

[3] Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբռ, Երեւան, 2003, էջ 395:

[4] Արիստակիսի Լաստիվերցւոյ Պատմութիւն (աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի), Երեւան, 1963, էջ 62:

[5] Կ. Մաթեւոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 36-47, 193:

րոս Պահլավունին արքունիքում ունեցած իր հեղինակությունն օգտագործելով արտոնություններ ստացավ առանձին վանքերի համար: Այդ բախտին արժանացան նրա հորեղբայր Վահրամ Պահլավունու կառուցած Մարմաշենի վանքը եւ Կեչառիսը:

Մարմաշենին կայսերական արտոնություն շնորհելու մասին է վկայում Պահլավունի իշխանի նամակը՝ հասցեագրված Մարմաշենի Սոսթենես վանահորը[6]: Ավելի ընդարձակ են Կեչառիսի մասին պահպանված տեղեկությունները:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունից մի մեծ արձանագրություն է գրված Կեչառիսի Ս. Գրիգոր եկեղեցու հարավային պատի վերնամասում: Սակայն պահպանվել է նաեւ այս արձանագրությանն առնչվող, ժամանակին իտալերեն թարգմանված եւ Հռոմի դիվաններից մեկում պահված մի փաստաթուղթ, որ հրատարակել է Սեն Մարտենը, եւ որից քաղելով այն գրաբարի է վերածել Ղ. Ալիշանը: Գրությունը հետեւյալն է.

«Ի Շ (1051) թուականիս, ի ժամանակս Կոստանդնոյ Մոնոմախի թագաւորի Հայոց (Յունաց), դուքսս Վասպուրականի, գաւառիս Ծաղկնուց ես Գրիգոր Մագիստրոս որդի Վասակայ, հրովարտակաւ եւ հրամանաւ վերոյասացեալ թագաւորիս՝ հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս որ կոչի Կեչառուս, ի նախասացեալ գաւառիս Ծաղկնուց, հանդերձ մատրամբ. եւ նուիրեցի զտաճարս եւ զեկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ. եւ զարդարեցի զսա սպասուք արծաթեղինօք եւ ոսկեղինօք, գրովք եւ այլովք պիտոյիւք, որպէս վայել էր տաճարիս: Դարձեալ ետու եկեղեցւոյս գեօղս երկուս եւ այգի մի:

(Եւ) մեք շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոսունքս Բջնոյ՝ Վանական եւ Համավար, սահմանեցաք եւ հաստատեցաք ի թեմ եւ կալուած վերոյգրեալ եկեղեցւոյս՝ գեօղս քսան եւ հինգ եւ քաղաք մի, որք են Բուժան, Շոկաթն (եւ այլն...):

---

[6] Գրիգոր Մագիստրոսի թղթերը (աշխատասիրությամբ՝ Կ. Կոստանյանցի), Ալեքսանդրապոլ, 1910, էջ 103-104, 304:

Եւ հաստատեցաք զվճիռս մերով ձեռնագրովս եւ կնքովս: Արդ եթէ ոք յետ մեր կամ յեկեղեցականաց կամ յաշխարհականաց իշխեսցէ հակառակ կալ վճռոյս մերոյ, նզովս առցէ ի Սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ եւ ՅԺԸ հայրապետացն Նիկիոյ ժողովոյն, եւ մասն եւ բաժին նորա ընդ Յուդայի մատնչի եւ ընդ խաչհանուացն Քրիստոսի եղիցի, իսկ որ հաստատուն պահէ՝ օրհնեալ եղիցի ի Տիառնէ Աստուծոյ»[7]:

Ինչպես տեսնում ենք, փաստաթուղթը 1051 թվականից է, առաջին մասը գրված է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, երկրորդ մասը՝ Բջնիի եպիսկոպոսներ Վանականի եւ Համավարի (Համավո՞ր) անունից, որոնք նշում են Կեչառիսին որպես թեմ հատկացված 25 գյուղի եւ մեկ քաղաքի մասին: Ցավոք բնակավայրերի անուններն աղավաղված են, եւ ուսումնասիրողները միայն Բուժանը Բուժականի հետ նույնացնելու հնարավորությունն են ունեցել:

Փաստաթղթում Գրիգոր Մագիստրոս Պահլավունին նշում է իր կառուցած եկեղեցու մասին՝ «հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս որ կոչի Կեչառուս», որն ուսումնասիրողները նույնացնում են Ս. Գրիգոր եկեղեցու մոտ կառուցված Ս. Նշան եկեղեցու հետ[8]:

Մեր կարծիքով, փաստաթղթում որոշ չափով մեծացվել է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու դերը Կեչառիսում, նպատակ ունենալով բյուզանդական արքունիքին ցույց տալ, որ վանքը պատկանում է Պահլավունիներին (նրանց հիմնածն է, ինչպես Մարմաշենը):

Այժմ ծանոթանանք Կեչառիսի վեցտողյա մեծ արձանագրությանը, որի բովանդակության մեջ առկա հակասությունները հայագիտությունը դեռեւս չի պարզել:

«1. Ի հինգհարիւրերրորդի ամի թուականութեանս Թորգոմեան, ի թագաւորութեան ս(ուր)բ եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեա

---

[7] Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 260, Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 158:

[8] Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երեւան, 2002, էջ 112:

Մաւնումախին, բերաւ ոսկի մատանիս զոր հզաւրին եւ առաքինոյն բարե

2. պաշտին Գրիգորո Մագիստռոսին, կիտաւնտին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո, Արշակունոյն եւ Հայկազն(ո)յն մեծաւ աշխատութ(եամ)ը ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղե

3. ցիքս իւր եւ ոչ այլ ինչ հայցէ, բայց միայն աղաւթս առնել ս-(ուր)ը եւ ինքնակալ թագաւորին Կոստանդեայ ընդ նմին եւ ծա-ռային Ք(րիստոս)ի Գրիգորոյ եւ որդոց իւրոց եւ յիշատակ կարգեալ յեկեղեցիքս Կ

4. եւչառուաց ցուր Մագիստռոսն կենդանի է ամեանայն շաբաթ աւր զժամն Հասանա արասցեն անխափան եւ յետ ելիցն Մագիստ-ռոսին արասցեն անխափան, արդ (որ) ոք այսմ վճռի հաստատնո խափանել ջանա թ

5. ե յառաջնորդաց ոք իցէ կամ յիշխանաց կամ ի քահանաից այնպիսի Յ եւ ԺԸ հայրապետացն նզովեալ եղիցի եւ բաժինն ընդ Յուդաի եղիցի եւ ընդ տիրասպան քահանիցն եւ այս գիր մեր է Յո-վանիսի շնորիւն Ա(ստուծո)յ Բջ

6. նո էպիսկոպոսիս եւ ս(ուր)ը եւ մեծի հաւրս Բարսղիս, էթե ոք այս գրոյս խափանել ջանա այնպիսին նզովս չ(ար)աչարս ընկալցի ի սրբո Լուսաւորչէն Գրիգորո եւ յամենայն սրբոց եւ ի մէնջ, կատա-ռիչք գրոյս աւրհնեալ եղ...»[9]:

Արձանագրությունն ունեցել է մի քանի հրատարակություն, բայց առավել ամբողջականը Գ. Հովսեփյանի մոտ է: Արձանագրության թվականը Հ. Շահխաթունյանցը, Ղ. Ալիշանը, Կ. Կոստանյանը եւ սկզբում նաեւ Գ. Հովսեփյանը կարդացել են «Ի հինգհարիւրերրորդի ամի», այսինքն 500+551=1051, որը նաեւ Հռոմի դիվանական փաստաթղթի թվականն է: Սակայն Գ. Հովսեփյանը նկատելով, որ վերոհիշյալ փաստաթղթում նշվում են Բջնիի Վանական եւ Համավար եպիսկոպոսները, իսկ արձանագրության մեջ նույն Բջնիի Հով-

[9] Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 312:

հաննես եպիսկոպոսը, փորձել է խնդիրը լուծել արձանագրության թվականը «Ի հինգհարիւր երրորդի ամի» կարդալով, որով ստացվում է 500+3+551=1054[10] : Բայց անգամ թվականի այս, մեր կարծիքով, ոչ այնքան համոզիչ վերընթերցմամբ, արձանագրության մեջ առկա հակասությունները չեն վերանում: «Մեզ համար պարզ չէ միայն, թե ի՞նչ Հասան է, որին մատենագիր Գրիգոր Մագիստրոսը իւր արձանագրութեան մէջ կամենում է, որ յիշեն, քանի ինքը կենդանի է»,- գրում է Գ. Հովսեփյանը[11]:

Այս հարցն էլ յուրովի փորձել է լուծել Ն. Ակինյանը, կարծելով, որ արձանագրության առաջին մասը Պահլավունի Մագիստրոսինն է, իսկ երկրորդը («ընդ նմին» բառերից սկսած)՝ բոլորգիր՝ Գրիգոր Ապիրատինը, այդ պատճառով էլ հիշվում է վերջինիս հայր Հասանը: Նա նաեւ նկատում է, որ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ՕԸ եւ ԿԷ թղթերից դատելով «1051, կամ ասկէ քիչ յառաջ կամ ետքը Բջնոյ եպիսկոպոս էր Եփրեմ... Ուստի Յովի. եպիսկոպոս եւ Բարսեղ մեծ հայր կը պատկանին 1003 շրջանին, երբ կառուցուեցաւ եկեղեցին»[12]:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու սան Եփրեմի 1050-ական թվականներին Բջնիի եպիսկոպոս լինելու մասին դիտարկումը կարեւոր է, սակայն Հովհաննեսը չէր կարող 1003-ին Բջնիի եպիսկոպոս լինել, քանի որ այդ եպիսկոպոսությունը հաստատվել է Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսի եւ Հովհաննես Սմբատ թագավորի հրամանով 1031 թ., որի մասին է վկայում Բջնիի եկեղեցու մեծ արձանագրությունը: Անընդունելի է նաեւ Ն. Ակինյանի կարծիքը Կեչառիսի արձանագրության տարբեր գրչությամբ երկու մասից կազմված լինելու վերաբերյալ, քանի որ արձանագրությունը մեկ ամբողջություն է եւ միատեսակ գրչություն ունի:

---

[10] Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 161, 312:
[11] Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 161:
[12] Ն. Ակինյան, Ներսես Լամբրոնացի, էջ 377:

Գ. Հովսեփյանը նշում է արձանագրության բարբառային եւ հնագրական որոշ առանձնահատկությունները, որոնցից մի քանիսը կապվում է ուշ շրջանի՝ 13-րդ դարի հետ[13]: Կարծում ենք, ուշադրության է արժանի նաեւ կայսեր անվան «Մաւնումախ» գրությունը:

Արձանագրությունն ունի եւս մի հետաքրքրական մանրամասն: 3-րդ տողից հետո տողասկզբում փոքրիկ խաչաքանդակ կա (քառակուսի փորվածքի մեջ հավասարաթեւ խաչ), որի պատճառով 4-րդ եւ 5-րդ տողերը մի փոքր խորքից են սկսվում: Դժվար թե խաչը քանդակված լիներ նախապես (արձանագրության փորագրությունից առաջ), որպես ձեւավորման տարր, քանի որ եկեղեցու այլ մասերում նման զարդաքանդակներ չկան, եւ բացի այդ խաչն այնքան փոքր է, որ չէր կարող դիտվել որպես առանձին զարդ: Հետեւաբար մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ այն քանդակվել է արձանագրության գրության ժամանակ: Խաչաքանդակը, փաստորեն, երկու մասի է բաժանում վեցտողյա արձանագրությունը:



Նկատենք, որ սովորաբար, երբ արձանագրությունների մեջ նման նշաններ՝ խաչեր են դրվում, ապա դա արվում է արձանագ-

[13] Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 312-313:

ության սկզբում: Հենց այդպես է արված նույն պատի ստորին մասում՝ մուտքի բարավորի վրա Գրիգոր Ապիրատի արձանագրության մեջ: Մինչդեռ մեր քննած «մագիստրոսյան» արձանագրության մեջ խաչաքանդակը տեղադրված է 3-րդ տողից հետո, մեր կարծիքով, բովանդակային կապ ունենալով հաջորդող տողերում արտահայտված մտքի հետ: Իսկ հիշյալ հատվածը պարունակում է եպիսկոպոսական որոշումն ու անեծքի բանաձեւը: Քառակուսու մեջ առնված խաչաքանդակն այստեղ, հավանորեն արձանագրված խոսքերը հաստատող, «կնքող» նշանակություն ունի:

Այժմ փորձենք պարզել դիվանական փաստաթղթի եւ Կեչառիսի արձանագրության նմանություններն ու տարբերությունները:

Նախ տեսնենք, թե ինչ ընդհանրություններ կան:

Ա. Երկու վկայագիրն էլ **կառուցվածքով նման** են, ունեն **առաջին մաս՝** գրված Գրիգոր Մագիստրոս Պահլավունու, եւ **երկրորդ մաս՝** գրված «շնորհիւն Աստուծոյ Բջնոյ եպիսկոպոս» անվանված հոգեւորականների կողմից:

Բ. Երկուսի առաջին մասում էլ նշվում է Գրիգոր Մագիստրոս Պահլավունու նախաձեռնությամբ Կեչառիսի՝ բյուզանդական Մոնոմախ կայսրից ստացած առանձնաշնորհման մասին. «բերաւ ոսկի մատանիս»,- ասվում է արձանագրության մեջ (որով՝ «մեծաւ աշխատութեամբ ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղեցիքս»), իսկ փաստաթղթում նշվում է՝ «հրովարտակաւ եւ հրամանաւ... թագաւորիս»: Սա համեմատելի է Մագիստրոսի՝ Մարմաշենի Սոսթենես վանահորը գրած նամակի հետ, ուր նախ նշվում է «կարմրակերտ մելանաւն գիծ թագաւորական... զոր առաքեաց... Կոստանդիանոս արքայ Մաւնաւմախն... յոյժ զօրաւոր բանս՝ հանդերձ կնքովն ոսկեղինաւ», ապա ասվում է, որ վանահայրը գա եւ տանի ոսկե մատանին՝ «եկեսցես դու եւ տարցիս զոսկի մատանիս»[14] (կայսեր հրովարտակը՝ ոսկե կնիքով):

---

[14] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ104:

Գ. Երկուսն էլ նույն թվագրումն ունեն (1051):

Դ. Երկու գրությունը եզրափակող անեծքի բանաձեւերն ունեն նույն բաղադրիչները, որոնք թեեւ հիմնականում տիպային են, բայց նաեւ ինքնատիպ են հատկապես Ս. Գրիգորի նզովքի նշման առումով:

Այսպիսով երկու վկայագրերի միջեւ առկա կապն ակներեւ է, եւ բնական է ենթադրել, որ նախ եղել է գրությունը, որը ստորագրությամբ ու կնիքով հաստատել են Բջնիի եպիսկոպոսները , ապա՝ արձանագրությունը:

Այժմ տեսնենք, թե որոնք են հիմնական տարբերությունները:

	Դիվանական փաստաթուղթ	*Արձանագրություն*
1	Նշվում է Գրիգոր Պահլավունու տիտղոսը եւ հոր անունը. «դուքսս Վասպուրականի, գաւառիս Ծաղկնուց ես Գրիգոր Մագիստրոս որդի Վասակայ»:	Գր. Պահլավունու տիտղոսաշարն ավելի մեծ է, բայց չկա նրա հոր անունը. «Գրիգորո Մագիստռոսին, կիտաւնտին եւ դուկին Վասպուրականի եւ Տարաւնո, Արշակունոյն եւ Հայկազնոյն»:
2	Գր. Պահլավունին նշում է իր ձեռամբ եկեղեցու եւ մատուռների կառուցման եւ դրանց տրված առատ նվիրատվությունների մասին. «հիմնադրեալ շինեցի զեկեղեցիս ի տեղւոջս որ կոչի Կեչառուս... հանդերձ մատրամբ. եւ նուի-	Որեւէ շինարարության կամ նվիրատվության մասին չկա վկայություն կամ ակնարկ, բայց Կեչառիսի եկեղեցիները համարվում են Գր. Պահլավունունը՝ «...ազատեալ էր զմեծ եւ զհռչակաւոր եկեղեցիքս իւր»:

	ռեցի զտաճարս եւ զեկեղեցիս յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի մերոյ. եւ զարդարեցի զսա սպասուք... Դարձեալ ետու եկեղեցւոյս գեօղս երկուս եւ այգի մի»:	
3	Նվիրատվության դիմաց որեւէ պահանջ չկա, չի հիշվում Հասան անունը:	Գր. Պահլավունին պահանջում է աղոթել կայսեր, նաեւ իր ու զավակների համար, միաժամանակ՝ ամեն շաբաթ օր պատարագել, քանի դեռ ինքը ողջ է՝ Հասանի համար, իսկ մահից հետո՝ իր համար:
4	Բջնիի եպիսկոպոսներ Վանականն ու Համավարը եկեղեցուն (վանքին) հատկացնում են թեմ եւ կալվածք՝ 25 գյուղ եւ մի քաղաք. «...սահմանեցաք եւ հաստատեցաք ի թեմ եւ կալուած վերոյգրեալ եկեղեցւոյս՝ գեօղս քսան եւ հինգ եւ քաղաք մի, որք են Բուժան, Շոկաթն...»:	Բջնիի եպիսկոպոս Հովհաննեսը եւ հայր Բարսեղը հաստատում են Գր. Պահլավունու՝ իր հիշատակը պահպանելու եւ ամենշաբաթյա պատարագի մասին պահանջը՝ «այս գիր մեր է Յովանիսի շնորհիւն Աստուծոյ Բջնո էպիսկոպոսիս եւ սուրբ եւ մեծի հաւրս Բարսղիս, էթե ոք այս գրոյս խափանել ջանա...»: Ոչինչ չի ասվում Կեչառիսի թեմի, գյուղերի ու կալվածքների մասին:

Ինչպես տեսնում ենք, երկու վկայագրերն ունեն էական նմանություններ եւ բավական մեծ տարբերություններ[15]: Ուսումնասիրողներին դեռեւս չի հաջողվել վերջնականապես պարզել իրականությունը, քանի որ փաստերն իրոք խճողված են:

Մեր ենթադրությունը հետեւյալն է: Հավանաբար սույն արձանագրությունը գրվել է ավելի ուշ (այս մասին են խոսում Գ. Հովսեփյանի հնագրական դիտողությունները, ինչպես նաեւ Ն. Ադոնցի որոշ դիտարկումները)[16]: Այն գրողները՝ Բջնիի եպիսկոպոս Հովհաննեսը եւ վանահայր Բարսեղը, ձեռքի տակ ունեցել են վերը նշված փաստաթուղթը կամ դրա պատճենը, հիմնականում օգտվել են դրանից, բայց բաց են թողել այն կետերը, որոնք արձանագրության գրվելու ժամանակ արդեն անիրական էին: Մասնավորապես անհնար էր, որ եթե փաստաթղթում նշված գյուղերը դեռեւս Կեչառիսին պատկանեին, դրանք չնշվեին: Արձանագրության գրության ժամանակ անուշադրության կամ մոռացության է մատնված եղել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու տոհմաբանությունը, եւ տեքստը կազմողները Կեչառիսի մեկ այլ, բայց փաստորեն նույն պատի վրա գտնվող (1003 թ.) արձանագրության մեջ առկա Գրիգոր Մագիստրոսի (Գրիգոր Ապիրատի) հայրանունը՝ Հասան, նույնությամբ փոխադրել են 1051 թվականը կրող արձանագրության մեջ:

---

[15] Փաստաթղթից-վիմագիր կամ վիմագրից-փաստաթուղթ տեքստային տարբերությունների առաջացման երեւույթի ակնառու օրինակ է Նորավանքում Լիպարիտ Օրբելյանի գրած 1221 թ. արձանագրությունը, որը Սյունյաց մետրոպոլիտ, պատմիչ Ստեփանոս Օրբելյանը շուրջ 70 տարի հետո եկեղեցու պատից արտագրել եւ իր պատմության մեջ է զետեղել: Սակայն նա, ինչպես նշում է Ա. Ա. Աբրահամյանը, տեքստը «զգալի չափով փոխել է, խմբագրել, որոշ հավելումներ ու կրճատումներ կատարել, բառեր եւ բառածեւեր փոխել» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ. Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 501, տե՛ս նաեւ Դիվան հայ վիմագրության, պր. 3, կազմեց Ս. Բարխուդարյան, Երեւան, 1967, էջ 211-212):

[16] Գ.Հովսեփյան, նշվ. աշխ., էջ, 312, 464:

Հովհաննես անունով Բջնիի եպիսկոպոս հիշատակվում է 1298-1299 թթ., որը Ստեփանոս Օրբելյանի՝ կաթողիկոս Գրիգոր Է Անավարզեցուն հասցեագրված թուղթը ստորագրողներից մեկն է եղել[17]: 1298 թ. մի հիշատակարանում նա՝ «Յովհաննէս զարհեպիսկոպոսն Բրջնոյ եւ զվերատեսուչն Այրարատեան նահանկին», բնութագրվում է որպես «այր... երկայնամիտ եւ զուարթ դիմաւք»[18]:

Մեր կարծիքով, արձանագրողների հիմնական նպատակը Կեչառիսի՝ ժամանակին կայսերական առանձնաշնորհում ունեցած վանք լինելը ցույց տալն է եղել, որի համար գրել են տվել վիմագիրը հիմնվելով վերը նշված դիվանական փաստաթղթի վրա, բայց տեքստի երկրորդ մասում, Բջնիի նախկին առաջնորդների անունների փոխարեն, գրել են իրենց անունները:

[17] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, էջ 362:

[18] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, (կազմող՝ Ա. Մաթեւոսյան), Երեւան, 1984, էջ 824:

ԳՐԻԳՈՐ ՊԻԽՏ ՇԻՐԱԿԱՑԻ

(Անտիոքի դուքս Խաչատուր)

Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերում պահպանվել են բազմաթիվ ժամանակագրական միավորներ, որոնք դուրս են մնացել պատմագրքի հայերեն միակ հրատարակությունից եւ երբեմն օգնում են պատմական տարբեր հարցերի լուծմանը: Այդպիսի մի հարցի պարզաբանմանն զգալի նպաստ են բերում Մատենադարանի թիվ 1898 եւ 2965 ձեռագրերը[1]: Խոսքը վերաբերում է 11-րդ դարի երկրորդ կեսի մի զինվորական գործչի, որը Շիրակից էր եւ Բագրատունյաց թագավորության անկումից հետո ծառայում էր Բյուզանդական կայսրությանը: Նրա անունը հայ պատմիչները չեն տալիս, միայն նշում են պաշտոնից ծագող մականունը՝ Մատթեոս Ուռհայեցին՝ **Պեխտ, Պիխտ, Եպիխտ**, Վարդան Արեւելցին՝ **Բեղդ**:

---

[1] Սամվել Անեցու Ժամանակագրությունը հրատարակելիս Ա. Տեր-Միքելյանն օգտագործել է այս երկու մատյանը (համապատասխանաբար Ա եւ ԺԳ օրինակներ), սակայն դրանց մեջ եղած մի շարք ժամանակագրական միավորներ տեղ չեն գտել գրքում (Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ Է-Թ): Ձեռագրերից առաջինը (թիվ 1898) ժողովածու է, գրչության ժամանակը, վայրը, գրիչն անհայտ են, համարվում է 13-րդ դարի մատյան: Վերջին մասում նշված են հիմնականում Կիլիկիայի պատմությանը եւ խաչակիրներին վերաբերող հատվածներ, որոնք զանց է առել Ա. Տեր-Միքելյանը, իսկ բոլորովին վերջերս դրանց մի մասը հրատարակել է Լ. Տեր-Պետրոսյանը՝ սակայն սկսելով 1074 թվականին վերաբերող տեղեկությամբ (Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հ. Ա, Երեւան, 2005, հավելված 2, էջ 483-484): Երկրորդ մատյանը (թիվ 2965) ժողովածու է (17-րդ դ.), գրչության հանգամանքներն անհայտ են: Հիշյալ ձեռագրերում եղած հավելումները տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 114-120:

Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Եւ մի ոմն Հայոց քաջ զօրականացն… Պեխտ անուն, որ էր տուկ Անտիոքայ քաղաքին»[2]: Այնուհետեւ նա պատմում է, թե ինչպես 1065 թվականին քաջ զորավար Պեխտն իր զորականներով պատահաբար Ուռհայում էր գտնվում, երբ այն թուրքերից հարձակման ենթարկվեց: Տեղի դուքսի հույն զորավարը թշնամուն դիմադրություն ցուցաբերած Պեխտին օգնելու փոխարեն դավաճանական դիրք գրավեց: Պեխտի վճռականության եւ խիզախության շնորհիվ թշնամին Նշենիկ բերդում պարտվեց, եւ քաղաքը փրկվեց թուրքերից, բայց հույն զորավարի արարքի մասին նա նամակով հայտնեց Տուկիծ[3] կայսրին, իսկ վերջինս դաժան հաշվեհարդար տեսավ դավաճանի հետ[4]:

Մեկ այլ տեղում իշխանի մահը ներկայացնելիս Մատթեոս Ուռհայեցին գրում է. «**Եպիխտ** իշխանն Հայոց, այր քաջ եւ պատերազմող **ի Տանէն Շիրակայ**»[5], ապա նշում, որ կայսրը նրան հարկադրաբար էր քաղկեդոնական դարձրել, բայց նա ծածուկ պահում էր Սուրբ Գրիգորի հավատը: Իսկ սպանվեց իշխանը Անդրիուն բերդում, երբ հիվանդ էր («հիւանդացեալ ի բերդն, որ կոչի Անդրիուն»), եւ կայսեր՝ նրա մոտ ուղարկած «Հոռոմ աբեղա» խոստովանահայրը քնած ժամանակ բարձով խեղդեց նրան («Եւ չարաչար սպանանէր զայր հզօր եւ քաջ՝ չարագործ եւ պիղծ կրօնաւորն Հոռոմոց»), որից հետո իշխանի զորականները սպանեցին չարագործին[6]:

---

[2] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), (գրքում զետեղված է ժամանակագրության գրաբար տեքստը Վաղարշապատի 1898 թ. հրատարակությունից), Երեւան, 1991, էջ 170: Ուռհայեցուց օգտվելով՝ Պեխտին հիշատակում է Սմբատ Սպարապետը (Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 84):

[3] Կոստանդին Ժ Դուկաս (1059-1067):

[4] Մատթեոս Ուռհայեցի, էջ 170:

[5] Նույն տեղում, էջ 230: Մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.:

[6] Նույն տեղում, էջ 228-230: Տեղեկությունը զետեղված է Անտիոքի դուքս Վասակ Պահլավունու (Գրիգոր Մագիստրոսի որդու) սպանության մասին պատմությունից հետո, որն Ուռհայեցին դրել է 1076 թվականի տակ, թեեւ դեպքը տեղի է ունեցել 1078 թ. (Լ. Տեր-Պետրոսյան, Նշվ. աշխ., էջ 418):

Մատթեոս Ուռհայեցու աշխարհաբար թարգմանությունը հրատարակելիս Հ. Բարթիկյանն իշխանի անվան մասին հետեւյալ ծանոթագրումն է արել. «Պեխտը (Եպիխտ) անուն չէ, այլ հունարեն էպիխտես բառը, որ վերակացու, տեսուչ է նշանակում»[7]:

Վարդան Արեւելցին (13-րդ դար) գրում է. «…սպանաւ **Բեխդն**, **իշխանն Շիրակունի**, որ վասն յոյժ լաւութեանն նեղեալ սիրով ի կայսերէ՝ եղեւ հոռոմ»[8], ապա ավելացնում է, որ նրան խեղդամահ է արել կայսեր նշանակած հոռոմ (հույն, քաղկեդոնական) խոստովանահայրը «ի բերդն իւր **յԱնդրիօնն**»[9]: Այդ բերդը գտնվում է Կիլիկիայում, Մարաշից արեւմուտք[10]:

Քաղկեդոնականություն ընդունած այս իշխանին դեռեւս հայ նոր պատմագրության արշալույսին անդրադարձել է Միքայել Չամչյանը, որը 1060-ական թվականների մասին պատմելիս գրում է. «Ի սմին ժամանակի իշխան ոմն Հայոց Շիրակունի Անեցի բնակեալ ի սահմանս Փոքուն Ասիոյ՝ Խաչատուր կամ Խուտատար անուն, վեստ կոչեցեալ…, որ ի գիրս Հայոց Պեխտ կոչի»[11]:

---

[7] Նույն տեղում, էջ 500:

[8] Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն (գրքում զետեղված է Վենետիկի 1862 թ. տպագրության գրաբար տեքստը), աշխարհաբար թարգմանությունը Գ. Բ. Թոսունյանի, Երեւան, 2001, էջ 109:

[9] Նույն տեղում, էջ 110: Մոսկովյան հրատարակության մեջ. «…տուաւ հայր խոստովանութեան նորա Աբէլ հոռոմ՝ ամ մի» (Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ Պատմութիւն Տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 140):

[10] Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից երկրների տեղանունների բառարան, հ. 1, Երեւան, 1986, էջ 260: Կիլիկյան մի ձեռագրի 1332 թ. հիշատակարանում նշվում է, որ այն գրվել է «մերձ յաստուածապահ ամրոցն, որ կոչի Անդրունին բերդ» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 251): Անդրիուն անունը շուրջ երկուսուկես դարի ընթացքում հայկական միջավայրում բնականորեն կարող էր դառնալ Անդրուն: Ավելի ուշ շրջանում թուրքերենի ազդեցությամբ կոչվել է նաեւ Էնդրուն (Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Երեւան, 2008, էջ 49, 50, 55, 62, 80-81, 84, 88, 151, 167):

[11] Մ. Չամչյանց, Հայոց Պատմություն, հ. Բ, Երեւան, 1984, էջ 972, տե՛ս նաեւ Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երեւան, 1944, էջ 468:

Անտիոքի դուքս Խաչատուրին հիշատակում են բյուզանդական հեղինակները, երբ անդրադառնում են 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում պարտություն կրած Ռոմանոս Դ Դիոգենես (1067-1071) կայսեր ոդիսականին, որին այդ պարտությունից եւ սելջուկների ձեռքը գերի ընկնելուց հետո Կոստանդնուպոլսում աթոռանկ հայտարարեցին, եւ գահակալեց Միքայել է Դուկասը (1071-1078): Սելջուկյան սուլթան Ալփասլանից (Ալփ Արսլան) որոշ պայմանների դիմաց ազատ արձակված Դիոգենեսը փորձեց իրեն հավատարիմ մնացած ուժերով գահը գրավել, եւ նրա սակավաթիվ աջակիցներից էր Անտիոքի դուքս Խաչատուրը: Ինչպես հայտնի է, Դիոգենեսը ձախողվեց եւ ողբերգական վախճան ունեցավ: Իսկ Խաչատուրի մասին ասվում է, որ նա գերության մատնվեց:

Անտիոքի դուքս Խաչատուրի եւ հայկական աղբյուրներում հիշված Պեխտի նույնացմանը անդրադարձել է Ժան Լորանը[12]: Նա գրում է, որ Խաչատուրը զարմանալիորեն չի հիշվում հայկական աղբյուրների մեջ, ապա նշում է, որ 1067-ին Անտիոքի դուքսն էր Նիկեփորիցեսը, որին հաջորդել է Նիկեփորոս Վոտանիատեսը, այնուհետեւ՝ Խաչատուրը: Հետազոտողը հիմնական շեշտը դնում է այն փաստի վրա, որ Մատթեոս Ուռհայեցին 1065 թ. Պեխտին համարում է Անտիոքի դուքս, որը հնարավոր չէ, եւ դրանով մերժում այս երկուսի նույնացումը[13]: Ըստ նրա Պեխտը կարող էր ոչ թե Մեծ Անտիոքի, այլ Իսավրիայի Անտիոքի կառավարիչը լինել: Բայց Ժ. Լորանը ավելի հեռուն գնալով, հայ պատմաբաններին մեղադրում է այն բանում, որ նրանք երկու տարբեր գործիչների նույնացմամբ փորձել են «շահագործել Պեխտ=Եպիխտ=Խաչատուրի կեանքն ու

---

[12] J. Laurent, Le duc d'Antioche Khatchatour, Byzantinishe Zeitshrift, Bd. XXX, 1930, Leipzig, p. 405-411, հայերեն թարգմանությունը՝ Յ. Լորան, Խաչատուր իշխան Անտիոքի 1068-1072, «Հանդէս ամսօրեայ», 1930, էջ 303-310:

[13] Յ. Լորան, նշվ. աշխ., էջ 306-308:

քաջութիւնները» եւ դրանով գոհացնել «հայ ազգի եսասիրութիւնը»[14]:

Խնդրին անդրադարձել է Ե. Քասունին՝ փորձելով հակադարձել Ժ. Լորանին: Նա մասնավորապես նշում է, որ 1060-1067 թթ. Անտիոքի դուքս Նիկեփորիցեսը ինչ-որ ժամանակամիջոցում պաշտոնազրկված է եղել եւ գրում. «Պետք է հարցնել, թէ երբ եւ որքա՞ն ժամանակով տեղի ունեցավ Նիկեփորիցեսի պաշտօնազրկութիւնը (եւ ո՞վ է փոխարինել նրան այդ միջոցին)»[15]: Շարունակելով միտքը՝ նա գրում է, որ Ժ. Լորանը նշում է բյուզանդացի հեղինակների խոսքերը Խաչատուրի նախկին խիզախ գործերի մասին, որոնք, սակայն, ոչ մի որոշակի դեպքի մասին չեն պատմում եւ, վկայաբերելով Մ. Ուռհայեցու գրածը 1065 թ. Պեխտի քաջագործության մասին, եզրակացնում է. «Նշենիկի մօտ Պեխտի մղած ճակատամարտը անսակարկելիօրէն իրեն կը շնորհէ «քաջութեան», «մտացիութեան» եւ «պաղարիւնութեան» առաքինութիւնները, նկարագրի գիծեր, զոր Բիւզանդացի պատմիչներ եւ Լօրան կը շնորհեն Խաչատուրի... Ասպարեզին եւ նկարագրի այս նմանութիւնը իրաւունք չե՞ն տար մեզի մտածելու, որ Պեխտ եւ Խաչատուր նոյն անձն է»[16]:

Այս երկու տեսակետների առնչությամբ նկատենք, որ նախ Պեխտի եւ Խաչատուրի նույնացումը որեւէ կապ չունի հայ պատմաբանների «ազգասիրության» հետ, որովհետեւ Խաչատուրին Անտիոքի դուքս եւ ազգությամբ հայ է համարում բյուզանդացի հեղինակ Ատտալիատեսը[17]: Երկրորդ, եթե խոսքը նույն մարդու մասին է, ապա նրան Մատթեոս Ուռհայեցին շուրջ մեկ դար հեռվից ճանա-

---

[14] Նույն տեղում, էջ 309:

[15] Ե. Քասունի, ԺԱ դարու Անտիոքի հայ կառավարիչներ Պեխտ-Խաչատուր եւ Վասակ Պահլավունի, «Հայկազեան հայագիտական հանդէս», 1971, հ. Բ, էջ 125: Հեղինակն ակնարկում է, որ Նիկեփորիցեսի պաշտոնանկության ժամանակ նրան կարող էր փոխարինած լինել Խաչատուրը:

[16] Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 126-127:

[17] Հովհաննես Սկիլիցես, թարգմանություն բնագրից, առաջաբան եւ ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երեւան, 1979, էջ 376:

չում էր որպես Անտիոքի դուքս՝ անկախ այն բանից 1065 թվականին նա ունե՞ր այդ պաշտոնը, թե՞ այն ստացել է մի քանի տարի հետո[18]: Հասկանալի է, որ մինչեւ Անտիոքի դուքս դառնալը Պեխտն անհայտ մեկը չէր. նա բյուզանդական ծառայության մեջ գտնվող զորահրամանատար էր եւ կարող էր իր զորականներով մասնակցել Ուռհայում կատարված դեպքերին:

Հարցին անդրադարձել է նաեւ Հ. Բարթիկյանը Հովհաննես Սկիլիցեսի երկի ու դրա շարունակության հայերեն թարգմանության մեջ՝ Խաչատուրին նվիրված հանգամանալից ծանոթագրությամբ: Վկայակոչելով Ատտալիատեսի հաղորդումը «Խատատուրի» հայ եւ Անտիոքի դուքս լինելու մասին՝ նա գրում է. «Զարմանալին այն է, որ Խաչատուրի մասին հայկական աղբյուրներում չենք հանդիպում որեւէ տեղեկության: Այդ ուսումնասիրողներին դրդել է ենթադրելու, որ Խաչատուրը հայկական աղբյուրներում հանդես է գալիս այլ անվան տակ: Սկսած Չամչյանից ենթադրել են, որ Մատթեոս Ուռհայեցու մոտ 1065 թ. տակ հիշատակված Անտիոքի հայազգի դուքս-կառավարիչ Բեխտը (Մատթ. Ուռհ., էջ 157) հենց Խաչատուրն է: Չամչյանն այդ նույնացումը կատարելով գտնում էր նաեւ, որ Բեխտ անուն չէ, այլ բյուզանդական վեստ պատվաստիճանը: Չամչյանի ենթադրությունը կրկնում են Բրոսսեն (նրան նա անվանում է Vest Khatchatour: Տե՛ս Lebeau, Histoire du Bas-Empire,

[18] Պատմիչը նույնպիսի մոտեցում է ցուցաբերել մեկ այլ հարցում: Գրելով 1033 թ. Անիից Սեւանի վանք՝ Հովհաննես Կոզեռնի մոտ գնացած պատվիրակության մասին, նա մեկնողների թվում նշում է «Գրիգոր Մագիստրոսն որդին Վասակայ» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 76-77), մինչդեռ հայտնի է, որ Վասակի որդի Գրիգոր Պահլավունին մագիստրոսության պատիվ ստացել է ավելի ուշ՝ 1045 թ.: Այսպիսի մոտեցումը բնական է եւ արտառոց չէ անգամ մեր օրերի համար: Օրինակ, եթե մեկն ասի, որ մարշալ Բաղրամյանը Հայրենական մեծ պատերազմի հայտնի զորավարներից էր, դժվար թե նրան ուղղեն՝ ասելով, որ պատերազմն ավարտվել է 1945 թ., իսկ Հովհաննես Բաղրամյանը մարշալի կոչում է ստացել 1955 թվականին (այսինքն պատերազմի ժամանակ մարշալ չէր):

t. XIV, 18334 p. 441…), Ալիշանը (տե՛ս նրա Վարդան Բարձրբերդցու Պատմության 105-րդ ծանոթագրությունը) եւ այլ ուսումնասիրողներ, այդ թվում մեր օրերում նաեւ Ե. Քասունին… Դեռեւս 1929/1930 թթ. Ժ. Լորանն իր մի հոդվածում (տե՛ս նրա Le duc d'Antioche Khatchatour), ապացուցեց այդ նույնացման անհնարինությունը եւ հանգեց այն եզրակացության, որ Բեխտը ոչ թե Մեծ Անտիոքի կառավարիչն էր, այլ հավանաբար Իսավրիայի Անտիոքի»[19]: Իսկ Մատթեոս Ուռհայեցու Ժամանակագրության համապատասխան ծանոթագրության մեջ Հ. Բարթիկյանը նշում է, որ Պեխտին «սխալմամբ նույնացնում են Անտիոքի դուքս Խաչատուրի հետ»[20]:

Այժմ տեսնենք թե ինչ նորություն են բերում վերը նշված ձեռագրերը:

Այստեղ Սամվել Անեցու Ժամանակագրության անանուն շարունակողը քաղկեդոնական հայ իշխանին անդրադառնում է երկու կարճ վկայությամբ: Առաջինը վերաբերում է Մանազկերտի ճակատամարտին նախորդած ռազմական իրադարձությունների մի դրվագի, թեեւ բուն Մանազկերտի ճակատամարտի մասին պատմվում է դրանից առաջ. «ՇԺԹ (1070) Դեաւժենն եկն յարեւելս եւ էառ զՄանծկերտ ի թուրքաց եւ Ալփասլանն պատերազմեալ յաղթեաց նմա եւ կալաւ զնա եւ դարձեալ ազատեաց ուխտադրութեամբ[21]: Ոմանք զկոտորիլն Դիաւժենին ի թու. Հայոց ՇԺԸ (1069) են գրեալ: Եւ ի **ՇԺԹ** (1070) **Գողձախմատն**[22] **աւերեաց զՍեւ լեառն եւ կոտորեաց**

[19] Հովհաննես Սկիլիցես, էջ 376:
[20] Մատթեոս Ուռհայեցի, էջ 500:
[21] Հատվածը թիվ 2965 ձեռագրում ավարտվում է «ուխտադրութեամբ հարկին» բառերով (թերթ 104ա):
[22] Ձեռագրում գրված է «գողձախմատն»: Կարծում ենք՝ օտարահունչ անվան աղավաղված ձեւ է: Հնարավոր է նաեւ, որ մի անուն է, որի սկզբում նշված է «Գող» մականունը, ինչպես որ այս նույն շրջանում հիշվում է հայ իշխան Գող Վասիլը: Իսկ շարունակությունը կարող է լինել Ահմատ անվանը մոտ հնչյունափոխված մի անուն:

զնա Գրիգոր Պիխտն ի դաշտն Հարունոյն ի մամխենուտն»[23]: Սրանից անմիջապես հետո թիվ 2965 ձեռագրում նշվում է Դիոգենես կայսեր գահազրկման, կուրացման եւ մահվան մասին («Յայսմ վայրի ո՛չ հնազանդեալ Դիօժէնին ազգն իւր, այլ թագաւորեցուցին զՄիխայլ որդի Դուկծին: Դարձեալ պատերազմեալ Միխայէլ՝ եհար զԴիօժանն եւ զօրացն քուրծ ագուցեալ նմա ածին առ թագաւորն Միխայէլ եւ ի ճանապարհին փորեալ զաչս նորա կուրացուցին հրամանաւ կայսեր եւ յանհնարին խստութենէ կսկծուոյն մեռաւ ի ՇԻԱ (1072) թուականն»)[24]:

Երկրորդ վկայությունը իշխանի մահվան վերաբերյալ է. «**ՇԻԱ** (1072), **զՊիխտն յԱնդրիուն խեղդեցին ծառայք իւր**»[25]:

Այսպիսով՝ հայկական աղբյուրում առաջին անգամ հանդիպում ենք իշխանի ամբողջական անվանն ու մականվանը՝ **Գրիգոր Պիխտ**[26]: Հատկանշական է, որ այս աղբյուրը երկու հայ պատմիչների մոտ պահպանված տեղեկությունների համեմատ իշխանի մականունն ավելի ճիշտ տառադարձությամբ է մատուցում՝ Պիխտ, քանի որ, ինչպես տեսանք, այն ծագում է հունարեն «էպիխտես» բառից:

---

[23] Մատենադարան, ձեռ. թիվ 1898, թերթ 85ա:

[24] Մատենադարան, ձեռ. թիվ 2965, թերթ 104ա, հմմտ. Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք, էջ 114:

[25] Մատենադարան, ձեռ. թիվ 1898, թերթ 85բ: Հնարավոր է, որ այս տեղեկությունների հեղինակը Հեթում Պատմիչ Կոռիկոսցին է:

[26] Նկատենք, որ Գրիգոր անունն ընդհանրապես միջնադարյան Հայաստանում շատ տարածված էր, եւ այդ անունով գործիչներն առավել հաճախ անվան հետ նաեւ մականունով են հիշատակվում: Խոսքը վերաբերում է ինչպես հոգեւորականներին (կաթողիկոսներ՝ Գրիգոր Վկայասեր, Գրիգոր Տղա, Գրիգոր Ապիրատ, վարդապետներ՝ Գրիգոր Տուտեորդի, Գրիգոր Մանոնիկ, Գրիգոր Խուլ, Գրիգոր Թոքակերի որդի, Գրիգոր որդի Աբասա), այնպես էլ աշխարհականներին (Գրիգոր Համզե, Գրիգոր Սուփան, Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Խուցես եւ այլն): 12-13-րդ դարի հայ պատմիչները 11-րդ դարի մի նշանավոր իշխանի հիշատակում են միայն մականունից ծագող երկրորդ անվամբ՝ Ապիրատ, մինչդեռ իր հիմնած Կեչառիսի վանքի արձանագրության մեջ նա իրեն կոչում է Գրիգոր:

Թվում է, որ նորահայտ աղբյուրը, որտեղ իշխանը կոչվում է Գրիգոր Պիխտ, ամբողջովին համապատասխանում է այն տեսակետին, որը մերժում է նրա եւ Խաչատուրի նույնացումը: Սակայն, մյուս կողմից, այդ նույն վկայության մեջ հիշատակված դեպքերը ժամանակով եւ որոշ մանրամասներով համընկնում են Խաչատուրի մասին հայտնի տվյալներին: Այսպես՝ Հովհաննես Սկիլիցեսի շարունակողը, նկարագրելով 1070 թվականի իրադարձությունները, երբ սելջուկների դեմ պատերազմելու համար Արեւելք էր եկել կայսր Ռոմանոս Դիոգենեսը, հետեւյալ տեղեկությունն է հայտնում. «Կայսրը տագմաներից մի զորամաս Կիլիկիա ուղարկեց՝ միանալու Անտիոքի դուքս Խաչատուրին, մի քաջարի մարդու, որ դեռ անցյալում ցույց էր տվել իր բազում աչքի ընկնող առաքինությունները, հրաման տալով նրան փութանակի Մոպուսեստիայում (Մամեստիա, Մսիս – Կ. Մ.) ընդդիմակայել հակառակորդին, քանզի սպասում էր, որ թուրքերն այնտեղից պետք է անցնեն, այնտեղ սպասել նրանց եւ ամեն գնով ջարդ տալ: Նրանք Սելեւկիայի լեռների վրայով անցնելով, Տարսոնի դաշտում ջարդ կերան, հենց այդտեղ պատահմամբ հայերին հանդիպելով, գրեթե ողջ ավարը կորցրին: Թշնամիները իմանալով հռոմայեցիների Մոպուսեստիայում բանակելու մասին, առանց ժամանակ կորցնելու, ինչքան հնարավոր էր հանգստանալով Վալտոլիվադիում, գիշերով ճանապարհ ընկան եւ անցնելով Սարվանդիկոն լեռը, ինչպես եւ շուտափույթ՝ Հալեպի սահմանները, մի կերպ վտանգից պրծան»[27]:

Ինչպես վերը տեսանք, նույն 1070 թվականի դիմաց մեր ձեռագրերում հավելում կատարողը նշել էր. «Գողձախմատն աւերեաց զՍեւ լեառն եւ կոտորեաց զնա Գրիգոր Պիխտն ի դաշտն Հարունոյն ի մամխենուտն»: Այստեղ կարող է լինել երկու ենթադրություն. կա՛մ Սկիլիցեսի շարունակողի, եւ այս տեղեկությունը վերաբերում է նույն դեպքին, կա՛մ տարբեր դեպքերի:

[27] Հովհաննես Սկիլիցես, էջ 231-232:

Նախ քննենք առաջին տարբերակը: Երկու տեղեկությունների մեջ ընդհանուր է նախ թվականը, երկրորդ՝ գլխավոր իրադարձության՝ ճակատամարտի տեղը. որի դաշտ լինելն ընդգծված է երկուստեք (առաջինում այն «**Տարսոնի դաշտն**» է, երկրորդում՝ «**ի դաշտն Հարունոյն**»): Վերջապես, այս իրադարձության ժամանակ նույնն են բյուզանդական եւ հայկական աղբյուրներում վկայված թշնամիները, մի կողմում՝ ավարառու թուրքերը, մյուսում՝ հաղթող հայերը:

Հարունի, Հարունիե բերդավանը գտնվում է Կիլիկիայում, Սարվանդիքարից հյուսիս, Մարաշից հարավ[28], եւ այստեղ պետք է լինի նաեւ համանուն դաշտը: Հայ հեղինակը, դեպքին լավատեղյակ լինելով, նաեւ կոնկրետացրել է կռվի տեղը՝ «ի մամխենուտն», որ կարծում ենք՝ նշանակում է մամխենի (փշոտ վայրի սալորենի, մամուխ) ծառերով տեղանք (ինչպես, օրինակ, եղեգնուտ): Հատկանշական է, որ Սկիլիցեսի շարունակողի համաձայն, մարտից հետո սելջուկները Հալեպի կողմը նահանջեցին Սարվանդիկոնով, որն ակներեւորեն Սարվանդիքարն է, որտեղից դեպի արեւելք միակ ճանապարհն անցնում է Ամանոսի (Սեւ լեռան) լեռնանցքով:

Հույն պատմիչի խոսքերը, թե թուրքերը ջարդ կերան «հենց այդտեղ պատահմամբ հայերին հանդիպելով», կարծում ենք, կարելի է հասկանալ երկու ձեւով: Առաջին, որ Խաչատուրն իր հայ զորականներով ջարդեց նրանց (դեպքն այսպես է ընկալել Ղ. Ալիշանը)[29], երկրորդ, դա տեղաբնակ հայերի մի ջոկատ էր[30]: Սակայն, ինչպես պարզորոշ երեւում է պատմիչի խոսքերից, այդ շրջանի բո-

---

[28] Հայաստանի ազգային ատլաս, էջ 47, 48, Մարի-Աննա Շեվալիե, Կիլիկյան Հայաստանի եւ հոգեւորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, Երեւան, 2007, էջ 25, 33, 35, 50:

[29] Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 46:

[30] Այդպիսի ենթադրություն է անում Հ. Բարթիկյանը՝ ելնելով Ատտալիատեսի հայտնած մի տեղեկությունից, ըստ որի «Սելեւկիայի լեռնային շրջաններում բնակվող հայերը» հրաման էին ստացել կիրճերում հարձակվելու եւ վնասելու թուրքերին (Հովհաննես Սկիլիցես, էջ 376):

լոր զորքերը ենթարկվում էին հենց Խաչատուրին, որին հույն պատմիչը, ոչ առանց պատճառի, «քաջարի մարդ» է կոչում:

Երկու սկզբնաղբյուրների միջեւ եղած հիմնական անհամաձայնությունն այն է, որ ըստ հայկական տեքստի ավարառուները եկել են Սեւ լեռան կողմից, այսինքն՝ արեւելքից: Սակայն այս տարբերությունը կարող է բացատրվել նրանով, որ հայ հեղինակը կամ նրա աղբյուրը ծավալուն պատմություն չեն շարադրել, այլ մեկ հակիրճ նախադասությամբ արձանագրել են հայկական միջավայրի համար էական երկու փաստ: Առաջինը Սեւ լեռան հայաբնակ շրջանի ավերումն է, որ կարող էին անել Կիլիկիայից դեպի Հալեպի կողմը նահանջող թուրքերը, իսկ մյուսը՝ հայկական միջավայրում տարածված այն տեղեկությունը, որ թուրքերին ջարդել է Գրիգոր Պիխտը: Հնարավոր է, որ այստեղ գործ ունենք երկու փաստի ետեւառաջության հետ:

Ինչ վերաբերում է կռվի տեղին, որն ըստ բյուզանդացի հեղինակի Տարսոնի դաշտն է, ըստ հայ հեղինակի՝ Հարունիի դաշտը, ապա այդ տարբերությունը կարող է առաջանալ տարածքին ավելի կամ պակաս ծանոթ լինելուց: Մասնավորապես Կոստանդնուպոլսում ապրող մարդը կարող էր Կիլիկիայի հիշյալ շրջանի ամենանշանավոր քաղաքի՝ Տարսոնի անունով կոչել այդ դաշտը (դաշտային Կիլիկիան ընդհանրապես), մինչդեռ ավելի մոտ բնակվողը կարող էր տեղն ավելի որոշակի դարձնել[31]:

Այժմ դիտարկենք երկրորդ տարբերակը. Սկիլիցեսի շարունակողի եւ նորահայտ աղբյուրի տեղեկությունները վերաբերում են նույն թվականին կատարված, բայց միանգամայն տարբեր դեպքերի: Բյուզանդացի հեղինակի հայտնածն ընդունում ենք այնպես, ինչպես որ կա, իսկ հայ հեղինակը նշում է, որ 1070 թ. մի ավարա-

[31] Նույն կերպ, օրինակ, Հայաստանին ոչ քաջածանոթ մարդը կարող է ասել, որ 1918 թ. մայիսին հայերը թուրքերին հաղթել են Արարատյան դաշտում, իսկ այստեղ ապրողը գիտի՝ Սարդարապատի դաշտում:: Երկուսն էլ ճիշտ են, միայն երկրորդը տեղն ավելի որոշակի գիտի:

ռու զորք, ոմն «Գողձախմատի» գլխավորությամբ հարձակվում, ավերում է Սեւ լեռան շրջանը, ապա Հարունիի դաշտում (արդեն Կիլիկիայում) նրան ջարդում է Գրիգոր Պիխտը:

Իհարկե կարող էին նման դեպքեր լինել: Բայց այստեղ հարց է առաջանում, թե այդ թվականին ո՞վ էր Կիլիկիայում գտնվող այն հայը, որը ձեռքի տակ համապատասխան զինվորական ուժեր ուներ եւ կարող էր այդպիսի հաղթանակ տանել: Ինչպես վերը տեսանք, Կիլիկիան սելջուկներից պաշտպանելու համար ոչ միայն զորք, այլեւ հատուկ կայսերական հրաման ստացած մարդը հենց Խաչատուրն էր:

Ծանոթանանք բյուզանդացի հեղինակների՝ Խաչատուրի մասին պատմած մյուս տեղեկություններին: Հովհաննես Սկիլիցեսի շարունակողը բավական մանրամասն պատմում է, թե ինչպես 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում պարտված ու գերի ընկած, ապա սուլթանի բարեհաճությամբ ազատ արձակված Դիոգենես կայսրը երբ ուզում է Կոստանդնուպոլիս վերադառնալ, բայց իմանում է, որ այնտեղ արդեն նոր կայսր է հռչակվել, փորձում է կողմնակից ուժեր ժողովել, եւ այդ ժամանակ նրան աջակցություն է ցուցաբերում Խաչատուրը՝ իր մոտ՝ Կիլիկիա տանելով: Նոր կայսրը Անդրոնիկոս զորավարին ուղարկում է Դիոգենեսի դեմ՝ Կիլիկիա, «որտեղ նրան ընդդիմակայում է Խաչատուրը, բայց մի փոքր մարտնչելուց հետո գերվում է Անդրոնիկոսի զինվորների կողմից»[32]: Դրանից հետո այս զորավարին է հանձնվում նաեւ Դիոգենեսը, որին երդումներով հավաստիացնում են, որ նրանից միայն գահից հրաժարվել է պահանջվում: Սակայն հետո դաժանաբար կուրացնում, տանջում եւ կիսամեռ դարձրած աքսորում են մի տեղ, ուր շուտով կնքում է մահկանացուն:

Խաչատուրի գերության մեջ եղած ժամանակին վերաբերող մի դրամատիկ եւ գեղարվեստական տարրեր ունեցող պատմություն է

[32] Հովհաննես Սկիլիցես, էջ 244:

փոխանցում Նիկեփոր Բրիեննիոսը[33], որից երեւում է, որ ի վերջո Անդրոնիկոսը նրան պահում էր «անկալանք կալանքի մեջ»[34]: Դա վերաբերում է 1072 թվականին եւ վերջին տեղեկությունն է Խաչատուրի մասին[35]:

Իսկ հայկական նորահայտ աղբյուրն ասում է, որ Գրիգոր Պիխտն իր ծառաների ձեռքով խեղդամահ արվեց 1072 թվականին Անդրիուն բերդում: Եթե դա նույն Խաչատուրն է, ապա նրա այսօրինակ վախճանը համահունչ է դեպքերի տրամաբանությանը՝ նկատի ունենալով, թե ինչպիսի վախճանի արժանացավ Դիոգենես կայսրը: Դժվար է հավատալ, որ անպատիժ պիտի մնար վերջինիս կողմն անցած եւ անգամ զինված դիմադրություն ցուցաբերած Խաչատուրը: Եթե անգամ նրան ներել են ու որոշ ժամանակ պահել «անկալանք կալանքի մեջ», ապա իշխանությունից, պատիվներից ու հեռանկարից զրկված, թերեւս գերության մեջ առողջությունն էլ կորցրած[36] Խաչատուրին ի վերջո պիտի բաժին հասներ մոտավորապես այնպիսի վախճան, որն ունեցավ Գրիգոր Պիխտը:

---

[33] Ըստ այս հեղինակի Խաչատուրը փախչում է գերությունից, թաքնվում անտառում, սակայն նրան բռնում է մի զինվոր եւ ուզում սպանել: Խաչատուրի խնդրանքին անսալով՝ նա բավարարվում է նրա բոլոր հանդերձները խլելով եւ մերկ բաց թողնելով: Հետո նրան բռնում է մեկ այլ զինվոր, սրան էլ իբր Խաչատուրը խնդրում է իրեն տանել Անդրոնիկոսի մոտ: Վերջինս նրան հագուստ է տալիս եւ ընդունում ինչպես վայել է քաջ զորականին, ինչից զգացված Խաչատուրը նրան ասում է, որ անտառում թաքցրել է մի շատ թանկագին քար եւ դրա տեղն ասելով՝ այն նվիրում է Անդրոնիկոսին: Սա էլ իր հերթին այդ հազվագյուտ քարը նվիրում է թագուհի Մարիային (Հովհաննես Սկիլիցես, էջ 381):

[34] Նույն տեղում:

[35] Տե՛ս G. Dédéyan, Les Arméniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 1-2, Lisabonne, 2003, p. 44-45. Լ. Տեր-Պետրոսյանը 1078 թ. սպանված Անտիոքի դուքս Վասակ Պահլավունու մասին ծանոթագրության մեջ նշում է. «Վասակից առաջ, 1069-1072 թվականներին, Անտիոքն ունեցել է նաեւ մի այլ հայ դուքս՝ Խաչատուր անունով» (Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 419):

[36] Հիշենք Մ. Ուռհայեցու նշումը Պեխտի՝ սպանությունից առաջ հիվանդ լինելու մասին (Մատթեոս Ուռհայեցի, էջ 230):

Առայժմ մենք Խաչատուր եւ Գրիգոր Պիխտ անունները ներկայացնում ենք զուգահեռաբար, որովհետեւ տեսականորեն չի կարելի բացառել, որ եղել են այդպիսի տարբեր մարդիկ: Բայց այդ դեպքում պետք է ընդունել, որ նրանք երկուսն էլ նույն ժամանակ մասնակցել են միեւնույն իրադարձություններին, մասնավորապես 1070 թվականին Կիլիկիայում սելջուկների դեմ մղված կռիվներին: Հովհաննես Սկիլիցեսի շարունակողը Խաչատուրին կոչում է «Անտիոքի դուքս»[37], Մատթեոս Ուռհայեցին էլ Պիխտին անվանում է «տուկ Անտիոքայ քաղաքին»[38]: Այս նույնությունն էլ կարելի է տրոհել կարծելով, որ մի դեպքում խոսքը Մեծ Անտիոքի, մյուսում՝ Իսավրիայի Անտիոքի մասին է: Բայց այդ դեպքում էլ պիտի ընդունել, որ մոտավորապես նույն ժամանակաշրջանում երկու Անտիոքն էլ հայազգի կառավարիչ են ունեցել, ընդ որում երկուսն էլ դուքսի հանգամանքով:

Այս ամենը քիչ հավանական է: Մյուս կողմից, մի շարք տվյալներ հուշում են, որ նկարագրված բոլոր դեպքերը մեկ հերոս ունեն, եւ դա Շիրակից Կիլիկիայի սահմանները գաղթած ու քաղկեդոնականություն ընդունած միեւնույն հայ իշխանն է: «Բեխդն… կնքեցաւ հոռոմ»[39] գրված է Վարդան Արեւելցու հին օրինակներից մեկում: Մատթեոս Ուռհայեցին էլ նշում է, թե «թագաւորն Յունաց բռնադատեաց զնա եւ արկեալ կնքեաց զնա Հոռոմ հաւատն»[40]: Արդյոք այս դավանափոխության ժամանակ նա չի՞ ստացել իր երկրորդ անունը՝ «Խատատուրիոս», ինչպես հիշատակվում է բյուզանդական աղբյուրներում:

Դավանությունը փոխելիս (կրկնամկրտությամբ) անունը փոխելու փաստ է արձանագրված 11-րդ դարի «Վարք Հովհանի եւ էփթիմի» երկում. «Դարձյալ եկավ Գյուրպելը՝ Ջոջիկի գանձապահների

---

[37] Հովհաննես Սկիլիցես, էջ 231:
[38] Մատթեոս Ուռհայեցի, էջ 170:
[39] Վարդան Արեւելցի, էջ 109, հմմտ. «…կնքեցաւ ի Հոռոմ» (Մեծին Վարդանայ Բարձրաբերդցւոյ…, էջ 140):
[40] Մատթեոս Ուռհայեցի, էջ 230:

ավագը, եւ մկրտվեց, քանզի հայ էր, եւ Արսեն կոչեցին» (Ի. Ձավախիշվիլու հրատ., Թբիլիսի, 1946, էջ 41)[41]: Հիշենք նաեւ բյուզանդական եւ հայկական աղբյուրներում բազմիցս Փիլարտոս կամ Ֆիլարետոս անունով հայտնի նույն այս ժամանակաշրջանի հայտնի գործիչ, քաղկեդոնականություն ընդունած Վարաժնունի իշխանին, որի վաղ շրջանի արծաթե կնիքի վրա նշված է նրա հայկական անունը՝ Վահրամ[42]:

Արդյոք քաղկեդոնականություն ընդունելն ու կրկնամկրտությամբ նոր անուն ստացած լինելը չէ՞ պատճառը, որ դավանանքի հարցում նախանձախնդիր մեր պատմիչները հրաժարվում են Խատտուրիոս-Խաչատուրի անունը տալուց[43], այլ միայն պաշտոնից ածանցված մականունն են հիշում: Հատկանշական է, որ ե՛ւ Մատթեոս Ուռհայեցին, ե՛ւ Վարդան Արեւելցին, այս քաջ եւ առաքինի իշխանին հիշատակելով, հիմնականում պատմում են հույների՝ նրան արած վատությունների, դավաճանության եւ վերջապես՝ սպանության մասին, այն էլ խոստովանահայր կրոնավորի ձեռքով: Ենթատեքստը հասկանալի է. քաղկեդոնական դառնալով եւ հույներին ծառայելով՝ նրանցից երախտագիտություն չես գտնի, այլ դառնություն ու մահ:

Իսկ ահա նորահայտ վկայության անանուն հեղինակն իր առջեւ նման «քարոզչական» խնդիր չի ունեցել, այդ պատճառով հիշատակում է իշխանի իրական անունը՝ Գրիգոր Պիխտ, ոչ էլ նրա մահվան դեպքում առաջնային է դարձնում քաղկեդոնական կրոնավորի պարագան: Տեղին է հիշել, որ հայտնի բյուզանդագետ Ն. Յորգան,

---

41 Այս տեղեկությունը մեզ տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պարույր Մուրադյանին (հեղ.):

42 V. Laurent, Les sceaux Byzantins du Médaillier Vatican, Citta del Vaticano, 1962, p. 117, N 2.

43 Ըստ Ե. Քասունու՝ հայ պատմիչների՝ իշխանի անունը չտալու «պատճառը պէտք է փնտռել անոր յունադաւանութիւնը ընդունած ըլլալուն մէջ» (Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 127):

հղելով մեկ այլ հետազոտություն, գրում է, որ Խաչատուրը սպանվել է բյուզանդական մի գործակալի ձեռքով 1072 թ.[44]: Սա զարմանալի ճշտությամբ համընկնում է հայկական աղբյուրում նշված Գրիգոր Պիխտի սպանության թվականի հետ: Ինչպես վերեւում տեսանք, «գործուղված» մարդասպանի (կայսեր կողմից ուղարկված խոստովանահոր) պարագան շեշտում են նաեւ հայ պատմիչները: Մեծ հաշվով այս տեղեկությունը հակասության մեջ չէ նոր աղբյուրի հետ, քանի որ մարդասպանն իր սեւ գործը չէր արել Անդրիուն հասնելուն պես, այլ նախ դարձել էր իշխանի վստահությունը շահած ծառաներից մեկը:

Հետաքրքիր է, որ նույն 1072 թ. Միքայել է Դուկաս կայսրը Ապլղարիպ Արծրունուն նշանակել է Կիլիկիայի ստրատեգոս[45]: Ըստ երեւույթին այս ժամանակաշրջանում հայկական տարրի, նաեւ զինվորականության ներկայությունը Կիլիկիայում այնքան զգալի էր, որ երկրամասն ամբողջովին վերահսկելու համար կայսերն անհրաժեշտ էր տեղում հայազգի վստահելի պաշտոնյա ունենալ: Եթե 1070 թ. Ռոմանոս Դիոգենեսը տեղի զորահրամանատարությունը հանձնել էր Խաչատուրին, ապա 1072-ին Միքայել Դուկասը, փաստորեն, նրան փոխարինել էր իրեն հավատարիմ մարդով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ հայկական աղբյուրներում նշված Գրիգոր Պիխտը եւ բյուզանդացի հեղինակների հիշատակած Խատատուրիոս-Խաչատուրը հանդես են գալիս բազմաթիվ ընդհանրություններով: Երկուսն էլ հայ են, քաղկեդոնական, զինվորական, ապրել են նույն ժամանակաշրջանում ու տարածքում, երկուսն էլ հիշվում են որպես Անտիոքի դուքս,

---

[44] N. Jorga, Geschichte des Osmanischen Reiches, Gotha, 1908, S. 68 (Տե՛ս http://www.archive.org/details/geschichtedesosm01iorguoft): Ն. Յորգան հղում է՝ Gfrürer, Byzantinische Geschichen III, S. 841-842: Ցավոք, այս հրատարակությունը կամ դրա տեքստը համացանցում չհաջողվեց գտնել:

[45] Արդյունքում նա «տիրում էր Տարսոն, Մսիս, Ադանա քաղաքներին, ինչպես նաեւ Լամբրոն եւ Պապեռոն բերդերին» (Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 416):

նկատելի է նաեւ երկուսի «նկարագրի նմանութիւնը»[46] (քաջություն, ազնվություն, հավատարմություն կայսերը):

Նորահայտ աղբյուրը հայտնում է, որ 1070 թ. Գրիգոր Պիխտը Հարունիի դաշտում ջարդել է ավարառու թուրքերին, մի տեղեկություն, որը զուգադրվում է Հովհաննես Սկլիցեսի շարունակողի՝ Խաչատուրի մասին պատմածի հետ, որին Ռոմանոս Դիոգենես կայսրը նույն թվականին հանձնել էր Կիլիկիայում գտնվող բյուզանդական զորքի հրամանատարությունը: Նոր բնագրում Գրիգոր Պիխտի մղած կռվի մասին տեղեկությունը զետեղված է Ռոմանոս Դիոգենես կայսեր 1070-1071 թթ. գործունեությանը վերաբերող երկու հատվածների միջեւ, որը հուշում է, թե խոսքն այս շրջանում կայսեր հետ առնչություն ունեցած մարդու մասին է:

Նույն աղբյուրում Գրիգոր Պիխտի մահվան թվականը՝ 1072, համընկնում է բյուզանդական աղբյուրներում Խաչատուրի անվան վերջին հիշատակության կամ նրա մահվան մասին եղած տեղեկությունների հետ: Միանման են մահվան (սպանության) հանգամանքները: Այս ամենը թույլ է տալիս եզրակացնելու, որ Անտիոքի դուքս Խաչատուրը նույն Գրիգոր Պիխտն է:

Պատմիչ Արիստակես Լաստիվերցին 11-րդ դարի 70-ական թվականներին գրած իր պատմության մեջ հայտնում է, որ Բագրատունյաց թագավորության անկման (1045 թ.) հետեւանքով Անի-Շիրակի հայ արհեստավարժ զինվորականությունը հայրենազուրկ ու թափառական էր դարձել. «Հեծելազօրն անտերունչ շրջեալ ոմն ի Պարսս, ոմն ի Յոյնս, ոմն ի Վիրս: Սեպուհ գունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճոխութենէ, մռնչեն ուր եւ են իբրեւ զկորիւնս առիւծուց…»[47]: Գրիգորն ամենայն հավանականությամբ հենց այս ժամանակ Շիրակից հեռացած հայ ազատներից էր, կամ

[46] Ե. Քասունի, նշվ. աշխ., էջ 126-127:
[47] Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցւոյ, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963, էջ 60:

ինչպես Մատթեոս Ուռհայեցին է գրում «իշխանն Հայոց… ի Տանէն Շիրակայ», որն իր զորականներով ծառայության էր անցել բյուզանդացիների մոտ: Եթե ենթադրենք, որ Շիրակից հեռանալիս նա մոտավորապես 30 տարեկան էր, ապա մահվան ժամանակ 60-ին չհասած տղամարդ պիտի լիներ: Ըստ այդմ, նա ներկայացուցիչն էր մի սերնդի, որն ականատես էր եղել Անիի ողբերգական անցքերին, հայկական պետականության անկմանը, եւ որը, թեեւ համակերպվել էր նոր իրավիճակին, սակայն վիրավորված արժանապատվությամբ[48]:

Բյուզանդիայում Գրիգորը հայտնվել է դժվարին երկընտրանքի առաջ, որը հայադավանությունից հրաժարվելն ու կրկնամկրտությունն էր: Հետաքրքիր է, որ ե՛ւ Մատթեոս Ուռհայեցին, ե՛ւ Վարդան Արեւելցին նշում են, թե իշխանը քաղկեդոնականությունը միայն առերես էր ընդունել. «բայց նա ի ծածուկ զհայրենի հաւատն իւր պաշտէր զսրբոյն Գրիգորի»[49], «ո՛չ պահէր զօրէնս Հոռոմոց»[50]: Դժվար է համոզված լինել, որ սա ամբողջովին համապատասխանում է իրականությանը, սակայն հնարավոր է, որ այդ պնդումներն առաջացել են Գրիգորի՝ ազգային-կրոնական պատվախնդրության մի ինչ-որ դրսեւորումից, եւ գուցե հենց այս հարթության մեջ պետք է որոնել քաղկեդոնական դառնալու ժամանակ նրա ընդունած Խատատուրիոս անվան ծագումը: Ինչպես տեսանք վերը նշված օրինակներում, կրկնամկրտված երկու հայերը ստացել են հույների համար միանգամայն հասկանալի Արսեն եւ Ֆիլարետոս անունները, իսկ Գրիգորը կոչվել է Խատատուրիոս, որը Խաչատուրն է՝ հու-

[48] Այսպիսի հոգեւիճակի դրսեւորման հատկանշական օրինակ է Անիի վերջին թագավոր, գահազուրկ Գագիկ Բ-ի ճակատագիրը Բյուզանդիայում, որտեղ նա թեեւ կալվածքներ էր ստացել, բայց ազգային եւ դավանական հողի վրա մշտապես բախվում էր հույների հետ, որն էլ նրա սպանության պատճառը դարձավ 1079 թ.: Հետաքրքրական է նաեւ Գորգ Շիրակացու վրեժխնդրության դեպքը, որի մասին պատմում է Ուռհայեցին (Մատթեոս Ուռհայեցի, էջ 194-199, 234-237, 242-243):

[49] Մատթեոս Ուռհայեցի, էջ 230:

[50] Վարդան Արեւելցի, էջ 109:

նարեն արտաբերմամբ: Այսօր դժվար է ստույգ ասել, թե ինչ հանգամանքներում եւ ինչու է հատկապես այդ անունն ընտրվել, սակայն շատ հնարավոր է, որ դա եղել է հենց Գրիգորի խնդրանքցանկությամբ: Հայավանդ այդ անունը, ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում, պիտի վկայեր այն կրողի հայ-քրիստոնյա լինելու մասին, եթե անգամ պատմությունը նրա վերաբերյալ չպահպաներ ուրիշ ոչինչ՝ անունից բացի:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՆԻՈՒՄ

Հայ միջնադարի ամենանշանավոր գործիչներից էր Հովհաննես Սարկավագը՝ բանիբուն վարդապետ, աստվածաբան, փիլիսոփա, մատենագիր, տոմարագետ, մանկավարժ, երաժշտագետ, բանաստեղծ: Սկզբնաղբյուրները նրան ծագումով համարում են Փառիսոս գավառից, քահանայական տոհմից: Վաղ հասակից ուսանել է Հաղբատի վանքում, իր քեռու մոտ, ապա աշակերտել Գեորգ Ուռճացի նշանավոր վարդապետին[1]:

Հովհաննես Սարկավագի բազմարդյուն կյանքը կապված է եղել երկու կենտրոնների հետ՝ Հաղբատի վանք եւ Անի քաղաք: Հաղբատում ուսում է առել, հմտացել գիտության մեջ, այնուհետեւ եկել է Անի, գլխավորել տեղի վարդապետարանը, գրել իր երկերի մի մասը, որոնք անհրաժեշտ էին ուսումնական գործընթացի համար: Եղել է ժամանակի ամենահեղինակավոր վարդապետներից մեկը, հանրագիտակ անհատ: Վարքագիրը նրա մասին ասում է՝ «Յամենայն դէմս բանի եւ գործոյ, տեսութեան եւ յառաջբերութեան, գրելոյ եւ ընթեռնլոյ, պատմագրութեան եւ վարդապետական վերլուծութեան, մարգարէականին եւ առաքելականին այնպէս կատարելագոյն գտաւ, որպէս եւ ո՛չ ոք ի մինն միայն համբաւեալ...»[2]: Նրա մասին մեծարանքով են խոսում պատմիչներ Սամվել Անեցին, Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին եւ

---

[1] Հովհաննես Սարկավագի վարքում նշված «Ուռճացի» վարդապետին իրավացիորեն Գեորգ Ուռճացու հետ է նույնացնում Կ. Մելիք-Օհանջանյանը: Մատթեոս Ուռհայեցին եւ Վարդան Արեւելցին Գեորգ Ուռճացուն կոչում են «վարդապետ Հայոց», «լուսաւորիչ Տանս Հայոց»: Ապրել է շուրջ 100 տարի, մահացել 1091 կամ 1093 թ. եւ թաղվել Կամրջաձորի վանքում: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ Զ:

[2] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 120

ուրիշներ: Կյանքի վերջում Հովհաննես Սարկավագը կրկին վերադարձել է Հաղբատ, մահացել ծեր հասակում 1129 թվականին: Հաղբատում պահպանվել է նրա տապանաքարը:

Հովհաննես Սարկավագը մատենագրական հսկայական ժառանգություն է թողել, որը դեռեւս ամբողջովին չի ուսումնասիրվել: 1956 թ. Ա. Աբրահամյանը հրատարակել է «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» ժողովածուն, ուր տեղ են գտել Սարկավագի պատմագիտական, մաթեմատիկական, տոմարագիտական, փիլիսոփայական եւ գրական որոշ երկեր, զանց են առնված «կրոնական հայտնի եւ անհայտ գործերը»[3], որոնք պիտի հրատարակվեին առանձին գրքով, բայց չհրատարակվեցին:

Սարկավագի կյանքի ու աշխատությունների մասին (ըստ գործունեության եւ գիտական ուղղությունների) բազմաթիվ հրապարակումներ են եղել[4]: Ստորեւ մեր նպատակն է պահպանված վկայությունների եւ հարակից տեղեկությունների ուսումնասիրությամբ

---

[3] Նույն տեղում, էջ 350:

[4] Ղ. Ալիշան, Սարկաւագ սոփեստես, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Բ., Վենետիկ, էջ 279-307, Հ. Ոսկեան, Յովհաննէս Սարկաւագի կեանքը, գրութիւնները, «Հանդես ամսօրեայ», 1925, էջ 27-40, 117-125, 233-248, Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, էջ 571-572, Ա. Մովսիսյան, Ուրվագծեր հայ դպրոցի եւ մանկավարժության պատմության, Երեւան, 1958, էջ 240-250, Մ. Աբեղյան, Երկեր, հ. Դ, Երեւան, 1970, էջ 63-82, 444-450, Ն. Թահմիզյան, Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրը եւ հայ միջնադարեան երաժշտական մշակոյթը, «Բազմավէպ», 1978, 3-4, էջ 328-356, Հ. Քյոսեյան, Հովհաննես Սարկավագի «Վասն պատկերաց» եւ «Վասն մասանց պատուոյ» աշխատությունները, Պատմա-բանասիրական հանդես, 1979, 4, էջ 127-134, Կ. Միրումյան, Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երեւան, 1984, Աս. Մնացականյան, Հովհաննես Սարկավագի «Բան իմաստության» պոեմը եւ նրա գնահատությունն ըստ օգտագործված աղբյուրների, «Բանբեր Մատենադարանի», 14, 1984, էջ 9-42, Գ. Բրուտյան, Օրացույց հայոց, Ս. էջմիածին, 1997, էջ 115-145, Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երեւան, 1999, էջ 230-266, Մ. քհ. Արամյան, Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն» ժողովածուն, «Գանձասար», Ձ, 1996, էջ 44-78, Տ. քհ. Ուզունեան, Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, «Գանձասար», Ձ, 1996, էջ 298-339 եւ այլն:

ներկայացնել Հովհաննես Սարկավագի անհիական շրջանի գործունեությունը, այդ առնչությամբ անդրադառնալով նաեւ նրա **պատմական** բնույթի աշխատություններին:

Անհիում Հովհաննես Սարկավագի գործունեության մասին վկայվում է վարդապետի կենսագրության մեջ, ուր բազմաթիվ արժեքավոր տեղեկություններ կան նրա գլխավորած դպրոցի ուսումնական ծրագրի, կրթական գործընթացի մասին: Դպրոցի ստեղծումը կենսագիրը ներկայացնում է պատկերավոր արտահայտությամբ, գրելով, որ Սարկավագը «**իբրեւ զիմաստուն մեղու, բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց, եւ հոտոց եւ համոց, բերէր ի քաղաք իւր եւ տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի եւ լի առնէր ըզտունն ի փարթամութենէ անտի**… Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զիւրեաւ՝ խոնարհաբար եւ ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին եւ զխորին իրս… Եւ գետք յորվայնէ նորա բղխեալ՝ արբուցին զտուն տէրունական եւ զնորատունկ մանկունս յարկաց Աստուծոյ… ելին յարմատոյ եւ ի շառաւիղէ նորին… ուսուցիչք եւ լուսաւորք ոգւով… եւ լցին զտիեզերս բանիւն կենաց…»[5]:

Հովհաննես Սարկավագի գլխավորած դպրոցին անդրադարձող ուսումնասիրողները, որպես կանոն, չեն խորացել դրա հիմնադրման հանգամանքների մեջ, որի պատճառով անտեսվել է այդ շրջանում Անհիում կաթողիկոսական աթոռի վերահաստատման հանգամանքը: Ենթադրվել է, թե Սարկավագը քաղաքում մի մասնավոր դպրոց է ստեղծել, իսկ ոմանք էլ այն պարզապես աշխարհիկ դպրոց են համարել: Ա. Աբրահամյանը գրում է. «Հովհաննեսը Հաղբատում կրթություն ստանալուց հետո եկել է Անի եւ այնտեղ դպրոց հիմնել»[6]: Ըստ Կ. Միրումյանի՝ Սարկավագը եղել է «Անիի դպրոցի (գուցե Անիի դպրոցներից մեկի) ղեկավար», որը ձեռք է բերել «աշ-

---

[5] Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 120-121: Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են, Կ.Մ.:

[6] Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 25:

խարհիկ բնույթ»[7]: Թ. Հակոբյանի կարծիքով Սարկավագի գլխավորած դպրոցն «իր բնույթով հիմնականում աշխարհիկ էր, իմաստասիրական»[8]: Իսկ Ա. Մովսիսյանը կարծես մոռանում է դպրոցի գոյության ժամանակը եւ գրում. «Անիի դպրոցը միանգամայն աշխարհիկ պահանջներին համապատասխան էր կառուցված եւ ամբողջովին գտնվում էր արքունիքի հովանավորության ներքո»[9]: Մինչդեռ Հովհաննես Սարկավագի ապրած ժամանակներում մահմեդական Շադդադյան ամիրաների իշխանության տակ գտնվող Անիում համահայկական նշանակություն ունեցող բարձրագույն դպրոց կարող էր բացվել միայն եկեղեցական բարձր հովանավորության պայմաններում: Ինչ վերաբերում է դպրոցի ուղղվածությանը, ապա այն տալիս էր հոգեւոր բարձրագույն կրթություն, որը ներառում էր ժամանակի գիտության բոլոր հիմնական ուղղությունները:

11-րդ դարի վերջերին Անիում կարճ ժամանակով վերականգնվեց կաթողիկոսական աթոռը, երբ Գրիգոր Վկայասերի (1066-1105) համաձայնությամբ Հաղբատում կաթողիկոս ձեռնադրվեց ու հանդիսավոր երթով Անի եկավ Բարսեղ Ա Անեցին (1081-1113): Նրա կատարած կարեւոր գործերից մեկը պիտի համարել Անիում կաթողիկոսարանի վարդապետարանի վերաբացումը: Դեռեւս 10-րդ դարի կեսերի կաթողիկոսանիստ Արգինայից սկզբնավորվող, ապա Անի մայրաքաղաքում գործող բարձրագույն հոգեւոր դպրոցն էր, որ կրկին կյանք առավ Բարսեղ Ա-ի հոգածությամբ եւ ժամանակի նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագի ուսուցչապետությամբ: Այս էր պատճառը, որ բարձրագույն կրթություն ստանալու համար Սարկավագի մոտ էին գալիս Հայոց երկրի տարբեր ծայրերից, վարքագրի բնորոշմամբ՝ որպես «իմաստութեան գանձուց վաճառականք», Անիում ուսանելով դառնում «ուսուցիչք եւ լուսա-

[7] Կ. Միրումյան, նշվ. աշխ, էջ 29:
[8] Թ. Հակոբյան, Անիի պատմություն, գիրք Բ, Երեւան, 1982, էջ 114:
[9] Ա. Մովսիսյան, նշվ. գշխ., էջ 243:

ւորք ոգւով», եւ վերադառնալով իրենց գավառները՝ վարդապետի պատգամները տարածում ողջ Հայաստանում՝ «...**նորայն առասա-ցութիւնք լցին զոլորտս Հայաստանեայց**»[10]:

Կենսագրի վկայության այս նույն ոճով է արձանագրվում նաեւ Հովհաննես Սարկավագի ընդօրինակած, խմբագրած Սաղմոսարանի տարածումը՝ «զոր վերահասու եղեալ մեծ իմաստասէրն Հայոց հոգեխառն վարդապետն սուրբ Յովհաննէս մականուն Սարկաւագ, որ... գտեալ... թարգմանչագիր Սաղմոսարանն եւ պարապեալ ի յայնմ յաւուրս բազումս, ի լոյս էած... եւ ցրուեաց **ընդամենայն սահ-մանս Հայաստանեայց**»[11]:

Այն, որ Հովհաննես Սարկավագը զբաղվել է ոչ միայն տեղային (Հաղբատ, Անի), այլեւ համահայաստանյան խնդիրներով, երեւում է տոմարական բարեփոխման ուղղությամբ նրա կատարած աշխա-տանքից: Հայոց տոմարի նախընթաց պատմությունը ցույց է տա-լիս, որ տոմարական խնդիրները, որոնք եկեղեցական տոների կարգավորման տեսանկյունից առաջնային նշանակություն ունեին, միշտ էլ լուծվել են Հայոց կաթողիկոսի եւ ժամանակի նշանավոր վարդապետներից մեկի համագործակցությամբ: 6-րդ դարում նման գործակցության մեջ էին Մովսես Բ Եղիվարդեցին եւ Աթանաս Տա-րոնացին, 7-րդ դարում՝ կաթողիկոս Անաստաս Ակոռեցին եւ Անա-նիա Շիրակացին, ուստի 11-րդ դարում էլ Հովհաննես Սարկավագ վարդապետի կողքին պետք է տեսնել Բարսեղ Ա Անեցուն: Իրավա-ցի է Մ. Օրմանյանը, երբ գրում է. «...անհնար է, որ Բարսեղ որեւէ գործակցութիւն ունեցած չըլլայ»[12]: Նույն կարծիքն է հայտնել Մ. Ա-

---

[10] Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 120: Անիի դպրոցում դասավանդվող ա-ռարկաների, ուսումնական գործընթացի եւ այլ հարցերի մասին նշվում է վարդապետի վարքում, որի հեղինակը այդ մասին տեղեկացել է Սարկավագին ծանոթ անձանցից: Այս հարցերի մասին ավելի հան-գամանորեն տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 26-27, 120-121, Ա. Մովսիսյան, նշվ. նշխ., էջ 410-420:

[11] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրու-թյամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988,, էջ 157:

[12] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 1309:

բեղյանը՝ գրելով. «Թեեւ մեր ժամանակագիրները չեն հիշում, բայց անպայման անհրաժեշտ պիտի լիներ իշխանության հաճություն այդ գործի համար, եւ հավանորեն այն եղել է Անիում նստող Բարսեղ եպիսկոպոսի կողմից, որ 1081 թ. Հաղբատի վանքում ձեռնադրվել է կաթողիկոս: Հավանորեն այս թվականին էլ հանձնարարվել է Սարկավագին գլուխ բերել այդ գործը»[13]:

Պատմիչները Հովհաննես Սարկավագի կատարածի մասին գրում են համառոտ՝ «զհաստատ եւ զանշարժ տոմարն կարգեաց հայոց փոխանակ շարժականին եւ անհաստատնոյն. արար եւ միաբանութիւն ամենայն ազգաց տոմարի ընդ Հայոց. վասն զի յոյժ իմաստուն էր այրն...»[14]: Սարկավագի՝ տոմարական խնդիրներին վերաբերող մի քանի աշխատություն է պահպանվել, որոնք հանգամանորեն ուսումնասիրվել եւ պատկերացում են տալիս վարդապետի կատարած ծավալուն աշխատանքի մասին[15]:

Հովհաննես Սարկավագը կազմել է հայոց օրացույցի երկրորդ 532-ամյա (ՇԼԲ) շրջանի աղյուսակը 1085-1616 թվականների համար (Հայոց Փոքր թվական): Տոմարական խնդիրների մեկնություն պարունակող նրա «Պատճեն տումարի» երկը գրվել է 1094 թ.[16]: Պահպանվել են նաեւ Սարկավագի տոմարագիտական մի շարք այլ գրություններ, որոնք երբեմն նրան ուղղված հարցերի պատասխաններ են[17]:

---

[13] Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 449:

[14] Կիրակոս Գանձակեցի, էջ 113, Մխիթարայ Այրիվանեցւո Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 60:

[15] Գ. Բրուտյան, նշվ. աշխ., էջ 115-145, Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 230-266

[16] Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 231-232, 265-266:

[17] Դրանցից մի քանիսի խորագրերն են՝ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ», Յովհաննու վարդապետի արարեալ մեկնութիւն... յաղագս Շ.եկին», «Յաղագս ըստ Հռոմոց ամսոց եւ Դժ.երորդ լուսնոյ Զատկաց եւ փոփոխման իրաց եւ անուանց եւ յարակայից», «Յոհաննու քահանայի յաղագս եղանակաց եւ տաւնից եւ քանիաւնութեան ամաց...», «Յաղագս յարակայից, գերադրաց եւ որպէից», «Յաղագս ամսոց Հայոց եւ տաւնից», «Վասն շարժման եւ սասանութեան երկրի», Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 222, 237, 246, 252, 256, 280, 302:

Տոմարի խնդիրներին վերաբերող աշխատանքը Հովհաննես Սարկավագը շարունակել է հետագա երկու տասնամյակներին, բարեփոխել է Անանիա Շիրակացու «խառնախորանը»՝ այնտեղ ավելացնելով Սարկավագադիր հայկական օրացույցը եւ այլն: Սակայն Սարկավագի բարեփոխումները միայն մասնակի կիրառություն գտան, «Հայոց հետագա պատմիչներն ու հիշատակագիրներն սկսեցին կիրառել Սարկավագադիր թվականը կամ զուգահեռ դնել այլ թվականության համակարգերին, իհարկե ոչ այն չափով ինչ որ հայոց մեծ թվականն էր, որը շարունակեց իր ընթացքը»[18]: Պատճառը թերեւս այն էր, որ այդ շրջանում եկեղեցական բարձրագույն իշխանությունը շատ ավելի բարդ խնդիրների առաջ էր կանգնած, եւ տոմարական մեծ բարեփոխում իրականացնելը դյուրին չէր[19]:

Այսպիսով Հովհաննես Սարկավագն Անիում զբաղվում էր մանկավարժությամբ, նաեւ տոմարական հարցերով եւ իր սաներին էլ այս ուղղությամբ անհրաժեշտ գիտելիքներ տալիս, որի մասին նշվում է նրա վարքում. «...կրթէր, արկանէր ի գիրս նուրբս եւ դժուարալուրս..., Յետ այսորիկ ի խոյզ եւ ի քնին ընթացից լուսաւորացդ մտեալ, տայր գումարել ի միատեսակ եւ յանստերիւր թիւս տոմարի, զուշ եւ զակն ոգւոց: Եւ տեղեակ առնէր տօնից կարգաւորաց եւ փոփոխման ամսոց եւ ամանակաց եւ եղանակաց...»[20]: Այս գիտելիքները լավագույնս կիրառեց նրա սաներից մեկը, հետագա-

---

[18] Ռ. Վարդանյան, նշվ. աշխ., էջ 266:

[19] Մ. Օրմանյանը տոմարի կիրառության առնչությամբ գրում է՝ «...գուցէ գործը Վկայասէին ներկայացուցին, իսկ նա պաշտօնական հրամանը զանց ըրաւ...» (Մ. Օրմանյան, նշվ. աշխ., էջ 1530): Գրիգոր Վկայասերի թույլ վարչարարության եւ այլ պատճառներով 1070-90-ական թվականներին առաջացել էին մի քանի հակաթոռ կաթողիկոսություններ: Վկայասերն անգամ կայուն աթոռանիստ չուներ եւ որոշ իմաստով կաթողիկոսական լիազորությունները հանձնել էր Բարսեղ Ա Անեցուն: Վերջինս հնազանդեցրեց կամ վերացրեց հակաթոռ կաթողիկոսությունները: 1105 թ. մահամերձ Վկայասերի կանչով Բարսեղը գնաց Քեսունի հայկական իշխանություն: Գրիգոր Վկայասերի մահից հետո նա մինչեւ կյանքի վերջը (1113 թ.) այլեւս Անի չվերադարձավ:

[20] Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 121:

յում Անիի Մայր տաճարի երեց դարձած Սամվել Անեցին, որը Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի սկզբունքով կազմեց Ադամից մինչեւ իր օրերը հասնող ժամանակագրություն, նաեւ գրեց տոմարագիտական աշխատություն՝ «Մեկնութիւն տումարի»[21]: Սարկավագի Անիի աշակերտներից պատմության մեջ հիշվում են նաեւ Երեմիա Անձրեւիկ եւ Սարգիս Կունդ վարդապետները, անեցիներ Խաչատուրը, Գրիգորը, Հովհաննեսը[22]: Բոլորովին վերջերս հայտնի դարձավ, որ Հովհաննես Սարկավագի կրտսերագույն աշակերտներից է եղել նաեւ Հառիճի վանք երկրորդ զարթոնքը նախաձեռնող, Մխիթար Անեցու Պատմության պատվիրատու Գրիգոր Հառիճեցին, որին ժամանակակիցները կոչել են «ուսուցիչ եւ աւրինակ բարեաց ամենեցուն»[23]:

Անիում Հովհաննես Սարկավագն առաջին հերթին պատրաստել է գրքեր, որոնք անհրաժեշտ էին ուսումնական գործի համար: Ինչպես կենսագիրն է նշում՝ «ամենայն նսեմացեալ եւ խամրացեալ գիտութիւնք, որ ի տգիտութենէ... ծածկեալ աղաւաղեցան, որ ի նախնեացն, սորին աշխատաջան երկովք եւ արագութեամբ մտաց զարդարեցան եւ ցնծացան անձինք տեսասէր եւ լսասէր արանց»[24]:

Անցյալի գիտամշակութային ժառանգության վերհանումը կարեւորում էր դեռեւս Գրիգոր Մագիստրոսը, երբ Անիում նստող Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսին գրած թղթերում հորդորում էր ուսումնական գործընթացում կիրառել Անանիա Շիրակացու Քննիկոնը, որը գտնվում էր կաթողիկոսարանում: Ընդհանրապես Անիի կաթողիկոսարանում, արքունիքում, եկեղեցիներում բազմաթիվ արժե-

---

[21] Ա. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական եւ տիեզերագիտական աշխատությունները, «Էջմիածին», 1952, Ա, էջ 30-36:

[22] Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, աշխատասիրությամբ Ա. Տեր-Միքելյանի, Վաղարշապատ, 1893, էջ 128 (այսուհետեւ՝ Անեցի):

[23] Յ. Քիւրտեան, Հոռիճոյ վանքի արձանագրութիւնները, «Բազմավէպ», 1957, 11-12, էջ 268, Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Հառիճեցու նորայայտ թուղթը, «Հանդէս ամսօրեայ», 2009, էջ 171-178:

[24] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 120:

քավոր մատյաններ էին պահվում[25], պակաս հարուստ չէր նաեւ Հաղբատի վանքի մատենադարանը: Սակայն 1045 թ. Բագրատունյաց թագավորության անկման, ապա սելջուկյան ներխուժման ու երկրի ծանր վիճակի հետեւանքով այդ գրավոր հարստությունը անուշադրության էր մատնվել: Այն վերստին կյանքի կոչելուն էին ուղղված Հովհաննես Սարկավագի ջանքերը: Ձեռագրերում պահպանված մատենագրական տարբեր միավորների խորագրեր, հիշատակարաններ ու այլ տվյալներ վկայում են, որ բազմաթիվ հանրահայտ հեղինակների մատյաններն ու գործերը անցել են Սարկավագի ձեռքի տակով, ճշտվել, «ստուգաբանվել»[26] կամ «երկրորդվել», ինչպես նշվում է Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմության» պարագայում[27]: Սարկավագը «Անիի դպրոցում դասավանդելու ժամանակ սրբագրել, խմբագրել, արտագրել է հայ եւ օտարազգի աստվածաբանների ու փիլիսոփաների (Դավիթ Անհաղթ, Մովսես Խորենացի, Արիստոտել, Փիլոն Ալեքսանդրացի, Դիոնիսիոս Արիոպագացի, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Հովհաննես Ոսկեբերան եւ ուրիշներ) բազում... աշխատություններ, որոնք օգտագործվել են նաեւ որպես դասագիրք»[28]:

Հովհաննես Սարկավագն Անիում զբաղվել է նաեւ գիտական ստեղծագործական ու գրական գործունեությամբ: Ս. Արեւշատյանը նշում է, որ Հովհաննես Սարկավագը «եղավ բնափիլիսոփայական ուղղության ձեւավորողը հայ իրականության մեջ»[29]: Նա անդրադառնում է Սարկավագի արտահայտած մի շարք մտքերին, ինչպես օրինակ՝ «առանց քննելու եւ փորձելու չի կարելի ընդունել որեւէ

---

[25] Կ. Մաթեւոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 225-240:

[26] «Կարգադրութիւնք գրոց սրբոց որք ստուգաբանեցան ի Սարկաւագ վարդապէտեն...»: Է. Հարությունյան, Մխիթար Այրիվանեցի, Երեւան, 1985, էջ 115:

[27] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 137:

[28] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 632:

[29] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երեւան, 1976, էջ 339:

պնդում», «առանց փորձի կարծիքը չի կարող ճշմարիտ համարվել», «ոչ թե խոսքն է հաստատում իրի ստուգությունը, այլ իրը՝ խոսքի, եւ սրանից ելնելով պետք է փնտրել ճշմարտությունը» եւ այլն, դրանց ի հայտ գալը կապելով քաղաքների զարգացման հետ, «որոնք կյանքի էին կոչել գիտության նոր ճյուղեր, հետաքրքրություն առաջ բերելով ճշգրիտ գիտելիքների նկատմամբ»[30]:

Հատկապես քաղաքային միջավայրում առկա տարբեր կրոն ու դավանանք ունեցող հասարակական խմբերի համակեցության եւ մասնավորապես քրիստոնյաների համերաշխության գիտակցումով է պայմանավորված հայ միջնադարյան իրականության մեջ դավանական հանդուրժողականության սկզբունքները պաշտպանող գրությունների ի հայտ գալը[31]: Այս տեսակետից հայտնի են Մխիթար Գոշի եւ Վարդան Այգեկցու հայացքներն ու համապատասխան գրությունները, սակայն նրանց նախորդում է Հովհաննես Սարկավագը, որի դավանաբանական գործերում հստակորեն առաջ է բերվում դավանական հանդուրժողականության անհրաժեշտությունը[32]:

Քաղաքային միջավայրում ծնունդ առած աշխարհայացքային նոր միտումներն արտահայտություն են գտել նաեւ «Յովհաննու Սարկաւագի իմաստասիրի եւ վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց» խորագրով պոեմում: Այս մեծարժեք եւ հանգամանորեն ուսումնասիրված ստեղծագործության մանրամասները չներկայացնելով մեջբերենք Աս. Մնացականյանի եզրահանգումները. «Բան իմաստության» պոեմում մշակված է մի

[30] Նույն տեղում, էջ 341:

[31] Պ. Մուրադյան, Դավանական հանդուրժողականության եւ ազգամիջյան համերաշխության գաղափարները ԺԲ-ԺԴ դդ. Հայաստանում, «Գանձասար», Դ, 1993, էջ 95-109, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 190-192:

[32] Մ. քի. Արամյան, նշվ. աշխ., էջ 76-78: Սարկավագի դավանաբանական աշխատություններն ուսումնասիրելով հեղինակը դրանք բնութագրում է որպես «ԺԱ-ԺԲ դդ. արեւելաքրիստոնէական մշակոյթի կարեւորագոյն կոթողներից մէկը» (Նույն տեղում, էջ 45):

թարմ թեմա՝ մարդու եւ բնության հարաբերության հարցը. ա) Բնությունը ի դեմս Սարյակի, արվեստների սկզբնաղբյուրն է, որից սովորել ու սովորում է մարդկությունը, բ) Մարդկությունն անարդար է, որ հալածում է բնության ստեղծագործ ուժերին: ...«Բան իմաստության» պոեմի մեջ քննված արվեստի հարցերը ծնվել են Անիի միջավայրում զարգացած մշակութային ընդհանուր նվաճումների հիման վրա»[33]:

Նկատենք, որ, իհարկե, Անին Հովհաննես Սարկավագի ժամանակ Բագրատունյաց շրջանի փայլը չուներ, սակայն դա մի ժամանակ էր, երբ որոշակի դժվարությունների պայմաններում համախմբվում եւ իր ուրույն դիմագիծն էր ձեռք բերում քաղաքային դասը: Քաղաքի մահմեդական տերը, մոր կողմից հայ Մանուչէ ամիրան (1065-1110) իր իշխանության առաջին տարիներին քայլ առ քայլ վերացնում էր Ալփասլանի (Ալփ Արսլան) գործած ավերածությունների հետքերը եւ քաղաք հրավիրում հեռացած հայ ազնվականներին, մասնավորապես Պահլավունիների հետ խնամիացած Հասանյաններին (Ապիրատյաններ): 1072-ից քաղաքի եպիսկոպոս դարձած, իսկ 1081-ին կաթողիկոս ձեռնադրված Բարսեղ Անեցին ավելի մեծ թափ հաղորդեց Անիի քաղաքացիության դիրքերի ամրապնդմանը: Այս շրջանում Անին շարունակում էր պահպանել արհեստավորական ու առեւտրական, նաեւ եկեղեցական ու մշակութային կենտրոնի համբավը, հայության գիտակցության մեջ մնում էր որպես «քաղաքամայր»: Իրավացի է Մ. Աբեղյանը, երբ գրում է. «Արդարեւ Բագրատունի թագավորների օրով արդեն Անիում... մեծ ձգտում եւ ջանք կար գիտությունը նորոգելու հայերի մեջ, եւ այդ ձգտման ու ջանքի ներկայացուցիչն էր Գրիգոր Մագիստրոսը, բայց իսկական կատարողը, գլուխ բերողը եղել է Սարկավագ Վարդապետը: Նա շարունակել է Անի քաղաքի գործը, անպայման նաեւ այս քաղաքի ազդեցությամբ...»[34]:

---

[33] Աս. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 38:
[34] Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 70:

Այժմ ավելի մանրամասնորեն անդրադառնանք Հովհաննես Սարկավագի պատմագիտական գործերին կամ, ինչպես սովորաբար նշվում է, «կորած պատմությանը»:

«Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը» գրքում Ա. Աբրահամյանն առանձին ենթավերնագրում անդրադառնում է հեղինակի «պատմագիտական աշխատություններին»: Նա գրում է. «Հովհաննես Իմաստասերի աշխատություններից, ըստ մատենագրական տեղեկությունների, արժեքավոր գործ է հանդիսացել նրա Պատմությունը: ...Հովհաննեսի այդ կորած Պատմությունը Ալիշանի կարծիքով բաղկացած է եղել երկու մասից. առաջին մասում շարադրված է եղել սկյութացիների պատմությունը՝ սելջուկների հանդես գալը, նրանց արշավանքները, Տուղրիլ բեկի, Մահմուդի, Ալփասլանի պատմությունները եւ այլն, իսկ երկրորդ մասում շարադրված է եղել Մելիքշահի պատմությունը»[35]: Այնուհետեւ նա գրում է, որ այդ կարծիքը ճիշտ չէ, քանի որ կարծեցյալ առաջին մասը Սամվել Անեցին չի գտել, ուստի դա առանձին գործ է եղել, եւ եզրակացնում է. «Ինչպես տեսնում ենք... Հովհաննեսի պատմական աշխատություններից մենք ունենք ո՛չ թե մեկ, այլ երկու կորուստ»[36]: Կորած առաջին գրքի մի հատված, ըստ Ա. Աբրահամյանի, տեղ է գտել Սանահինի «Քյոթուկում»: Այստեղ պատմվում է, որ 1110 թվականի օգոստոսի 13-ին Սանահինում միաբանները ենթարկվել են սելջուկների անակնկալ հարձակմանը, սակայն կարողացել են անվնաս վանքից դուրս բերել իրենց մոտ գտնվող Կյուրիկյան Դավիթ թագավորին: Նյութը Սարկավագի գրությունից քաղողն իր աղբյուրի մասին հայտնում է. «...էր եւ պատահումն ի վանսն Սանահին կոչեցեալ, զոր տայ մեզ գրով իմաստուն պլէտիկոսն Սարկաւագ եւ ասէ այսպէս...»[37]: Միանգամից ասենք,

[35] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 34:
[36] Նույն տեղում, էջ 35:
[37] Նույն տեղում, էջ 35, 136, հմմտ. Յիշատակարան Սանահնոյ վանից, (Սանահնի Քէօթուկը), աշխատասիրութեամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 60:

որ 1110 թվականի դեպքը չէր կարող ընդգրկվել Ալփասլանի (մահ.1072 թ.) թագավորությամբ ավարտվող երկում:

Հովհաննես Սարկավագի սելջուկներին վերաբերող գրությունների մասին առաջինը հայտնում եւ դրանցից մեջբերումներ է կատարում նրա սան Սամվել Անեցին: Նա իր «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտ ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ» վերնագրով ժամանակագրությունը գրել է կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166) պատվերով: Ժամանակագրությունն ավարտում է 1163 թվականով[38]: Անեցին թեեւ ընդհանրապես գրել է շատ համառոտ, իր խոսքերով՝ «կարճ ի կարճոյ», սակայն պատվիրատուի պահանջը կատարելով (կաթողիկոսն այդ ժամանակ հարաբերությունների մեջ էր Անիի ամիրայի հետ եւ սելջուկների պատմության իմացության կարիքն ուներ) ավելի հանգամանորեն է անդրադարձել սելջուկներին եւ մասնավորապես Մելիքշահին: Նրա մասին պատմիչի հաղորդումներն ուղղակի մեջբերումներ են Հովհաննես Սարկավագի գործերից:

Սամվել Անեցին իր պատվիրատուին սովորաբար բացատրություններ է տալիս Սարկավագի գրություններից քաղվածքներ ներկայացնելիս: Արաբներից հետո սելջուկների գերիշխանության հաստատման մասին գրում է. «Սկիւթացւոցն (սելջուկների - Կ. Մ.) առնուլ զբռնակալութիւն այսպիսի պատճառաւ: Ընթերցաք գրեալ **վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի անուանեալ**, զի ասէ թէ...»[39]: Հատվածի վերջում ավելացնում է. «Զայսոսիկ **նշանակաւ գրոյ եցոյց մեզ Իմաստասէրն** մինչեւ ցՄելիքշահն, **զոր յիւրում տեղւոջն գրեցից,** սորին ձեռնտուութեամբ»: Շարունակելով եւ Մելիքշահի նախնիների անունները տալով՝ Անեցին նշում է, որ ինքը ժամանակին տեսել է Սարկավագի գրությունը նաեւ նրանց մասին, ե-

---

[38] Կ. Մաթեւոսյան, Սամուել Անեցու «Ժամանակագրության» ավարտման թվականը եւ պատվիրատուն, «Պատմա-բանասիրական հանդես», 1992, թիվ 1, էջ 156-162, Նույնի, Սամուել Անեցի (կենսագրական լրացումներ), «Էջմիածին», 2003, Զ, էջ 47-57:

[39] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 88բ, Անեցի, էջ, 97:

թե մատյանը գտնի, կվերաշարադրի. «Իսկ հաւրն նորա (Մելիքշահի - Կ. Մ.) ժամանակ՝ զաւրինախանձն **Ալփասլանայ** եւ զնորին հաւրն եւ հաւուց, զոր **Տուղլուպէկ** եւ **Մահմուտ** եւ **Սարչուկ** անունք են նոցա, **տեսաք երբեմն գրեալ սորին** (Սարկավագի - Կ. Մ.) **ձեռաւք**, **ստոյգ գտակաւ,** եթէ հանդիպիմք մատենին եւ մեք շարագրեսցուք եւ թե ոչ, լքցուք...»[40]: Ինչպես երեւում է, Սամվել Անեցին Սարկավագի այդ գրությունը չի գտել: Հետաքրքիր է, որ Սամվելի՝ Մելիքշահի նախնիների պատմության փնտրտուքը շարունակել է նրա կրտսեր ժամանակակից պատմիչը՝ Մխիթար Անեցին[41]:

Ալփասլանի մահվան մասին նշելուց հետո Սամվել Անեցին գրում է. «**Աստանօր զխոստացեալ պարտսն հատուցից** զմնացուածս բանից, զոր եթող հարկ տեղւոյն այնորիկ այսու պատշաճեալ ժամանակի: Զի ասէ **Իմաստասէրն աստուածային**՝ թե «Իբրեւ առնոյր զփառս իշխանութեան բարեբաղտն Մելիքշահ...»[42]: Շարունակությունն ընդարձակ մեջբերում է Սարկավագի այժմ կորած երկից, որտեղ հիմնականում փառաբանվում է Մելիքշահը: Հատվածի վերջում պատմիչը նշում է, թե այս ամենն Իմաստասերն ասաց Մելիքշահի կյանքի մասին (որը տիրեց 20 տարի), իսկ հետո ինքը

---

[40] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 89բ, Անեցի, էջ, 98:

[41] Մխիթար Անեցու այժմ կորած բնագրից մեջբերում անելով Վարդան Արեւելցին գրում է. «Պատուական երէցն Մխիթար Անեցին... այսպէս ասէ. «**Յոլով աշխատ եղէ գտանել զորպէսն սուլտանացն, որ ի թուրքաց եւ գտի շնորհօքն Աստուծոյ**, այսպէս՝ **Մահմուտն**... Սբքթանայ որդի, յաննշանից մեծացեալ...: Իսկ յառաջադէմն ի թուրքացն՝ որում անուն էր Մուսեափաղոյ **Սարչուքեայ** որդի...: Եւ փոխէ զնա **Արփասլան** հօրեղբօրորդի **Տուղրիլին**, որ ելից զամենայն աշխարհ արեամբ եւ... հասանէր յաթոռ թագաւորութեանն **Մէլիքշահն**, բարի եւ խաղաղարար...» (Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, Երեւան, 2001 (բնագիր), էջ 99-102): Ինչպես տեսնում ենք Մխիթար Անեցին դժվարությամբ է գտել սելջուկների պատմությունը, որը եւ իր երկում մեջ է բերել: Այն հասցնում է մինչեւ Տուղրիլ Բ (1177-1187), «որ կայր մինչ ի պատմագիրս», եզրափակում է Արեւելցին, նկատի ունենալով Մխիթար Անեցուն: Դատելով ոճից ու ժամանակագրական ընդգրկումից՝ այս պատմությունը Սարկավագի գրածը չէ:

[42] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 98ա, Անեցի, էջ 115:

կգրի նաեւ նրա մահվան մասին ասածը. «Արդ՝ **ասաց զայս** զկենաց նորա, որ տիրեաց ամս Ի (20) իսկ զկնի գրեցից զոր ինչ **վասն մահուան է ասացեալ**»[43]: Քիչ անց խոստումը կատարելով՝ պատմիչը գրում է Մելիքշահի մահվան, բայց նաեւ՝ քրիստոնյաների եւ մասնավորապես հայերի նկատմամբ նրա ունեցած բարյացակամ վերաբերմունքի մասին: Սամվել Անեցին դարձյալ մեջբերում է կատարում Սարկավագից՝ չմոռանալով մեծարանքով հիշել նրան. «ախորժելի եղեւ բանիւք դրուատիւք **վարդապետին սրբոյ** գրել եւ խոստանալ դարձեալ գրել արուեստաբան եւ երկայն ճառիւք: Եւ … **այսպէս է գրեալ, թէ** ….»[44] :

Ինչպես տեսնում ենք, Սամվել Անեցին կատարել է պատվիրատուի պահանջը եւ հնարավորինս նյութեր քաղել սելջուկների մասին: Համառոտաբան ժամանակագրի երկում այդ մեծ հատվածներն այնքան ակնառու են, որ հաջորդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին իրավացիորեն գրում է. «…մինչեւ ցՄելիքշահ սուլթանն գրեալ էր զպատճառ տիրելոցն նոցա մեծիմաստ վարդապետին, որ Սարկաւագն կոչէր, եւ **երկրորդեալ էր Սամուէլ քահանայ**…»[45]:

Սամվել Անեցին Սարկավագից քաղած եւս մի տեղեկություն ունի՝ 1097 թ. խաչակրաց առաջին արշավանքի եւ նրանց նկատմամբ բյուզանդական Ալեքսիոս Ա կայսեր ցուցաբերած թշնամական վերաբերմունքի մասին, որը գրելուց հետո նշում է. «**Եւ այս բանքս գրեալ էր վարդապետին Սարկաւագին**»[46]:

Հովհաննես Սարկավագի մասին Սամվել Անեցու հայտնած վերջին տեղեկությունը վերաբերում է վարդապետի մահվանը. «ՇՀԸ (1129) Փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ **մեծ վարդապետն Սարկաւագն ի Հաղբատ**»[47]:

---

[43] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 99ա, Անեցի, էջ 116:
[44] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 99բ-100ա, Անեցի, էջ 119:
[45] Կիրակոս Գանձակեցի, էջ, 84:
[46] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 101ա, Անեցի, էջ 120:
[47] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 105բ, Անեցի, էջ 129:

Այսպիսով, Հովհաննես Սարկավագը Սամվել Անեցու ժամանակագրության մեջ առավել շատ հիշատակված հեղինակն է: Չնայած դրան, իր երկի սկզբում հայ «պատմագիրներին» թվարկելիս Սամվել Անեցին Հովհաննես Սարկավագի անունը չի տալիս (ավելի բազմաթիվ սկզբնաղբյուրներ հիշատակող Մխիթար Անեցին եւս Սարկավագին պատմիչ չի համարում): Մեր կարծիքով, պատճառն այն է, որ Հովհաննես Սարկավագը սելջուկներին վերաբերող ամբողջական պատմագրական երկ չի գրել, այլ առանձին փոքր գրություններ (թղթեր, ճառեր), ինչը երեւում է նաեւ Սամվել Անեցու կատարած մեջբերումներից:

Հարց է առաջանում, թե ի՞նչն է ստիպել Հովհաննես Սարկավագ վարդապետին գրելու սելջուկների պատմության մասին: Նրա մատենագրական ժառանգությանն անգամ մակերեսորեն ծանոթանալով կարելի է համոզվել, որ հեղինակն ամբողջանվեր եւ բանիբուն մի հոգեւորական է, որի հետաքրքրությունները աստվածաբանական, եկեղեցագիտական, տոմարագիտական, գրական են: Եւ հանկարծ նա գրում է պատմություն, այն էլ արյունարբու սելջուկների պատմությունը: Նկատենք, որ այդ ժամանակ Ալփասլանի կողմից 1064-ին Անին գրավելուց ու ավերելուց կես դար էլ չէր անցել, իսկ քաղաքի Մայր տաճարը դեռ մնում էր սելջուկների ձեռքով մզկիթի վերածված: Այս պայմաններում Հովհաննես Սարկավագին միայն մի բան կարող էր ստիպել թղթին հանձնել սելջուկների (սկիւթացւոց) պատմությունը: Դա կարող էր լինել պատվեր, մասնավորապես՝ կաթողիկոսական պատվեր: Իսկ թե ինչու էր Բարսեղ Ա Անեցուն հարկավոր տեղյակ լինել սելջուկների պատմությանը, հասկանալի է, քանի որ նա պետք է բանակցելու մեկներ սելջուկ աշխարհակալ սուլթան Մելիքշահի մոտ:

Այդ ուղեւորությունը տեղի ունեցավ 1090 թ., երբ Բարսեղը նախապես հոգալով ժամանակի դիվանագիտության պահանջները՝

համապատասխան ճոխ ընծաներ, Անիից բազմամարդ պատվիրակությամբ մեկնեց սուլթանի մոտ: Մատթեոս Ուռհայեցին այդ մասին գրում է. «...հայրապետն Հայոց տէր Բարսեղ... տեսանէր, որ նեղէին զհաւատացեալսն Քրիստոսի... եւ հարկս պահանջէին յեկեղեցեացն Աստուծոյ... եւ յայնժամ կաթուղիկոսն... **խորհեցաւ գնալ առ բարի եւ քաղցր թագաւորն Պարսից**... առ ի ծանուցանել նմա զայս ամենայն. եւ **առեալ ընդ իւր նուէրս սուլտանին**... հանդերձ ազատօք եւ եպիսկոպոսօք եւ քահանայիւք՝ **առեալ վարդապետ զհետ իւր** եւ գնաց ի Պարսիկս առ աստուածասէր սուլտանն: Եւ տեսեալ սուլտանին զտէր Բարսեղ՝ յոյժ մեծարեաց զնա, եւ կատարեաց զամենայն խնդրուածս նորա. եւ արարեալ զամենայն կամս տէր Բարսղին»[48]:

Ուռհայեցու սույն հիշատակությանն անդրադառնալով դեռ Մ. Օրմանյանն է ուշադրություն դարձրել Անիից Մելիքշահի մոտ մեկնող պատվիրակության կազմում «վարդապետի» ներկայության հանգամանքին[49]: Նա կարող էր լինել հենց քաղաքում բնակվող Հովհաննես Սարկավագը: Հարկ է նշել, որ այս շրջանում (հայ միջնադարում ընդհանրապես) նշանավոր վարդապետները եզակի անձնավորություններ էին, հայտնի ոչ միայն աստվածաբանական եւ այլ գիտելիքներով, այլեւ լեզուների իմացությամբ (երբեմն կոչվում էին «վարդապետ Հայոց» պատվանունով): Եթե հիշյալ դեպքերի ժամանակակիցը կարդար պատմիչի խոսքերը, որ կաթողիկոսն իր հետ վերցրել է վարդապետին («առեալ վարդապետ զհետ իւր»), ոչ մի կասկած չէր ունենա վարդապետի ով լինելու վերաբերյալ: Ուռհայեցին այստեղ նրա անունը չի տալիս, քանի որ Բարսեղից ու

---

[48] Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, գրաբար, աշխարհաբար (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, 256-258:

[49] Մ. Օրմանյան, նշվ. աշխ. էջ 1537: Հարկ է նշել, որ Մ. Օրմանյանին, Ղ. Ալիշանին եւ միչեւ 1940 թ. աշխատած մյուս հայագետներին հայտնի չի եղել Հովհաննես Սարկավագի վարքը, ուր նշված է նրա Անիում գտնվելու, տեղի վարդապետարանը գլխավորելու փաստը:

Մելիքշահից (առաջին դեմքերից) բացի ընդհանրապես ուրիշ մեկի անունը չի նշում: Սակայն հատուկ շեշտում է, որ պատվիրակության կազմում է եղել նաեւ «վարդապետը», որն այս դեպքում, մեր կարծիքով, Հովհաննես Սարկավագն էր:

Նման ենթադրության օգտին է խոսում նաեւ հենց Հովհաննես Սարկավագի գրածը Մելիքշահի մասին: Սամվել Անեցու Ժամանակագրության միջնորդավորմամբ մեզ հասած Սարկավագի գրության մեջ Մելիքշահի մասին նշվում է. «էր եւ ազատաբարոյ եւ մեծախորհուրդ, **այլ եւ տեսիլ մարմնոյն արժանի թագաւորութեան.** ըստ որում հեզութիւն ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ առնէր սիրելի ամենեցուն, զոր միայն կոչեցից թագաւոր եւ փարթամ: ...Սիրէր զազգս մեր այնքան, մինչ զի **աղաւթս հայցէր եւ աւրհնութիւնս, յորմէ եւ անդ երբեմն չոգաւ հայրապետն**՝ աւ՜շ թէ միայն էր աշակերտեալ Քրիստոսական կրաւնից եւ կարգաց»[50]: Այս տողերը գրված են ականատեսի, մասնակցի անմիջականությամբ ու զգացականությամբ:

Կարող է հարց առաջանալ, թե ինչո՞ւ Հովհաննես Սարկավագի վարքում չի նշվում նրա Մելիքշահի մոտ գնալու մասին: Բանն այն է, որ վարքը ոչ թե կենսագրության շարադրանք է, այլ «երիցս երանեալ ամենեղջանիկ» վարդապետին որպես «մարգարէութեան եւ սքանչելեաց»[51] շնորհ ունեցող սուրբ անձ ներկայացնող գործ, ուր կենսագրական տվյալները հաճախ երկրորդական են, եթե դրանք չեն կապվում հոգեւոր-եկեղեցական գործերի հետ: Օրինակ, Հովհաննես Սարկավագի մասին հայտնի է նաեւ Կիրակոս Գանձակեցու վկայությունը, թե վրաց Դավիթ Շինարար թագավորը սիրով ու ակնածանքով էր վերաբերվում նրան, հետիոտն ընդառաջ գնում ու գլուխը խոնարհելով օրհնություն խնդրում՝ «Կարի յոյժ սիրէր զսա

[50] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 98բ, 100բ, Անեցի, էջ 115, 119: Հետաքրքիր է, որ այստեղ էլ Սարկավագը նշում է հայրապետին, առանց անունը տալու (ինչպես Ուռհայեցին՝ վարդապետին): Ոճի հարց է:

[51] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 121, 124:

թագաւորն Վրաց Դաւիթ... այնքան զի մինչ լսէր զգալուստ նորա, յոտն յառնէր ընդ առաջ նորա եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւն»[52]: Այս մասին, գրեթե նույն խոսքերով պատմում է նաեւ վրացի հեղինակը, ոչ մի կասկած չթողնելով դրա ճշմարտացիության վերաբերյալ[53]: Սակայն այս իրողության մասին նույնպես ոչինչ չի ասվում Հովհաննես Սարկավագի վարքում:

Վերադառնալով Սարկավագի պատմական թղթերին, պետք է նշենք, որ Սամվել Անեցին դրանցից չորս մեջբերում է արել, մինչդեռ Ա. Աբրահամյանը «Հովհաննես Իմաստասերի մատենագրության» մեջ «Պատմության հատվածը Սամուել Անեցուց» վերնագրի տակ միայն երկու հատված է բերել[54]: Դուրս թողնվածները ծավալով ավելի փոքր, բայց նույնպես կարեւոր են[55]:

Կարելի է ենթադրել, որ Հովհաննես Սարկավագը Բարսեղ Անեցու պատվերով[56] իրեն հասու աղբյուրներից օգտվելով կազմել է սելջուկների վաղ շրջանի պատմության մասին մի գրություն, որը տեսել է Սամվել Անեցին՝ («տեսաք երբեմն գրեալ սորին ձեռաւք, ստոյգ գտակաւ»), բայց իր ժամանակագրությունը կազմելիս չի գտել, որպեսզի օգտվի: Այն հավանորեն գրվել է մինչեւ Մելիքշահի

---

[52] Կիրակոս Գանձակեցի, էջ 114:

[53] «(Դավիթը) սիրէր... զոմն հռետոր վարդապետ ի Հաղբատ՝ Սարկաւագ անուն. խոստովանէր նմա զյանցանս իւր եւ կորացուցեալ զպատուական գլուխն՝ օրհնէր ի նմանէ եւ նստէր ընդ նմա եւ փարէր զպարանոցաւ նորա...» (Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Ա, Երեւան, 1934, էջ 219): Դավիթի վերաբերմունքի մեջ կարելի է տեսնել ոչ միայն հարգանք սրբակյաց վարդապետի, այլեւ մի հեղինակավոր մարդու նկատմամբ, որն առնչվել է աշխարհի մեծամեծերի հետ:

[54] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 129-130:

[55] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, էջ 88բ, 101ա, Անեցի, էջ, 97, 120:

[56] Ուշագրավ է, որ Բարսեղից առաջ Անիում աթոռակալած երկու կաթողիկոսները պատմական երկեր են պատվիրել ժամանակի նշանավոր վարդապետներին՝ Սարգիս Ա Սեւանցին՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկին, Պետրոս Ա Գետադարձը՝ Հովհաննես Կոզեռնին, իսկ Բարսեղի հաջորդը՝ Գրիգոր Գ Պահլավունին, Սամվել Անեցու պատվիրատուն էր:

մոտ մեկնելը (1090 թ): Երկրորդ գրությունը ստեղծվել է Մելիքշահի մահից (1092 թ.) հետո, որից օգտվել է Սամվել Անեցին:

Պատմիչը Սարկավագին հղելով վերջին հիշատակությունը (առաջին խաչակրության մասին)՝ դրել է իր ժամանակագրության 1097 թվականի տակ[57]: Այժմ դժվար է ասել, թե Անեցին արդյոք նույն թղթից է օգտվել այդ տվյալը քաղելիս, թե՞ եղել է նաեւ պատմական բովանդակությամբ մի այլ թուղթ, որի մեջ ներառված են եղել այս եւ վերը նշված 1110 թ. Սանահինում պատահած («Քյոթուկում» հիշատակված) դեպքի նկարագրությունը:

Հովհաննես Սարկավագի պահպանված գործերի մի մասի վերնագրերը կամ առաջին տողերը վկայում են, որ դրանք գրվել են տարբեր մարդկանց հարցումներին (խնդրանք-պատվերներին) ի պատասխան[58]: Հավանաբար նույն կերպ են ստեղծվել Հովհաննես Սարկավագի պատմական բովանդակությամբ թղթերը:

Փորձենք պարզել, թե ո՞ր թվականներին է Հովհաննես Սարկավագն Անիում գտնվել: Ցավոք նրա կենսագրության հայտնի թվականները սակավ են: Եթե ընդունենք, որ Անիի դպրոցը բացվել է Բարսեղ Անեցու կաթողիկոսության սկզբում, իսկ դա հավանական է, քանի որ ժամանակի մեծ իրադարձություններից էր («եղեւ... ուրախութիւն ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զԱթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»[59]), եւ ենթադրում էր աթոռի հիմնավորումը ամրապնդող քայլեր, որպիսին կարող էր վարդապետարանի վերաբացումը լինել, ապա պետք է 1081 թվականը համարենք Հովհաննես Սարկավագի Անիում հաստատվելու տարին:

Սարկավագն Անիում մնացել է բավական երկար ժամանակ, որը ճշտելու հնարավորություն է տալիս գրիչ Մարկոսի 1195 թ. հիշատակարանը: Այստեղ խոսվում է ձեռագրի («Կոչումն ընծայու-

---

[57] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 100բ-101ա, Անեցի, էջ, 120:

[58] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 97, 140, 222, 252, 302, 325, 327, Մ. քի. Արամյան, նշվ. աշխ., 61:

[59] Ուռհայեցի, էջ 236-238:

թեան Կիւրղի Երուսաղէմացւոյ») նախօրինակի մասին, որը գրված է եղել Անիում, Մայր տաճարի (Կաթողիկեի) սպասավոր Սարկավագ քահանայի (Հովհաննես Սարկավագի) կողմից՝ «...զոր **Սարկաւագ քահանայ՝ սպասաւոր Սուրբ Կաթողիկէի մեծի, որ յԱնի,** ի բազմաց աւրինակաց ի ձեռն եւ այլոց գիտնականաց, զաւգտակարսն առեալ հաւաքեց ի մի դիր եւ շարադրեաց իւրով ձեռամբ ի դիւրալուր մտաց եւ գիտութեան...»[60]:

Հայտնի է, որ Անիի Մայր տաճարը 1064-ին սելջուկները մզկիթի էին վերածել: Այն կրկին օծվեց 1124 թ., երբ վրաց Դավիթ Շինարար թագավորը գրավեց Անին: Թեեւ 1126-ին վրացիները հարկադրված քաղաքը վերադարձրեցին Շադդադյաններին, բայց պայմանով, որ Կաթողիկեն մշտապես պետք է հայերին պատկանի: Փաստորեն, Հովհաննես Սարկավագը Անիի Մայր տաճարում կարող էր սպասավորել միայն 1124 թվականից հետո:

Այսպիսով, եթե ընդունենք, որ նա Հաղբատից Անի է եկել 1081 թվականին, ապա այս հիշատակարանի շնորհիվ կարող ենք ասել, որ քաղաքում է մնացել նվազագույնը մինչեւ 1124 թվականը: Ահավասիկ այս շուրջ **չորս տասնամյակը** գերազանցող ժամանակաշրջանը նկատի ունենալու դեպքում միանգամայն հասկանալի են դառնում վարքագրի՝ Հովհաննես Սարկավագի մասին ասած խոսքերը, թե նա իմաստության գանձերը բերում էր «**ի քաղաք իւր եւ**

---

[60] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 126, հմմտ. Ե-ԺԲ դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 282: Հիշատակարանի բովանդակությունը կասկած չի թողնում, որ խոսքը Հովհաննես Սարկավագի մասին է, որի սովորությունն էր հայտնի հեղինակների գործերի համեմատական ճշգրտումն ու մատչելի վերաշարադրումը: Այն, որ մեր հեղինակը կոչվում է քահանա, անսովոր չէ, քանի որ այդպես է անվանվում նաեւ իր մի շարք երկերի խորագրերում՝ «Յովհաննու քահանայի յաղագս անկիւնաւոր թուոց», «Յոհաննու քահանայի յաղագս եղանակաց...», «Յոհաննու քահանայի առ Սարգիս, վասն տաղիցն» եւ այլն (Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի..., էջ 148, 252, 327, 330, Մ. քի. Արամյան, նշվ. աշխ., էջ 55, տե՛ս նաեւ Լ. Խաչիկյան, Աշխատություններ, հ. Ա, Երեւան, 1995, էջ 143):

տեղի սննդեան՝ ի քաղաքամայրս Անի»: Մ. Աբեղյանը գրում է, թե հիշյալ խոսքերից կարելի է եզրակացնել, «որ Սարկավագ վարդապետն Անեցի է եղել: Բայց նրա ծնողները կարող էին Փառիսոս գաւառից լինել եւ Հովհաննեսի մատաղ մանկության ժամանակ Անի տեղափոխված, եւ Հովհաննեսն այստեղ մեծացած ու սնված, ուստի եւ Անին նրա համար կարող էր համարվել «քաղաք իւր եւ տեղի սննդեան»: Այդպիսի եղելությունները ոչ սակավ են»[61]:

Կարծում ենք, որ անիական ողջ շրջանում Հովհաննես Սարկավագը սերտորեն կապված է եղել նաեւ Հաղբատի հետ, որպես այդ վանքի միաբան[62]: Դա մի ժամանակ էր, երբ Անին, Հաղբատն ու Սանահինը վեր էին ածվում հայ եկեղեցու ինքնուրույնությունն ու ավանդության անփոփոխությունը պաշտպանող գաղափարական կենտրոնի, որի հայրենասեր գործիչներն ավելի ուշ կոչվեցին «Հայոց հյուսիսային կողմանց վարդապետներ» կամ «արեւելյան վարդապետներ» ընդհանուր անվանումով:

Հովհաննես Սարկավագի գործունեության անիական շրջանը նրան ներկայացնում է ոչ միայն որպես ուսուցիչ, գիտնական, արդյունաշատ հեղինակ, այլեւ երկրի ապագայով մտահոգ գործիչ: Ավելի հասկանալի են դառնում նրա երկերում առկա հայրենասիրական տողերը: Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Սարկավագն «արար շարական Ղեւոնդեանցն քաղցր եղանակաւ եւ յարմար բանիւ...»[63]: Իսկ այդ շարականի խոսքերում հեղինակն Աստծուց խնդրում է ժողովել հայ եկեղեցու ցրված զավակներին, արտասուքն աչքերին երկրից տարագրվածներին (վարատվածներին), եւ փրկել նրանց: «Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց զեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունըս ժողովեա՛ յուրախութիւն, ըզվարա-

[61] Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 446:

[62] «Հաղբատի առաջնորդ են համարել... Հովհաննես Սարկավագին, բայց այդ չի հաստատվում մատենագրական եւ վիմագիր արձանագրությունների տվյալներով»: Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երեւան, 1963, էջ 275:

[63] Կիրակոս Գանձակեցի, էջ 113:

տեալս տրտմութեամբ եւ արտասուաց յորդահոս բըղխմամբ փրկութեան մերոյ պարգեւաց բաշխօղ»[64]:

Իսկապես ողբերգական ժամանակի պարտադրանքով են գրված այս խոսքերը, որոնք եկեղեցում կատարվող կրոնական երգին մի նոր իմաստ են հաղորդում: Մանուկ Աբեղյանն այս առնչությամբ գրում է. «Սարկավագ Վարդապետի այս աղոթքը շատ փոքր, իր ձեւով շատ հասարակ..., բայց իր բովանդակությամբ մեծ ու վսեմ է եւ անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է մանավանդ երբ իր «քաղցր եղանակով» երգվում էր եկեղեցում...»[65]: Ի մի բերելով հայ գրականության հիշյալ շրջանի պատկերը՝ նա ավելացնում է. «Եւ ահա ծնվում է ցրված հայ ժողովրդին ի մի հավաքելու եւ փրկելու ձգտումը որոշ գաղափարախոսությամբ, որի առաջին արտահայտիչը գրականության մեջ՝ է մեծիմաստ Սարկավագ Վարդապետը»[66]:

Այսպիսով, վանական միաբանության գրկում ուսում առած եւ գիտությամբ զորացած Հովհաննես Սարկավագը, գալով «իր քաղաքը»՝ Անի, ծառայեց որպես ուսուցիչ, կազմեց ու խմբագրեց դասագրքեր, դարձավ տոմարի բարեփոխիչ, առնչվեց ժամանակի հզորների հետ, բայց եւ ապրեց ժողովրդի հոգսերով: Նրան շատերն են կոչել իմաստասեր, սոփեստես, սուրբ վարդապետ, իսկ մահվան մասին նշելիս Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ այսպիսի բարւոք քաղաքավարութեամբ կեցեալ յաշխարհի՝ փոխեցաւ ի Քրիստոս **աշխատասէրն** ի Հաղբատ»[67]:

---

[64] Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 71:
[65] Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 71-72:
[66] Նույն տեղում:
[67] Կիրակոս Գանձակեցի, էջ 115:

ՀՈՌՈՄՈՍԻ ՎԱՆԱՀԱՅՐԵՐԸ

Անիի մերձակա Հոռոմոսի վանքը միջնադարյան Հայաստանի նշանավոր հոգեւոր եւ մշակութային կենտրոններից էր, միաժամանակ հանդիսանում էր Անիի Բագրատունի թագավորների հանգստարանը (դամբարանավայրը): Այդ մասին ուղղակիորեն նշում է Հովհաննես Սմբատ (1017-1041) թագավորը 1036 թ. վանքում իր կառուցած Ս. Հովհաննես եկեղեցու արձանագրության մեջ, գրելով որ նվիրատվություն է կատարել «…ի մեր հանգստարանս թագաւորաց, ի տիեզերահռչակ վանսս Հոռոմոսի»[1]: Իսկ նրա հայրը՝ Գագիկ Առաջինը (989-1017), կառուցել է վանքի Ս. Գեւորգ եկեղեցին, որի արձանագրության մեջ սուրբ Գեւորգի բարեխոսությունն է հայցում Հիսուսի երկրորդ գալստյան ժամանակ:

Հոռոմոսի վանքը հիմնադրվել է մինչեւ Անիի մայրաքաղաք հռչակվելը (961), 10-րդ դարի 30-40-ական թվականներին: Համալիրի կառույցներից հնագույնը փոքր եկեղեցի է, որը ճարտարապետական գրականության մեջ հայտնի է ենթադրյալ Ս. Մինաս անունով, սակայն, դատելով Ստեփանոս Տարոնեցի Ասողիկի մի վկայությունից, հնարավոր է որ Ս. Շողակաթ է կոչվել[2]:

---

[1] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 166: Հովհաննես Սմբատի մահվան եւ թաղման մասին Մատթեոս Ուռհայեցին գրում է. «…մեռաւ թագաւորն Հայոց Յովհաննէս… եւ թաղեցին զնա ի գերեզմանսն առաջին թագաւորացն Հայոց» (Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, էջ 92):

[2] Պատմիչը գրում է, որ Աբլհաճ ամիրան «եկեալ զՀոռոմոսի վանքն այրեաց եւ զփրկական նշանն (խաչը - Կ. Մ.), որ ի վերայ սրբոյ Շողակաթի գմբեթին կանգնեալ էր, ճոպանօք ի վայր բերէր ի ՆԼԱ (982) թուականին» (Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, ՍՊբ, 1885, էջ 188-189): Սրանից Մաղաքիա պատրիարք Օրմանյանը բխեցրել է, որ վանքի «առաջին անունը Ս. Շողակաթ եղած կերեւի» (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջմիածին, 2001, էջ 1285):

Վանքը, որ Բագրատունյաց ժամանակաշրջանում ծաղկուն վիճակի էր հասել արքունական հովանավորության շնորհիվ, հետագայում եւս անեցիների համար առաջնակարգ հոգեւոր կենտրոնի դեր էր կատարում: Այն նշանավոր էր իր դպրոցով, գրչատնով[3], հոգեւոր-բարեսիրական ավանդներով, որոնք գալիս էին դեռ հիմնադիր վանական՝ ողորմած ու առաքինի Հովհաննես վանահորից: Անիի շրջանից ամենից մեծ թվով ձեռագրեր հայտնի են Հոռոմոսից: Վանքի եկեղեցիների պատերին պահպանվել են մեծաթիվ վիմագիր արձանագրություններ, որոնք վկայում են վանական ընդարձակ կալվածքների եւ հարուստ ինչքի մասին: Հետաքրքիր է, որ ինչպես Անին հռչակված էր մեկ օրում 1001 եկեղեցիներում մատուցվող պատարագներով[4], Հոռոմոսն էլ հռչակված էր մեկ օրում մատուցվող 40 պատարագով[5]:

Հոռոմոսի վանքի պատմության մասին առաջին անգամ փոքր գրքույկ է տպագրել էջմիածնի միաբան Աբել Մխիթարյանցը 1870 թվականին: Այստեղ նա բերում է պատմական համառոտ տեղեկություններ, նաեւ վանքի վիմագրերը, որոնց հիման վրա թվարկում

---

[3] Հոռոմոսում աշխատել են մի շարք հմուտ գրիչներ, որոնցից Իգնատիոսը միջնադարյան հայ լավագույն գրիչ-մանրանկարիչներից մեկն է համարվում: Գրչությամբ են զբաղվել նաեւ Հոռոմոսի դպրոցի աշակերտները: Վանքում գործել է կազմարարական հայտնի արվեստանոց (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիչ եւ մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1982, թիվ 1, էջ 121-133, նույնի, Կազմարարությունը Հոռոմոսի գրչության կենտրոնում, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1986, N 10, էջ 64-68):

[4] Կ. Մաթեւոսյան, Անի. Եկեղեցական կյանքը եւ ձեռագրական ժառանգությունը, Ս. էջմիածին, 1997, էջ 176-188:

[5] Այդ մասին տեղեկությունը հավելում է Վարդան Արեւելցու «Աշխարհացույցի» մեջ (Հոռոմոսը հիշվում է ուշ միջնադարում ստացած Ղոշավանք անունով), բայց հավանորեն հին ծագում ունի: «Ղօշավանքն Սուրբ Յովաննէս եւ Սուրբ Գէորգ զարմանաշէն եւ հռչակաւոր աթոռ եւ կան բազում եկեղեցիք Խ (40) խորան է, Խ (40) պատարագ կու լինի աւուրն» (Մատենադարան, ձեռ., թիվ 8100, թերթ 254 բ, Փ. Անթապյան, Վարդան Արեւելցի, հ. Ա, Երեւան, 1987, էջ 108):

վանահայրերին: Այդ ցանկը առաջինը լինելով եւ վիմագրական նյութը միայն մասամբ արտացոլելով, թերի է[6]:

Հոռոմոսի վանահայրերին անդրադարձել է Ղեւոնդ Ալիշանը եւ իր ժամանակ հայտնի վիմագրերի ու հիշատակարանների տվյալների հիման վրա հրատարակել է Հոռոմոսի վանահայրերի 20 անուն պարունակող հետեւյալ գավազանագիրքը.

«936 Յովհաննէս հիմնադիր վանացն
972 Սարգիս (թուի կաթողիկոսն)
986 Սողոմոն
1013 Անանիա
1036 Սարգիս եւ Գէորգ
1038 Յովհաննէս
1174-81 Խաչատուր
1195 Պետրոս
1198-1201 Մխիթար
1229-53 Տէր Բարսեղ
1218 Գրիգորիս
1222 Անդրէաս
1246 Սարգիս
1269 Յովսեփ
1336 Ստեփանոս
1685 Դանիել Տիգրանակերտցի
1751-5 Եղիա վրդ. Ալաշկերտցի
1788 Յովհաննէս Շամբեցի եպիսկոպոս
… Աւետիք եպիսկոպոս
1829 (՞) Ստեփանոս եպս. Չախալեան»[7]:

Ղ. Ալիշանից հետո հայ հետազոտողները Հոռոմոսի վանահայրերի գավազանագրքին չեն անդրադարձել: Ժան-Միշել Թիերին 1980-ին լույս տեսած՝ Հոռոմոսի վանքի պատմությանը նվիրված իր գրքում վանահայրերին առանձին չի անդրադարձել[8]: Իսկ 2002 թ. Թորոս Թորամանյանի՝ Հոռոմոսի վանքին նվիրված նյութերի ժողովածուի մեջ Ժ-Մ. Թիերին ներկայացրել է վանահայրերի գավազանագիրքը ֆրանսերենով, գրեթե նույնությամբ կրկնելով Ղ. Ալիշանի

[6] Ա. Մխիթարեանց, Պատմութիւն Հոռոմոսին վանաց ի Շիրակ, Վաղարշապատ, 1870, էջ 20-21:
[7] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 28:
[8] J-M. Thierry, Le couvent Arménien d'Horomos, Louvain-Paris, 1980.

կազմած ցանկը: Ավելացված է միայն Ավետիք եպիսկոպոսի հիշատակման թվականը՝ 1751 եւ 19-րդ դարին վերաբերող երկու անուն (Գրիգոր, Վարդան Օձնեցի)[9]:

Բարեբախտաբար պահպանվել են Հոռոմոսի Ստեփանոս վանահորից հետո (հիշվում է 1336 եւ 1347 թվականներին) մինչեւ Դանիել Տիգրանակերտցին (1685 թ.), վանքի առաջնորդությունը վարած եւս երեք վանահայրերի անունները[10]: Այս ժամանակահատվածի լուսաբանումը կարեւոր է հատկապես նրանով, որ 14-րդ դարի 30-ական թվականներից մինչեւ 1685 թվականն ընկած ժամանակահատվածը սովորաբար համարվել է Հոռոմոսի վանքի պատմության անհայտ շրջան: Ինչպես Լեոն է գրում. «Հոռոմոսի կյանքը ներկայացնող արձանագրությունները ընդհատվում են 1336 թվականին… այնուհետեւ սեւ անհայտություն է գալիս հռչակավոր վանքի վրա…»[11]: Իսկ Թ. Թորամանյանը գրում է. «1336 թվականեն հետո 349 տարի վանքին վիճակը անստույգ է, եթե բոլորովին ամայացած չէր, գոնե անտերունչ վիճակի մատնված էր մինչեւ 1685 թվականը, երբ Դանիել վարդապետ նորոգեր եւ վերստին շենացուցեր է»[12]: Հիշյալ երեքուկես դարը վանքի համար անհայտության ժամանակ է համարում նաեւ Ժ-Մ. Թիերին[13]:

Հիշյալ ժամանակաշրջանի կարծեցյալ «անհայտությունը» գրեթե ամբողջությամբ լցնում են Հոռոմոսում գրված կամ վանքին նվիրված (այստեղ պահված) ձեռագիր մատյանների հիշատակարանները եւ մի քանի այլ նյութեր: Դրանցում հիշատակվում են վանահայրերի անուններ, վանքի պատմության համար

---

[9] Le couvent de Horomos d'après les Archives de Toros Toramaian (Monuments et mémoires de la fondation Eugène Piot), Paris, 2002, p. 14.

[10] Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի վանքի պատմության նոր էջեր (ԺԴ-ԺԹ դդ.), «Էջմիածին», 1993, Դ-Ե-Զ, էջ 72-79:

[11] Լեո, Անի, Երեւան, 1963, էջ 122:

[12] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխատությունների ժողովածու, Երեւան, 1942, էջ 302:

[13] J-M. Thierry, Le couvent Arménien d' Horomos, p. 5.

կարեւորություն ունեցող փաստեր[14]: Այս եւ նոր շրջանի մի քանի գործիչների անունների ավելացմամբ ամբողջանում է Հոռոմոսի վանահայրերի գավազանագիրքը:

Հարկ է նշել, որ Ղեւոնդ Ալիշանի կազմած ցանկը հիմնականում հաջող է, բայց հին մասում որոշ ճշտումների եւ ավելացումների կարիք ունի: Մասնավորապես հայտնի է, որ Հոռոմոսի վանքը հիմնադրվել է Աբաս Բագրատունու (929-953) թագավորության շրջանում Բյուզանդիայից եկած հայ վանականների կողմից[15]: Քանի որ աղբյուրները որոշակի թվական չեն հայտնում, Հոռոմոսի առաջին վանահոր ժամանակը նախընտրելի է նշել 10-րդ դարի 30-40-ական թվականները:

Հիշատակված հաջորդ վանահայրը՝ Սարգիսը՝ մասնակցել է 969 թ. Անիի եկեղեցական ժողովին[16], 979-ին հիմնել է Անիի մերձակա Կարմիր վանքի Ս. Գրիգոր եկեղեցին, բայց մահացել է 980-ին: Սարգսի մահից հետո Հոռոմոսի վանահայրությունն անցել է նրա որդի Սողոմոնին, որն էլ 985-ին ավարտին է հասցրել Ս. Գրիգոր եկեղեցու շինարարությունը[17]:

1198-1201 թթ. նշված Մխիթարի առաջնորդությունն ավելի երկար է տեւել, քանի որ նա Հոռոմոսի վանահայր է համարվում «Հաղբատի ավետարանի» 1211 թ. հիշատակարանում[18]:

---

[14] 1459 թ. Աստվածատուր եպիսկոպոսը Հոռոմոսին է նվիրել իր ստացած, Այրիվանքում գրված ճաշոցը (Մատենադարան, ձեռ. թիվ 6276): 1485 թ. այս ձեռագրում հիշատակարան է գրել Հոռոմոս այցելած Սարգիս Գ (1484-1515) կաթողիկոսը: 1699-ին Հոռոմոսի վանքին թավշյա ասեղնագործ վարագույր է նվիրել Ամիթեցի Դահմազը (պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում): 1782-ին Հոռոմոսում ձեռագիր է ընդօրինակել Ակնագյուղեցի Գրիգոր աբեղան (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի վանքի պատմության նոր էջեր, էջ 72-79):

[15] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, էջ 174:

[16] Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, էջ 181:

[17] Ա. Մանուչարյան, Կարմիր վանքի արձանագրությունը, «Պատմաբանասիրական հանդես», 1967, N1, 154-155:

[18] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 72:

1215 թվականին հիշված Անդրեասի (Ղ. Ալիշանի մոտ նշված է 1222)[19] եւ 1218-ին հիշված Գրիգորիսի անունները պետք է 1229-1253 թթ. առաջնորդ եղած Բարսեղ եպիսկոպոսի (Ամիր Երկաթի որդու) անունից առաջ դրվեն, իսկ 1246 թվականի արձանագրության մեջ նշված Սարգիս վարդապետի անունը ցանկից պիտի հանվի, քանի որ նա Հոռոմոսի միաբան էր, բայց վանահայր չի եղել[20]:

1336 թ. արձանագրության մեջ հիշված Ստեփանոսի անունը պահպանվել է նաեւ Հոռոմոսին ընծայված մի ձեռագրի արծաթյա կազմի 1347 թ. արձանագրության մեջ[21]: Նրանից հետո 15-րդ դարում հիշվում է Հոռոմոսի վանահայր Գրիգոր եպիսկոպոսը՝ 1485 թ.[22], 16-րդ դարում՝ Հովհաննես եպիսկոպոսը՝ 1585 թ.[23]: Մեկ այլ Հովհաննես եպիսկոպոսի (1653 թ.) հիշատակում է Ղ. Ալիշանը, ա-

---

[19] Ղ. Ալիշանն օգտվել է Ն. Սարգիսյանի գրքից, բայց այնտեղ Անդրեասի անունը պարունակող երկու արձանագրությունն էլ անթվական են (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 151, 159-160, Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 21): Դրանցից Խութլու Խաթունի արձանագրությունը 1215 թվականից է, որը նշում է Ժ-Մ. Թիերին (J-M. Thierry, Le couvent Arménien d' Horomos, p. 54-55):

[20] Աշոտ Դսեղեցու արձանագրության սկզբում նշվում է. «Յառաջնորդութեան Տէր Բարսղի», ապա հոռոմոսցիների անունից գրված հատվածում ասվում է. «Ես Տէր Բարսեղ եւ Սարգիս վարդապետս եւ այլ եղբարքս…» (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, էջ 154):

[21] Կազմը, որն այժմ պահվում է Սանկտ Պետերբուրգում (էրմիտաժ՝ 93-834) պատրաստել են տվել ոմն Ջաջն ու իր որդի Ամիր Սմբատը, ոսկերիչ վարպետն է Գրիգորը, արձանագրության մեջ Հոռոմոսի վանահորից բացի հիշվում են նաեւ Սարգիս կրոնավորը եւ Սադունյան իշխանական տնից Մանկասարը (Կ. Մաթեւոսյան, Կազմարարությունը Հոռոմոսի գրչության կենտրոնում, էջ 64-68, Հ. Մարգարեան, Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում, Հայկազեան հայագիտական հանդէս, հտ. ԺԸ, Պէյրութ, 1998, էջ 29-33):

[22] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1967, էջ 70:

[23] Հոռոմոսում գրված հիշատակարանում Հովհաննեսը թվարկում է իր հարազատներին, նշելով 34 հոգու անուն: Եպիսկոպոսի եղբորորդին, դարձյալ Հովհաննես անունով, վարդապետ էր (Ս. Տէր-Ավետիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայն Ամենափրկիչ վանքի, հ. Ա, Վիեննա, 1970, էջ 134):

ռանց աղբյուրը նշելու, բայց որի անունը չի դրել գավազանագրքում[24]:

Նոր շրջանում, Կարսում գրված մի հիշատակարանում նշվում է վանահայր Խաչատուր վարդապետը՝ 1714 թ.[25], իսկ Ստեփանոս եպիսկոպոս Չախալյանի հիշատակման թվականը ճշտում է Ս. Էփրիկյանը (1825)[26]: Գրականության մեջ հիշվում են նաեւ Պետրոս վարդապետը՝ 1851 թ.[27], նորոգման աշխատանքներ կատարած Վարդան վարդապետ Օձնեցին՝ 1851-1856 թթ.[28], եւ Գրիգորը՝ 1868-1871 թթ.[29]:

Վերոնշյալ տվյալներն ի մի բերելով ստորեւ ներկայացնում ենք Հոռոմոսի վանահայրերի գավազանագիրքը:

---

[24] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 96:

[25] Մատենադարան, ձեռ. թիվ 4608, էջ 114-115, հմմտ. Կ. Մաթեւոսյան, Հոռոմոսի վանքի պատմության նոր էջեր, էջ 77:

[26] Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 225:

[27] Ա. Մխիթարեանց, Պատմութիւն Հոռոմոսին վանաց ի Շիրակ, էջ 53, J-M. Thierry, Le couvent Arménien d' Horomos, p. 85:

[28] Վարդանը նաեւ Կարսի թեմի առաջնորդն էր: Պահպանվել են 1856-ին նրա՝ կաթողիկոս Ներսես Աշտարակեցուն ուղարկած՝ վանքի տնտեսական վիճակին վերաբերող հաշվետվությունները (Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 17, վ. 55 եւ թղթ. 181, վ. 82, 133):

[29] Ս. Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, հ. Բ, Վենետիկ, 1907, էջ 224: 19-րդ դարում Հոռոմոսի վանքը ենթարկվել է Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին, ընդգրկվել Կարսի թեմի կազմում: 1912 թվականին լույս տեսած «Ազգապատումի» առաջին հատորում Մաղաքիա Օրմանյանը գրում է, որ Հոռոմոսի վանքն այս տարածքում «տակաւին շէն մնացածներէն մէկն է» (Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1285):

ԳԱՒԱՁԱՆԱԳԻՐՔ ՎԱՆԱՀԱՐՑ ՀՈՌՈՄՈՍԻ

1.	Յովհաննէս Ա	10-րդ դ. 30-40-ական թթ.
2.	Սարգիս Ա	969-980
3.	Սողոմոն	980-986
4.	Անանիա	1013
5.	Սարգիս Բ եւ Գէորգ	1036
6.	Յովհաննէս Բ	1038
7.	Խաչատուր Ա	1174-1181
8.	Պետրոս Ա	1195
9.	Մխիթար	1198-1211
10.	Անդրէաս	1215
11.	Գրիգոր Ա (Գրիգորիս)	1218
12.	Բարսեղ արքեպիսկոպոս	1229-1253
13.	Յովսեփ	1269
14.	Ստեփանոս Ա	1336-1347
15.	Գրիգոր Բ եպիսկոպոս	1485
16.	Յովհաննէս Գ եպիսկոպոս	1585
17.	Յովհաննէս Դ եպիսկոպոս	1653
18.	Դանիել վարդապետ Տիգրանակերտցի	1685
19.	Խաչատուր Բ վարդապետ	1714
20.	Աւետիք եպիսկոպոս	1751
21.	Եղիա վարդապետ Ալաշկերտցի	1751-1755
22.	Յովհաննէս Ե վարդապետ Շաբեցի	1788
23.	Ստեփանոս Բ եպիսկոպոս Չախալեան	1825
24.	Պետրոս Բ վարդապետ	1851
25.	Վարդան վարդապետ Օձնեցի	1851-1856
26.	Գրիգոր Գ վարդապետ	1868-1871

ՀԱՌԻՃԻ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայաստանի նշանավոր վանքերից է Շիրակի Հառիճա վանքը[1], որը նշանավոր է եղել ինչպես միջնադարում, այնպես էլ նոր շրջանում[2]: Հառիճը մեծ հռչակ ձեռք բերեց 12-րդ դարի վերջերին, երբ շուրջ 1197 թվականին Իվանե եւ Զաքարե Զաքարյաններն այն գնեցին նախկին հայրենատերերից, այստեղ հիմնեցին ամրոց եւ կառուցեցին Կաթողիկե Ս. Աստվածածին մեծադիր եկեղեցին (1201)[3]: Սակայն մինչ այդ Հառիճի վանքը վերականգնել էր Գրիգոր վանահայրը Անի-Շիրակն ավերած 1064 թ. սելջուկյան արշավանքներից շուրջ 100 տարի անց, այսինքն՝ 1160-ական թվականների երկրորդ կեսին: Այդ մասին է վկայում վանքի Ս. Գրիգոր եկեղեցու պատին նրա թողած արձանագրությունը. «Ես Գրիգոր առաջնորդ սուրբ ուխտիս Հառիճայի շինեցի զտեղի սննդեան իմոյ ի Ճ (100) ամեայ կործանմանէ եւ կարգեցի ի սա արս ընտրեալս եւ խրատեալս աւրինաւքն Աստուծոյ եւ հաստատեցի կամակցութեամբ եղբարց…»[4]:

---

[1] Վանքի անունը միջնադարում գրվել է «Հառիճայ» ձեւով (սեռական հոլովում՝ «Հառիճայի»):

[2] 19-րդ դարի կեսերից Հառիճի վանքը վերածնունդ է ապրել, Գյումրիում ստեղծված «Հառիճավանքի ընկերության» ջանքերով բացվել է դպրոց, որը հետո դարձել է Ս. Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի նախապատրաստական բաժանմունքը: Որոշ ժամանակ Հառիճը եղել է կաթողիկոսական ամառանոց: Հառիճի դպրոցի պատմությանն է նվիրված Մատթեոս աբեղա Պողոսյանի «Հառիճա վանքը եւ նրա վանական դպրոցը» արխիվային հարուստ նյութեր պարունակող անտիպ աշխատությունը:

[3] Հառիճը Զաքարյանների առաջին տիրույթն ու հենակետը դարձավ Շադդադյանների տիրապետության տակ գտնվող Շիրակում, որի ոստանին՝ Անիին նրանք տիրեցին 1198 թ. վերջերին: Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հառիճի վանքը ԺԳ դարի սկզբին (գրչության կենտրոնը եւ հարակից հարցեր), «Էջմիածին», 1998, Ա, էջ 115-124:

[4] Յ. Քիւրտեան, Հառիճոյ վանքի արձանագրութիւնները, «Բազմավէպ», 1957, 1-12, էջ 267-268: «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում Հառիճի վանահայր Գրիգորը նույնացվել է Աբասի որդի Գրիգոր վարդապետի հետ (13-րդ դ. սկիզբ), որը սխալ է («Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 566):

Հառիճի վանահայր Գրիգորը Անիի Կաթողիկե եկեղեցու (Մայր տաճարի) փակակալ, Մխիթար Անեցու պատմության պատվիրատուն էր[5], իսկ վերջերս հայտնաբերված նրա՝ Հովսեփ վարդապետ Հաղբատեցուն հասցեագրված թուղթը վկայում է, որ նա եղել է Անիի դպրոցի նշանավոր ուսուցչապետ Հովհաննես Սարկավագի (մահ. 1129 թ.) կրտսերագույն աշակերտներից մեկը[6]: Հառիճում պահպանվել է Գրիգոր վանահոր տապանաքարը, որի արձանագրությունը պերճախոս կերպով բնութագրում է նրան. «**Այս հանգիստ է երջանիկ ծերունի սուրբ հաւր Գրիգորի՝ առաջին առաջնորդի երկրորդ շինութեան սուրբ ուխտիս, որ էր ուսուցիչ եւ աւրինակ բարեաց ամենեցուն:** Աղաչեմք, որք երկրպագէք սրբոյ խաչիս ասացէք. Աստուած յիշեսցէ զհայր Գրիգոր յողորմութեան իւրում եւ զգրիչս եւ դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ. ամէն: Ի թուին Հայոց ՈԼԷ (1188)»[7]:

Հառիճեցիները Գրիգոր վանահոր մահից հետո Պետրոս վանահոր գլխավորությամբ գնահատել են նրա վաստակը եւ հոգացել հիշատակը պահպանելու մասին, որի վերաբերյալ գրում են 1192 թվականի արձանագրության մեջ[8]: Նույն Պետրոս վանահոր ժամա-

---

[5] Իր պատմության առաջին ճառում ներկայացնելով իր աշխատության նպատակը՝ Մխիթար Անեցին հետեւյալ խոսքերով է դիմում Գրիգորին. «Արդ՝ ո՛ պատուական հայր Գրիգորիէ, գրեթէ զհարիւր եւ Խ (40) ամաց մեծամեծ գործս խնդրէ քո պատուականութիւնդ՝ ի ժամանակաց անտի Յովհաննիսի, յետին եւ վերջնոյն Բագրատունեաց, մինչեւ ի ներկայս յայս, յորում եմս դեռ եւս» (Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Գ. Մարգարյանի, Երեւան, 1983, էջ 61):

[6] Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 185-190:

[7] Յ. Քիւրտեան, նշվ. աշխ., էջ 268: Այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ.:

[8] «Կամաւն Աստուծոյ մեք հառիճեցիքս՝ հայր Պետրոս եւ այլ եղբարքս, սահմանեցաք ի տաւնի Տապանակին ի մի մատուռն պատարագել զՔրիստոս յանուն Գրիգորոյ, փոխանակ արդեանց իւրոց… ՈԽԱ (1192)», (Յ. Քիւրտեան, նշվ. աշխ., էջ 268):

նակ գրված մեկ այլ արձանագրություն տեղեկացնում է, որ 1196 թ. նշանավոր վարդապետ Գրիգոր Տուտեորդին այցելել է Հառիճ եւ վանքին է նվիրել թանկարժեք պահարանով խաչ[9]:

Հառիճի վանքը, որքան էլ ճանաչված, սակայն պատմության մեջ Շիրակի բազմաթիվ փոքր վանքերից մեկը կմնար, եթե 12-րդ դարի մայրամուտին չդառնար ժամանակի խոշորագույն ռազմաքաղաքական գործիչներից մեկի՝ Զաքարե ամիրսպասալարի սեփական վանքն ու նրա գլխավոր շինարարական ձեռնարկման վայրը: Վանքի Ս. Գրիգոր հնագույն եկեղեցու հարեւանությամբ Զաքարեն հիմնեց մեծաշեն եւ շքեղ Ս. Աստվածածին եկեղեցին, որի շինարարությունն ավարտվեց 1201 թ.:

Հարկ է նշել, որ մինչեւ Զաքարեի եկեղեցու կառուցումը, 1196 թվականի երկու արձանագրություններում Հառիճի ուխտը կոչվում է Ս. Գրիգորի եւ Ս. Աստվածածնի անունով[10]: Այժմ Հառիճում Զաքարեի եկեղեցուց բացի Ս. Աստվածածին անունով այլ եկեղեցի հայտնի չէ (հնարավոր է, որ այդպես է կոչվել փոքր մատուռներից մեկը), սակայն իշխանաշեն եկեղեցին չի կառուցվել նույնանուն հին եկեղեցու տեղում, քանի որ 1219 թ. Հառիճում գրված ձեռագրի հիշատակարանում նշվում է, որ մատյանը գրվել է «ի հրեշտակաբնակ ուխտիս Հառիճ, **ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Գրիգորոյ եւ ի հրաշակերտ նոր Կաթողիկէիս**»[11]: Զաքարեի շինարարական արձանագրության մեջ եւս նորաշեն եկեղեցին Կաթողիկե է կոչվում, բայց նշվում է նաեւ եկեղեցու Ս. Աստվածածին

---

[9] Նույն տեղում:

[10] 1196 թ. նվիրատու Աստվածատուրը նշում է, որ Արուճում գտնվող մի այգի եւ հնձան է տվել «ի սուրբ ուխտս Հառիճայի, ի Սուրբ Գրիգորս եւ Սուրբ Աստուածածինս»: Նույն թվականին Գրիգոր Տուտեորդին էլ գրում է. «…ետու զսուրբ նշանս… ի Սուրբ Աստուածածինս Հառիճայու» (Ա. Մխիթարեանց, Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ, Տփղիս, 1856, էջ 82, 83):

[11] ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Ա. Մաթեւոսյան), Երեւան, 1984, էջ 114:

անունը[12]: Այսպիսով Ս. Աստվածածին է կոչվել ե՛ւ վանքի հին եկեղեցիներից մեկը, ե՛ւ Զաքարեի հիմնած Կաթողիկեն:

Ինչպես նշվեց, Զաքարեի շինարարական արձանագրությունը գրվել է 1201 թ., այսինքն այն ժամանակ, երբ Հայաստանի հյուսիսային շրջանները, նաեւ Շիրակը, արդեն Զաքարյաններին էր անցել: Իսկ ե՞րբ Զաքարեն դարձավ Հառիճի «հայրենատերը»: Ստույգ թվական հայտնի չէ, սակայն ենթադրելի է, որ այդ տեղի է ունեցել մինչեւ Շիրակի ամբողջական ազատագրումը: Նախ, ինքնին հետաքրքիր է, որ վանքի ձեռքբերումը նախկին հայրենատերերից կատարվել է գնման միջոցով, ինչպես Զաքարեն է արձանագրության մեջ նշում՝ **«գանձագին արարի զհռչակաւոր սուրբ ուխտս Հառիճայի յիւր բնական հայրենատերացն»**[13]: Նշենք, որ գրականության մեջ երբեմն Հառիճի «բնական հայրենատեր» են անվանվում Պահլավունիները[14], սակայն այդ մասին վկայող ոչ մի փաստ չկա: Մեր կարծիքով Հառիճը չի պատկանել Պահլավունիներին, որոնք իրենց հովանավորած բոլոր վանքերում մեկից ավելի հիշատակներ ունեն թողած, մինչդեռ Հառիճում այդպիսիք բնավ չկան: Ուստի առայժմ պետք է բաց թողնել վանքի «բնական» հայրենատերերի հարցը, մինչեւ որոշակի տվյալների երեւան գալը:

Ուշագրավ է, որ գանձագին անելով վանքը՝ Զաքարեն այստեղ ոչ միայն եկեղեցի է կառուցել, այլեւ, թերեւս ավելի վաղ, ռազմական հենակետ՝ ամրոց: Արձանագրության մեջ Զաքարեն սկզբում հենց այս կառույցն է նշում՝ «**շինեցի ի սմա ամրոց եւ զկաթուղիկես**»[15]:

---

[12] «…շինեցի ի սմա (Հառիճում - Կ. Մ.) ամրոց եւ զԿաթուղիկէս… ընծայեցի Սուրբ Աստուածածնիս…» (Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 62-63):

[13] Նույն տեղում:

[14] О. Халпахчян, Архитектурные ансамбли Армении, Москва, 1980, с. 265, Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 312, Ռ. Քարտաշյան, Հառիճավանքը գտնում է իր տեսքը, «Հուշարձան» տարեգիրք, Բ, Երեւան, 1993, էջ 45:

[15] Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 62-63:

Ամրոցի եւ Ս. Աստվածածին մեծաշեն եկեղեցու կառուցման համար բավականին ժամանակ էր անհրաժեշտ, եւ եթե նկատի ունենանք շինարարության ավարտի թվականը՝ 1201 թ., ապա կարող ենք ենթադրել, որ Զաքարեն վանքը գանձագին է արել դրանից առնվազն 5-6 տարի առաջ: Հառիճում 1201 թվականին նախորդող երկու արձանագրություն կա 1196 թվականից (Ս. Գրիգոր եկեղեցու պատին), սակայն նրանցում ոչ մի ակնարկ չկա Զաքարեի՝ Հառիճի հայրենատեր լինելու մասին: Կարելի է ենթադրել, որ Զաքարեն տեր է դարձել Հառիճին այդ թվականի վերջին կամ 1197-ին: Հենց այդ ժամանակ են Զաքարյանները գրավել դժվարամատույց Ամբերդը նաեւ կարեւոր հաղթանակ տարել Գանձակի ամիրայության նկատմամբ:

Եթե Զաքարյանների կողմից Արագածոտն գավառի գրավման վերաբերյալ մի շարք արձանագրություններ են պահպանվել (Փարպի, Անտառուտ, Կոշ), որոնց միջոցով հնարավոր է ուրվագծել ռազմական գործողությունների ընթացքը[16], ապա նրանց Շիրակ ներթափանցելու մասին սկզբնաղբյուրները սուղ են: Այս տեսանկյունից Հառիճի պարագան միանգամայն ինքնատիպ եւ եզակի է: Այն վկայում է, որ Զաքարյաններն այստեղ օգտագործել են ոչ միայն զինական ուժը, այլեւ, օգտվելով ժամանակի տնտեսակարգի ընձեռած հնարավորություններից, նաեւ՝ դրամը:

Հառիճից ոչ հեռու գտնվող Լմբատավանքը 1191 թ. մահմեդականներից գնել է Անիի Բարսեղ Բ արքեպիսկոպոսը՝ թողնելով համապատասխան արձանագրություն. «Ես տեր Բարսեղ… գնեցի զվանքս յանաւրինաց…»[17]: Նույն կերպ Զաքարեն Հառիճը գնել է նախկին տիրոջից: Այս վանքը գտնվելով Շիրակի հյուսիսարեւելյան մասում, որը սահմանակից էր Զաքարյանների կենտրոնական

[16] Այս մասին տե՛ս Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երեւան, 1977, էջ 106, Ա. Շահնազարյան, Զաքարյանների ազատամարտի առաջին փուլը, Հայոց պատմության հարցեր, N 6, Երեւան, 2005, էջ 132-147:

[17] Կ. Կոստանեանց, Վիմական տարեգիրք, Տփղիս, 1913, էջ 37:

տիրույթներին (նրանց նստավայրը Լոռին էր), շատ հարմար ռազմավարական հենակետ էր դեպի արեւմուտք եւ հարավ առաջխաղացման համար: Ուշագրավ է, որ 12-րդ դարի վերջին Զաքարյանները պարբերաբար մարտական գործողություններ էին վարում արեւելյան եւ հարավարեւելյան ուղղությամբ, մինչդեռ արեւմուտքում՝ Հառիճում, ընդարձակ շինարարություն են ծավալում:

Հառիճի մեծադիր եկեղեցու կառուցումը նաեւ յուրօրինակ քարոզչություն էր: Բանն այն է, որ այդ տարիներին (1197-1201) Հայաստանում չի կատարվել ավելի նշանակալից մեկ այլ եկեղեցաշինական իրագործում, քան Հառիճի՝ ներքուստ եւ արտաքուստ շքեղազարդ եկեղեցու կառուցումն է: Զաքարյան եղբայրներն առանձնահատուկ նշանակություն են տվել Հառիճին՝ պատվիրելով նաեւ իրենց կտիտորական բարձրաքանդակը, որը մինչեւ օրս զարդարում է Ս. Աստվածածին եկեղեցու արեւելյան ճակատը:

Հատկանշական է, որ Զաքարյանների քանդակը կերպարների տեղադրման առումով կատարված է Հաղբատի եւ Սանահինի **թագավորական** բարձրաքանդակների նմանությամբ[18], իսկ ընդհանուր հորինվածքով (վերին մասում՝ հովանավոր խաչ) հիշեցնում է Անիի Բագրատունյաց շրջանի զինանշանը: Հենց այդ տիրական, «թագավորական» շունչն էր, որ պիտի զգային Հայոց պետության ոստանի՝ Շիրակի բնակիչները՝ տեսնելով Զաքարյանների վեհաշուք ձեռակերտը:

Բնական է, որ Շիրակում Զաքարյանների գերխնդիրը Անիի գրավումն էր: Այստեղ հարկ է հիշել, որ 12-րդ դարի ընթացքում վրացիները երեք անգամ գրավեցին Անին (1124-26, 1161-64, 1174-76 թթ.), սակայն հարկադրված եղան կրկին վերադարձնել Շադդադյաններին: Հառիճի ամրոցի ու եկեղեցու շինարարությունն սկսելու պահին Զաքարյանները չէին կարող անվերապահորեն համոզված լինել, որ կառուցման ավարտի ժամանակ արդեն գրաված

[18] Տե՛ս Ստ. Մնացականյան, Հայոց աշխարհիկ պատկերաքանդակը 9-14-րդ դարերում, Երեւան 1976, էջ 103:

կլինեն Անին: Սակայն հենց այդպես էլ եղավ: Անին Զաքարյաններին անցավ 1198 թ. վերջերին[19]: Շիրակի նոր տերը՝ Զաքարեն, ոչ միայն վերականգնեց Հառիճի վանքի նախկին սեփականությունը, այլեւ, դատելով արձանագրությունից, առատ նվիրատվություններ կատարեց իր ընդարձակ իշխանության տարբեր վայրերից (Անի, Երեւան, Թալին, Գետիկ): Հառիճը, փաստորեն, կատարեց իր ե՛ւ գործնական, ե՛ւ խորհրդանշական դերը՝ դառնալով այն շքեղ դարպասը, որով Զաքարյանները ոտք դրեցին Շիրակ:

Հառիճում Զաքարեի թողած արձանագրությունը պարունակում է նաեւ այլ հետաքրքիր տեղեկություններ՝ մասնավորապես վանքապատկան հողերի տեղանշման, կատարված նվիրատվությունների առումով եւ այլն: Նրա շնորհիվ է հնարավոր դարձել ճշտել Զաքարեի որդու՝ Շահնշահի ծննդյան թվականը[20]:

Զաքարեի եկեղեցու կառուցումից հետո Հառիճի հռչակն ավելի աճեց, իսկ ողջ Շիրակի ազատագրումը նպաստավոր պայմաններ ստեղծեց մշակութային կյանքի վերելքի համար: 13-րդ դարի սկզբից մեզ է հասել Հառիճի գրչատան երկու ձեռագրական հուշարձան:

ՀԱՌԻՃՈՒՄ ՆՈՐՈԳՎԱԾ ՄԱՏՅԱՆԻ 1209 Թ. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Մատենադարանի թիվ 1886 պատառիկը (մագաղաթյա մի թերթ է, որը Մատենադարանին նվիրել է Հ. Հազարյանը), ուր պահպանվել է մեծարժեք տեղեկություն «Կումիրի» մեծ գյուղաքաղաքի՝ Գյումրիի մասին, Հառիճի գրչատանը 1209 թ. նորոգված մի Ավետարանի հիշատակարան է պարունակում: Այն պատմում է, որ Հովասափ ծերունի կրոնավորը «ազգաւ եւ տոհմիւ ի մեծ գուղաքաղաքէն Կումիրոյ» իր «արդար ընչից» գումար հատկացնելով՝ փրկագնել է ձեռագիրը («ազատեցի ի գերողաց»), եւ քանի որ շատ

[19] Ա. Շահնազարյան, նշվ. աշխ., էջ 142:
[20] Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 104:

վնասված՝ «կարի զեղծեալ» էր, տվել է նորոգելու: Հառիճում մատյանը հիմնովին նորոգվել ու կազմվել է, ինչպես Հովասափն է գրում. «Ետու դարձեալ նշանագրել ծաղկեալ, եւ կազմեալ, եւ արծաթով փառազարդեալ»[21]: Գործը կատարել է Մարգարե աբեղան, որն էլ գրել է հիշատակարանը[22]: Այս նույն Մարգարեն մի քանի տարի անց, 1211 թ., Անիի Բեխենց վանքում նկարազարդել է հետագայում «Հաղբատի Ավետարան» անունը ստացած նշանավոր ձեռագիրը (Մատենադարան, ձեռ. թիվ 6288), որն Անիի մանրանկարչության ցայժմ հայտնի առավել ամբողջական ու հատկանշական ստեղծագործությունն է:

1209 թ. հիշատակարանից դատելով՝ Մարգարեն այդ ժամանակ Հառիճի միաբաններից մեկն է եղել: Ինչպես երեւում է, այդ նույն միաբանության անդամ էր նաեւ Հովասափը: Նրա անունից Մարգարեի ձեռքով գրված հիշատակարանը պահպանել է այդ ժամանակվա Հառիճի միաբաններից եւս մի քանիսի անունները, սակայն առավել կարեւոր է վանահայր **Վարդանի** հիշատակումը, որն այլ աղբյուրներում այլեւս չի հանդիպում: Հիշատակարանում կարդում ենք. «(յիշեսջիք) զհայր Վարդան Հառիճայոյ, եւ ըստ հոգւոյ զեղբարս մեր զԲարսեղ կուսակրաւն քահանայ, եւ զՍարգիս, եւ զԽաչոտն, եւ զմեղաւոր կազմաւղս զՄարգարէս, եւ զամենայն միաբանեալսն մեր»[23]: Ինչպես երեւում է հիշատակարանի մաղթողական վերջաբանից, Մարգարեն ձեռագիրը միայնակ չի նորոգել. «Եւ Աստուած, որ առատն է ի տուրս, տացէ վարձս բարեաց **ստացաւղացն եւ աշխատողացն**, եւ ամենայն հաւատացելոց...: ՈԾԸ (1209) թուիս կազմեցաւ»[24]:

---

[21] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 65:

[22] Ա. Մաթեւոսյան, Նշմարներ Անի քաղաքի գրչության եւ մանրանկարչության, «Բանբեր Մատենադարանի», թիվ 14, Երեւան, 1984, էջ 128:

[23] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 65-66:

[24] Նույն տեղում:

Վերը հիշված Գրիգոր վանահորից հետո (մահացել է 1188-ին) Հառիճում հիշվում է վանահայր Պետրոսը (Ս. Գրիգոր եկեղեցու 1192, 1196 թթ. արձանագրություններ), նրանից հետո մեր հիշատակարանի շնորհիվ 1209 թ. տեսնում ենք վանահայր Վարդանին, 1214 թ. Ս. Աստվածածին եկեղեցու արձանագրության մեջ հիշվում է մեկ այլ վանահայր Պետրոս[25]:

Հառիճի վանահայրերի ցանկը լրացնելուն եւ վանքի պատմության որոշ հարցեր ճշտելուն օգնում է նաեւ 1219 թ. այստեղ գրված մատյանի հիշատակարանը:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐՉԻ 1219 Թ. ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մաշտոցյան Մատենադարանում 1382 թվահամարի տակ պահվող մատյանը, որը մեկնությունների ժողովածու է, ունի 316 թերթ (25.3 x 16 սմ), գրանյութը՝ թուղթ, գրությունը՝ միասյուն, գրչությունը՝ բոլորագիր: Մատյանն ունի լուսանցազարդեր, որոնցից մի քանիսը ներկայացնում են կերպարվեստի հնագույն ավանդների հետ կապված երեւակայական կենդանիներ: Այս հետաքրքրական պատկերների ծագմանն անդրադարձել է Գարեգին Հովսեփյանը[26]:

Գրիչ Հովհաննեսը նաեւ ստացողն է: Հառիճյան այս մատյանը յուրովի շարունակում է Անիում սկզբնավորված անձնական օգտագործման մատյանների ստեղծման սկզբունքը՝ թուղթ գրանյութի եւ բոլորագիր գրչության կիրառությամբ[27]:

---

[25] Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 65:

[26] Գ. Յովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 87-88:

[27] Հայերեն հնագույն մատյանը, որն ամբողջությամբ գրված է թղթի վրա եւ բոլորագիր գրչությամբ, 981 թ. Դավիթ քահանայի կազմած ու նրա որդի Ղուկասի ձեռքով գրված ժողովածուն է (Մատենադարան, ձեռ. թիվ 2679): Անձնական օգտագործման համար ստեղծվող մատյանի նման սկզբունքը (թուղթ եւ բոլորգիր) տարածված էր Անիի շրջանում:: Հռոմոսում այդպիսի մատյաններ են գրել Հովհաննես գրիչն ու Մխիթար Անեցին:

Հովհաննես գրչի հիշատակարանն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Հառիճի վանքի ժամանակի առաջնորդների եւ հեղինակավոր միաբանների վերաբերյալ: «Գրացաւ ի ՈԿԸ (1219) թ[ուիս] Հայոց, ի հրեշտակաբնակ ուխտիս **Հառիճ...** յառաջնորդութեան հաւր **Պետրոսի** եւ **Քրիստափորի** եւ **Սոսթենիսի** եւ այլ միաբան սուրբ եղբարցս, որք կ[ա]մակ[ի]ց եղեն եւ աւգնական աղաւթիւք, եւ ընծայեցի զսայ ի սուրբ ուխտս **Հառիճայ**, յառաջնորդութիւն **Գրիգորոյ** վարդապետիս, որդւոյ **Աբասայ**, որ եկն ի սուրբ ուխտէն **Սանահնէն**՝ առաջնորդ Մաւրս Լուսոյ (այսինքն՝ «Սուրբ Աստուածածնիս» - Կ. Մ.) եւ սպասաւոր, որ է հեզ եւ խաղաղարար եւ բարեսէր:

[Ար]դ, աղ[ա]չեմ զամենեսեան, որք կարդայք... զիս՝ զանարհեստ եւ զողորմելի գրողս եւ զստացիչս **զՅոհաննէս**, եւ զծնաւղսն իմ, եւ զեղբարս եւ զքեռնս եւ **զՎարդերեսն** յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր եւ զվերայգրեալս՝ զհայր **Պետրոս,** եւ **զՔրիստափոր,** եւ **զ[Ս]ոսթենես**, եւ առաւել զնոր հայրս [մ]եր՝ **զԳր[գ]որ** վարդապետս զորդի **Ա[բա]սայ**՝ զա[ր]դարեա[լն ամ]ե[ն]այն ա[ռ]աքին[ու]թե[ամ]ը, եւ զայլ միաբան ե[ղ]բարքսս՝ զքահանայսս եւ զկրաւն[աւ]որսս, եւ զծ[երսս] եւ զերիտասարդսս [յիշե]ցէք յա[ղաւթս ձ]եր... Եւ **զՂազար** տանուտէր տարոյս, որ է հոգաբարձու եղբարցս, յիշեսջիք, յաղաւթս...»[28]:

Հովհաննեսի հիշատակարանի շնորհիվ իմանում ենք, որ նա մատյանի գրչությունը սկսել է Պետրոս վանահոր ժամանակ, բայց ավարտման պահին՝ 1219 թ., Սանահինի վանքից եկել է Աբասի որդի Գրիգոր վարդապետը՝ որպես Հառիճի նոր վանահայր: Հիշվում են նաեւ ավագ վանականներ Քրիստափորն ու Սոսթենեսը, վանքի տնտեսական պետքերը հոգացող Ղազար տանուտերը, մյուս միա-

[28] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 114: Ցավոք Մատենադարանի նոր ձեռագրացուցակում հիշատակարանը թերի է բերված (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէեան, Երեւան, 2008, էջ 1125):

բանները: Հիշատակարանից իմանում ենք, որ Հովհաննեսն այդ մատյանն ընծայել է հարազատ ուխտին:

Կյուրիկյան տոհմից սերող Գրիգոր վարդապետը (Աբասի որդին), որը մշակութային մեծ վաստակ ունեցող հոգեւորական էր, Հառիճում հիշվում է նաեւ 1221 թ. մի արձանագրության մեջ[29], բայց ինչպես երեւում է, նա այստեղ երկար չի պաշտոնավարել ու կրկին վերադարձել է Սանահին[30]:

Հառիճում 1224-ին արդեն հանդիպում ենք Հովհաննես վանահոր անվան հիշատակությանը[31]: Հովհաննեսից հետո՝ 1235 թ., մի արձանագրության մեջ հիշվում է Հառիճի նոր վանահայր Համազասպը[32]:

Հովհաննես գրչի 1219 թ. հիշատակարանը կարեւոր տվյալներ է պարունակում Հառիճի վանքի մեծ ժամատան կառուցողի ու կառուցման ժամանակի վերաբերյալ:

---

[29] Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 68:

[30] Գրիգոր վարդապետը (որդի Աբասա) որպես Սանահինի առաջնորդ հիշատակվում է 1217 թ. մի արձանագրության մեջ, ուր նա նշում է, որ վանքին մի խաչ եւ 13 ձեռագիր գիրք է նվիրել (Կ. Ղաֆադարյան, Սանահինի վանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1957, էջ 116): Մինչ այդ՝ 1214-15 թթ., եղել է առաջնորդի աթոռակից: Գրիգորի՝ Հառիճ տեղափոխվելուց հետո (1219) Սանահինի վանահայր է դարձել Զաքարե ամիրսպասալարի ազգական Հովհաննեսը, որը հիշվում է մինչեւ 1225 թ.: Դրանից հետո Գրիգորը կրկին դարձել է Սանահինի վանահայր (հիշվում է 1229 եւ 1234 թվականներին): Նա ղեկավարել է տեղի դպրոցը, անվանվում է «մեծ ռաբունապետ» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 910): Այս բազմարդյուն վարդապետի գրչին է պատկանում «Պատճառաց գիրքը»: Սանահինի վանքում է գտնվում Աբասի որդի Գրիգորի անթվակիր տապանաքարը (Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 55-61, 175, 195, տե՛ս նաեւ Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէօթուկը), աշխատասիրությամբ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 72, 111, 126):

[31] Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 74:

[32] Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 76:

ՀԱՌԻՃԻ ԺԱՄԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՈՂԸ

Հառիճի ճարտարապետության ուսումնասիրողները, օգտվելով միայն վիմագրության ընձեռած տվյալներից, Զաքարեի հիմնած Ս. Աստվածածին եկեղեցու արեւմտյան մասում գտնվող մեծ ժամատան (գավիթի) կառուցման ժամանակը որոշել են ըստ առաջին թվակիր արձանագրության, քանի որ ժամատունը կառուցող Վահրամ հեջուբի արձանագրության թվականը չի պահպանվել: Ժամատան վրա եղած առաջին թվակիր արձանագրությունը 1224 թվականից է (նվիրատու Մխիթար), ըստ այդմ՝ ժամատունը կառուցված է համարվել մինչեւ 1224 թվականը[33]:

Հովհաննես գրչի հիշատակարանի շնորհիվ այս հարցն ավելի որոշակի է դառնում, միաժամանակ լրացուցիչ տեղեկություններ ենք քաղում կառուցողի վերաբերյալ: Հիշատակարանի ավարտամասում Հովհաննեսը խնդրում է հիշել. «**Եւ զմեծ իշխանն մեր զբարեպաշտ Վարհամ, որ զժամատունս շինեաց ի դրան Կաթողիկէիս,** եւ զորդիսս իւր՝ զԻշխանն եւ զՍարգիս պահեսցե խաղաղութեամբ զմեզ ի խորին ծերութիւնն Քրիստոս, եւ յետ աստի ելանելոյ հանգուսցէ զհոգիս նոցա յարքայութեանն ըստ սիրելիսս իւր, ամեն»[34]: Քանի որ Հովհաննեսի 1219 թվականին գրած հիշատակարանում արձանագրված է ժամատան կառուցման փաստը, ուստի, բնականաբար, **Հառիճի ժամատունը կառուցվել է մինչեւ 1219 թվականը:**

Ինչպես նշվեց, ժամատունն ունի նաեւ կառուցմանը վերաբերող անթվական արձանագրություն: Այն հետեւյալն է. «Աստուածասէր եւ արդիւնաւոր **պատրոնն հիջուպ Վահրամ** շինեաց զվայելուչ ժամատունս եւ եբեր զմիւս ջուրս յիշատակ հոգո իւրոյ եւ զաւակաց իւրոց եւ ամուսնո իւրո **Թամարին:** Եւ տէր **Յովհաննէս** միաբանաւքս ի խնդրոյ դստերն իւրո **Խաթունին** հաստատեցին ի տաւնի Թէոթոս

---

[33] О. Халпахчян, նշվ. աշխ., էջ 268, Ա. Ջալայան, Հառիճի հուշարձանախումբը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1986, թիվ 2, էջ 88:

[34] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 114:

թագաւորին զամենայն եկեղեցիքս յանուն **Թամարին** պատարագել զՔրիստոս Աստծոյն մերոյ անխափան: Թվին»[35]:

Ինչպես տեսնում ենք, սա ուղղակի իմաստով շինարարական արձանագրություն չէ, այլ, տեղեկացնելով Վահրամ հեջուբի կողմից ժամատան կառուցման, նաեւ դեպի վանք երկրորդ ջրատարը բերելու մասին, պարունակում է նրա դստեր՝ Խաթունի՝ իր մոր՝ Թամարի համար պատարագ ստանալու խնդրանքը, որը բավարարում է Հովհաննեսը: Վերջինս որպես վանահայր հիշվում է 1224 թ.[36], իսկ նրանից առաջ վանահայրեր էր Աբասի որդի Գրիգորը (հիշված՝ 1219 եւ 1221 թ.): Հնարավոր է, որ ժամատան կառուցումից հետո ջրատարի շինարարությունն է ձգվել ու հասել մինչեւ Հովհաննեսի վանահայրության տարիները: Երեւի պատահական չէ, որ արձանագրության վերջում փակագրով գրված «Թվին» բառից հետո թվական չի գրվել, որովհետեւ հավանաբար ժամատան կառուցումը, ջրատարի ավարտը եւ Խաթունի խնդրանքը վերաբերել են տարբեր թվականների: Ըստ երեւույթին արձանագրողներն անմիջապես չկողմնորոշվելով, թե որ թվականը պիտի գրեն, գործը հետաձգել են եւ ի վերջո արձանագրությունն այդպես էլ մնացել է անթվական:

Հառիճի արձանագրության մեջ նշված Վահրամ հեջուբի դուստր Խաթունը որպես եկեղեցիներ նորոգող, հիշվում է նաեւ Հոռոմոսի վանքի վիմագրերից մեկում[37]:

---

[35] Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 73, Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 162, Հ. Քիւրտեան, նշվ. աշխ., էջ 270:

[36] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 161, Հ. Եղիազարյան, Հառիճի վանքը եւ նրա վիմագրությունը, «Էջմիածին», 1957, Ա, էջ 61:

[37] Հոռոմոսի վանքի տապանատան մատուռներից մեկի մոտ պահպանվել է հետեւյալ արձանագրությունը. «Քրիստոս Աստուած ի Քո մեծի ծագմանն լոյսո նորոգեա զհոգի **Խաթունին**, դստեր **հեճուպ Վարհամա**, որ մեծ յուսով եւ բազում արդեամբք վերստին նորոգեաց զեկեղեցիքս եւ զի ոչ ունելով մարմնաւոր զաւակ, ստացաւ իւր ժառանգն եւ յիշատակ զսուրբ Յովանէսի…» (Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 160):

Հովհաննես գրչի հիշատակարանի շնորհիվ իմանում ենք Վահրամի որդիների՝ Իշխանի եւ Սագիսի անունները: Ցավոք, մեզ չհաջողվեց նրանց հիշատակությունը գտնել այս սկզբնաղբյուրներում (Շիրակի վիմագրերում կան այդ անուններով իշխանազուններ, բայց հավելյալ փաստերի բացակայությունը թույլ չի տալիս նույնացում կատարել):

Ինչ վերաբերում է իրեն՝ Վահրամ հեջուբին, ապա հավանաբար նա 1218 թ. Անիի արձանագրություններից մեկում հիշատակվող Վահրամ ամիրան է: Հեջուբը կառավարչի պաշտոն է: Այդ պաշտոնը կրում էին Զաքարյանների տան գործավար, տնտեսվար վերակացուները: Զաքարեի կառուցած եկեղեցու ժամատունը չէր կարող պատահական մեկը կառուցել: Վահրամն այդ արել է հավանաբար իր պարոնի (հենց Զաքարեի կամ նրա որդի Շահնշահի) ցուցումով: Նկատենք, որ եթե Հառիճի եւ Հոռոմոսի վիմագրերում նշված է Վահրամի պաշտոնը՝ հեջուբ, ապա Հովհաննես գրչի հիշատակարանում նա կոչվում է «մեծ իշխան»:

Անիի վերոհիշյալ արձանագրությունը պահպանվել է Վրաց Ետիփան (Եպիփանոս) կաթողիկոսի վրացերեն արձանագրության տակ, հայերեն. «Թվին ՈԿԷ (1218) ես տէր Գրիգոր իրիցապետ եպիսկոպոս, ես՝ **Վահրամ ամիրա քաղաքիս**, վկայեմք, որ կաթողիկոսին հրամանք է զայս»[38]: Զաքարյանների ժամանակ Անիում ամիրան որոշ իմաստով քաղաքապետի դեր էր կատարում: Քաղաքը գրավելուց հետո Զաքարե ամիրսպասալարը Լոռիից տեղափոխվեց այստեղ եւ քաղաքն իր նստավայրը դարձրեց: Բնականաբար Զաքարեի տան հեջուբը եւս Անիում պիտ գտնվեր եւ կատարեր կառավարիչ-գործավարին հատուկ գործերը: Անին Զաքարեի իշխանության վարչատնտեսական կենտրոնն էր, եւ տրամաբանական է, որ քաղաքի կառավարումը նույնպես հեջուբն իրականացներ, սա-

[38] Անիի Վիմագրերի ժողովածուում արձանագրության թվականը նշված է ՈԿԵ (1216), (Դիվան, Ա, էջ 61), սակայն Պ. Մուրադյանը ճշտում է՝ ՈԿէ (1218), (Պ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 43):

կայն այստեղ կրելով Շադդադյանների շրջանի մեկ ու կես հարյուրամյակի ավանդությամբ հաստատված «ամիրա» կոչումը:

Անիի Վահրամ ամիրան հիշվում է նաեւ մի անթվական արձանագրության մեջ: Շահնշահի ժամանակ Լուսոտ անունով անեցին պարսպի բուրգ է կառուցել եւ արձանագրել՝ «յամիրութեան Վահրամա կատարեցաւ բուրջս»[39]:

Լրացուցիչ փաստերի բացակայության պատճառով չենք կարող վերջնականապես հաստատել Վահրամ հեջուբի եւ Վահրամ ամիրայի նույնությունը, սակայն երկուսի ապրած ժամանակը նույնն է, հիշվում են Զաքարեի որդու՝ Շահնշահի ժամանակ (Հառիճում՝ 1219 եւ շուրջ 1224 թթ., Անիում՝ 1218 թ.) եւ կատարում գործավարկառավարչի նույն դերը:

ՀԱՌԻՃԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՎԱՆԱՀԱՅՐԵՐԸ

Հառիճի միջնադարյան վանահայրերի առաջին ցուցակը կազմել է Աբել Մխիթարյանցը 1856-ին[40], այնուհետեւ՝ Ղեւոնդ Ալիշանը՝ 1881-ին, որը հետեւյալն է.

Համազասպ (է կամ Ժ դար)
Գրիգոր g’1185
Պետրոս 1185-1220
Գրիգոր Բ 1221
Յովհաննէս 1224
Համազասպ Բ 1234-5[41]:

Ցանկի սկզբում նշված Համազասպը հիշվում է Սարգիս Ճոնի արձանագրության մեջ, որը վերաբերում է Ս. Գրիգոր եկեղեցու կա-

[39] Դիվան, Ա, էջ 6:
[40] Ա. Մխիթարեանց, նշվ. աշխ., էջ 39-42:
[41] Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 163:

ռուցմանը[42]: Իսկ Համազասպ Բ-ը հիշվում է 1235 թ. մի արձանագրության մեջ[43]:

Վերը բերված 1209 եւ 1219 թթ. հիշատակարանները թույլ են տալիս էական ճշգրտումներ կատարել: Վիմագրերի եւ հիշատակարանների տվյալների համադրմամբ այժմ կարելի է ներկայացնել Հառիճի միջնադարյան վանահայրերի հետեւյալ ցուցակը.

1. Համազասպ Ա	մինչեւ 11-րդ դ.
2. Գրիգոր Ա	մոտ. 1160 -1188
3. Պետրոս Ա	1188, 1192
4. Վարդան	1209
5. Պետրոս Բ	1214-1219
6. Գրիգոր Բ որդի Աբասի	1219, 1221
7. Հովհաննես	1224
8. Համազասպ Բ	1235-ից

[42] «Ես Սարգիս Ճոնս շինեցի զեկեղեցիս եւ ի քրտանց իմ ետու այլ ընծայ ի սուրբ ուխտս եւ հայր Համազասպս սահմանեաց, որ ի Սարգսի եւ ի Բագոսի տաւնին Բ (2) աւր պատարագեն զՔրիստոս յիմ անուն, ով խափանէ, դատի ի Տեառնէ» (Հ. Քիւրտեան, նշվ. աշխ., էջ 267): Տարբեր ուսումնասիրողներ արձանագրության ժամանակը տարբեր կերպ են որոշում (7-րդ կամ 10-րդ դ.):

[43] Հ. Քիւրտեան, նշվ. աշխ., էջ 271:

ԱՆԻ ՔԱՂԱՔԸ ԵՒ ԾԱՌԱՔԱՐ-ՄԱՂԱՍԲԵՐԴԸ 11-14-ՐԴ ԴԴ.

Անի մայրաքաղաքի մերձակա բնակավայրերը, վանքերն ու բերդերը սերտորեն կապված են եղել քաղաքի հետ թե՛ վարչատնտեսական եւ թե՛ հոգեւոր-մշակութային առումով: Եթե քաղաքի շրջակա Հոռոմոսի, Բագնայրի, Արջո Առիճի, Տեկորի, Խծկոնքի, Մրենի վանքերի պատմությունը, դրանց կապն Անիի հետ, բավականաչափ հայտնի եւ ուսումնասիրված է, շնորհիվ այս կենտրոններում եղած վիմագրերի եւ այդտեղ գրված ձեռագրերի հիշատակարանների, ապա բերդերի վերաբերյալ շատ ավելի սակավ տեղեկություններ են պահպանվել: Ստորեւ կփորձենք հայտնի եւ նորահայտ նյութերի միջոցով ներկայացնել Անիի մերձակա բերդերից մեկի՝ Ծառաքար կամ Մաղասբերդ[1] անուններով հայտնի բերդի 11-14-րդ դարերի պատմությունը: Բերդի պատկառազդու աշտարակավոր պարիսպները մինչեւ օրս վեր են խոյանում Ախուրյանի կիրճում: Բազմավաստակ Թորոս Թորամանյանի բնորոշմամբ, այն «իր ժամանակին ամենից անառիկ բերդն էր եւ ավելի ամուր, քան Անին»[2]: Թ. Թորամանյանն ավելացնում է նաեւ, որ ռուսական բանակի հայտնի զորահրամանատար հայազգի Լոռիս-Մելիքովն Անիի

---

[1] Աղբյուրներում այս անունը հիշատակվում է տարբեր կերպ՝ «Մախազիբերդ» (10-րդ դ., Անանուն զրուցագիր), «Մաղասբերդ» (1222 թ. հիշատակարան), «Մաղըսբերդ» (1343 թ. հիշատակարան), «Մաղասայ բերդ», «Մաղասաբերդ», «Մաղասբերդ» (Զաքարիա Քանաքեռցի) (համապատասխան հղումները տե՛ս հոդվածում): Ս. Երեմյանը բերդը կոչել է «Մաղխազ բերդ», այն առնչելով Արշակունյաց արքունիքի «մաղխազ» պաշտոնի հետ (Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երեւան, 1984, էջ 199): Մենք նախընտրում ենք առավել հաճախ հանդիպող «Մաղասբերդ» տարբերակը:

[2] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության (աշխ. ժողովածու), Երեւան, 1942, էջ 311:

շրջանում «թե՛ տեղի ընտրության, թե՛ ռազմագիտորեն շինության տեսակետով ամենեն ավելի գնահատել է Մաղաս բերդը»[3]:

Հենց սկզբում նշենք, որ մինչեւ այժմ գրականության մեջ Ծառաքարը եւ Մաղասբերդը համարվել են տարբեր բերդեր: «Մախազիբերդ» անունը առաջին անգամ հիշատակվում է կարծեցյալ Շապուհ Բագրատունու («Պատմութիւն Անանուն զրուցագրի») մոտ, ըստ որի բյուզանդական Մորիկ (582-602) կայսրը Մախազ անունով հայ կուսակալ է ուղարկել Արեւելք, եւ նա Ախուրյան գետի ափին կառուցել է մի բերդ ու կոչել Մախազիբերդ. «Եւ զՄախազ ոմն ի յաշխարհէն Հայոց կացոյց ի յարեւելս, այր չար եւ անաւրէն: Նայ շինեալ զամրոցն ար աբն Խորինա գետոյ եւ կոչեաց զնայ Մախազի-

[3] Նույն տեղում, էջ 324:

բերդ»[4]: Աղբյուրը, տվյալ դեպքում, ոչ թե պատմագրական երկ է, այլ պատմական զրույցների ժողովածու, որի պարունակած տեղեկությունները կարող են իրականության հետ մոտավոր կապ ունենալ: Երկի օրինակներից մեկում Մախազին է վերագրվել նաեւ Անիի բերդի կառուցումը՝ «շինեաց եւ ամուրն Անի առ ափն Ախուրեան գետոյ»[5]:

Երկրորդ պատմիչը, որ տալիս է բերդի անունը՝ «Մաղասայ բերդ» («Մաղասաբերդ», «Մաղասբերդ») 17-րդ դարում ապրած Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին է, որը բերդի հիմնադրման մասին տեղեկությունը քաղելով Անանուն զրուցագրից, այն որոշ գեղարվեստական մշակման է ենթարկել եւ ավելացրել 1638-ին բերդի՝ պարսկական տիրապետությունից խաբեությամբ օսմանյան թուրքերին անցնելու պատմությունը[6]: Զաքարիան շատ մանրամասն է նկարագրել բերդի տեղադրությունը, հավանական է, որ այն տեսել է:

Մախազ-Մաղասի անվան հետ կապվող Մաղասբերդ անվան ծագման մասին պատմիչների հայտնած այս երկու հիշատակությունների միջեւ շուրջ հազար տարվա հեռավորություն կա: Անհավանական կլիներ, եթե Անիից շուրջ 5 կիլոմետր հարավ-արեւմուտք, Ախուրյան գետի կիրճում անմատչելի հրվանդանի վրա գտնվող բերդը երբեւէ չհիշատակվեր 11-13-րդ դարերում, երբ Անին պատմական իրադարձությունների կիզակետում էր: Եւ այն հիշատակվել է, սակայն իր երկրորդ՝ Ծառաքար անունով:

Ղ. Ալիշանը ժամանակին, Կեչրորի տեղը որոշելու կապակցությամբ, անդրադարձել է Ծառաքարին (նկատի ունենալով Վարդան

---

[4] Պատմութիւն Անանուն զրուցագրի (կարծեցեալ Շապուհ Բագրատունի), թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Մելիքյանի, Երեւան, 1971, էջ 51:

[5] Նույն տեղում:

[6] Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 15-16:

Արեւելցու հաղորդումը, որ Կեչրորի ամիրան գրավել է Ծառաքարը), եւ ենթադրել, որ դրանք գտնվել են Երասխաձորում կամ Գաբեղենք գավառում[7]: Հետագայում տարբեր հեղինակներ, միմյանց կրկնելով, տարածել են այս տեսակետը[8]: Անգամ ծանոթ լինելով Ծառաքար-Մաղասբերդում գրված 1222 թ. հիշատակարանին, ուր պարզորոշ ասվում է բերդի երկանվանության մասին, ոմանք խուսափել են համապատասխան եզրահանգումից: Հատկանշական է Միքայել վրդ. Հովհաննեսյանի օրինակը, որը «Հայաստանի բերդերը» ստվար հատորում Մաղասբերդը եւ Ծառաքարը ներկայացնում է առանձին-առանձին, առաջինի վերաբերյալ վկայակոչում Անանուն զրուցագրին եւ Զաքարիա Քանաքեռցուն, երկրորդի համար՝ Կիրակոս Գանձակեցուն եւ Սամվել Անեցուն, նաեւ 1222 թ. հիշատակարանը, ուր նշվում է. «Զայս երազահանս ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր մեկնեալ Առաքել իմաստասէր աբեղայն, որ մականուն Վառ ասեն, եւ Մխիթար Կլելկանց եւ Շերանն, **ի յԱնի քաղաքին**

---

[7] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 47, Հ. Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, էջ 236:

[8] Հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության մեջ Մաղասբերդը համարվում է Անիի մատույցը պաշտպանող մի բերդ, իսկ Ծառաքարի համար ասվում է. «Նախկին Արշարունիքի արեւմտյան մասն էր կազմում Կեչրոր գավառը համանուն քաղաքով եւ Ծառաքար ամրոցով» (Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երեւան, 1976, էջ 98): Հայկական սովետական հանրագիտարանը «Մաղասաբերդ» անունով է կոչում բառահոդվածը («Մաղասաբերդ, Մաղազբերդ, Մաղազիբերդ»), այն տեղադրելով Շիրակում, Անիից 4 կմ հարավ (ՀՍՀ, Երեւան, 1981, հ. 7, էջ 189), իսկ Ծառաքարը չի նշում: Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանը նույնպես բերդը կոչում է «Մաղասաբերդ» (նշում նաեւ անվան այլ տառադարձություններ) եւ ավելացնում՝ «13-րդ դ. կոչվել է նաեւ Ծակքար» (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երեւան, 1991, էջ 659): Իսկ Ծառաքարը նույն բառարանը համարում է վանք՝ «Այրարատ աշխարհի, ըստ ոմանց՝ Գաբեղյանք գավառում, հավանաբար Կեչրոր ավանի մոտ, ըստ այլոց՝ Շիրակի գավառում, Անիի մոտ» (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երեւան, 1988, էջ 843):

դռան ի վերա բերդ եւ անունն Մաղասբերդ եւ բերդին անունն Ծարքար»[9]: Մեջբերումից հետո Մ. Հովհաննեսյանը գրում է. «Թէ ինչ ըսել կուզէ յիշատակագիրը մէջբերուած հատուածին մէջ՝ տարտամ կը մնայ, արդեօք ըսել կուզէ Անիի մօտ բերդ մը կար՝ որ Մաղասբերդն էր եւ այս բերդը կը կոչուէր Ծարքար, որով կը նոյնացնէ Մաղասբերդը Ծառաքար բերդին հետ, կը մնայ ստուգելի»[10]: Հեղինակը ճիշտ է հասկացել հիշատակագրին, որը հետագայի ընթերցողներին թյուրիմացությունից զերծ պահելու համար հատուկ նշել է բերդի երկու անունները: Բազմաթիվ հարակից տվյալներ նույնպես խոսում են Մաղասբերդի եւ Ծառաքարի նույնության մասին:

Անիի 11-12-րդ դարերի պատմության մեջ կարեւոր դեր է կատարել Ծառաքար անունով հիշատակվող այս բերդը, որն, ինչպես տեսանք, 1222 թ. հիշատակարանում կոչվում է «Անի քաղաքի դռան վրա»[11] գտնվող բերդ:

Սամվել Անեցին, որ ընդհանրապես համառոտաբան հեղինակ է, իր Ժամանակագրության մեջ բավականին մանրամասնորեն է պատմում Վեստ Սարգսի շինարարական ձեռնարկների մասին, նախ Խծկոնքում, ապա՝ Ծառաքարում: Նա գրում է. «ՆՀԳ (1024) Մեծապատիւ Վեստն Սարգիս՝ զկնի բազում շինուածոց բերդից եւ եկեղեցեաց զհրաշալի վանս զԽցկունս շինեաց, պայծառ պսակաւ զարդարեալ զսուրբ քաւարանն՝ որ ճանաչի անուն սրբոյն Սարգսի: ՆՀԷ (1028) Նաեւ **զԾառաքար վանքն՝ բերդ արարեալ** վեստն Սարգիս եւ պարսպեալ հաստահեղոյս կրով՝ բրգունս ձուլածոյս, յորում եւ ընդ սրբոյ խորանարդ տաճարին կանգնելոյ յանուն սուրբ Գէոր-

---

[9] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար (կազմեց՝ Ա. Մաթեւոսյան), Երեւան, 1984, էջ 131: Այս եւ հաջորդ մեջբերումներում կատարված ընդգծումները մերն են, Կ. Մ.:

[10] Մ. Յովհաննէսեան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 643:

[11] Այս արտահայտությունը համեմատելի է Անիի մերձակա Արջո Առիճի վանքին տրված բնութագրումին՝ «...ուխտիս Արջուառճո, որ ի դրան մայրաքաղաքիս Անոյ...» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 197):

գայ՝ շինէ երկուս այլ յարակիցս գմբեթաւորս՝ զսուրբ Յովհաննէս եւ զսուրբ Սեքենոս»[12]: Սամվել Անեցուց օգտվելով՝ Ծառաքարի մասին տեղեկությունը փոքր-ինչ համառոտված ներկայացնում է նաեւ Կիրակոս Գանձակեցին[13]:

Այսպիսով, ըստ Սամվել Անեցու Վեստ Սարգիսը բերդ է դարձրել Ծառաքարի վանքը, այն շրջապատել հաստ պարսպով եւ հզոր բուրգերով: Նկատենք, որ մինչեւ օրս կանգուն եւ հրատարակված տարբեր պատկերներից հայտնի բերդի պարիսպները հենց անիական շրջանի պարսպաշինության դրոշմն են կրում[14]:

Սամվել Անեցու վկայությունը գալիս է լույս սփռելու բերդի երկանվանության խնդրի վրա: Եթե հիմք ընդունենք Անանուն զրուցագրի հաղորդումը Մախազի մասին, որը հավանաբար այս տեղում բյուզանդական ռազմական մի հենակետ է հաստատել 6-րդ դարի վերջերին, ապա պարզ է, որ դրան հաջորդած արաբական տիրապետության դժնդակ ժամանակներում, երբ Հայաստանում բերդ չի կառուցվել (եղածներն էլ մեծ մասամբ ավերվել են), այն եւս կորցրել է իր ռազմական դերը: Ժամանակի ընթացքում այստեղ հաստատվել է մի փոքրիկ վանք, որը Ս. Գեւորգ անունով եկեղեցի ուներ: Ծառաքարը հենց այդ վանքի անունն է: Հովհաննես Սմբատի օրոք, Անիի թագավորության մեջ կարեւոր դեր ունեցող Վեստ Սարգիսը Ծառաքարի վանքը բերդի վերածեց: Ճիշտ է, պատմիչի հա-

---

[12] Մատենադարան, ձեռ. թիվ 5619, թերթ 94բ, ձեռ. թիվ 3613, թերթ 60ա, հմմտ. Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 106:

[13] «...Մեծապատիւ Վեստն Սարգիս զկնի բազում շինուածոյ բերդից եւ եկեղեցեաց շինեաց եւ զփառաւոր վանքն զԽցկօնսն եւ զեկեղեցին յանուն սրբոյն Սարգսի, եւ զԾառաքար վանքն բերդ արարեալ՝ պարսպեաց ամրագոյն, եւ եկեղեցիս շինեալ ի նմա փառաւորս»: Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 89:

[14] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 124:

ղորդմամբ նա այստեղ նաեւ երկու եկեղեցի կառուցեց[15], սակայն կարծում ենք, դրանք փոքրիկ մատուռներ էին, որոնց շնիությամբ յուրովի «քողարկվում էր» վանքը ռազմական կառույցի վերափոխելու բուն գործընթացը: Տեղին է հիշել, որ 19-րդ դարի սկզբին Մաղասբերդ այցելած Ն. Սարգիսյանն այստեղ տեսել է «աւերակք երից փոքր մատրանց»[16]:

Վեստ Սարգիսը Հովհաննես Սմբատ թագավորի մահվան ժամանակ նրա հոգաբարձուն էր[17]: Նրա կինը Կեչառիսի հիմնադիր Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի (մահ. 1021) դուստրն էր[18] եւ ուներ երկու եղբայր՝ Ապլջահապ եւ Վասակ, որոնցից երկրորդի սերունդը հետագայում, Շադդադյան ամիրաների ժամանակ, բարձր դիրք գրավեց Անիում:

Վեստ Սարգսի գործունեության մանրամասները զանց առնելով նկատենք, որ նրա եռանդուն բերդաշինությունը հեռու գնացող նպատակներ էր հետապնդում: Հովհաննես Սմբատի մահից հետո, պատմիչների վկայությամբ, Սարգիսը փորձեց գրավել թագավորական գահը, բայց անհաջողության մատնվեց: Պատմիչները նշում են, որ նա տեր էր մի շարք բերդերի: Անգամ Գագիկ Բ-ի թագադրումից հետո (1042) Սարգիսն իր ձեռքում էր պահում Անիի Ներքին բերդը, այնտեղից հարկադրված անցավ «բերդաքաղաքն Սուրմառի»[19]: Վրաց անանուն պատմիչը գրում է, որ Սարգիսը դաշնակցել է

---

[15] Հետաքրքրական է Վեստ Սարգսի կառուցած մատուռներից մեկի Սուրբ Սեքենոս կոչվելը, որն այդ անունով աղբյուրներից հայտնի միակ եկեղեցին է հայ իրականության մեջ: Մ. Ավգերյանի «Լիակատար վարք եւ վկայաբանութիւնք սրբոց» ընդգրկուն բազմահատորյակի մեջ Սեքենոս անուն չկա: Արդյոք Եկեղեցու հայրերից Սերենոսի (Սերինոս) անո՞ւնն է:

[16] Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 125:

[17] Արիստակիսի Լաստիվերցւոյ Պատմութիւն (աշխատասիրությամբ՝ Կ. Յուզբաշյանի), Երեւան, 1963, էջ 57:

[18] Տե՛ս աստ՝ Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում:

[19] Արիստակիսի Լաստիվերցւոյ Պատմութիւն , էջ 58:

Վրաց Բագրատ Դ (1027-1072) թագավորի հետ եւ նրան միացել «Անվո ինն բերդերով, բացի Ամբերդից»[20]: Կարելի է չտարակուսել, որ Անիի ինը բերդերից մեկն էլ Ծառաքարն էր: Մայրաքաղաքի պաշտպանական համակարգում, հարավային ուղղությամբ, այս բերդին կարեւոր դեր է վերապահվել:

Հայտնի չէ, թե Անիի բյուզանդական նվաճումից հետո ինչ է եղել Վեստ Սարգսի հետ: Սակայն հետաքրքիր է, որ հետագայում Ծառաքարն անցել է նրա կնոջ տոհմակիցներին: Վարդան Արեւելցին նշում է, որ 1186 թ. անեցիները մահմեդական ավազակներից գրավեցին Ծառաքար բերդը, որն Անիի Բարսեղ եպիսկոպոսի սեփականությունն էր. «...**առին անեցիք զԾառաքար՝ զիայրենիսն տեառն Բարսղի**...»[21]: Բարսեղ Բ եպիսկոպոսը, որը Սամվել Անեցու ժամանակակիցն էր, Ծառաքարը, որպես ժառանգական սեփականություն կարող էր ստանալ իր հորից՝ Հասան Մագիստրոսից[22], իսկ վերջինիս պապը՝ Վասակը, Վեստ Սարգսի կնոջ եղբայրն էր:

Վերադառնանք Անիի պատմության 12-րդ դարի իրադարձություններին, որտեղ Ծառաքարի դեպքերը հետաքրքիր դրվագ են ներկայացնում: 1064 թ. սելջուկյան գրավումից եւ Շադդադյանների իշխանության տակ անցնելուց որոշ ժամանակ հետո, Մանուչե ամիրայի տիրապետության շրջանում, քաղաքն աստիճանաբար վերականգնվում է: Ապիրատյան տոհմից Վասակի որդի Բարսեղ Ա-ն - Հաղբատում կաթողիկոս է օծվում (1081), իսկ Մանուչեի գլխավոր զորականներից մեկն է դառնում նրա եղբայր Գրիգորը: Անեցիների դիրքերի ամրապնդումը շարունակվում է նաեւ 12-րդ դարում, երբ խորանում է Շադդադյան ամիրաների ու զորացած Վրաց թագավորության միջեւ քաղաքի համար մղվող պայքարը: 1124-1126 եւ 1161-1164 թթ. քաղաքն անցնում է վրացիներին, բայց նորից վերա-

---

[20] Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հ. Ա, Երեւան, 1934, էջ 205-206:

[21] Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, Երեւան, 2001, էջ 136:

[22] Ն. Ակինեան, Ներսէս Լամբրոնացի, Վիեննա, 1956, էջ 394:

դարձվում Շադդադյաններին: Երրորդ անգամ վրացիները քաղաքին տիրանում են 1174-1176 թթ.: Այս դեպքերի ժամանակ (1160 թվականից մինչեւ 12-րդ դարի վերջը) քաղաքի ամենաազդեցիկ գործիչներից էր եպիսկոպոս Բարսեղ Բ Անեցին[23]:

Հենց այս շրջանում է, որ իրադարձությունների կենտրոնում է հայտնվում Ծառաքարը: Դեպքերի մասին հայտնում է Վարդան Արեւելցին, սակայն կարելի է ենթադրել, որ նրա համար սկզբնաղբյուր է հանդիսացել Մխիթար Անեցու Պատմության այժմ կորած հատվածը, քանի որ Արեւելցին Անիին անդրադառնալիս հիմնականում հենց նրանից է օգտվել: 1177 թ. մի դեպք նկարագրելուց հետո Արեւելցին գրում է. «Ի նոյն աւուրս առաւ Ծառաքար ի գողաց հրամանաւ Ղարաչայ ամիրային Կեչրորոյ, որ վաճառեաց զնա Խզլասլանայ ընդ բազում ոսկւոյ. եւ նա բնակեցոյց անդ արս վնասակարս, որք ոչ դադարէին յարենհեղութենէ ի տուէ եւ գիշերի. մինչեւ զքրիստոնեայս ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով եւ գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանանէին, որ եւ եօթն կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակաց՝ փողոտէին. որոց պատիւ տօնին խառնեսցի ի տօն մեր Լուսաւորչին Գրիգորի»[24]:

Խզիլ Արսլանը Գանձակի զորեղ Ելտկուզ աթաբեկի կրտսեր որդին էր, իսկ Ղարաչան՝ Կեչրորի իշխանության ամիրան: Ինչպես երեւում է, Վրաց պետության մեջ 1176-77 թթ. ծագած ապստամբության[25] եւ Անիի շուրջը ստեղծված անկայուն վիճակից օգտվելով՝ Ղարաչան Անիի ամիրայից գրավել է Ծառաքարը եւ վաճառել[26]:

---

[23] Տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 65-68:

[24] Մեջբերման վերջին տողը չկա վենետիկյան հրատարակության մեջ, ուստի վկայակոչում ենք Վարդանի Պատմության մոսկովյան հրատարակությունը՝ Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 171:

[25] Հ. Մարգարյան, Հյուսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ դարի պատմության մի քանի հարցեր, Երեւան, 1980, էջ 154-161:

[26] Հ. Մանանդյան, Երկեր, հ. Գ, Երեւան, 1977, էջ 129-130:

Վարդան Արեւելցին Կեչրորի ամիրային հիշատակում է նաեւ «Գորոզո խաչի» պատմության առիթով, գրելով. «Ի վեցհարիւր երեսուն եւ մի (1182) թուին Խարաչայն, որ էառ զԾառաքար եւ խորտակեաց կռանաւ զխաչն Գորոզոյ կոչեցեալ, անկեալ ի սիրտ նորա արհաւիրք երկիւղի՝ թողու յանկարծակի զտուն իւր զԿեչրօր եւ զՈւխթիսն եւ զամենայն ձորն Երասխայ եւ երթայ կնաւ եւ որդւովք ի Դուին...»[27]: Այնուհետեւ պատմվում է, թե ինչպես զարհուրելի մարդու կերպարանքով իրեն հայտնված խաչի տեսիլքից վախեցած Ղարաչան Դվինից փախչում է Շահ Արմենի մոտ, որը նրան տեղնուտեղը սպանում է՝ համաձայն տեսիլքում արված կանխագուշակության:

Վարդան Արեւելցու վերը բերված հատվածը կարելի է հասկանալ այնպես, որ Գորոզո խաչը Ծառաքարում էր, սակայն հնարավոր է, որ պատմիչը Ծառաքարի անունը տալիս է ցույց տալու համար, որ Գորոզո խաչը ջարդողը նույն մարդն էր, որ գրավեց Ծառաքարը: Իսկ պատմիչի հիշատակած թվականը (1182) Ղարաչայի Դվին գնալու եւ սպանվելու տարին է:

Այսպիսով՝ Կեչրորի չարագործ ամիրան ու Խզիլ Արսլանը Ծառաքարը դարձրել էին ավազակային որջ, որն անեցիներին մշտապես անհանգստություն էր պատճառում: Ծառաքարի մահմեդականների կատարած չարագործությունների մեջ ժամանակակիցների վրա հատկապես ցնցող տպավորություն է թողել յոթ հայ հոգեւորականների խոշտանգումն ու դաժան սպանությունը: Ուշագրավ է, որ Ծառաքարում նահատակված հոգեւորականներն անմիջապես համարվել են Հայ եկեղեցու վկաներ եւ Անիում նրանց հիշատակը պահպանելու համար քաղաքի եպիսկոպոսը սահմանվել է այն տոնվել է Ս. Գրիգոր Լուսավորչի տոնի օրը:

---

[27] Վարդան Արեւելցի, էջ 135:

Անեցիներն այլեւս չէին կարող հանդուրժել շուրջ 9 տարի շարունակվող այս վիճակը: Քաղաքի Շադդադյան Սուլթան ամիրայի հետ հայերը լավ հարաբերություններ ունեին[28]: Եւ ահա 1186-ին, Բագրատունիների անկումից հետո, առաջին անգամ անեցիները սեփական անվտանգությունը պաշտպանելու համար հարձակողական ռազմական գործողություն են ձեռնարկում: Վարդան Արեւելցին գրում է. «Ի վեցհարիւր երեսուն եւ հինգ (1186) թուին առին անեցիք զԾառաքար՝ զհայրենիսն տեառն Բարսղի, յանխնայ կոտորելով զորս անդ, բաց ի կանանց եւ ի մանկանց: Զոր լուեալ Ալիշէրն ամիրայն Դւնայ ճողէր զմօրուսն եւ սեւ զգենոյր ի վերայ կնոջն եւ որդեացն որ անդ եւ ի վերայ զօրացն կոտորման եւ ի քրիստոնեից փառաւորիւր սուրբ Երրորդութիւնն»[29]:

Ինչպես տեսնում ենք անեցիները հաջող ռազմական արշավ են իրականացնում, գրավում դժվարամատչելի բերդը: Դրանով նրանք ոչ միայն չեզոքացնում են ավազակային որջը, այլեւ վերականգնում Բարսեղ եպիսկոպոսի ժառանգական իրավունքը: Կարելի է ենթադրել, որ անեցիների համարձակ ելույթն անակնկալի է բերել բերդապահներին: Վտանգ ակնկալելու դեպքում Դվինի Ալիշեր ամիրան իր ընտանիքը չէր թողնի Ծառաքարում: Ամեն դեպքում, որքան էլ անեցիները չարացած էին եւ անխնա կոտորել են մահմեդական զորքը, բայց խնայել են կանանց ու երեխաներին:

Ծառաքարի հաղթանակն արձանագրվել է նաեւ «Պատմութիւն քաղաքին յԱնւոյ» երկում, որի կազմողը թեեւ օգտվել է Վարդան Արեւելցուց, սակայն եղելությունն ավելի է մանրամասնել, ուստի ավելորդ չենք համարում այն նույնպես վկայակոչել. «ՁԵՃԼԵ (1186)...ի սոյն թուիս... **հարեան զօրօք քաղաքացիքն յԱնւոյ եւ գնացին ի վերայ ամուր բերդին, որ Ծարաքար անուանի, որ էր բնիկ սեփական եւ ժառանգութիւն տեառն Բարսղի կաթողիկոսին հարցն եւ եղբարցն**, եւ քանդեալ զայն եւ զորս գտին արս՝ կոտորե-

[28] Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 68:
[29] Վարդան Արեւելցի, էջ 136:

ցին, բաց ի կանանց եւ ի տղայոց: Եւ լուեալ զայս Ալիշէր ամիրայն Դվնայ ճողէր զմորուսն եւ սեաւ զգենոյր ի վերայ կնոջն եւ որդւոցն, քանզի ի նոյն բերդին էին կինն եւ որդիքն: Բայց ոչ մեղանչեցին նոցա, այլ միայն զզօրսն կոտորեցին եւ զինչս եւ զկարասիս նոցա յափշտակեցին եւ տիրեցին բերդին եւ օրհնեցին զԱստուած, զոր լուեալ այլազգեացն ափշեցան եւ բեկան զօրութիւնք բազկի նոցա եւ ոչ կարէին ճիգ արձակէլ, իսկ քրիստոնեայքն ամենայն այնմ կողմանց աշխարհին լուեալ փառաւորէին զամենասուրբ Երրորդութիւնն»[30]:

1186-ին Ծառաքարն իրավաբանորեն անցավ Անիի ամիրայությանը, սակայն փաստացի՝ անեցի հայերին: 1198-ի վերջերին, երբ մահացավ Անիի վերջին ամիրա Սուլթանը, քաղաքի դարպասները բացվեցին Զաքարե ամիրսպասալարի առաջ[31]: Վրաց պետության կազմում ընդգրկված Անին դարձավ Զաքարեի տիրույթների վարչական կենտրոնը եւ անգամ մոնղոլական նվաճումից հետո (1236) բավական ժամանակ մնաց Զաքարյան տոհմի ձեռքում:

Ծառաքարի դեպքերին ծանոթանալուց հետո դժվար է տարակուսել, որ բերդն Անիի մերձակայքում էր, ոչ թե Երասխաձորում, կամ քաղաքից տասնյակ կիլոմետրեր հեռու գտնվող մեկ այլ վայրում: Այս մասին շատ ավելի խոսուն է 1222 թ. թարգմանված երազահանի հիշատակարանը, որին այժմ ավելի մանրամասն պիտի ծանոթանանք:

Թեպետ երազահանի թարգմանության բնօրինակը չի պահպանվել, սակայն հետագա ընդօրինակություններում (Մատենադարան,

---

[30] Մխիթար Անեցի, Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխատասիրությամբ Հ. Մարգարյանի (հավելված), Երեւան, 1983, էջ 109-110:

[31] Կ. Մաթեւոսյան, Անիում Զաքարյանների հաստատման ժամանակն ըստ նորահայտ հիշատակարանի, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1, էջ 280-283, Ա. Շահնազարյան, Զաքարյանների ազատամարտի առաջին փուլը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 140-147:

ձեռ. թիվ 695, գրված 1664 թ. Զեյթունում եւ Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 88, գրված 17-րդ դարի կեսերին Տրապիզոնում) արտագրվել է ձեռագրի հիշատակարանը, որտեղ մասնավորապես ասվում է. «Զայս երազահանս ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր մեկնեալ **Առաքել** իմաստասէր աբեղայն, որ մականուն **Վառ** ասեն, եւ **Մխիթար Կլելկանց** եւ **Շերանն**, ի **յԱնի** քաղաքին դռան ի վերա բերդ եւ անունն **Մաղասբերդ** եւ բերդին անունն **Ծարքար**: Ի յայն բերդին զընտանն մեծ մարդ մի կայր տաճկաց, եւ այս գիրս ի հետ յայն զընտանին եւ յայս Գ(3) հոգիս փոխել են ՈՀԱ (1222) թվին ի հայ լեզու ի սահմի ամսոյ Գ(3) աւուրն, որ է աւրինեալ անզրաւ յաւիտեանս, ամէն»[32]:

Վիեննայում պահվող ձեռագրում հիշատակարանը փոքր-ինչ տարբեր է, բերդի անունը չկա, բայց տեղը նշված է «ի յԱնի քաղաքի մաւտն», իսկ Մխիթարի տոհմանունն ավելի ճիշտ ընդօրինակությամբ է՝ Չեչկանց[33]: Հիշատակարանում հետաքրքրական է նաեւ Մաղասբերդում տաճիկ գերու պահվելու տեղի՝ զնդանի («բերդին զընտանն») հիշատակությունը, որը համեմատելի է Արեւելցու վերը նշված տեղեկության հետ, ըստ որի Ծառաքարում քրիստոնյա գերիներին պահում էին «ի խաւարային անդունդս ընկղմեալ»: Սա վկայում է, որ Ծառաքար-Մաղասբերդում թե մահմեդականների եւ թե քրիստոնյաների իշխանության ժամանակ գետնափոր բանտ է գործել: Սակայն ակնառու է այստեղ նետվածների նկատմամբ եղած վերաբերմունքի տարբերությունը:

Առաքել Անեցի աբեղան ամենայն հավանականությամբ Ծառաքարի վանքի հոգեւոր սպասավորն էր, իսկ Մխիթարն ու Շերանը՝

---

[32] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 131:

[33] Նույն տեղում, էջ 131-132: Բագնայրի 1233 թ. մի նվիրատվական արձանագրության մեջ նշվում են Չեչկանց տոհմից Ավետեացի որդի Մխիթարը, որը մեր թարգմանիչն է, նաեւ նրա որդի Վահրամը (Ն. Սարգիսեան, նշվ. աշխ., էջ 184): «Կլելկանց» սխալ ընդօրինակությունն ըստ երեւույթին առաջացել է բառասկզբում մեծ գրված փոքրատառ «չ»-ի վերին մասը «կ» եւ ներքին մասը «լ» կարդալու հետեւանքով:

հավանաբար զինվորականներ: Չի բացառվում, որ 1211 թ. Անիի Բեխենց վանքում նկարազարդված «Հաղբատի ավետարանի» լուսանցքներից մեկում պատկերված զինվորական հագուստով երիտասարդ Շերանիկը երազահանի թարգմանիչներից Շերան անվանվածն է: Մանրանկարիչ Մարգարեն նրա պատկերի մոտ մակագրել է. «Շերանիկ քանի գաս, ձուկն բեր»[34]: Ինչպես երեւում է Ախուրյան գետի ձուկը Անիի Բեխենց վանք տանող երիտասարդ զինվորականը գիր ու գրականության նկատմամբ սեր ունեցող մեկն է եղել եւ անհավանական չէ, որ հենց նա է Ծառաքար-Մաղասբերդի բերդապահ թարգմանիչը (Շերան-Շերանիկը հազվագյուտ անուն է):

Բուն երազահանը կրում է «Թուփառմուլք» կամ «Աղէկախօս» անվանումը: Նրա մեջ պահպանվել են միջին հայերենին բնորոշ բառեր ու արտահայտություններ, նաեւ շուրջ չորս տասնյակ արհեստների անուններ: Ուսումնասիրողներից ոմանք Առաքել Անեցուն են վերագրում նաեւ մեկ այլ աշխարհիկ երկի՝ «Պղնձե քաղաքի պատմության» թարգմանությունը[35]:

Այսպիսով Անիի երկրորդ ծաղկման շրջանում՝ Զաքարյանների օրոք Ծառաքար-Մաղասբերդը շարունակում էր մնալ ռազմական ամրություն, բայց նաեւ՝ մշակութային ավանդ թողած կենտրոն: Այդ դերը բերդը պահպանել է բավական երկար ժամանակ, որի մասին հայտնի դարձավ բոլորովին վերջերս հայտնաբերված մի քանի հիշատակարանների շնորհիվ:

Մատենադարանի թիվ 3681 մատյանը, որը պարունակում է Սամվել Անեցու ժամանակագրությունը, ընդօրինակվել է Արճեշի Ուռընկար վանքում 1315 թ.: 1343 թվականին Մաղասբերդում այդ ձեռագիրն անցել է Հավուց թառի Նաթանայել եպիսկոպոսին, որի

---

[34] Նույն տեղում, էջ 69: Կ. Մաթեւոսյան, Անիի քաղաքացիների դիմանկարները «Հաղբատի Ավետարանի» խորաններում, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1984, 3, էջ 162-168:

[35] Հ. Մկրտչյան, Առաքել Անեցի թարգմանիչ, «Անի», 1992, թիվ 2, էջ 28-30:

հիշատակարանում նշվում է. «ՉՂԲ (1343) սահմի: Ես նուաստ Նաթ (Նաթանայել – Կ. Մ.) եպ(իսկոպոս) Հայոց թառոյ յոյժ ...ե(ա)լ եւ անմխիթար տրտմե(ա)լ եւ ի լալագին աչա[լք] ...կացի ի Մաղըսբերդ Ձ (6) ամիս եւ յԱստուած հաւատարիմ հո[գե]լոր եղբայրն իմ Ամիրզայն մեծաւ սիրով ընկալաւ զիս եւ քաղցրութեամբ մխիթարեց, Աստուած զինքն մխիթարէ, ամէն» (Մատենադարան, ձեռ. թիվ 3681, թերթ 83բ-84ա)[36]:

Հավուց թառի վանքի առաջնորդ Նաթանայել եպիսկոպոսը հավանաբար հալածանքների պատճառով, ապաստանել է Մաղասբերդում, իր հոգեւոր եղբայր Ամիրզայի մոտ: Այս մասին նա գրում է այստեղ վեց ամիս մնալուց հետո եւ պատահական չէ, որ հիշատակարանի առաջին բառը ամսանվան հիշատակությունն է՝ «սահմի»: Սա ենթադրել է տալիս, որ նա հենց այդ ժամանակ է ձեռք բերել մատյանը եւ հիշատակագրել իր հետ կատարվածը, նաեւ երախտագիտությամբ հիշատակել Ամիրզային:

Իր բարերարին Նաթանայել եպիսկոպոսը հիշատակում է նաեւ մեկ այլ հիշատակարանում՝ «Քրիստոս Աստուած պահեայ զպարծանաց եղբայրքն **զպարոն Ամիրզայն** եւ **զԹանզուքն** եւ փրկեայ ի չարեաց» (թերթ 45բ): Ամիրզայի պարոն անվանվելը խոսում է նրա մանր ազնվականության դասին պատկանելու մասին: Երրորդ անգամ Ամիրզան եւ նրա ազգականները հիշատակվում են ձեռագրի 93բ-94ա թերթերի թերի պահպանված երկտող հիշատակագրության մեջ. «Քրիստոս Աստուած քում արդ բարեխաւսութեամբ/// յարքայութիւնդ հոգեւոր մաւրն իմ Արազ Խաթունին, որ բազում ար[ար]/// զմեզ ///եայ զԱմիրզայն եւ զՄաղազ Խաթ[ունն]...»: Այս հիշատակագրություններով ուրվագծվում է Ամիրզայի ընտանիքի կազմը: Արազ Խաթունը հավանաբար նրա մայրն էր, որին Նաթա-

[36] Ձեռագրի եւ Նաթանայել եպիսկոպոսի կատարած հավելումների մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երեւան, 2006, էջ 147-167:

նայելը կարող էր իր հոգեւոր մայրը համարել: Մաղազ Խաթունը պետք է որ Ամիրզայի կինը եղած լինի, իսկ նախորդ հիշատակագրության մեջ նշվում է Ամիրզայի եղբայրը՝ Թանզուքը: Այս ընտանիքը բնակվում էր Մաղասբերդում, ուր եւ իր գիրկն էր առել տարագիր Նաթանայել Հավուցքառեցուն:

14-րդ դարի 40-ական թվականներին Անին տակավին պատկանում էր մոնղոլների գերիշխանությունն ընդունած Զաքարյաններին[37]: Ավելացնենք, որ մշտապես Անիի հետ սերտ կապ ունեցող Մաղասբերդի մասին 1222 թվականից հետո, մինչեւ 17-րդ դարը, այլ տեղեկություն հայտնի չէր, եւ Նաթանայելի հիշատակարանը մասամբ լրացնում է այդ բացը:

Ձեռագրում կան նույն շրջանի իրադարձություններին վերաբերող եւ պատմական գործիչների անուններ պահպանած, սակայն ցավոք խիստ մաշված այլ հիշատակագրություններ: Թեեւ դրանք կցկտուր տեղեկություններ են պարունակում, սակայն հարակից այլ նյութերի համադրումով հնարավոր է դառնում ուրվագծել Անիի շրջանում եւ բուն Մաղասբերդում 14-րդ դարի 40-ական թվականներին ստեղծված իրավիճակը: Նախ ներկայացնենք հիշատակագրությունները:

«Աստուած լոյս արայ խաւարն, որ/// բազում զորաւք եկն ի վերայ **բերդիս Մաղասայ**///» (92բ): Հիշատակագրության մեջ նշվում է Մաղասբերդի նկատմամբ ձեռնարկված ինչ-որ հարձակման մասին:

«///աց սրբոցն միջնորդութեամբ ազա[տեա՞] **[զՇրվ]անշահն** ի յանաւրի[նաց] (4ա):

«///այ զպարոն **Թամարն** եւ **զՇրվանշահն** ի ձեռա/// եւ ժառանգե-

---

[37] Վահրամ Զաքարյանի, Շահնշահ Գ-ի, ինչպես նաեւ Անիում նրանց նշանակած պաշտոնյա Գրիգոր Խուցեսի ու նրա որդիներ Ասիլի եւ Պարոնի գործունեության մասին պահպանված մի շարք տվյալներ վկայում են, որ քաղաքն այդ շրջանում համեմատաբար բարվոք վիճակում էր գտնվում: Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 343, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 331, 364-365:

ցայ զտունս հայրէնի: Ամէն» (5ա):

«(Քրիստոս) որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, սուրբ Աստուածածնիդ միջնորդութեամբ եւ քո ///ած խաչիդ եւ սուրբ ամենափրկչիդ եւ սուրբ/// (114բ), [**զ**]**Շահան[շ]ահ** եւ **զՇրվանշահ** յանաւրինացն չարեն/// եա եւ հաստատեա///» (115ա)[38]:

Վերջին երեք հիշատակագրությունները հնարավոր է, որ գրվել են Հավուց թառում, քանի որ հատկապես վերջին հատվածում նշված Ամենափրկիչը այն նշանավոր փայտյա քանդակազարդ խաչն է, որն այդ վանքի գլխավոր սրբությունն էր (այժմ պահվում է Ս. Էջմիածնում): Հիշատակագրություններում նշված Շրվանշահը Անիում իշխած վերջին Զաքարյան իշխանի՝ Շահնշահ Գ-ի եղբայրն էր: «Բագնայրի ավետարանի» 14-րդ դարի մի հիշատակարանի գրիչը խնդրում է հիշել «...աթապակ **Շահանշահին** եւ եղբաւր իւրոյ պարոն **Շրվանշահի**...»[39]:

Շահնշահ Գ-ը «տաճկաց զորքի» հարձակման պատճառով մազապուրծ փախել է Անիից, ինչպես այդ մասին վկայում է 1357 թ. Անիում գրված մի հիշատակարան, որտեղ խոսվում է դրանից որոշ ժամանակ առաջ տեղի ունեցած դեպքերի մասին. «...զօրքն տաճկաց բազմացեալ ամբոխիւք հասին **գաւառն քաղաքին Անոյ**: Եւ զաղետս եւ զոր ինչ արարին ի վանս եւ ի գեաւղս եւ ի գաւառիս ո՞ր բերան պատմէ կամ ո՞ր լեզու խօսի, քանզի անխնայապէս գործեցին զիւրեանց չարիս ի հաւատացեալս Սուրբ Երրորդութեանն... Եւ զորս ըմբռնեալ տանէին գերիս՝ բանդից եւ տանջանաց մատնեալ: ...Որոց գլուխ **աթապակ եւ մեծ սպասալար Շահնշահ**, **որ հազիւ**

---

[38] Ձեռագրում եղած հիշատակագրությունները եւ Նաթանայելի հավելումները տե՛ս Կ. Մաթեւոսյան, Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 129-142:

[39] Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 891, Գ. Հովսեփյան, Հավուց Թառի ամենափրկիչը եւ նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երեւան, 1987, էջ 29:

կարաց զերծանիլ ի ձեռաց թշնամեացն»[40]: Հավանաբար նույն դեպքերն են ակնարկվում Հովհաննավանքի մի անթվական արձանագրության մեջ: Գրիգորի որդի Ամսայջանը գրում է. «...հեց ելաւ **պար(ոնաց) ձեռնէ զերկիրս առին**, ես չբաժանեցայ ի ծառայութենէս: Աստուած պարոնացն աջողում էրետ երկիրս էրեկ, Ոհանայվանք ինձ տվին հէրէնիք...»[41]: Ապա նշում է Հովհաննավանքում իր բարեգործությունները՝ կատարված «...վասն արեւշատութեան պարոնաց մերոց եւ պարոն **աթապակ Շահանշահի եւ Շրվանշահի**»[42]:

Ինչպես տեսնում ենք Անիի հիշատակարանի եւ Հովհաննավանքի արձանագրության տվյալներն ընդհանուր եզրեր ունեն Մաղասբերդում պահված ձեռագրի հիշատակագրությունների հետ, ուր հիմնական գործիչը Շրվանշահն է: Կարելի է ենթադրել, որ նա իր եղբոր նման հալածվել է: Հնարավոր է, որ Մաղասբերդը հենց Շրվանշահին էր պատկանում, եւ Նաթանայելի հովանավոր Ամիրզան նրա ենթականերից մեկն էր:

14-րդ դարի 50-ականների սկզբին Զաքարյանները Մելիք Աշրաֆի (1344-1357) բռնությունների հետեւանքով վերջնականապես կորցրեցին Անին, հավանորեն նաեւ Մաղասբերդը: Նաթանայել Հավուցթառեցու 1343 թվականի հիշատակարանը վկայում է, որ այդ ժամանակ բերդը դեռեւս հայերի ձեռքին էր:

16-րդ դարի սկզբին Մաղասբերդը հիշատակվում է մի վրացական փաստաթղթում, որը վերաբերում է «Սամցխե-սաթաբագոյի» հոգեւոր պետերին[43]: 17-րդ դարում բերդի՝ որպես գործող կենտրոնի մասին պատմում է Զաքարիա Քանաքեռցին (1627-1699): Այն բնակեցված է եղել ընդհուպ մինչեւ 19-րդ դարը[44]:

---

[40] Մատենադարան, ձեռ. թիվ 6764, թերթ 264ա, Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 364:

[41] Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, էջ 101:

[42] Նույն տեղում:

[43] Վրացական իրավունքի հուշարձաններ, հ. 3, Թբիլիսի, 1970, էջ 245 (վրացերեն):

[44] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 311-312:

Ծառաքար-Մաղասբերդը որպես հնավայր քիչ է ուսումնասիրվել: Վերջին տասնամյակներին թուրքական իշխանությունները բերդի շրջանը համարել են փակ գոտի: Այնուամենայնիվ 2005 թ. այստեղ ուսումնասիրություն են կատարել ֆրանսիացի հետազոտողները, որոնք տիեզերքից կատարված լուսանկարների միջոցով պարզել են, որ բուն բերդի մոտ հնում եղել է նաեւ բավական մի մեծ բնակավայր: Տեղում հետազոտությունը շարունակելով՝ նրանք Մաղասբերդից մոտավորապես 350 մ հարավ-արեւմուտք հայտնաբերել են շուրջ 800 մ երկարությամբ եւ 150 մ լայնությամբ տարածք ընդգրկող բնակավայրի հետքեր, որը նրանք կոչում են քաղաք (տե՛ս հատակագիծը): Ֆրանսիացի հետազոտողներն անդրադարձել են նաեւ Մաղասբերդի պատմությանը, կատարել չափագրումներ, հրապարակել են իրենց կատարած լուսանկարները[45]:

Ամփոփելով կարող ենք ասել, որ 6-րդ դարի վերջերին հիմնված բյուզանդական զինվորական հենակետը, որ թերեւս հիմնադրի անունով կոչվել է Մաղասբերդ, հետագայում, արաբական տիրապետության ժամանակ, լքվել ու վեր է ածվել փոքրիկ վանքի, որը Ծառաքար անունն է կրել: Բագրատունյաց շրջանում գնահատելով Ծառաքարի վանքի ռազամվարական դիրքը՝ Վեստ Սարգիսն այն կրկին դարձրել է բերդ, կառուցել հզոր պարիսպներ եւ բուրգեր: Հետագայում այն դարձել է Վեստ Սարգսի կնոջ տոհմակիցների՝ Հասանյանների սեփականությունը: Շուրջ 1177 թ. Ծառաքարը գրավել է Կեչրորի ամիրան, բերդում հաստատվածները զբաղվել են ավազակությամբ: 1186-ին անեցիները զինված հարձակմամբ ազատագրել են Ծառաքարը: Հետագայում բերդն անցել է Զաքարյաններին, որոնց տիրապետության տակ է մնացել մինչեւ 14-րդ դարի 50-ական թվականները:

---

[45] P. Dangles, N. Prouteau, Observations sur quelques fortresses de la région d'Ani, "Revue des études Arméniennes, Tome 30, Paris 2005-2007, p. 273-299.



Ծառաքար-Մաղասբերդը հետք է թողել նաեւ գրավոր մշակույթի ասպարեզում: 1222 թ. այստեղ Առաքել Անեցի աբեղան, իր երկու համաքաղաքացիների՝ Չեչկանց Մխիթարի ու Շերանի հետ արաբերենից հայերեն են թարգմանել մի երազահան: 1343 թ. Մաղասբերդում հիշատակարան է գրել Հավուց թառի վանքի առաջնորդ Նաթանայել եպիսկոպոսը, որն ապաստանել էր բերդաբնակ իր բարեկամ պարոն Ամիրզայի մոտ:

ԴՎԻՆ-ԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՐՈՒՃ ԵՒ ԹԱԼԻՆ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ

Բագրատունյաց Հայաստանում արագորեն ծաղկած խոշոր քաղաքների՝ Անիի, Դվինի, Կարսի, Արծնի կողքին վերելք ապրեցին մի ամբողջ շարք գյուղաքաղաքներ եւ ավաններ: Դրանց թվում էին Արուճ եւ Թալին հնագույն բնակավայրերը, որոնք գտնվելով Անիի Բագրատունյաց թագավորության կազմում, անմասն չէին սկսված ազգային-պետական զարթոնքից եւ տնտեսական որոշակի դեր ունեին թագավորության մեջ: Անեցիների համար այս բնակավայրերը հատկապես մեծ արժեք էին ներկայացնում բազմաթիվ բերքատու այգիների ու մրգաստանների շնորհիվ, ինչից հիմնականում զուրկ էր Շիրակը:

Թալինն ու Արուճը գտնվում էին Անին երկրի հարավարեւելյան շրջանների հետ կապող եւ մասնավորապես Դվին տանող գլխավոր ճանապարհի վրա, որն ուղղակիորեն նպաստում էր բնակավայրերի տնտեսական շփումների ընդլայնմանը՝ հնարավորություն ընձեռելով մասնակից լինել տարանցիկ առեւտրին: Տեղի քարավանատների հնարավորությունների ու շինարարական արվեստի մասին Թ. Թորամանյանը գրում է. «Թալինի եւ Թալիշի (իմա՝ Արուճի – Կ. Մ.) մոտերը կան այնպիսի հսկայական իջեւաններ, որոնց մեջ կարող էին պատսպարվել հարյուրավոր մարդիկ եւ հարյուրավոր անասուններ, սայլեր եւ այլն: Այս իջեւանները եւս շինված են այնպիսի խնամքով եւ սրբատաշ քարերով, ինչպես շինված են արքայական, իշխանական պալատները»[1]:

Արուճի եւ Թալինի պատմական զուգահեռները սկսվում են 7-րդ դարից, երբ այս բնակավայրերը հաջորդաբար դարձան Հայոց իշխան տիտղոսը կրող եւ Հայաստանի փաստական կառավարումն իրականացնող իշխանների նստավայր՝ Արուճը՝ Գրիգոր Մամիկոնյանի (661-685), Թալինը՝ Ներսեհ Կամսարականի (688-692) հա-

---

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, աշխ. երկրորդ ժողովածու, Երեւան, 1948, էջ 36:

մար: Արուճի եւ Թալինի իշխանանիստ կենտրոն դառնալը նշանավորվեց նախ եւ առաջ այդ բնակավայրերում ընդարձակ շինարարության ծավալմամբ: Գրիգոր Մամիկոնյանի՝ Արուճում կատարած շինարարության մասին պատմում է կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին նշելով «չքնաղագեղ եկեղեցու», «արքունիքի» (պալատ) ինչպես նաեւ «հաստահեղոյս քարամբք եւ կրով» բնակավայրը պարսպապատելու մասին[2]: Այդ կառույցների մի մասն ավերակ է[3], իսկ մեծադիր Կաթողիկե եկեղեցին (գրականության մեջ Ս. Գրիգոր անվանված)[4], թեեւ երկրաշարժի հետեւանքով զրկվել է գմբեթից, բայց կանգուն է, եւ մեծապես պահպանել է իր վեհաշուք տեսքը:

Թալինում Ներսեհ Կամսարականը երկու եկեղեցի է կառուցել, մեկը՝ մինչեւ Հայոց իշխան տիտղոսն ստանալը՝ Ս. Աստվածածին

---

[2] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երեւան, 1996, էջ 94:

[3] Արուճի իշխանաշեն պալատից արեւելք պահպանվել են բնակավայրի հին եռանավ բազիլիկ եկեղեցու ավերակները, որոնք 1950-ական թթ. կատարված պեղումների ժամանակ համարվել են պալատի մի մասը: Սակայն 2006 թ. լրացուցիչ պեղումների շնորհիվ հաստատվեց կառույցի բազիլիկ եկեղեցի լինելու փաստը (Կ. Մաթեւոսյան, Պատմամշակութային նորաբաց էջեր, «Հայ արվեստ», 2006, N 4, էջ 34-36):

[4] 20-րդ դարի սկզբին Արուճի տաճարին անդրադարձող հեղինակներից ոմանք այն կոչել են Ս. Գրիգոր, որը հետո. լայն տարածում է գտել: Մինչդեռ տաճարի հիմնարկեքի արձանագրության մեջ Գրիգոր Մամիկոնյանն այն անվանում է Կաթողիկե՝ «ՀԻՄՆԱՐԿԵՑԱՒ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԷՍ» (Կ. Մաթեւոսյան, Արուճ, Երեւան, 1987, էջ 54): Հաջորդ անգամ Արուճի եկեղեցին Կաթողիկե է անվանվում շինության 973 թ. նորոգման արձանագրության մեջ (նույն տեղում, էջ 60): Արուճի տաճարը Կաթողիկե են անվանում նաեւ պատմիչները՝ Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Սամվել Անեցին, Մխիթար Անեցին, Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցին: Եկեղեցիներին տրվող «Կաթողիկե» անունն ունի երկու նշանակություն՝ գմբեթավոր եւ գլխավոր (ընդհանրական): Այդպես են կոչվել էջմիածնի Մայր տաճարը, Դվինի կաթողիկոսարանի եկեղեցին, Անիի Մայր տաճարը: Արուճի տաճարն այսուհետեւ պետք է կոչել **Կաթողիկե**, ինչպես որ անվանված է եկեղեցու հիմնարկեքի արձանագրության մեջ եւ միջնադարյան այլ սկզբնաղբյուրներում:

փոքր եկեղեցին[5], մյուսը՝ մեծաշեն եւ շքեղ Կաթողիկե եկեղեցին, Հայոց իշխան դառնալուց հետո[6]:

8-րդ դարի սկզբներից արաբների ճնշումների հետեւանքով ծանր շրջան է սկսվում հայ իշխանական տների, հատկապես բյուզանդական կողմնորոշում ունեցողների համար, որոնցից գլխավորները Մամիկոնյաններն ու Կամսարականներն էին: 772-775 թթ. Մամիկոնյանների առաջնորդած հակաարաբական ապստամբության պարտությունից հետո այս տոհմը կորցրեց իր հիմնական տիրույթները[7]: 8-րդ դ. վերջերին թուլացած Կամսարականներն իրենց

---

[5] Արձանագրության մեջ հիշում է նաեւ կնոջը՝ Շուշանին եւ որդուն՝ Հրահատին (տե՛ս Վ. Գրիգորյան, Հայաստանի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երեւան, 1982, էջ 20):

[6] Թալինի Կաթողիկեն չունի շինարարական արձանագրություն, որի պատճառով ուսումնասիրողների մոտ եկեղեցու կառուցման թվականի եւ կառուցողի ինքնության հարցը տարակարծություններ է առաջացրել: Հնարավոր է, որ արձանագրության բացակայության պատճառը Ներսեհի վաղաժամ մահն է եղել: Նա իշխել է չորս տարի, սակայն նման խոշոր կառույցի համար նվազագույնը 5-6 տարի էր անհրաժեշտ: Թալինի Կաթողիկեից առաջ կառուցված Դարույնքի եւ Արուճի իշխանական տաճարները, նաեւ Գարդմանի եկեղեցին, որմնանկարազարդել են տվել կառուցող իշխանները (Ղեւոնդ, Պատմություն, Երեւան 1982, էջ 27, Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 195-196, Կ. Մաթեւոսյան, Արուճ, էջ 52-53): Յոթերորդ դարի արժեքավոր որմնանկարներ ունի նաեւ Թալինի Կաթողիկեն, սակայն դրա վրա պահպանված ներկագիր արձանագրության համաձայն պատկերներն ստեղծվել են Մովսես եկեղեցապանի պատվերով (Կ. Մաթեւոսյան, Արուճի Ս. Գրիգոր եւ Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները, «Էջմիածին», 1982, Ը-Թ, էջ 70): Դա նշանակում է, որ շինարարության ավարտից հետո, երբ հերթը հասել է նկարազարդմանը, իշխանը ողջ չի եղել: Բայց որ բուն եկեղեցու կառուցողը Ներսեհ Կամսարականն է, չպետք է կասկած հարուցի, քանի որ Կաթողիկեի ծավալն ու շքեղությունն ինքնին խոսում են այդ մասին:

[7] Այն, որ Արուճն այդ շրջանում է խլվել Մամիկոնյաններից, երեւում է նաեւ տեղի Կաթողիկե եկեղեցու արեւելյան պատի ձախ կողմում փորագրված արաբերեն կարճ արձանագրությունից, որտեղ Հասան իբն Մուհամմադ իբն Իսա ալ-Կալասանին գրել է իր անունը եւ թվականը՝ 786-787 (А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, VIII-XVI вв. Ереван, 1987, с. 47.)

տիրույթները վաճառեցին Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունուն[8]:

Բագրատունյաց շրջանում աղբյուրներում «գյուղաքաղաք» անվանվող Արուճն ու Թալինն անմիջականորեն պատկանել են Բագրատունյաց արքունիքին, որի մասին կարելի է դատել որոշ արձանագրություններից: Արուճի Կաթողիկեի պատին հարկ թողնելու մասին արձանագրություն է գրվել Սմբատ Բ Բագրատունու (977-989) անունից: Գագիկ Ա Բագրատունու (989-1017) կինը՝ Կատրամիդե թագուհին, իր արձանագրության համաձայն, սալահատակել է տվել Թալինի Կաթողիկեն[9]: Նրա որդին՝ Հովհաննես Սմբատը (1017-1041) Կաթողիկեի պատին արձանագրություն է թողել եկեղեցուն «Կոստանդեանց» կոչված այգին նվիրելու մասին[10]:

Արուճի տնտեսական վերելքը Բագրատունիների օրոք սկսվել էր դեռ 9-րդ դարում: Կաթողիկեի հարավարեւելյան որմնամույթի վրա փորագրված 867 թ. մի ուշագրավ արձանագրություն վերաբերում է ջրի համար Արուճի եւ Կոշի միջեւ ծագած վեճին ու գյուղացիների ընդհարմանը: Արձանագրությունից երեւում է, որ վեճ ու կռվի նախաձեռնողները արուճեցիներն են եղել եւ, վերջին հաշվով, հաղթել ու վերցրել են հարեւան գյուղի ոռոգելի ջրի մի մասը: Հավանաբար այդ ժամանակ Արուճը ընդարձակել էր իր ոռոգելի հողատարածությունները, ինչն էլ մեծացրել էր ջրի պահանջարկը[11]:

---

[8] Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 106:

[9] Ս. Ավագյան, Վիմագրական պրպտումներ, Երեւան, 1986, էջ 187:

[10] Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 139:

[11] Ըստ արձանագրության, գործին միջամտել է Բագրատունի Սմբատ սպարապետը: Նրա առաքած վերակացու Գրիգորը վերականգնելով հիշյալ բնակավայրերին հասանելիք ջրի նախնական չափը, արձանագրության վերջում սպառնում է «մահվամբ պատուհասել» ջրաբաշխման սահմանված կարգը խախտողներին: Ավելացնենք, որ Կոշը նույնպես ծաղկուն բնակավայր էր, որը հետագայում Զաքարե եւ Իվանե Զաքարյանների հատուկ ուշադրությանն արժանացավ (Կ. Մաթեւոսյան, Կոշավանքը VII-XIV դդ., «Էջմիածին», 1991, Ա-Բ-Գ, էջ 95-108):

Ոռոգման ջրի կարիք ուներ նաեւ Թալինը: Կաթողիկեի մույթերից մեկի վրա պահպանված 783 թվականի արձանագրությունը վկայում է, որ Ուխտատուր վանականը եւ նրա եղբայր Տուտին ջուր են բերել բնակավայր[12]:

9-13-րդ դարերում Արուճն ու Թալինը բազմաթիվ մրգատու այգիներով շրջապատված հարուստ բնակավայրեր էին: Նրանց բնակչությունն այդ ժամանակ կազմված էր մեծ մասամբ այգեգործներից, սակայն կարելի է կարծել, որ այնտեղ եղել են նաեւ արհեստավորներ, առեւտրականներ: Զաքարիա Սարկավագ Քանաքեռցու մոտ պահպանված մի արժեքավոր վկայությունից իմանում ենք, որ Արուճի եւ Թալինի բնակչության մեջ եղել են նաեւ ազատներ: Պատմիչը Սանահինի վանքի հին ձեռագրերից մեկից քաղել է Մարմարաշենի Երեմիա վանահորը նվիրված մի պատմություն: Այստեղ նշված է, որ 1033 թ. Հովհաննավանքում մի կարեւոր փաստաթուղթ է կազմվել, որը կնիքով հաստատել են Սոսթենես եւ Գրիգոր վարդապետները, ստորագրել են Վաղթանգ իշխանն ու «**ազատքն Արուճայ եւ Թալնայ**...»[13]:

Արուճը եւ Թալինը քարավանային ճանապարհի վրա գտնվելով՝ մասնակցել են տարանցիկ առեւտրին, ունեցել են շուկաներ, որոնք հավանաբար գտնվել են քարավանատների մոտ:

ԱՐՈՒՃԻ ԴՐԱՄԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՆ

Արուճի Կաթողիկե եկեղեցու հարավային պատին պահպանվել է 987 թ. Սմբատ Բ Բագրատունու մի ուշագրավ արձանագրություն, որով նա Արուճում բաժ հարկից ազատում էր շալակավորներին. «ՅԱՆՈՒՆ Ա(ՍՏՈՒՃՈ)Յ, ԻՆՉ ԹՈՒԱԿԱՆ :ՆԼԶ: ԵՍ ՍՄ(Բ)ԱՏ ՇԱՀԱՆ-

[12] Ս. Ավագյան, Վիմագրական պրպտումներ, Երեւան, 1986, էջ, 192, տե՛ս նաեւ Գ. Շախկյան, Հայ ժողովրդի ճարտարապետական-շինարարական գործունեությունը 8-9-րդ դարերում, Երեւան, 2004, էջ 153-155:

[13] Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հ. Գ, Վաղարշապատ, 1870, էջ 10 (այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.):

ՇԱՀ ՈՐԴԻ ԱՇՈՏՈ ՇԱՀԱՆՇԱՀԻ ԱՋԱՏԷՑԻ ՎԱՍՆ ԻՄ ՀԱՒՐՆ ՀԱՒԳՈՅՆ ԵՒ ԻՄ ԱՐԵԻՇԱՏՈՒԹԵԱՆՆ ԵՒ ՄԵՂԱՑ ԹԱՒՂՈՒԹԵԱՆ, ՁՇԱԼԱԿԱՒՈՐ Ի ԲԱԺԷ ՇՆՈՐՀԻ(Ի)Ն ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԵԹԵ ՈՔ ԻՄ ՎՃՌԻՍ ԴԻՄԱԴԱՐՁ ԼԻՆԻ ՆՁՈՎԵԱԼ ԻՑԷ...»:

Նախկինում ենթադրվել է, որ «շալակավոր» են անվանվել շալակով ապրանքներ փոխադրողները, եւ քանի որ արձանագրության մեջ հիշվում է, թե բաժից ազատվում են միայն շալակավորները, հետեւաբար փոխադրամիջոցներով (սայլ, ձի, ջորի) բերվող ապրանքների դիմաց հակ էր գանձվում, որի համար, ըստ ակադեմիկոս Բ. Առաքելյանի, «Արուճում, իբրեւ գյուղաքաղաքում, կային հարկ հավաքող պաշտոնյաներ, որոնք բաժ էին գանձում շուկա հանվող մթերքներից»[14]:

Ակադեմիկոս Հ. Բարթիկյանն առանձին քննությամբ անդրադարձել է «շալակավոր» բառին, որը երկրորդ անգամ հիշատակվում է Բագարատ Վխկացու՝ Անիի Մայր տաճարի 1060 թ. արձանագրության մեջ, որտեղ քաղաքի կառավարիչ կատապանը նշելով, որ սայլով եւ գրաստով ապրանք բերող «գինեւոր անեցին» բաժից ազատվում է, ավելացնում է. «եւ շալակաւոր անեցի բամբէնցավ բաժին կէսն ազատ է»[15]: Նրա կարծիքով «շալակ» արմատն այս երկու դեպքում էլ օգտագործված է «մախաղ, պարկ, տոպրակ» իմաստով. «շալակաւոր՝ նշանակում է քսակաւոր...: «Շալակաւոր»-ը օգտագործվել է հունարեն «սակկուլարիոս» իմաստով, որի բառացի թարգմանությունն է»[16]: Վերջիններս սեղանավորների, լումայա-

---

[14] Բ. Առաքելյան, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում, 9-13-րդ դդ. հ. Ա, Երեւան, 1958, էջ 86:

[15] Դիվան հայ վիմագրության, պր. Ա, էջ 37: Պ. Մուրադյանն անդրադառնալով այստեղ անհասկանալի համարված «բամբէնցավ» բառին, այն սրբագրելով «բամընցավ», թարգմանում է «արդարությամբ» (Պ. Մուրադյան, Բնագրագիտական դիտարկումներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, 1-2, էջ 177):

[16] Հ. Բարթիկյան, Բագրատունյաց Հայաստանի արհեստներից (Շալակաւոր՝ բեռնակիր, թե՞ բանկիր), Պատմա-բանասիրական հանդես, 1992, N 2-3, էջ 158:

փոխների կարգին պատկանող մարդիկ էին, որ զբաղվում էին դրամափոխությամբ եւ դրամական գործարքներով: «Շալակաւորի» սույն բացատրությունն ընդունելով Պ. Մուրադյանը գրում է. «Տուր եւ առի այս նշանավոր կենտրոնատեղին (Անին - Կ. Մ.) բնականաբար պիտի ունենար «սեղանավորի», «լումայափոխի» եկամտաբեր զբաղմունքով պարապող մարդիկ, որ այժմ ճանաչելի են դառնում «շալակաւորի» վերծանմամբ»[17]:

«Շալակավորի» հիշատակումն Արուճում, ընդ որում Անիի արձանագրությունից 73 տարի առաջ, վկայում է այստեղ առեւտրական կենտրոնի առկայության եւ մշտապես կատարվող դրամական գործարքների կամ դրամափոխության մասին, այլապես կարիք չէր լինի քսակավոր-դրամափոխներին հարկից ազատել թագավորական հատուկ հրամանով: Այնուամենայնիվ, ակներեւ է, որ Արուճը, որպես առեւտրական կենտրոն, չէր կարող համեմատվել Անիի կամ մեկ այլ խոշոր քաղաքի հետ, եւ հարց է ծագում, թե 10-րդ դարի 80-ական թվականներին ինչ գործ ունեին շալակավոր-դրամափոխներն այստեղ, որոնք եթե փոքրաթիվ լինեին, դժվար թե Բագրատունի թագավորի ուշադրությանն ու բարեհաճությանն արժանանային:

Մեր կարծիքով, Արուճում քսակավորների հայտնվելը պայմանավորված էր բնակավայրի աշխարհագրական դիրքով: Գտնվելով Դվին-Անի առեւտրական մայրուղու կենտրոնական մասում, Արուճը միայն քարավանային կանգառ չէր: Եթե Անիի ուղղությամբ հաջորդ քարավանատունը գտնվում էր Թալինում[18], ապա Դվինի ուղղությամբ այլ քարավանատուն հայտնի չէ (հնարավոր է, որ առեւտրական հաջորդ հանգրվանը Վաղարշապատի մոտ եղած լինի) եւ, փաստորեն **Արուճը Արարատյան դաշտավայրից դեպի Շիրակ անցնող քարավանային ճանապարհի յուրօրինակ անցումային կե-**

[17] Պ. Մուրադյան, Բնագրագիտական դիտարկումներ, էջ 176:

[18] Հեռավորությունը Թալինի քարավանատնից մինչեւ Արուճի քարավանատուն այժմյան ճանապարհով կազմում է 24 կմ, իսկ հնում, նկատի ունենալով ճանապարհի ոլորանները, կարող էր կազմել մոտավորապես 30 կմ:

տի դեր է կատարել: Անին ու Դվինը նաեւ տարբեր քաղաքական միավորներ էին ներկայացնում: Դվինը գտնվում էր մահմեդական իշխողների՝ Դայլամցիների (դելմիկների), ապա Շադդադյանների ձեռքին[19]: Հետեւաբար Արուճը, որոշ իմաստով, առեւտրական անցակետի դեր ուներ, որտեղ, հավանաբար, երկու կողմից եկող առեւտրականները կատարում էին նախնական դրամափոխությունը, հետագա գործարքները դյուրությամբ իրականացնելու համար:

Հիշյալ ժամանակաշրջանում դրամափոխության գործի ծավալմանը կարող էր նպաստել դրամական շրջանառության ոլորտում տեղի ունեցած էական փոփոխությունը: Դրամագետ Խ. Մուշեղյանը նշում է. «10-րդ դարի վերջերին եւ հատկապես 11-րդ դարի սկզբից փոխվել էր Հայաստանի դրամական շրջանառության կազմը: Նախ արծաթե դրամների թարմ հոսքը նվազել էր, եւ նոր թողարկված արծաթ դրամները այլեւս չունեին արծաթի պարունակության նախկին բարձր որակը... Պղնձի խառնուրդով ցածրորակ արծաթ դրամները թողարկում էին Շադդադյանները 951-1096 թթ., որոնք 11-րդ դարում տեր էին դարձել Դվին եւ Գանձակ քաղաքներին...»[20]: Հասկանալի է, որ առեւտրական ուղիներով իրականացվող դրամական հոսքերը եւ դրամական տարարժեք միավորները պիտի համապատասխանեցվեին տեղական շուկայի պահանջներին եւ այստեղ է, որ անելիք ունեին քսակավոր-դրամափոխները:

Այսպիսով, Արուճի տաճարի պատին Սմբատ Բ Բագրատունու թողած 987 թ. արձանագրության մեջ առկա «շալակաւոր» բառի նոր բացատրության շնորհիվ կարող ենք ասել, որ հիշյալ շրջանում այստեղ եղել է դրամափոխության շուկա (արդի «տարադրամի փոխանակման» վայրերի նախատիպը), եւ այդ գործը կատարող մարդիկ, որոնք մինչ այդ հարկ են վճարել, Սմբատ Բ թագավորի վճռով ազատվել են հարկից: Թագավորի այս քայլը (ինչպես եւ ավելի ուշ՝

---

[19] Ա. Տեր-Ղեւոնդյան, Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երեւան, 1965, էջ 164-177:

[20] Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երեւան, 1976, էջ 223-224:

Անիում՝ Բագարատ Վխկացու կողմից շալակավորների հարկի կիսով չափ կրճատումը) սոսկ բարեգործություն չէր: Մեր կարծիքով, Բագրատունի թագավորն արձակել է վերոնշյալ հրամանը (նկատենք՝ իր գահակալության 10-ամյակին) վաճառաշահ Անիին եկամուտ բերող առեւտրականների գործը հեշտացնելու եւ դեպի մայրաքաղաք եկող ճանապարհը հրապուրիչ դարձնելու համար: Տեղին է հիշել, որ Անիի Մայր տաճարի շինարարությունը սկսած Սմբատ Բ թագավորը նախապես Հնդկաստանից բերել էր տվել «մեկ բյուր գանձով» գնած մի մեծ բյուրեղապակյա ջահ[21]: Այսինքն, թագավորը շատ լավ գիտակցում էր վաճառականության արժեքը: Հնարավոր է, որ առեւտրական գործին նպաստելու նպատակով եւ արքունիքի խրախուսմամբ են կառուցվել նաեւ Անի եկող ճանապարհների քարավանատները:

Արուճի առեւտրական եւ դրամական շրջանառության կենտրոն լինելը հաստատվում է նաեւ տեղում ուշագրավ դրամական գտածոներով, որոնց մեջ կան բյուզանդական, արաբական, «իլդեգիզյան», վրացական եւ այլ մետաղադրամներ[22]: Դրանց մեջ մեծ թիվ են կազմում Քրիստոսի պատկերով բյուզանդական պղնձե դրամները (10-11-րդ դդ.), որոնք առաջնակարգ տեղ էին գրավում հայկական շուկայում: Հնարավոր է, որ այդ դրամների մի մասը հատվում էին Անի քաղաքում[23]: Հետաքրքրական են նաեւ Արուճում

---

[21] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, էջ 162-163:

[22] Արուճում գտնվել են այսպես կոչված «իլդեգիզյան» դրամներ՝ թողարկված Շեմս ադ-դին Իլդեգիզի (1136-1173), Կըզըլ Արսլանի (1186-1191), Աբու-Բաքրի (1191-1211) անունով, նաեւ մի պղնձե դրամ, հատված Վրաց Թամար թագուհու եւ նրա ամուսին Դավիթ Սոսլանի անունով: Արուճում տարբեր տարիների գտնված 17 դրամից բաղկացած մի հավաքածու (8 «իլդեգիզյան», 7 բյուզանդական, 1 վրացական, 1 պարսկական) մենք 2008 թ. նվիրել ենք Հայաստանի պատմության պետական թանգարանին:

[23] Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում, Երեւան, 1983, էջ 216:

գտնված տարբեր ժամանակաշրջանների վերաբերող մահմեդական դրամները[24]:

Հատկանշական է, որ արուճեցիներից ոմանք նյութական բավական խոշոր միջոցների տեր են եղել: Այսպես, 1193 թ. Արուճի ավագերեց Գեւորգի թոռ Տրդատ քահանան գնել է Անիում երբեմնի զորեղ իշխան Ապլղարիբ Պահլավունու կառուցած Ս. Փրկչի եկեղեցին, նորոգել այն, իսկ արձանագրության մեջ նշում է. «...շինեցաք վերըստին **զմեր գանձագին հայրենիքս զՍուրբ Փրկիչս** շատ աշխատութեամբ եւ նորոգեցաք յառաջին պայծառութիւնն... շինեցաք սմա ժամանտունս...»[25]: Իր մասին Տրդատը գրում է. «Ես Տրդատ քահանա, որդի Սոսթենէս քահանաի, թոռն Գէորգա աւագերիցո Արճոյ...»: Վիմագիր արձանագրություններում քիչ են դեպքերը, երբ հեղինակը (մանավանդ ոչ ազնվական) հիշատակում է նաեւ պապին, այն էլ նման մանրամասներով (Արուճի ավագերեց): Հարցը պարզվում է, երբ ծանոթանում ենք Տրդատի՝ Ս. Փրկիչ եկեղեցուն տված նվիրատվություններին, որից երեւում է, որ նրա կարողությունը ծագում էր արուճեցի պապից: Արձանագրության մեջ նշվում են եկեղեցուն տրված նվիրատվությունները՝ Արուճում գտնվող չորս այգի (Սաղար, Շլիկ, Կովարած, Բլար Խաչկա անուններով), մի արտ, տուն, (նաեւ զարդեղեն, սպասք եւ այլն):

Ուշագրավ երեւույթ է Արուճում գտնվող, հատուկ անուններով կոչվող բազմաթիվ այգիների հիշատակությունը Անիի եւ Շիրակի վանքերի վիմագիր արձանագրություններում, այգիներ, որոնք նույնպես առ ու ծախի, կամ նվիրատվության առարկա էին: Անիի ե-

---

[24] Արուճում գտնված մահմեդական դրամներից հատկապես արժեքավոր է Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող 704 թ. Դվինում թողարկված Օմայան արծաթյա դրամը (Ա. Զոհրաբյան, Դվինում թողարկված Օմայան դիրհեմ գտնված Հայաստանից, Հայկական ԽՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1989, էջ 68):

[25] Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, Երեւան, 1966, էջ 47:

կեղեցիների, Հոռոմոսի ու Հառիճի վանքերի 12-13-րդ դդ. արձանագրություններում պահպանվել է Արուճում գտնվող 14 այգու անուն[26]: Հատկանշական է Անիում Տիգրան Հոնենցի կառուցած Գրիգոր Լուսավորչի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ (1215 թ.) թվարկված այգիների շարքում հիշված Արուճի այգու օրինակը. «...բազում հողեր գնած, այգի Ա (1) յԵրեւան, այգի Ա (1) յՕշական, այգի Ա (1) (ի) Կոշ էգի Ա (1) յԱրուճ որ Մազոտն կոչի, այգի Ա (1) Մրեն...»[27] եւ այլն: Այստեղ նախ Արուճի այգին բարբառային ձեւով անվանված է «էգի», եւ երկրորդ, ի տարբերություն մյուս բնակավայրերի այգիների, շեշտված է Արուճի այգու անունը՝ Մազոտն: Սա վկայում է, որ Արուճի այգիներն իսկապես բազմաքանակ էին եւ որպես կանոն, հատուկ անուններ ունեին:

Բնակավայրի տեղագրության վերաբերյալ հետաքրքիր տվյալ է պարունակում Հառիճի 1196 թ. արձանագրությունը, ուր նշվում է, որ վանքին է նվիրվել Արուճի **Վերին թաղում** գտնվող «Խաչկանց» այգին եւ հնձանը[28]: Քանի որ Արուճի քարավանատունը գտնվում է բնակավայրից հյուսիս եւ ավելի բարձր դիրքում, Վերին թաղը պետք է հենց այդ կողմում եղած լինի: Կարելի է ենթադրել, որ բնակավայրի հարավում՝ ավելի ցածրադիր տեղում գտնվող հատվածն էլ կոչվել է Ներքին թաղ:

---

[26] Կ. Մաթեւոսյան, Արուճ, էջ 34: Արուճի միջնադարյան այգիները տարածվում էին բնակավայրից շուրջ 1 կմ դեպի հյուսիս՝ մինչեւ քարավանատուն, դեպի արեւմուտք՝ Վանքաձորից մինչեւ Շամիրանաձոր, եւ դեպի հարավ՝ Աղբրի ձորի ափերով: Այդ տարածքում այժմ էլ կարելի է տեսնել 10-13-րդ դարերի առանձին կանգնած բազմաթիվ խաչքարեր, որոնք ժամանակին կանգնեցրել են այգիների տերերը: Խաչքարերից մեկի պատվանդանին արձանագրված են եղել Ադամ եւ Մովսես (Մուսես) քահանաների անունները եւ 1001 թվականը, իսկ մեկ այլ խաչքարի արձանագրության մեջ հիշվում է ոմն պարոն Սմբատը (Նույն տեղում, էջ 83-84):

[27] Դիվան հայ վիմագրության, էջ 62-63:

[28] «Ես Աստուածատուր ետու զիմ հայրենի այգիս, որ յԱրուճ, ի Վերին թաղն՝ Խաչկանց այգին եւ զընձանն ետու ի սուրբ ուխտս Հառիճայ...» (Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, 159):

ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Եթե Արուճը Անի-Դվին քարավանային ճանապարհի հանգրվաններից մեկը լինելով ծաղկում ապրեց եւ ունեցավ դրամափոխության յուրօրինակ շուկա, ապա Թալինը նույնպիսի նպաստավոր պայմաններում գտնվելով վերափոխության ենթարկվեց: Մասնավորապես քարավանային ճանապարհի հյուսիսային կողմում գտնվող Թալինի բնակչության մի հատվածն անցավ ճանապարհի հարավային կողմը, հիմք դնելով Ներքին Թալինին, կամ, գուցե, նոր շունչ հաղորդելով հնուց ի վեր այստեղ եղած փոքրիկ բնակավայրին:

Ներքին Թալինը գտնվում է Թալինից շուրջ 4 կմ հարավ-արեւմուտք: Որոշ պարզաբանման կարիք ունի բնակավայրի անվան հարցը: 1979-ին Ներքին Թալինն անվանափոխվել է եւ կոչվել Դաշտադեմ[29]: Բնակավայրի անվան կապակցությամբ գրականության մեջ շրջանառվում է նաեւ Քաղին կամ Քաղենի անունը, որը ծագում է Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած մի տեղեկությունից: Խոսելով Սիոն Ա Բավոնեցու (767-775) կաթողիկոս դառնալու մասին՝ պատմիչն ավելացնում է, որ նրա օրոք, արաբական արշավանքի հետեւանքով տեղի է ունեցել Քաղինի, Արենի եւ Թալին գյուղաքաղաքի կոտորածը, որին զոհ է գնացել 700 եւ գերեվարվել 1200 մարդ[30]:

Այդ տեղեկությունը Դրասխանակերտցուց քաղելով կրկնել են Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Սամվել Անեցին, Մխիթար Այրի-

---

[29] Բնակավայրի անվանափոխությունը հավանաբար արվել է երկու Թալինների անունների շփոթությունից խուսափելու համար: Դաշտադեմ անունով գյուղ է եղել Սասունում:

[30] «Յաւուրս սորա եղեւ կոտորումն Քաղինոյ եւ Արենոյ եւ գիւղաքաղաքին Թալնայ, յորում սպանան ոգիք իբրեւ եօթն հարիւր եւ գերեցան հազար երկերիւր» (Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, էջ 110):

վանեցին, Կիրակոս Գանձակեցին[31]: Քաղին կամ Քաղենի տեղանունը որեւէ այլ առիթով չի հիշատակվում, հետեւաբար այսօր անհնար է պնդել, թե հնում այն Ներքին Թալինին է վերաբերել: Ավելին, Ներքին Թալինում եղած երկու արձանագրությունների մեջ բնակավայրը կոչվում է Թալին: Ներքին Թալինից շուրջ 1 կմ հարավ-արեւմուտք գտնվող Ս. Քրիստափոր վանքի բազմաթիվ վիմագրերում նույնպես ոչ մի անգամ չի նշվում Քաղին կամ Քաղենի անունը, մինչդեռ երկիցս հիշատակվում է Թալինը: Կարծում ենք, որ 8-րդ - դարի դեպքերի առնչությամբ հիշված Քաղինը Թալինի մոտ գտնվող մեկ այլ բնակավայր է եղել, սակայն ոչ Ներքին Թալինը, քանի որ այդ հաստատող ոչ մի ուղղակի փաստ հայտնի չէ:

Հնարավոր է, որ Ներքին Թալինում է եղել Աշոտ Դ-ի զորակայանը, որի տեղը 1021 թվականին տեղի ունեցած մի դեպքի առիթով պատմիչները նշում են հետեւյալ կերպ. «...ի յոտս Թալնայ»[32] (Թալինի ստորոտում):

1174-ին Վրաց Գեորգի Գ թագավորը գրավել է Անին եւ գերեվարել Շադդադյան Շահնշահ ամիրային: Գահի իրավահաջորդ Սուլթանին (Անիի վերջին ամիրան էր) հաջողվել է ապաստան գտնել Ներքին Թալինի ամրոցում եւ հենց նույն թվականին նա հիմնովին նորոգել է այն, կառուցել նոր աշտարակներ: Այստեղ պահպանվել է Սուլթանի արաբերեն արձանագրություն, որով նա հայտնում է, թե կառուցել է ամրոցը 1174 թ. սեպտեմբերին[33]:

---

[31] Ասողիկը միայն Թալինի անունն է տալիս (Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն, էջ 105): Երեք բնակավայրը նշում են Սամվել Անեցին (Անեցի, էջ 89), Մխիթար Այրիվանեցին (Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860, էջ 52) եւ Կիրակոս Գանձակեցին: Վերջինիս մոտ բնակավայրերից երկուսի անունը սխալ է տպագրված. «...կոտորումն եղեւ Քաղինաու, Մրենոյ, Թալնայ...» (Կիրակոս Գանձակեցի, էջ 72): Գրքին կցված «նկատված վրիպակների» մեջ առաջինն ուղղված է՝ «Քաղինու», իսկ «Արեն» անունը սխալմամբ Մրեն է կարդացվել (տպագրական, կամ ձեռագրերից եկող գրչական սխալ է):

[32] Տե՛ս աստ էջ 102-103:

[33] А. Хачатрян, Корпус арабских надписей Армении, с. 46.

1176-ին վրացիներն Անին վերադարձրել են Շադդադյաններին եւ Սուլթանը տեղափոխվել է այնտեղ:

Ներքին Թալինի ամրոցն իր դերը պահպանել է նաեւ Զաքարյանների ժամանակ: 13-րդ դ. սկզբին, կառուցվել են դղյակ-ամրոցի եւս երեք բուրգերը, միաժամանակ այն վերցվել է երկրորդ, ավելի ընդարձակ պարսպաշարի մեջ: Այստեղ պահպանվել է «Յովհաննէս քարգործ յիշեցէք ի Քրիստոս»[34] արձանագրությունը: Նոր պարսպի շրջագծի ներսում հայտնված Ս. Սարգիս եկեղեցում հարկ թողնելու մասին 1307 թ. մի արձանագրություն է գրել Իվանե Բ-ի որդի Աղբուղան, որը բնակավայրը համարում է իր սեփականությունը («թողի զիմ հայրենիք գեղս՝ **զԹալնայ** գինոյ խալէն...»)[35]: Իսկ Զաքարյանների կառուցած պարսպի մուտքի մոտ 2007-ին հայտնաբերված թերի պահպանված մի արձանագրության մեջ ընթերցվում է ոմն Գրիգորի անունը եւ դարձյալ Թալին տեղանունը[36]:

Ներքին Թալինից շուրջ 1 կմ հարավ-արեւմուտք գտնվող Ս. Քրիստափոր վանքի արձանագրություններում նույնպես խոսվում է Թալինի մասին[37]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ միջնադարում Ներքին Թալինը նույնպես Թալին է կոչվել:

Մեր կարծիքով Ներքին Թալինի առաջացման պատմության մեջ գործ ունենք միջնադարյան բնակավայրերի ընդարձակման մի սկզբունքի հետ, որը բնորոշ է հատկապես որոշակի ուղղությամբ

---

[34] Հ. Եղիազարյան, Ներքին Թալին գյուղի Ս. Քրիստափորի անվան վանքը, նրա վիմագիր արձանագրությունները եւ գյուղի մյուս հուշարձանները, «Էջմիածին», 1971, Ը, էջ 59:

[35] Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 64: Արձանագրության հեղինակի ինքնությունն ու թվականը ճշտում է Պ. Մուրադյանը (Պ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երեւան, 1977, էջ 105):

[36] Արձանագրության միայն առաջին քարն է պահպանվել: Այժմ դրված է Ս. Սարգիս եկեղեցու մուտքի դիմաց, տեքստը չի հրատարակվել:

[37] Այստեղ 941 թվականի մի արձանագրության մեջ նշվում է. «...հրաման յԱստուծոյ ի վերա գիւղաքաղաքին Թալնա՝ նոր ուխտ եւ յիշատակ կատարեն միաբան(ք) սուրբ եկեղեցոյս...», Ոմն Քրիստափորի 950 թ. նվիրատվական արձանագրության մեջ դարձյալ հիշվում է Թալինը: (Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 63):

տարածվող այգիներ ունեցող վայրերին (օրինակ, Վանը՝ Այգեստան թաղամասով): Կամսարականների նստավայր բուն Թալինի այգիները տարածվում էին դեպի հարավ-արեւմուտք ընկած բերրի հողերը: Բագրատունյաց շրջանի տնտեսական վերելքի ժամանակ, այգիների տերերը բնակարաններ են կառուցում նաեւ այգեստաններում, եւ առաջանում է Ներքին Թալինը: Դրան մեծապես նպաստում է նաեւ Թալինի հսկա քարավանատան կառուցումը, որն Անի տանող մայրուղու կարեւոր հանգրվաններից մեկն էր, մայրաքաղաքից մեկ օրվա անցման հեռավորությամբ[38]: Թ. Թորամանյանը գրում է, որ քարավանատունը գտնվում էր «Հին եւ Նոր Թալինների ճանապարհի միջին կետի վրա»[39] եւ ավելացնում, որ միայն «Թալինի իջեւանի ծախքով կարելի էր չորս հատ եկեղեցի շինել»[40]:

Թալինի քարավանատունը Հայաստանի միջնադարյան մյուս



[38] Թալինի քարավանատան ընդհանուր չափերն են 37x73 մ: Քարավանատան մասին հանգամանորեն տե՛ս Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երեւան, 1960, էջ 55-60:

[39] Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 130:

[40] Նույն տեղում, էջ 36:

նման կառույցներից տարբերվում էր նրանով, որ երկու հյուրատուն-սրահների միջեւ ուներ մեծ բակ-վաճառանոց, որտեղ եղել են նաեւ կամարակապ կուղպակներ: Դա նաեւ շուկա էր Թալինի բնակիչների գյուղատնտեսական արտադրանքի համար:

Ներքին Թալինի ամրոցը, որ Կամսարականների ժամանակ ուղղանկյուն մի սրահ էր, 9-10-րդ դարերում մասամբ վերակառուցվեց, սակայն իսկապես դղյակ-ամրոց դարձավ Սուլթան Շադդադյանի 1174 թ. վերակառուցումից եւ շինությանը շուրջ 18 մ բարձրությամբ չորս աշտարակների կցումից հետո[41]: Ներքին Թալինի բնակիչների տները եղել են ամրոցի մոտ եւ դրանից հարավ գտնվող Գայլաձորի աջ ափին: Հարակից տարածքը ծածկված է եղել պտղատու այգիներով:

ՔԱՐԱՎԱՆԱՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Միջնադարյան Հայաստանի քարավանատներին նվիրված Վարազդատ Հարությունյանի աշխատության մեջ, ուր ներկայացվում են նաեւ Արուճի եւ Թալինի քարավանատները, դրանց կառուցման ժամանակի մասին ասվում է. «Ներկա աշխատության մեջ քննարկվող քարավանատները կամ ինչպես Հայաստանում նրանց անվանում էին՝ իջեւանները, իջեւանատները... վերաբերում են զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանին՝ 12-14-րդ դարերին»[42]: Արուճի եւ Թալինի քարավանատները 13-րդ դարի կառույցներ են համարվում ամենատարբեր հրատարակություններում[43]: Քանի որ

---

[41] Դղյակ-ամրոցի եւ այն շրջապատող Զաքարյանների պարսպի շուրջը բավական մեծ պարագծով պարիսպներ է կառուցել Երեւանի պարսիկ խանը 1812 թվականին: Ներքին Թալինի ամրոցի ամրակայումը եւ մասնակի վերականգնումը սկսվել է 2005 թվականից: (Գ. Մ. Սարգսյան, Դաշտադեմի ամրոցը, «Հայ արվեստ», 2007, թիվ 3-4, էջ 36-37):

[42] Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 12:

[43] О. Халпахчян, Гражданское зодчество Армении, Москва, 1971, с. 188-191, Հայ ժողովրդի պատմություն, էջ 903-905, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երեւան, 1976, էջ 152 եւ այլն:

այս քարավանատների կառուցման վերաբերյալ չկան ոչ վիմագիր արձանագրություններ, ոչ էլ պատմիչների վկայություններ, դրանց հիմնադրման ժամանակի մասին կարելի է դատել միայն շինարարական առանձնահատկություններից կամ հարակից տեղեկություններից ելնելով: Որքան մեզ հայտնի է, այս հուշարձանների շինարարական տեխնիկան հիմնավորապես չի համեմատվել այլ հուշարձանների հետ, որով հնարավոր լիներ որոշել դրանց կառուցման ժամանակը:

Թալինի եւ Արուճի քարավանատների վերաբերյալ ուշագրավ դիտարկում է կատարել Ն. Տոկարսկին: Նա գրում է, որ Թալինի քարավանատունը կառուցվել է երկու փուլով, ավելի վաղ հիմնվել է արեւելյան մասնաշենքը, որը կառուցվածքով ու չափերով շատ մոտ է Արուճի քարավանատանը, որից հետո, դեպի արեւմուտք, կառուցվել են վաճառանոց-բակն ու մյուս մասնաշենքը[44]: Ուսումնասիրողի կարծիքով այս քարավանատները կարող էին ստեղծված լինել «ընդհանուր հատակագծով»[45]:

Սակայն Ն. Տոկարսկին, փորձելով որոշել այս քարավանատների կառուցման ժամանակը, դրանք համեմատում է նախկին Սուրմալուի գավառում, Արաքս գետի եւ Արարատ լեռան միջեւ գտնվող Զորի քարավանատան հետ, որը նույնպես ներքուստ եռանավ է: Այն ունի շքեղ քանդակազարդված մուտք 13-րդ դարին բնորոշ հարդարանքով, որից ելնելով հեղինակն այս բոլոր երեք քարավանատները համարում է 13-րդ դարի կառույցներ[46]:

Այսպիսի մոտեցումը գուցե ընդունելի կլիներ, եթե մենք կիսավեր քարավանատներից բացի ուրիշ ոչ մի տեղեկություն չունենայինք Արուճի եւ Թալինի վերաբերյալ: Սակայն այս դեպքում հատակագծային նմանությունը չի կարելի ժամանակի միակ որոշիչ հա-

[44] Н. Токарский, Архитектура Армении, IV-XIV вв., Ереван, 1961, с. 273.
[45] Նույն տեղում, էջ 274:
[46] Н. Токарский, Архитектура Армении, с. 274-275.

մարել[47]: Քարավանատների չափերի համեմատությունը ցույց է տալիս, որ Արուճի (15x28,25 մ) եւ Թալինի (արեւելյան եռանավ հատված՝ 15x35 մ) սրահները համադրելի են, մինչդեռ Զորում այն անհամեմատ մեծ է (25x65 մ)[48], որն ավելի ուշ կառուցված լինելու մասին է վկայում:

Արուճի քարավանատան պահպանված հատվածը շենքի հյուսիսարեւելյան մասն է, բայց 2007-ին կառույցը վերականգնվել է ամբողջ պարագծով: Երկայնական պատերը դրսից ունեն երեքական կիսակլոր բուրգեր հիշեցնող հավելումներ, որով կառույցը փոքրիկ ամրոցի տեսք է ստանում:

Քարավանատան պատերը շարված են միջին չափի քարերով,

[47] Այդպիսի մոտեցման դեպքում կարելի է, օրինակ, բոլոր խաչաձեւ կենտրոնագմբեթ փոքր եկեղեցիները թվագրել 5-7-րդ դարերով, մինչդեռ հայտնի է, որ այդպիսի հորինվածքով բազմաթիվ եկեղեցիներ են կառուցվել նաեւ 9-13-րդ դարերում (Վ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 7):

[48] Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 15:

ինչպիսի շարվածք տեսնում ենք նաեւ Արուճի Կաթողիկեի հյուսիսային պատի նորոգված հատվածում: Արձանագրության համաձայն նորոգումը կատարվել է 973 թվականին (պահպանվել են գործը նախաձեռնող Գորամի եւ մի այլ քարի վրա՝ Դավիթ վարպետի անունները)[49]: 2007 թ. Արուճի քարավանատանն իրականացվեցին մասնակի պեղման աշխատանքներ: Դրանց շնորհիվ բացվեց քարավանատան մուտքի արեւելյան կողմի որմնասյունը, որի ստորին մասը մշակված է հնավանդ, պարզ օղակաձեւ ելուստով: Կառույցի հարավարեւմտյան անկյան մոտ բացվեց ընդհանուր պարագծից դուրս եկող մի նոր ուղղանկյուն սենյակ:

Արուճի քարավանատունը չունի դեկորատիվ հարդարանքի տարրեր կամ այլ մանրամասներ, որոնք վկայեն դրա 10-11-րդ դարերից ավելի ուշ կառուցված լինելու մասին: Մեր կարծիքով Արուճի քարավանատունը գոյություն ուներ արդեն 10-րդ դարի վերջերին, երբ Սմբատ Բ թագավորը տեղի Կաթողիկե եկեղեցու պատին թողած արձանագրությամբ շալակավոր-դրամափոխներին ազատում էր հարկից: Հասկանալի է, որ այդ մարդիկ իրենց դրամական գործարքները կատարում էին ոչ թե միմյանց, այլ տարբեր տեղերից եկող վաճառականների հետ, իսկ վերջիններս պետք է իջեւանելու ապահով տեղ ունենային: Շատ հավանական է, որ այս նույն ժամանակաշրջանում է կառուցվել Թալինի քարավանատան առաջին մասնաշենքը, որը չափերով նման է Արուճի քարավանատանը: Իսկ հետագայում, հավանաբար 13-րդ դարում, Թալինի քարավանատունն արեւմտյան կողմից ընդարձակվել է:

Արուճի եւ Թալինի Բագրատունյաց շրջանում ունեցած ծաղկման մասին վկայող վերը ներկայացված բազմաթիվ փաստերը մեզ բերում են այն համոզման, որ քարավանատները հենց այդ ժամանակի ծնունդ են: Չպետք է մոռանալ, որ Արուճի եւ Թալինի վրայով անցնող քարավանային ուղին Հնդկաստանից ու Պարսկաստանից

[49] Կ. Մաթեւոսյան, Արուճ, էջ 60:

եկող եւ դեպի Սեւ ծովի ափերը հասնող միջազգային առեւտրական ճանապարհի մի հատվածն էր, ճանապարհ, որը Բագրատունյաց պետության զորացմանը եւ Անի մայրաքաղաքի արագ ծաղկմանը նպաստող կարեւորագույն գործոններից էր[50]: Հիշենք նաեւ, որ դեռեւս Սմբատ Ա Բագրատունին (890-914) առեւտրական պայմանագիր ուներ Բյուզանդիայի հետ, որով ապահովվում էր նաեւ մահմեդական առեւտրականների մուտքը կայսրություն՝ Հայաստանի ճանապարհով[51]: Այդ ճանապարհի սպասարկմանն էին կոչված Անիի շրջանում Ախուրյան գետի վրա գցված բազմաթիվ լայնաթռիչք կամուրջները, որոնք մեծ մասամբ Բագրատունյաց շրջանի շինություններ են[52]: Արուճի եւ Թալինի քարավանատների կառուցումը նույնպես այդ ժամանակին պետք է վերագրել:

Ավելացնենք, որ Դվինից Անի ձգվող քարավանային ուղին բանուկ է եղել նաեւ Բագրատունյաց թագավորության անկումից (1045) հետո, իսկ Արուճն ու Թալինը ծաղկուն բնակավայրեր էին Զաքարյանների շրջանում: Արուճում պահպանված, Կաթողիկե եկեղեցու նորոգմանը վերաբերող 15-րդ դարի սկզբներին գրված մի արձանագրություն[53] վկայում է բնակավայրի կայուն վիճակի մասին: Թալինի եւ Արուճի բնակչությունը տեղահանվել է 1604 թ. Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի ժամանակ:

---

[50] Հայ ժողովրդի պատմություն, էջ 215, 229-230:

[51] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, էջ 162-163:

[52] Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 71:

[53] Արձանագրությունը գրել է Խաչատուր վարդապետը՝ հայտնելով. «...ԵՍ ԽԱՉԱՅՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏՍ ԵԿԻ ՅԱՐՈՒՃ ՆՈՐՈԳԵՑԻ ԶԵԿԵՂ[ԵՑ]ԻՍ...» (Կ. Մաթեւոսյան, Արուճ, էջ 63): Արձանագրության մեջ հիշվում է Արարատյան երկրամասի կառավարիչ Սայաթ բեկը, որը մահացել է 1411 թ., հետեւաբար արձանագրությունը դրանից առաջ է գրված:

«ԻՄԱՍՏԱՍԷՐ» ՊԱՏՎԱՆՈՒՆՆ ԱՆԻՈՒՄ

Ստեփանոս Մանուկ Կարմիրվանեցու դպրոցին անդրադառնալով ու նրա շրջանավարտներ Ներսես Շնորհալուն, Իգնատիոս Շնորհալուն, Սարգիս Շնորհալուն եւ Բարսեղ Շնորհալուն թվարկելով, Մաղաքիա Օրմանյանը գրում է. «**Շնորհալի** մականունին կրկնումը նշանաւորագոյն աշակերտներուն վրայ, մտածել կու տայ թէ այդ կոչումը որոշիչ պատուանուն մը եղած է Շուղրի կամ Քէսունի Կարմիր վանքի աշակերտութեան մէջ, ինչպէս **Քերթող** պատուանունը Սիւնեաց դպրոցին (պար. 398), եւ **Իմաստասէր** պատուանունը Արագածոտնի դպրոցին (պար. 979) յատկացեալ մակդիր անունի պէս գործածեցան»[1]: Իսկ Արագածոտնում «իմաստասէր» պատվանվան վերաբերյալ հղված տեղում[2], Գրիգորիս Արշարունու «փիլիսոփա» կոչվելը նշելուց հետո, ավելացնում է. «Փիլիսոփայ կամ Իմաստասէր պատուադիր մականունին Օձնեցիի ու ուրիշներուն ալ տրուած ըլլալը դիտելով, կը կարծենք թէ յատուկ դպրոցի մը սովորական մակդիր եղած էր, ինչպէս Սիւնեցիներու Քերթող մականունը: Իսկ այսպիսի դպրոց մը յարմար կըլլայ Քռթենաւորին հաստատած Արագածոտնի կամ Հառիճոյ վանքը կարծել, եթէ Երասխաձորի Արշարունեաց դպրոցն ալ (պար. 451) նոյն սովորութիւնը ունեցած չէ»[3]:

Եթե Սյունյաց հին դպրոցի նշանավոր ներկայացուցիչների «Քերթող» մականուն կրելը հայտնի է, իսկ Քեսունի Կարմիր վանքի դպրոցի լավագույն սաների «Շնորհալի» մականունով կոչվելն իրավամբ ենթադրել է տալիս, որ դա տեղի դպրոցին հատուկ պատվանուն էր, ապա դժվար է նույնը պնդել «Իմաստասէրի» առնչությամբ: Հայտնի է, որ Թեոդորոս Քռթենավորը (7-րդ դ.) դպրոց է ունե-

---

[1] Մ. Օրմանեան, Ազգապատում, Ա հատոր, էջմիածին, 2001, էջ 1562-1563:

[2] Այն ոչ թե գրքի 979 այլ 579 ենթաբաժնում (պարագրաֆում) է: Վրիպակը կրկնվել է «Ազգապատումի» բոլոր հրատարակություններում:

[3] Նույն տեղում, էջ 986-987:

ցել Արագածոտնի Ս. Աստվածածին վանքում: Նրա աշակերտներից են եղել Սահակ Գ Ձորափորեցի (677-703) եւ Հովհաննես Գ Օձնեցի (717-728) կաթողիկոսները: Օձնեցին կոչվել է նաեւ Իմաստասեր, սակայն ամենայն հավանականությամբ իր իմացության եւ գործերի շնորհիվ, որպես «սիրող իմաստութեան, փիլիսոփայ»[4], եւ ոչ որպես Քռթենավորի դպրոցի աչքի ընկած շրջանավարտ:

Իմաստասէր կամ փիլիսոփա անվանումով են բնորոշվել տարբեր վայրերում ապրած նշանավոր վարդապետներ կամ գործիչներ: Ստեփանոս Օրբելյանը Թեոդորոս Քռթենավորի ուսուցիչ Սյունյաց Մաթուսաղա վարդապետի մասին գրում է. «…մեծ քերթողն եւ անյաղթ փիլիսոփայն Մաթուսաղայ... ուսեալ զքերթողութիւնն եւ վարժեալ ճարտասանականաւն, հմտացեալ փիլիսոփայական արհեստից, լի ամենայն իմաստութեամբ...»[5]: Խոսելով Բագրեւանդի Ատրներսեհ իշխանի մասին՝ Մատթեոս Ուռհայեցին գրում է. «…սա էր այր կորովի եւ յոյժ հանճարեղ, բանիբուն եւ իմաստասէր, ուսեալ ի մեծ Արգինա...»[6]:

Որեւէ ծանրակշիռ կռվան չունենք «Իմաստասէր» պատվանունը որոշակի դպրոցի առնչելու համար: Սակայն, մյուս կողմից, ակներեւ է, որ այս կամ այն անձի համար «իմաստասէր» բնորոշումը չէր տրվում որպես սովորական մեծարական խոսք, առավել եւս, եթե դառնում էր մականուն:

Անիի եւ նրա շրջանի հոգեւոր մշակույթի ուսումնասիրության ընթացքում պարզ դարձավ, որ «Իմաստասէր» պատվանունը տարածված է եղել նաեւ այստեղ: Ծանոթանանք այդ վկայություններին:

---

[4] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, էջ 848:

[5] Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 112:

[6] Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխարհաբար թարգմ եւ ծան. Հ. Բարթիկյանի, Երեւան, 1991, էջ 198:

Արիստակես Լաստիվերցին նշում է Սարգիս Ա-ի (992-1019) ժամանակ Անիի կաթողիկոսարանում գտնվող երեք նշանավոր վարդապետներին՝ գրելով. «Եւ էին յայն ժամանակի վարդապետք՝ Սարգիս եւ Տիրանուն եւ Յենովք, որ **կաթողիկոսարանին էին վարդապետք**»[7]: Մատթեոս Ուռհայեցին Տիրանունի մասին հավելյալ տվյալ է հաղորդում, երբ թվարկում է կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի (1019-1054) 1046 թ. Անիից Արծն ուղեւորվելու ժամանակ նրան ուղեկցողներին. «Եւ էր զհետ տէր Պետրոսի նախնականն եւ լաւն ի բնաւից Բուլխար վարդապետն եւ ամենագովելին Խաչատուր դպրապետն... եւ **Տիրանուն Իմաստասէրն Կապանեցին,** Մխիթարիկն, Վարդան Սանահնեցին...»: Երկար անվանաշարքն ավարտելով պատմիչը գրում է. «Արդ այս ամենայն **վարդապետք եւ իմաստասէրք** եւ հմուտք Հին եւ Նոր Կտակարանացն Աստուծոյ»[8]:

Փաստորեն Տիրանուն Կապանեցուն Ուռհայեցին կոչում է «Իմաստասէր» պատվանունով: Ցավոք այս գործչի մասին սույն հիշատակություններից բացի մեզ ուրիշ ոչինչ հայտնի չէ:

Տեւական ժամանակ Անիում բնակված հաջորդ գործիչը նշանավոր վարդապետ Հովհաննես Սարկավագն է[9], որը նույնպես կոչվել է Իմաստասէր պատվանունով: Սարկավագը նրա մականունն էր, բայց այն, որ վարդապետը երբեմն նաեւ «Իմաստասէր» պատվանունով է կոչվել, երեւում է նրա երկերից մեկի վերնագրից՝ «**Յովհաննու Սարկաւագի Իմաստասիրի** եւ վարդապետի ասացեալ Բան իմաստութեան ի պատճառս զբօսանաց...»[10], Սաղմոսարանի հիշա-

---

[7] Արիստակիսի Լաստիվերցւոյ Պատմութիւն (աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի), Երեւան, 1963, էջ 126 (այս եւ հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են - Կ. Մ.):

[8] Մատթեոս Ուռհայեցի, էջ 114, տե՛ս նաեւ Կ. Մաթեւոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 41, 113:

[9] Կ. Մաթեւոսյան, Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում, «Էջմիածին», 2005, Է-Ը, էջ 59-72:

[10] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 319:

տակարանից՝ «...**մեծ իմաստասէրն Հայոց**... Յովհաննէս մականուն Սարկաւագ»[11] եւ Սարկավագի սան Սամվել Անեցու Ժամանակագրության հատվածներից:

Սամվել Անեցին մի քանի մեջբերում է անում Հովհաննես Սարկավագի պատմական բովանդակություն ունեցող, այժմ կորած թղթերից: Սելջուկների գերիշխանության հաստատման մասին գրում է. «Ընթերցաք գրեալ **վարդապետին մեծի, որ Սարկաւագ վերակոչի անուանեալ**, զի ասէ թէ...»[12]: Հատվածի վերջում ավելացնում է. «Զայսոսիկ նշանակաւ գրոյ եցոյց մեզ **Իմաստասէրն** մինչեւ ցՄելիքշահն, զոր յիւրում տեղւոջն գրեցից, սորին ձեռնտուութեամբ»: Շարունակելով պատմությունը եւ անդրադառնալով Մելիքշահին՝ նա կրկին մեջբերում է կատարում Հովհաննես Սարկավագից, սակայն բավարարվելով միայն վարդապետի պատվանունը նշելով. «Զի ասէ **Իմաստասէրն** աստուածային...»[13]:

Հայտնի չէ, թե արդյոք Հովհաննես Սարկավագի Անիի դպրոցի շրջանավարտներից որեւէ մեկը կրել է «Իմաստասէր» պատվանունը: Սամվել Անեցու Ժամանակագրության հրատարակության մեջ տեղ գտած մի հատվածում թվարկվում են Սարկավագի սաներից մի քանիսը՝ «...աշակերտ սորա Երեմիա... որ եւ Անձրեւ կոչեցաւ: Եւ ընկերք սորա տէր Խաչատուր եւ Գրիգոր եւ Յովհաննէս եւ Սամուէլ ամենեքեան սոքա Անեցիք»[14]: Թեեւ այդ հատվածը հեղինակային չէ, այլ հետագայում է մուծվել Ժամանակագրության մեջ, սակայն թվարկված անձանց Հովհաննես Սարկավագի սաներ եղած լինելը կասկած չի հարուցում:

---

[11] Ա. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երեւան, 1956, էջ 319, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 157:

[12] Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց՝ յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ, 97:

[13] Նույն տեղում, էջ 115:

[14] Նույն տեղում, էջ 128:

Ժամանակագրությունից բացի Սամվել Անեցին գրել է նաեւ մի տոմարագիտական աշխատություն, որի վերնագրում հիշատակված պատվիրատուն նույնպես «Իմաստասէր» պատվանունն է ունեցել. «Մեկնութիւն տումարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ **Ստեփանոսի Իմաստասիրի**»[15]: Աշխատությունը շարադրված է հարց ու պատասխանի ձեւով, ընդ որում՝ Անեցին օգտվել է Անանիա Շիրակացու Քննիկոն աշխատության տոմարագիտական բաժնից, երբեմն առանձին հատվածներ նույնությամբ արտագրելով: Թե ով է եղել Սամվել Անեցու այս երկի պատվիրատու Ստեփանոս Իմաստասերը, հայտնի չէ: Սակայն հեղինակը հավանաբար որոշ հիմք պիտի ունենար, որպեսզի ե՛ւ իր սիրելի ուսուցչին[16], ե՛ւ այս Ստեփանոսին նույն պատվանունով կոչեր:

Անեցի հաջորդ իմաստասերը հիշատակվում է քաղաքի մոտ գտնվող Մաղասբերդ ամրոցում 1222 թ. թարգմանված երազահանի հիշատակարանում. «Զայս երազահանս ի տաճիկ յարապ գրէ ի հայ գիր մեկնեալ **Առաքել իմաստասէր աբեղայն, որ մականուն Վառ ասեն**...»[17]: Այս վկայության մեջ «իմաստասերը» թերեւս ավելի շուտ բնութագրում է քան մականուն (Առաքելի մականունը «Վառ» էր): Մեկ այլ հիշատակարանում նա հետեւյալ կերպ է անվանվում՝ «աբեղան **Անեցի**, որ անուն **Առաքել** ասէին...»[18]:

Անեցիները «փիլիսոփա» պատվանունով են մեծարել իրենց համաքաղաքացի գանձասաց Սարգիս վարդապետին, որի գանձե-

---

[15] Ա. Գ. Աբրահամյան, Սամվել Անեցու տոմարական եւ տիեզերագիտական աշխատությունները, «Էջմիածին», 1952, Ա, էջ 3036:

[16] Սամվել Անեցու՝ Հովհաննես Սարկավագի նկատմամբ ունեցած ակնածալի վերաբերմունքը երեւում է ոչ միայն Ժամանակագրության այն հատվածներից, ուր նա մեջբերումներ է կատարել ուսուցչի թղթերից, այլեւ այն փաստից, որ Անեցին իր որդուն անվանակոչել է Սարկավագ (այդ մասին տեղեկանում ենք Սամվել Անեցու թոռան՝ Խծկոնքում թողած արձանագրությունից):

[17] ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 131:

[18] Նույն տեղում, էջ 132:

րից մեկի խորագիրը հետեւյալն է. «Վեցերորդ աւուր քարոզ ասացեալ **Սարգիս փիլիսոփայի Տաւնկաց Անեցւոյ** ի ծնունդն Քրիստոսի եւ ի յարութիւնն»[19]:

Այն, որ «Իմաստասէր» պատվանունը պահպանվել է նաեւ անեցիների սերունդների պատմական հիշողության մեջ, երեւում է Աբրահամ Կրետացու «Պատմութիւն Անի քաղաքին» երկից, որը թեեւ ուշ շրջանի կրոնաբարոյախոսական բնույթի ստեղծագործություն է, սակայն պահպանել է ուշագրավ մանրամասներ անիական կենցաղի մասին: Հեղինակն այստեղ անդրադառնալով Անիի վերջին Բագրատունի թագավորին, գրում է. «...Եւ կացին մնացին մինչեւ ի թագաւորութիւնն **Գագկայ-Յոհաննիսի Իմաստասիրի**»[20]: Հեղինակը նույնացրել է Հովհաննես Սմբատին (1017-1041) եւ Գագիկ Բ-ին (1042-1044), քանի որ հետո գրում է, թե երբ թագավորը գնաց Կոստանդնուպոլիս, անեցի իշխանները «ապստամբելով ի թագաւորէն իւրեանց **Յոհաննիսէն Իմաստասիրէ**»[21], իբրեւ թուղթ գրեցին կայսեր, որպեսզի նա այլեւս թույլ չտա Հայոց թագավորին Անի վերադառնալ: Այսպիսով, այս կարծեցյալ Գագիկ-Հովհաննես թագավորն էլ է կոչվել «Իմաստասէր»: Դա, թերեւս, գալիս է նրանից, որ ե՛ւ Հովհաննես Սմբատին, ե՛ւ Գագիկ Բ-ին պատմիչները ներկայացնում են որպես գրասեր ու գիտուն անձնավորություններ:

Բերված վկայությունները տարբեր լինելով հանդերձ վկայում են, որ Անիում նշանավոր մարդկանց շրջանում տարածված է եղել «Իմաստասէր» պատվանունը:

---

[19] Raymond H. Kévorkian, Armen Ter-Stepanian, Manuscrits arméniens de la Bibliotheques nationale de France, Catalogue, Paris, 1998, p. 170, Ա. Քյոշկերյան, Գանձասաց Սարգիս Անեցի, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, N 2, էջ 205:

[20] Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցից իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 101:

[21] Նույն տեղում, էջ 102:

ԱԲՐԱՀԱՄ ԿՐԵՏԱՑՈՒ
«ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

1734-1737 թթ. Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացու գրական ժառանգության մեջ պահպանվել է մի փոքրածավալ երկ՝ «Պատմութիւն Անի քաղաքին» վերնագրով, որն առաջին անգամ հրատարակվել է 1870 թ. Վաղարշապատում, հեղինակի հիմնական պատմագիտական աշխատության («Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագիտութիւն անցիցն իւրոց եւ Նատր-Շահին Պարսից») վերջում՝ որպես հավելված: Ամբողջական վերնագիրն է՝ «Պատմութիւն Անի քաղաքին զոր գրեալ է Աբրահամու ռաբունապետի եւ Բանի սպասաւորի եւ Առաջնորդին Թրակիոյ»: Այստեղից երեւում է, որ հեղինակն այն գրել է Թրակիայի (Ռոդոսթո) առաջնորդ եղած ժամանակ, այսինքն՝ 1709-1734 թթ. ժամանակամիջոցում: Աբրահամ Կրետացու այս երկին տարբեր առիթներով անդրադարձել են Ն. Մառը, Ղ. Ալիշանը, Լեոն, Թ. Հակոբյանը, Վ. Միքայելյանը եւ այլք, Մ. Բրոսսեն այն թարգմանել է ֆրանսերեն:

Վաղարշապատյան հրատարակության համար հիմք է ծառայել Ս. Էջմիածնի մատենադարանի թիվ 1749 ձեռագիրը, որն այժմ պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում 1781 թվահամարի տակ, ընդօրինակված 1756 թ. Ղրիմի Կաֆա քաղաքում: Ձեռագրում վերնագիրը փոքր-ինչ այլ է եւ վկայում է, որ հեղինակը երկը գրել է Կաֆայում՝ «Պատմութիւն Անի քաղաքին, զոր գրեալ է ի Կաֆայ, Աբրահամու ռաբունապետի եւ Բանի սպասաւորի եւ Առաջնորդին Թրակիոյ»: Ըստ երեւույթին հրատարակիչները նկատի ունենալով, որ մատյանն ընդօրինակվել է Կաֆայում, եւ որ Աբրահամի՝ երբեւէ այդ քաղաքում եղած լինելու մասին այլ տեղեկություններ չկան, վերնագրում եղած «ի Կաֆայը», ընդմիջարկություն համարելով, դուրս են թողել: Մինչդեռ երկի վերջաբանն այլ բան է հուշում: Այն կարեւոր փաստեր է պարունակում հենց Կաֆայի պատ-

մության վերաբերյալ եւ ակներեւ է դարձնում, որ վերնագրում առկա, երկի գրության տեղի մասին նշումը ստույգ է:

Աբրահամ Կրետացու գրությունը թեեւ վերնագրված է «Պատմութիւն Անի քաղաքին», սակայն սովորական ըմբռնմամբ պատմագիտական ստեղծագործություն չէ, այլ կրոնաբարոյախրատական զրույց՝ հյուսված երբեմնի ծաղկուն մայրաքաղաքի կործանման ու ամայացման փաստի շուրջը: Նյութի ընտրությունը պատահական չի եղել, քանի որ Կրետացին այն ներկայացրել է Կաֆայի հայությանը, այսինքն՝ Անիից գաղթածների սերունդներին: Հեղինակը նպատակ է ունեցել իր ժամանակակիցներին հեռու պահել հասարակական ամեն տեսակ արատներից ու բազմապիսի մեղքերից, որոնք ծնվում են հարստությունից, ցոփությունից, անխոհեմությունից եւ առաջանում այնտեղ, ուր բարեպաշտությունը տեղը զիջում է ընչաքաղցությանն ու ամբարշտությանը: Ահա այս խնդիրը Կրետացին լուծել է յուրովի՝ հենվելով անեցիների շրջանում պահպանված ավանդությունների վրա: Մնացած ամեն ինչ, այդ թվում պատմական բուն իրադարձությունները, որոշակի դեպքերն ու դեմքերը, հեղինակի համար երկրորդական նշանակություն ունեն:

Կրետացու երկը արժեքավոր է մի քանի առումով: Նախ, այն հանդիսանում է Անիի կործանումը քրիստոնեական աշխարհայացքի տեսակետից՝ որպես գործված մեղքի հատուցում ներկայացնող ստեղծագործություն, որի գաղափարաբանական արմատները հասնում են 11-րդ դար (Արիստակես Լաստիվերցի, Հակոբ Սանահնեցի, Հովհաննես Կոզեռն): Կրետացին առավելագույն զարգացման է հասցրել իր նախորդների այս տեսակետը քաղաքի անկման վերաբերյալ: Միեւնույն ժամանակ, ինչպես երեւում է որոշ հատվածներից, հեղինակը ծանոթ է եղել անեցիների միջավայրում պահպանված որոշ զրույցների ու ավանդությունների, որոնք օգտագործել է ըստ իր նպատակի: Հետաքրքիր է նաեւ, որ անեցիների մեղքերի բազմապատկումը (հասարակության բարոյազրկումը)

հեղինակը կապում է պետականության անկմանը հաջորդած՝ օտար (բյուզանդական) տիրապետության ժամանակաշրջանի հետ:

Պատմագիտական առումով հետաքրքրություն են ներկայացնում երկի վերջամասում տեղ գտած՝ Անիի գաղթականությանը, Կաֆայի պարսպաշինությանը վերաբերող տեղեկությունները:

Ստորեւ ներկայացնում ենք աշխարհաբար փոխադրությունը՝ համառոտ ծանոթագրություններով:

ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐ ԳՐԵԼ Է ԹՐԱԿԻԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ԲԱՆԻ ՍՊԱՍԱՎՈՐ ԱԲՐԱՀԱՄ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԸ ԿԱՖԱՅՈՒՄ

Մեծ եւ հռչակավոր էր Անի քաղաքը, որ գտնվում է Շիրակվան դաշտում, որ եւ մեր թագավորների աթոռն է եղել, որի բնիկ բնակիչները մեծափարթամ, հարուստ ու փափկասուն էին: Անին կառուցել է Շիրակ թագավորը[1] Բագրատունյաց ցեղից, որ Քետուրական[2] ծնունդ է, եւ սրանք, Պաղեստինում գերվելով Տիրան թագավորի ձեռքով, եկան Հայաստան ու սերեցին այն տոհմը, որ Բագրատունիներ է կոչվում: Ապա Հայաստանի մարզպանությունից հետո Շիրակը՝ Բագրատունյաց տոհմից, ծաղկավետ եւ հացառատ Շիրակվան գավառում կառուցեց Անին՝ որպես գահանիստ իր թագավորության համար: Եվ այսպես ապրեցին մինչեւ Գագիկ-Հովհաննես իմաստասերի[3] թագավորությունը:

Եւ այն ժամանակ Շիրակվանի Հովհաննես թագավորը գնաց Ստամբուլ՝ հույների թագավորի մոտ, նրան տեսնելու համար եւ հույների թագավորը պատրաստություն տեսավ եւ ընդունեց նրան մեծ փառքով եւ մեծարեց պալատում ու թագավորավայել թոշակ սահմանեց նրա համար: Եվ այսպես բազում օրեր ուրախացան:

Իսկ Անիի նենգ եւ տիրատյաց իշխանները, ըստ իրենց վաղեմի սովորության, գրեցին հունաց թագավորին, ապստամբելով իրենց՝ Հովհաննես Իմաստասեր թագավորի դեմ: Նաեւ Անիի բերդի ոսկուց պատրաստված բանալին՝ նամակի հետ ուղարկեցին Կոստանդնուպոլիս: Եւ նամակով ու դեսպանի միջոցով խնդրեցին հույների թագավորին, որպեսզի այլեւս չթողնի Հայոց թագավորին վերադառնալու Անի՝ իր աթոռը, այլ նրա փոխարեն իր կողմից ուրիշ մարդ՝ ոստիկան ուղարկի Անի, որպեսզի հավերժ հնազանդվեն նրան: Հիմարները կարծում էին, թե հույներն ավելի լավ ու իրենց կամքին հարմար կլինեն, քան թե Հայոց թագավորը:

Երբ որ իր թագավորի կողմից հույն իշխանը եկավ Հայաստանը տիրելու եւ նստեց Անիում, սկսեց տառապեցնել մեր ազգը եւ բանի տեղ չդնել ո՛չ ժողովրդին, ո՛չ իշխաններին, մինչեւ որ շատ դառնացրեց բոլորին, իսկ նրա հաջորդը ավելի չար դուրս եկավ, քան առաջինը[4]: Եւ (անեցիները) սկսեցին միջոց փնտրել, մինչեւ որ կաշառքով, բազում ընծաներով ու աղաչանքով հազիվ հեռացրին հույնին՝ իր թագավորի հրամանով, եւ դրեցին ուրիշ մեկին, որին իրենք ցանկացան՝ անունով հայ եւ իրենց համապատասխանող[5]:

Եւ, այնուհետեւ, ամեն մեկն սկսեց իր սրտի ուզածն անել եւ օր-օրի բազմապատկեցին անհնարին չարությունները, հեքիաթ համարեցին առաքյալի ասածը, մտնելով յոթնապարիսպ Երիքովը[6] ու կարծելով, թե այդպես կարող են ազատվել Աստծո բարկությունից, որ գալու էր:

Եւ, նախ, այնքան հպարտացան, մինչեւ որ սկսեցին չհավանել այլոց. ո՛չ մեծերին, ո՛չ փոքրերին, ո՛չ էլ անգամ միմյանց, այլ ամեն մեկը միայն իրեն հավանելով, ամբարտավան ընթացքով միշտ նույն վիճակում էր մնում:

Երկրորդը՝ նախանձն էր, որ ունեին միմյանց նկատմամբ՝ ընկերոջ առաջընթացի, թե՛ իմաստնանալու, թե՛ ընթերցանության, թե՛ պճնվելու, թե՛ փառասիրության, թե՛ տներ կառուցելու կամ թե՛ ուրիշ այլ աշխարհական սնափառությունների դեպքում, տղամարդ թե կին ջանում էին ամեն ինչով ընկերոջից առաջ անցնել:

Երրորդը՝ առավել բարկությունն էր: Այնքան ինքնահաճ ու կամապաշտ էին դարձել, որ բնավ ուրիշներին չէին լսում. ո՛չ ծերերին եւ ո՛չ վարդապետներին, բայց միայն ամեն մարդ իր աչքին իմաստուն էր երեւում:

Չորրորդը՝ ծուլությունն էր համակել բոլորին, քանզի առանց աղախինների ու ծառաների չէին մնում եւ հետիոտն եկեղեցի չէին գնում, ոմանք գրաստով էին գնում, ուրիշներն էլ գրաստից իջնել չէին ցանկանում, այլ ժամարարին եկեղեցուց դուրս էին կանչում,

Ավետարանը բարձրացնել տալով համբուրում եւ այդպես էլ նշխարը վերցնելով՝ գնում էին հանդեսների, թատրոն եւ ծիարշավարան:

Հինգերորդը՝ անչափ ագահությունը եւ ամենայն չարյաց արմատ՝ փողասիրությունը, քանզի այնքան ագահ էին, որ միմյանց բարիքն էին հափշտակում, նաեւ որբ ու այրիներին էին զրկում. ժառանգությունն ու սեփականությունը կորզում ու իրենց վերցնում: Ձանում էին մեկը մեկից հարուստ լինել եւ ամբողջ կահկարասին, անոթներն ու սարքերը եւ հատկապես կանանց զարդերը, թե հնար կար, ամեն ինչ մաքուր ոսկուց էին պատրաստում:

Վեցերորդ՝ որկրամոլությամբ էլ էին շատ տարվել, քանզի երկիրը բարեբեր ու պարարտ էր եւ իրենք՝ մեծատուններ, ու օր-օրի տեսակ-տեսակ խորտկակերությամբ էին պարապում, ուտում եւ խմում զանազան ծաղկաբույր գինիներ՝ առակ-զրույցներով, երգ ու պարով, ուստի եւ աղբյուրի պես բխում էին պոռնկության մեղքերը:

Յոթերորդը՝ անհիշատակելի անբարոյականությունը, մանավանդ՝ ազգապղծությունը, որ գույքի ու սեփականության (ժառանգության) համար (աղջիկ կամ տղա) օտարին չէին տալիս, այլ իրենց մերձավորներին՝ ըստ հին բարքերի:

Նաեւ բացահայտ եւ գաղտնի պոռնկությունը, որ կանանց բնական գեղեցկության պատճառով միշտ տարածված էր նրանց մեջ եւ դրանով էին զվարճանում առանց զղջալու: Ու նաեւ ուրախ էին զանազան չարությունների համար, մտքում կարծելով, թե հազար եւ մեկ եկեղեցիներով Աստված չի բարկանա մեզ վրա ու չի հիշի մեր մեղքերը, մոռանալով մարգարեի խոսքը, որ ասում է. «Որպիսի՞ տուն շինեցիք ինձ համար եւ որպիսի՞ հանգստյան տեղ. այս ամենն իմ ձեռքն արեց»[7]:

Եւ նրանք միշտ պարծենում էին եկեղեցիներով ու Աստծո համար բարեգործություն համարում, քանզի հազար եւ մեկ եկեղեցի ունեին եւ ամեն եկեղեցու մեկ ծիթհանք եւ մեկ այգի էին նվիրել՝ շեն մնալու համար[8]: Ահա այս պատճառով հպարտացան, անմտացան եւ ընկան կռապաշտության ու անձնապաշտության, ապա՝ ան-

հավատության եւ անօրինության մեջ, որին հետեւեց անզգամությունն ու լրբությունը ու սրանց հետ նաեւ՝ լկտիությունն ու հայհոյախոսությունը:

Ու այս ամենի վրա ավելացել էր նաեւ օտարատյացությունը եւ բոլորովին չէին սիրում ուրիշներին, մինչեւ անգամ Աստծո հոգածությամբ եկող վարդապետներին ու խրատատուներին, որոնց բնավ չէին լսում ու չէին հավանում, այլ ծաղր ու ծիծաղի էին ենթարկում: Քանզի, ըստ պատմողների, երկու գրակալ ունեին. մեկը բարձր եւ մյուսը՝ կարճ: Ու երբ գալիս էր վարդապետ կամ քահանա, թե կարճահասակ էր՝ բարձր գրակալն էին դնում եկեղեցու ատյանում, իսկ եթե բարձրահասակ էր՝ կարճն էին դնում: Եւ այսպես ծաղրում ու կատակում էին եւ անմիտ ծիծաղով ու քարոզողներին հեգնելով բարկացրին արարիչ Աստծուն: Եւ կամենում էր Տերն ամբողջովին վերացնել նրանց, բայց Աստծո ներողամտությունն այդ թույլ չէր տալիս: Քանզի Աստված չի ցանկանում մեղավորի մահը, այլ՝ նրա դարձն ու վերապրելը, եւ բուժումը չի տալիս առողջներին, այլ՝ հիվանդներին, որի համար էլ Հիսուսը եկավ ոչ թե արդարներին կոչելու, այլ՝ մեղավորներին:

Եւ քանի որ (Աստված) կամենում է, որ ամեն ոք ապրի եւ գա դեպի ճշմարտության ճանաչումը, ինչպես որ հնում էր, երբ կամենում էր ջրհեղեղով աշխարհը ողողել, նախ Նոյի միջոցով խրատեց, որ մարդիկ այդպիսի դառն մրուրը չընպեն: Նույն կերպ եւ նինվեացիներին՝ նախ մարգարեի միջոցով զգուշացրեց ու, ապաշխարելուց հետո ներեց եւ պատուհասը վերացրեց: Նույն ձեւով եւ անեցիներին տեղյակ պահեց Հովհաննես վարդապետի միջոցով, որի մականունը Պլուզ[9] է (որը Ներսեսի[10] «Լույս անճառ» շարականն է գրել. «Հիշիր Տեր» շարականը եւս այս Հովհաննես վարդապետն է գրել):

Այս վարդապետը Սուրբ Հոգու ազդեցությամբ ելավ գնաց Անի՝ քարոզելու եւ խրատելու նրանց, որպեսզի դառնան մոլորությունից ու իրենց չար գործերից: Սրա համար Հովհաննես վարդապետը ե-

կավ հասավ Անի եւ գնալով Ավագ եկեղեցին, գիշերեց այնտեղ, բայց ոչ ոք նրա անձի համար հոգ չտարավ եւ կամ մոտը չգնաց հարցուփորձի ու ողջունելու համար: Իսկ երբ լուսացավ, գնաց եկեղեցի եւ (ժամերգության ժամանակ) հետին տեղը տվեցին նրան, եւ նա մնաց խոնարհությամբ, ապա հանգստի ժամին գնաց իր խուցը: Եւ բնավ ոչ ոք չգնաց նրա մոտ: Իսկ երեկոյան, երբ որ կերան, հղփացան ու հարբեցին, այն ժամանակ եկան վարդապետի մոտ եւ քանի որ հասակով կարճ էր, ուստի բարձր գրակալը դրեցին, որ երբ վեր ձգվի՝ ծաղրեն նրան: Իսկ նա, Սուրբ Հոգու շնորհիվ, բոլոր ընթերցվածները սերտած, առանց գրքի խոսում էր անսխալ ու ստույգ: Բայց եւ օր ու գիշեր խրատում էր մեծ հոգածությամբ, եւ նրանք բոլորովին չէին լսում ու մեղքերից չդարձան: Այդ պատճառով սաստիկ մահացություն սկսեց, քանզի աներեւույթները, իբրեւ մարմնավոր երեւալով, բացահայտորեն խոցոտում էին մանուկներին՝ իրենց մայրերի գրկում, ոմանց՝ մահիճի մեջ, ոմանց՝ քնած, եւ ուրիշներին՝ արթուն, մինչեւ որ բնակչության երեք մասից մեկը մնաց:

Եւ երբ այս բոլոր հարվածները տեսան, փոքր-ինչ զգացվեցին, եւ քանի որ վարդապետը գնացել էր, հետեւից գնալով որոնեցին եւ գտնելով բերեցին ու պատվեցին եւ սկսեցին կեղծավորաբար «մեղա» ասել եւ խոստացան այնուհետեւ չմեղանչել:

Իսկ Հովհաննես վարդապետը սկսեց խրատել նրանց, զգուշացնել ու պատվիրել, ասելով. «Ձեր օգուտը դուք գիտեք, որոնեցեք լավը, որդյակներս, այսուհետեւ ձեր չարությունից իսպառ հրաժարվեք եւ ազգապղծություն մի արեք, որ Աստված հաշտվի ձեզ հետ»: Երբ այս լսեցին, շատ բարկացան, բռնությամբ վերցրին նրան ու բանտ դրեցին մի մութ ու գարշահոտ տեղ, ասելով. «Պատարագ արա եւ Աստծուն հաշտեցրու մեզ հետ, ինչպես որ ասում էիր, ապա թե ոչ, մեր ձեռքով կմեռնես»: Իսկ նա պատասխանեց եւ ասաց. «Ահա նորից բարկացրեցիք Աստծուն»: Բայց նրանք չէին լսում, եւ երկյուղից ճարահատ նա հանձն առավ պատարագ մա-

տուցել եւ դուրս գալով գնաց եկեղեցի: Եւ երբ թափորով դուրս եկավ խնկարկելու, այդ ժամանակ բուրվառից հուր դուրս եկավ եւ չորս հարյուր մարդ այրեց, ինչպես հնում Նադաբին ու Աբիուդին[11]: Եւ իսկույն կրկին զղջալով՝ սուրբ վարդապետի ոտքերն ընկան եւ թողություն էին հայցում ու խոստանում ըստ ամենայնի մեղքերից դարձի գալ:

Եւ քիչ օրեր անցնելուց հետո կրկին սկսեցին այլ չարություններ գործել եւ պղծության ախտի մեջ թավալվել. տղամարդիկ կանանց էին տիրանում, եւ կանայք տղամարդկանց էին տրվում մոլեգին կրքով:

Այն ժամանակ կրկին Տերը բարկացավ եւ ուղարկեց չար գազաններ ու գայլերի նման այլակերպներ, որոնք գալիս էին գիշերով, մտնում տնից տուն եւ նորահարսներին ու փեսաներին, մանավանդ պատանիներին ու մանուկներին հափշտակելով տանում էին: Եւ (մարդիկ) կանուխ արթնանալով, տեսնում էին նրանց իրենց տներից դուրս, դռների առաջ հոշոտված, ոմանց՝ ձեռքը, ոմանց՝ ոտքը եւ ոմանց՝ գլուխը անդամահատված, իսկ ոմանք կիսամեռ ընկած էին դրսում արնաթաթախ ու դիվաթավալ:

Այդ ժամանակ ելան վարդապետին փնտրելու եւ նրան գտան մի գյուղում ու ոտքերն ընկան: Նրանց մեջ նաեւ մի կին կար, իր մինուճար որդու հետ, որը խոցոտված էր եւ գազանների կողմից անդամահատված: Լաց էր լինում կինը եւ աղաղակում վարդապետի առաջ ասելով. «Իմ հոգեւոր տեր, պահել էի քո բոլոր պատվիրանները եւ պիտի պահեմ մինչեւ մահ, ուրեմն օգնիր ինձ, քանզի (որդիս) մինուճար է»: Այդ ժամանակ վարդապետը, տեսնելով կնոջ հավատը, ինչպես քանանուհունը, Աստծո առաջ աղոթքի իջավ: Այն ժամանակ գազանները, որ հափշտակել էին տղայի մարմնի մասերը, բոլորի աչքի առաջ դրանք հետ բերեցին ու դրեցին վարդապետի առաջ: Եւ նա վերցնելով դրանք, դրեց ու շարեց ամեն մեկն իր տեղում ու սկսեց աղոթել առ Աստված, ասելով. «Տեր Հիսուս, ինչպես որ հարություն տվեցիր մինուճար որդուն Նային քաղաքում[12],

նույն զորությամբդ եւ ողորմությամբդ էլ հարություն տուր սրան եւ կենդանացրու, քանզի անմեղ է: Նաեւ թող մոտիկ եղողները տեսնեն Քո զորությունը եւ դառնան իրենց չարությունից»: Այն ժամանակ տղայի մարմինը «եռաց» եւ ոսկորը ոսկրին կպավ, եւ կենդանացավ ու հոգին ետ եկավ, ու հարություն առնելով ոտքի կանգնեց: Իսկ ովքեր շուրջբոլորն էին, երբ տեսան սքանչելագործությունը, ահից վարդապետի ոտքերն ընկան եւ մեղա էին կանչում: Ապա շտապով գնում բերում էին իրենց (հարազատների) դիակները վարդապետի առաջ ու աղաչում, որպեսզի հարություն տա:

Իսկ Հովհաննես վարդապետն աղոթք արեց եւ գոչելով ասաց. «Սրանցից ով որ անմեղ է, թող ապաքինվի, իսկ թե ոչ, թող Աստված դատաստան տեսնի ըստ իր կամքի»: Այն ժամանակ հանկարծակի նրանց վրա հարձակվեցին գայլերը եւ բոլորի աչքի առաջ պատառոտեցին շատերին, ու այս տեսնելով՝ մարդիկ ահից սարսափած ապշեցին եւ սկսեցին սաստիկ մեղա կանչել եւ հրաժարվել չար գործերից:

Բայց երեք ամիս անց մոռացան նախկին հարվածը եւ ասացին, թե այն պատահականություն էր, որ եղավ եւ ոչ թե մեր մեղքերի պատճառով էր: Ու կրկին սկսեցին մեղքերի մեջ թավալվել: Հովհաննես վարդապետը վերադարձավ եւ սկսեց քարոզել, ու երբ տեսան, որ կրկին հանդիմանում է իրենց, բարկացան եւ միմյանց ասացին, թե սա է մեր քայքայիչը: Եւ նենգ խորհուրդ հղացան՝ թմրեցնող լուծույթ խմեցնելով շշմեցրին նրան, ապա մերկացնելով սայլի մեջ դրեցին ու այսպես մերկ եւ խայտառակ քաղաքի մեջ շրջում ու փոքրից մեծ ծաղրում էին: Այնուհետեւ բերելով Ավագ եկեղեցու դռան մոտ՝ զամբյուղի մեջ դրած կախեցին, որ եկեղեցի մտնող-ելնողները տեսնեն: Եւ երբ սթափվեց թմրությունից ու զգաստացած՝ տեսավ իրեն այդ կերպարանքով, սկսեց հոգոց հանել ու դառնորեն լաց լինել: Եւ նրան իսկույն վար իջեցնելով բրերով ծեծեցին ու (քաղաքից) դուրս քշեցին ահաբեկելով եւ ասելով, թե այսուհետեւ

ոտք չդնես այստեղ եւ քեզ չտեսնենք, ապա թե ոչ՝ մեր ձեռքով անողորմաբար կմեռնես:

Եւ այս ամենը տեսնելով, Հովհաննես վարդապետը բարձրացավ մի բարձր բլրի վրա եւ անիծեց քաղաքը եւ ծունկի գալով ասաց ու կրկնեց «Տեր, այլեւս երաշխավոր չեմ լինի (այս քաղաքի համար), այսուհետեւ ինչ որ կամենում ես, այնպես արա»: Եւ հանկարծ Աստծո սաստիկ բարկությունն իջավ ու սկսեց քաղաքը շարժել եւ պարիսպները տապալել: Այս տեսնելով, ամեն մարդ հապճեպորեն ու արագ-արագ ընթանալով, ամուր բռնելով ամեն մեկն իր ընտանիքի անդամների ու զավակների ձեռքերը, տարագիր դարձած հեռացավ՝ թողնելով քաղաքը, ե՛ւ եկեղեցիները, ե՛ւ ոսկեզօծ պալատները, ե՛ւ իրենց ծաղկավետ դաշտերը: Գնացին փախստականի պես, ճեղքելով կեսը դեպի Զուղա[13] եւ կեսը՝ Կասպից ծովի եզերքը, ոմանք՝ Վան եւ ուրիշները՝ Սիս, իսկ նրանք, որ անցան Կասպից ծովը, գնացին առընթեր նետողաց ազգին, որը մոգերից է[14] եւ որին թաթար են ասում: Եւ թաթար խանից հրաման ստանալով, բնակվեցին Աղսարայ կոչվող վայրում, որն Աստրախանի մոտ է: Եւ շատ տարիներ չանցած՝ ճնշվելով նետողաց դաժանաբարո ազգից, պատվիրակ ուղարկեցին Կաֆայի լատին իշխանի մոտ, որը Ֆրանկ-Հիսար կոչվող բերդի մեջ էր եւ, պայման կապելով իշխանի հետ, հիմնովին գաղթեցին եկան Կաֆա, ոմանք՝ լեռնամիջի Ղրիմ, մյուսներն էլ անցան գնացին Լեհաստան եւ ուրիշներն էլ՝ Աքերման[15]:

Իսկ նրանք, որ Կաֆայում մնացին, սկսեցին եկեղեցիներ եւ վանքեր կառուցել, բայց որովհետեւ բոլորը չկարողացան բերդում տեղավորվել սրա փոքրության պատճառով, թաթարներն, ըստ իրենց բնիկ սովորության, գալիս ու հափշտակում էին նրանց որդիներին ու դուստրերին եւ տանում վաճառում: Եւ երբ մերոնք տեսան այս, նորից պայման կապեցին լատին իշխանի հետ եւ հին բերդին կից իրենց համար նոր բերդ կառուցելու իրավունք ձեռք բերեցին: Սկսեցին կառուցել շուրջ քառասուն տարի, մինչեւ ավարտեցին

մեծ պարիսպը եւ երեք տարի վայելեցին: Եւ երեք տարի անց (բերդը) թուրքը գրավեց:

Եւ իրենց Կաֆա գալու սկիզբը եղավ (Հայոց) 780 թվին (1331 թ.) եւ ըստ Կենարարի (Քրիստոսի ծննդյան)՝ հազար երեք հարյուր երեսունմեկին:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Աբրահամ Կրետացին նման անստույգ տեղեկություն հայտնող միակ հեղինակն է: Հետաքրքիր է, որ Շիրակ անձնանուն հայ միջնադարյան աղբյուրներում ընդհանրապես չի հանդիպում: 14-րդ դարում հիշվում է մի «պարոն Շիրաք» (Մատենադարան, ձեռ. թիվ 7351):

2. Քետուրան Աբրահամի կինը դարձավ Սարայի մահից հետո եւ վեց զավակ ծնեց (Ծննդոց, Ի Ե, 1-3): Աբրահամ Կրետացին այս հիշատակությամբ ակնարկում է Բագրատունիների հրեական ծագման մասին ավանդությունը: Հետագա շարադրանքում նշված Հայոց Տիրան թագավորն իրականում Տիգրան Բ Մեծ (Ն.Ք. 96-55) թագավորն է:

3. Դատելով հետագա շարադրանքից, խոսքն Անիի վերջին գահակալ Գագիկ Բ -ի (1042-1045) մասին է:

4. Ակնարկվում են Անիի բյուզանդական առաջին կառավարիչներ Միքայել Իասիտեսը եւ Կատակալոն Կեկավմենոսը:

5. Խոսքը Բագարատ Վխկացու մասին է: Ըստ Հովհաննես Սկիլիցեսի, Կոստանդին Դուկաս կայսրը «Անի է ուղարկում Բագարատ անունով ոմն հայազգի դուքս, որը խոստացել էր տեղի զորքերը եղածով ապահովել» (Հովհ. Սկիլիցես, Երեւան, 1979, էջ 211): Հավանաբար վերջինս քաջածանոթ էր Անիի կացությանը եւ կապերի մեջ էր քաղաքի ավագների հետ:

6. Քաղաք Հորդանանի մոտ, որն Աստծո շնորհիվ հեշտությամբ ընկավ հրեաների ձեռքն ու կործանվեց (Յեսու, Զ, 1- 22):

7. Աստծո խոսքերն են, որ հաղորդում է Եսայի մարգարեն (Եսայի, ԿԶ, 1-2):

8. Այն, որ Անի քաղաքի եկեղեցիներից շատերին ձիթհանք ու այգիներ են նվիրաբերված եղել, հայտնի է բազմաթիվ վիմագիր արձանագրություններից, բայց պատմիչներից ոչ մեկն այդ մասին չի գրում: Աբրահամ Կրետացու ժամանակ Անիի վիմագրերը չէին հրատարակված, եւ նա որեւէ գրավոր աղբյուրից չէր կարող այդ մասին իմանալ, ուստի մնում է ենթադրել, որ այս մասին նա տեղեկացել է անեցիների սերունդների մեջ պահպանված ավանդազրույցներից:

9. Հովհաննես Երզնկացի (Պլուզ - կապուտաչյա) 1230-1293 թթ., նշանավոր գիտնական, մատենագիր, մեկնիչ, տաղերգու: 1268-ին վարդապետ է ձեռնադրվել, 1270-80-ական թվականներին Հայաստանի տարբեր վայրերում քարոզչությամբ է զբաղվել: Բազմարդյուն հեղինակ է, նաեւ հայտնի խրատախոս: Բացի Աբրահամ Կրետացուց, որեւէ այլ հեղինակի մոտ հիշատակություն չկա Հովհաննես Պլուզ Երզնկացու երբեւէ Անի գալու մասին: Սակայն հայտնի է, որ մեկ այլ Հովհաննես Երզնկացի վարդապետ 1340-1342 թթ. Անիում լինելով, այստեղից որոշ տոմարական աղյուսակներ է Երզնկա տարել (Կ. Մաթեւոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 310, 363-364):

10. Հայոց կաթողիկոս Ներսես Մեծին նվիրված շարականի մասին է խոսքը: (Տե՛ս Գ. Հակոբյան, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Երեւան, 1980, էջ 273-281):

11. Նադաբը եւ Աբիուդը Ահարոնի որդիներն էին, որ այրվեցին բուրվառից ելած կրակով (Ղեւտացոց, Ժ, 1-2):

12. Նկատի ունի այրի կնոջ միանուագար որդու հարությունը Նային քաղաքում (Ղուկաս, է, 11-16):

13. Բնագրում՝ «...ճեղքեալ կեսքն ի ճուղայ»: Ուշագրավ է, որ Ջուղա (ճուղա) տեղանունն, ըստ ժողովրդական ստուգաբանության, ծագում է «ճյուղ ա» ձեւից, իբրեւ՝ «Անիի մի ճյուղն ա»: Այս ավանդությունը տարածված է եղել հենց ջուղայեցիների շրջանում (Ա Այվազյան, Ջուղա, Երեւան, 1984, էջ 3-4): Ձեռագրերի հիշատակա-

ռաններում ջուղայեցիների մի մասի Անի-Շիրակից գաղթած լինելու վերաբերյալ որոշ տեղեկություններ են պահպանվել:

14. Այսինքն, մոգակրոն՝ հեթանոս:

15. Բնագրում՝ Աղքիրման: Երկի այս հատվածի սկզբնաղբյուրների եւ դեպքերի մանրամասների մասին տե՛ս Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երեւան, 1964, էջ 69-82, 329, Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Երեւան, 1964, էջ 122-125, 157-164:

Անձնանուններ եւ տոհմանուններ

Աբաս Բագրատունի թագ. - 10, 11, 23, 196
Աբաս (պատարագ ստացող) - 78
Աբեղյան Մանուկ - 173, 190, 191
Աբլիաջ ամիրա - 192
Աբրահամ Ա Կրետացի կթղ. - 6, 261, 262-265, 273
Աբրահամ (Աստվածաշնչային) - 273
Աբրահամ Բագնայրի վանահայր - 89, 91-93, 98
Աբրահամ (Լոռեցի) - 76
Աբրահամյան Ա. Ա. - 148
Աբրահամյան Ա. Գ. - 170, 171, 180, 187
Աբու Բաքր - 244
Աբուլասվար Անիի ամիրա - 50, 51
Աբուլասվար Դվինի ամիրա - 40, 115, 117, 126
Աբուսահլ - 106
Աբուսահլ թագ. - 13
Ադամ - 176
Ադամ քհ. - 246
Ադոնց Նիկողայոս - 10, 148
Ազիզ տիկին - 70, 74
Աթանաս Տարոնացի - 173
Ալեքս վաճառական - 92
Ախխաթուն - 83
Ալեքսիոս Ա կայսր - 183
Ալիշան Ղեւոնդ - 59, 67, 98, 138, 140, 142, 156, 159, 180, 194, 196, 197, 214, 218, 221, 262
Ալիշեր ամիրա - 226, 227
Ալփասլան (Ալփ Արսլան) - 126, 127, 153, 156, 179-182, 184
Ակինյան Ներսես - 60, 63, 101, 105, 106, 121, 126, 136, 138
Ահարոն մագիստրոս - 107
Աղբերոս - 93
Աղբուղա (ձեռագիր փրկագնող) - 94
Աղբուղա Զաքարյան - 249
Աճառյան Հրաչյա - 107
Ամիրզա - 230-235
Ամիր Երկաթ - 197
Ամիր Հասան - 137
Ամիր Սարգիս - 81
Ամիր Սմբատ - 197
Ամսայջան - 233
Անանիա Ա Մոկացի կթղ. - 10, 12, 14, 17
Անանիա Շիրակացի - 173, 175, 260
Անանիա Հոռոմոսի վանահայր - 194, 199
Անանուն զրուցագիր - 217, 219
Անաստաս Ակոռեցի կթղ. - 173
Անդրեաս Հոռոմոսի վանահայր - 194, 197, 199
Անդրոնիկոս - 161, 162
Աշոտ Ա Բագրատունի թագ. - 23
Աշոտ Բ Երկաթ թագ. - 23, 111
Աշոտ Գ Ողորմած թագ. - 10-13, 15, 23, 101, 112, 241
Աշոտ Դ Բագրատունի թագ. - 22, 27, 28, 33, 35, 36, 39, 47, 73, 102, 103, 115, 117, 126, 135, 248
Աշոտ Դսեղեցի - 197
Աշոտ իշխանաց իշխան - 65
Աշոտ մարզպան - 60-62
Աշոտ Մսակեր - 239

Ապիրատ - տե՛ս Գրիգոր Ապիրատ Մագիստրոս
Ապիրատ (եղբայր Բարսեղ Բ-ի) - 53, 56, 74, 77, 78, 137
Ապիրատ (եղբ. Ն. Լամբրոնացու) - 125
Ապիրատ (հայր Գրիգորիս վանահոր) 135
Ապիրատ (հայր Շարափշահի) - 83
Ապիրատ (հայր Ն. Շնորհալու) - 122-124, 125, 134, 137
Ապիրատյաններ - տե՛ս Հասանյաններ
Ապլղարիպ Արծրունի - 165
Ապլղարիպ (թոռ Գր. Մագիստրոսի) 136
Ապլղարիպ Պահլավունի - 245
Ապլղարիպ - (որդի Հասան Մագիս-տրոսի) - 137
Ապլջահապ (որդի Գր. Ապիրատի) - 113, 116, 118, 119, 121, 122, 124, 134, 136, 137, 139, 222
Ապլջահապ (որդի Վասակի) - 124, 129, 137
Ապուղամր Մագիստրոս - 74, 75, 78, 84, 136
Ապուղամր (որդի Գրիգոր Ա եպս.-ի) - 88, 89, 94
Ապուղամր (որդի Վահրամ Պահլա-վունու) - 63
Աջապահյան Միքայել եպս. - 7
Առաքել (Բագնայրի միաբան) - 84, 99
Առաքել (հայր Հովհաննեսի) - 96
Առաքել Վառ Անեցի - 219, 228, 235, 260
Առաքելյան Բաբկեն - 241
Առյուծ - 95, 96
Ասիլ - 95, 231
Ասողիկ - տե՛ս Ստեփանոս Տարոնեցի
Աստվածատուր (Բագնայր) - 85
Աստվածատուր եպս. - 196
Աստվածատուր (Հառիճ) - 202
Ասուրաստան - 97
Ավագ տիկին - 85
Ավդալբեկյան Թադեւոս - 87
Ավետիս - 97
Ավետիք Հոռոմոսի վանահայր - 194, 199
Ավետյաց Չեչկանց - 82
Ատոմ Արծրունի - 43
Ատտալիատես - 154, 155, 159
Ատրներսեհ իշխան - 257
Արազ Խաթուն - 230
Արեւշատյան Սեն - 177
Արիստակես Ա կթղ. - 21
Արիստակես Լաստիվերցի - 11, 18, 20, 22, 24, 25, 31-34, 36, 39, 42-45, 166, 257, 263
Արիստոտել - 177
Արծրունիներ - 14,
Արշակ - 85
Արշակունիներ - 37, 142, 216
Արտաշիր Օշականցի - 78
Արքայություն - 76

Բագարատ Վխկացի - 241, 244, 273
Բագրատ Դ Վրաց թագ. - 40, 223
Բագրատունիներ - 9, 12, 14, 23, 36, 37, 111, 115, 116, 265
Բակուրան - 137
Բաղրամյան Հովհաննես - 155
Բասմաջյան Կարապետ - 71, 78, 86, 87, 97

Բարթիկյան Հրաչ - 27, 33, 37, 105, 152, 155, 159, 241
Բարխուդարյան Սեդրակ - 99
Բարսեղ Ա Անեցի կթղ. - 47-49, 53, 56, 113, 114, 123, 124, 126, 127, 129-135, 137, 172-174, 179, 223
Բարսեղ Բ Անեցի եպս. - 52-57, 127, 137, 204, 223
Բարսեղ Կեսարացի - 177
Բարսեղ Հոռոմոսի վանահայր - 194, 199
Բարսեղ Կեչառիսի վանահայր - 142, 147, 148
Բարսեղ (միաբան Հառիճի) - 207
Բարսեղ Շնորհալի - 256
Բրոսսե Մարի - 155, 262
Բուլխար վրդ. - 258

Գագիկ Ա Բագրատունի թագ. - 10, 11, 15-17, 19, 21-26, 31, 60, 61, 102, 104, 105, 109, 138, 192, 239
Գագիկ Աբասյան թագ. - 45, 66
Գագիկ Բ Բագրատունի թագ. - 36-42, 45, 73, 120, 167, 222, 261, 273
Գամաղիել վրդ. - 86, 98
Գարեգին երեց - 89
Գելան - 93, 99
Գեորգ Ուռճացի վրդ. - 169
Գեւորգ (Գէորք) իշխան - 20, 108,109, 110-113, 135, 137
Գեւորգ (Գորգ) քի. - 104, 107
Գեւորգ Լոռեցի - 126
Գեւորգ Հոռոմոսի վանահայր - 194, 199
Գեւորգ (Մարզպետունի) - 112
Գեւորգ Ներսիսանց - 93
Գեւորգ վրդ. (Բագնայր) - 92, 93, 99
Գեւորգ քի. - 245
Գեորգի Ա թագ. -24, 27, 31
Գեորգի Գ թագ. - 248
Գերսամ վրդ. - 79
Գիշուկ - 76
Գյուրպել - 163
Գնտուն - 78
Գոհարիկ - 96
«Գողձախմատ» - 156, 158,161
Գող Վասիլ իշխան - 49, 156
Գողիաթ - 132, 133
Գոռ (ենթադրյալ) - 112
Գորամ - 254
Գորգ Շիրակացի - 167
Գորգիկ - 85
Գրիգոր Ա Անիի եպս. - 74, 75, 78, 82, 84, 88, 89, 94, 98, 213
Գրիգոր Ա Լուսավորիչ կթղ. 21, 37, 48, 52, 122, 123, 125, 129, 130, 140-142, 147, 151, 225
Գրիգոր Ա Հոռոմոսի վանահայր - 194, 197, 199
Գրիգոր Ակնագյուղեցի - 196
Գրիգոր Անեցի - 176, 259
Գրիգոր Ապիրատ Մագիստրոս - 20, 28, 47, 101, 102-122, 126-138, 143, 148, 157
Գրիգոր Ապիրատ (որդի Հասան Մագիստրոսի) - 137
Գրիգոր Արջո Առիճի վանահայր - 79
Գրիգոր Բ Հոռոմոսի վանահայր - 197, 199
Գրիգոր Բ Վկայասեր կթղ. - 37, 47, 48, 121, 124, 125, 129, 135, 137, 157, 172, 175

Գրիգոր Գ Հոռոմոսի վանահայր - 198, 199
Գրիգոր Գ Պահլավունի կթղ. - 48-52, 122-125, 135, 137, 181, 187
Գրիգոր Դ Տղա կթղ. - 52-54, 125, 136, 137, 157
Գրիգոր Դարանաղեցի - 134
Գրիգոր Ե Քարավեժ կթղ. - 54, 125, 137
Գրիգոր Զ Ապիրատ կթղ. - 54, 55, 125, 137, 157
Գրիգոր է Անավարզեցի կթղ. - 149
Գրիգոր իշխան (թոռ Գր. Ապիրատի) - 47, 53, 113, 118, 126-134, 137, 223
Գրիգոր Թոքակերի որդի - 157
Գրիգոր Խուլ - 157
Գրիգոր Խուցես - 94, 157, 231
Գրիգոր Ծաղիկ - 73
Գրիգոր (հայր Ամսայջանի) - 233
Գրիգոր (հայր Գիշուկի) - 76
Գրիգոր (Համզե) Պահլավունի - 60-62, 157
Գրիգոր Հառիճեցի վրդ. - 176, 200, 201, 214, 215
Գրիգոր Մագիստրոս Պահլավունի - 34, 35, 37, 38, 62, 65, 104, 104, 110, 111, 119, 121, 122, 126, 136, 138-148, 151, 155, 157, 176, 179
Գրիգոր Մամիկոնյան - 237
Գրիգոր Մանոնիկ - 157
Գրիգոր Նազիանզացի - 177
Գրիգոր (ոմն Բագնայրում) - 98
Գրիգոր (ոմն Թալինում) - 249
Գրիգոր ոսկերիչ - 197
Գրիգոր (որդի Ազիզի) - 70, 74
Գրիգոր (որդի Վահրամ Պահլավունու) 63, 64
Գրիգոր (պատարագ ստացող, 1262 թ.) - 90
Գրիգոր Սյունիքի թագ. - 132
Գրիգոր Սուփան - 157
Գրիգոր վերակացու - 239
Գրիգոր վրդ. (որդի Աբասի) - 157, 200, 209, 210, 214, 215
Գրիգոր վրդ. (11-րդ դ.) - 240
Գրիգորիս Արշարունի - 256
Գրիգորիս կթղ. Եգիպտոսում - 122, 125
Գրիգորիս վանահայր - 135
Գրիգոր Պիխտ - 150-168
Գրիգոր Տուտեորդի - 157, 202
Գրիգոր քհ. (հայր Սարգսի) - 82
Գուրգեն թագ. - 106

Դահմազ Ամթեցի - 196
Դանիել Տիգրանակերտցի վրդ. - 194, 195, 199
Դավիթ Անհաղթ - 177
Դավիթ Անհողին թագ. - 17, 40
Դավիթ գրիչ - 87, 99
Դավիթ Դ Շինարար թագ. - 50, 186, 187, 189
Դավիթ Թոռնիկյան եպս. - 49
Դավիթ Կուրապաղատ - 60, 105
Դավիթ Սոսլան - 244
Դավիթ վարպետ - 254
Դավիթ քհ. - 208
Դեոսկորոս - 35, 36
Դինարիկ - 76
Դիոգենես (Դեոժեն) տե՛ս Ռոմանոս Դ Դիոգենես
Դիոնիսիոս Արիոպագացի - 177
Դվալ - 69, 75

Դուլուս - 91

Ելխազի - 132, 133
Ելտկուզ աթաբեկ - 224
Եղիա Ալաշկերտցի վրդ. - 194, 199
Ենովք վրդ. - 18, 258
Եսայի մարգարե - 100, 273
Եվսեբիոս Կեսարացի - 176, 177
Երեմիա Անձրեւիկ - 176, 259
Երեմիա Մարմաշենի վանահայր - 240
Երեմյան Սուրեն - 216
Եփրեմ եպս. - 143

Զաքարե ամիրսպասալար - 56, 77, 80, 81, 200, 203, 204, 206, 210, 213, 227, 239
Զաքարիա (որդի Շահնշահ Ա-ի) - 81, 90
Զաքարիա Քանաքեռցի - 216, 218, 233
Զաքարյաններ - 56, 74, 200, 203-206, 213, 227, 229, 234, 249, 255
Զմրուխտ Խաթուն - 81
Զորավար - 125

Էբրիանոս - 92
Էփրիկյան Ս. - 198
Էփթիմ - 163

Թագեր - 92
Թագուհի - 82, 83
Թագուհի (կին Բակուրանի) - 137
Թադեոս (հայր Հովհաննեսի) - 96
Թաթուլ (Տեկոր) - 22
Թաթուլ (Բագնայր) - 97
Թաճեր - 85
Թաճեր (1262 թ.) - 89
Թամամ - 92
Թամար (կին Վահրամ հեջուբի) - 211, 212
Թամար (պարոն) - 231
Թամար Վրաց թագուհի - 244
Թայիկ Թագուհի - 81, 82, 84, 89, 90
Թանզուք - 230, 231
Թեոդորոս Քռթենավոր - 256, 257
Թետեց - 92
Թիերի Ժան-Միշել - 194, 197
Թոռնիկյաններ - 101, 126
Թորամանյան Թորոս - 67-69, 194, 195, 216, 236, 250

Իասիտես (Ասիտ) - 41, 273
Իգնատիոս Հոռոմոսցի - 80, 193
Իգնատիոս Շնորհալի - 256
Իշխան (որդի Վահրամ հեջուբի) - 211, 213
Իսրայել գրիչ (Անիում) - 92
Իսրայել գրիչ (Բագնայրում) - 92, 99
Իվանե Ա Զաքարյան - 56, 80, 81, 200, 239
Իվանե Բ Զաքարյան - 249

Լեո - 195, 262
Լեւոն Բ թագ. - 53-55
Լիկոս - 136
Լիպարիտ վրաց իշխան - 107
Լիպարիտ Օրբելյան - 148
Լոռիս-Մելիքով - 216
Լորան Ժան - 153, 154, 156
Լուսոտ Անեցի - 214

Խաթուն (դուստր Վահրամ Հեջուբի) -

211, 212
Խամարտոլա - 86
Խաչատուր Ա Հոռոմոսի վանահայր - 194, 199
Խաչատուր Անեցի - 176, 259
Խաչատուր Անտիոքի դուքս - տե՛ս Գրիգոր Պիխտ
Խաչատուր Բ Հոռոմոսի վանահայր - 198, 199
Խաչատուր դպրապետ - 258
Խաչատուր շինական - 91
Խաչատուր վրդ. - 255
Խաչեղբայր - 85
Խաչերես Լոռեցի - 76
Խաչերես (հայր Մամ խաթունի) - 77
Խաչերես (պատարագ ստացող) - 79
Խաչերես (որդի Վարդի) - 84
Խաչերյան Լեւոն - 62
Խաչիկ Ա Արշարունեցի կթղ. - 14, 15
Խաչիկ Բ Անեցի կթղ. - 38, 39, 42-46
Խաչոտ (հայր Սարգսի) - 93
Խաչոտ (միաբան Հառիճի) - 207
Խաչոտ (նվիրատու Բագնայրի) - 95
Խաչտուր - 93
Խզիլ Արսլան - 224, 225
Խոռաս ավագ - 80-82, 84, 90, 91
Խոռաս կրտսեր - 90, 91, 92
Խոռասյաններ - 81
Խորեն - 85
Խոցադեղ - 79
Խոցադեղ (ազգական Ալեքսի) - 92
Խուբլու Խաթուն - 80, 197
Խուրթ - 77

Կամսարականներ - 238, 250, 251
Կատա (պատարագ ստացող) - 79
Կատակալոն Կեկավմենոս - 41, 107, 273
Կատրամիդե (դուստր Աշոտ Դ-ի) - 117
Կատրամիդե թագուհի - 15, 17, 19, 239
Կարապետյան Սամվել - 78
Կըզըլ Արսլան - 244
Կիրակոս Գանձակեցի - 33, 59, 169, 183, 186, 190, 191, 219, 221, 148
Կյուրեղ Ալեքսանդրացի - 177
Կյուրեղ Երուսաղեմացի - 188
Կյուրիկե Ա թագ. - 48
Կյուրիկե (պատարագ ստացող) - 83
Կյուրիկյաններ - 82, 210
Կոստանդ Հոռոմյանց - 79
Կոստանյան Կարապետ - 64, 142
Կոստանդին Թ Մոնոմախ կայսր - 40, 120, 140, 142, 145
Կոստանդին Ժ Դուկաս - 151, 273
Կոստեր Ծմակեցի - 87
Կութել - 83
Կուկոր - 120

Հազարբեկ - 90
Հազարդեղ - 97
Հազարյան Հ. - 206
Հակոբ Սանահնեցի - 26, 29-32, 263
Հակոբ Սյունյաց եպս. - 17
Հակոբյան Թադեւոս - 172, 262
Հակոբյան Վազգեն - 10
Համազասպ Ա Հառիճի վանահայր - 214, 215
Համազասպ Բ Հառիճի վանահայր - 210, 214, 215
Համավար (Համավոր) եպս. - 140, 141
Համել - 97

Հայկազն (Հայկազուն) - 36, 37, 142
Հասան (եղբայր Բարսեղ Ա-ի) - 129, 137
Հասան իբն Մուհամմադ - 238
Հասան Կողբացի - 97
Հասան (հայր Գր. Ապիրատի) - 104, 105, 108, 109, 111-115, 129, 136-138, 143, 148
Հասան (հայր Պարսիմոյի) - 77
Հասան Մագիստրոս - 53, 136, 137, 223
Հասան (որդի Սմբատի) - 113, 114, 137
Հասան (պատարագ ստացող) - 83
Հասանյաններ (Ապիրատյաններ) - 47, 52, 56, 74, 101, 120, 126, 134, 136, 179, 234
Հարկեւոր - 97
Հարությունյան Վարազդատ - 251
Հեթում Կոռիկոսցի - 157
Հեթումյաններ - 101, 113
Հնդուբեկ (Հնտուպեկ) - 94
Հոհան Շիրակացի - 11, 19, 61
Հովհան - 163
Հովասափ կրոնավոր - 206, 207
Հովհաննես Ա Հոռոմոսի վանահայր - 193, 194, 199
Հովհաննես Անեցի - 176, 259
Հովհաննես Անիի եպս. - 94
Հովհաննես Բ Հոռոմոսի վանահայր - 194, 199
Հովհաննես Բջնիի եպս. - 142, 147, 149
Հովհաննես Գ Հոռոմոսի վանահայր - 197, 199
Հովհաննես գրիչ (Հառիճ) - 208-210
Հովհաննես գրիչ (Հոռոմոս) - 208
Հովհաննես Գ Օձնեցի կթղ. - 256, 257
Հովհաննես Դ Հոռոմոսի վանահայր - 197, 199
Հովհաննես Դ Ովայեցի կթղ. - 109
Հովհաննես Ե Դրասխանակերտցի կթղ. - 112, 237, 247
Հովհաննես Ե Հոռոմոսի վանահայր - 199
Հովհաննես Երզնկացի Պլուզ - 268, 272, 274
Հովհաննես Երզնկացի (14-րդ դ. կեսեր) - 274
Հովհաննես Կոզեռն - 30, 34, 119, 155, 187, 263
Հովհաննես Հառիճի վանահայր - 211, 212, 214, 215
Հովհաննես (ոմն Բագնայրում) - 98
Հովհաննես Ոսկեբերան - 177
Հովհաննես (որդի Առաքելի) - 96
Հովհաննես (որդի Թադեոսի) - 96
Հովհաննես քհ. (որդի Կոստանդի) -79
Հովհաննես Սանահինի վանահայր - 210
Հովհաննես Սարկավագ - 59, 131, 169-191, 201, 258, 259
Հովհաննես Սկիլիցես - 31, 155, 158, 159, 166, 273
Հովհաննես Սմբատ թագ. - 22, 23, 26-29, 31-40, 102, 109, 115, 116, 119, 120, 135, 136, 192, 201, 221, 222, 239, 261
Հովհաննես Սյունյաց եպս. - 17
Հովհաննես վրդ. (Հոռոմոս) - 197
Հովհաննես քարգործ - 249
Հովհաննիսյան Մ. - 220

Հովսեփ գրիչ - 86, 99
Հովսեփ (խաչեր քանդակող) - 94, 99
Հովսեփ Ընձեցի - 30
Հովսեփ Հոռոմոսի վանահայր - 194, 199
Հովսեփ վրդ. (Հաղբատ) - 100, 201
Հովսեփ փակակալ - 89, 91, 98, 99
Հովսեփյան Գարեգին - 138, 142-144, 148, 208
Հռիփսիմյան կույսեր - 19, 20
Հրահատ Կամսարական - 238
Հրանուշ - 76

Ղազար - 85
Ղազար (հայր Ալեքսի) - 92
Ղազար տանուտեր - 209
Ղազարոս (Ավետարանական) - 77
Ղարաչա ամիրա - 224, 225
Ղարիբ Մագիստրոս - 74, 75
Ղուկաս գրիչ - 208
Ղուլյան Արտակ - 12

Մաթեւոսյան Արտաշես - 43
Մաթուսաղա վրդ. - 257
Մախազ - 217, 218, 221
Մահմուդ - 180, 182
Մաղազ Խաթուն - 230, 231
Մամլան ամիրա - 60
Մամ խաթուն - 77
Մամախաթուն - 93
Մամիկոնյաններ - 238
Մամուզ - 83
Մամքան - 83
Մամքան (մայր Ապուղամրի) - 88, 89
Մանանդյան Հակոբ - 128
Մանասե գրիչ - 85, 99
Մանկասար (Սադունյան) - 197
Մանկիկ երեց - 89
Մանգտավագ Մշեցի - 86
Մանուել Ա Կոմնենոս կայսր - 53
Մանուել Բջնեցի - 110, 111
Մանուչե Անիի ամիրա - 19, 47, 50, 118, 126-128, 133, 223
Մառ Նիկողայոս - 262
Մատթեոս ավետարանիչ - 93
Մատթեոս Պողոսյան աբեղա - 200
Մատթեոս Ուռհայեցի - 10, 23, 26, 29-31, 35-37, 39, 43, 46, 47, 107, 108, 112, 114, 115, 119, 124, 132, 133, 150-156, 163, 164, 167, 184, 257, 258
Մարգարե գրիչ - 79, 99, 207, 229
Մարեմիկ - 137
Մարզպանյան Հովհ. - 58, 80
Մարիա թագուհի - 162
Մարիամ արքայադուստր - 66
Մարիամ (դուստր Ապիրատի) - 137
Մարիամ երեցկին - 89
Մարկոս գրիչ - 188
Մելիք Աշրաֆ - 233
Մելիք-Օհանջանյան Կարո - 169
Մելիքշահ - 48, 132, 180-187, 259
Մեհրեւան շինական - 91
Միխել (պատարագ ստացող) - 79
Միրումյան Կ. - 171
Միքայել է Դուկաս - 153, 157, 165
Միքայել (որդի Զորավարի) - 137
Միքայելյան Վարդգես - 262
Մլեհ իշխան - 136, 137
Մլքեր - 84
Մխիթար Այրիվանեցի - 59, 102, 105, 128, 169, 247
Մխիթար Անեցի - 11, 28, 102, 103,

105, 107, 115, 116, 126, 128, 132, 176, 182, 184, 201, 208, 224
Մխիթար Բագնայրեցի վրդ. - 72, 99
Մխիթար Գոշ - 178
Մխիթար «Թորոսոնց» - 96
Մխիթար Հոռոմոսի վանահայր - 194, 199
Մխիթար (նվիրատու Բագնայրի) - 69, 75
Մխիթար (նվիրատու Հառիճի) - 211
Մխիթար Չեչկանց - 82, 219, 228, 235
Մխիթար ռայիս - 97
Մխիթարիկ - 258
Մխիթարյանց Աբել - 193, 214
Մնացականյան Ասատուր - 178
Մորիկ կայսր - 217
Մովսես Բ Եղիվարդեցի կթղ. - 173
Մովսես եկեղեցապան - 238
Մովսես Խորենացի - 177
Մովսես քհ. (Արուճ) - 246
Մովսես քհ. (Բագնայր) - 80
Մովսիսյան Ա. - 172
Մրվան - 78
Մուքաֆյան Կլոդ - 46
Մուկաթլ - 73
Մունաջջիմ Բաշի - 117
Մուշեղյան Խաչատուր - 243
Մուրադյան Պարույր - 164, 213, 241, 242

Յայսմիկ - 97
Յովհաննես - տե՛ս Հովհաննես
Յորգա Ն. - 164, 165
Յուզբաշյան Կարեն - 23

Նաթանայել եպս. Հավուցքառեցի - 17, 108, 109, 229-233, 235
Ներսեհ Կամսարական - 237, 238
Ներսես Ա Մեծ կթղ. - 268, 274
Ներսես Գ Շինող կթղ. - 19
Ներսես Դ Շնորհալի կթղ. - 52, 93, 99, 122-124, 134, 137, 156, 256
Ներսես Ե Աշտարակեցի կթղ. - 198
Ներսես Լամբրոնացի - 53, 55, 125
Նիկեփոր Բրիեննիոս - 162
Նիկեփորիցես - 153
Նիկեփորոս Վոտանիատես - 153
Նունե - 131

Շադդադյաններ - 50, 51, 70, 126, 131, 172, 189, 200, 205, 214, 222-224, 226, 243, 248
Շահ Աբաս - 255
Շահ Արմեն - 225
Շահեր Կիրակոս - 97
Շահանդուխտ - 125
Շահխաթունյանց Հովհ. - 142
Շահնշահ Ա Զաքարյան - 81, 90, 91, 206, 213, 214
Շահնշահ Գ Զաքարյան - 94, 232, 233
Շահնշահ Շադդադյան - 248
Շապուհ Բագրատունի - 217
Շարափշահ - 82-84, 89, 90
Շեմս ադ-դին Իլդեգիզ - 244
Շերան (Շերանիկ) - 219, 228, 229, 235
Շիրաք (պարոն) - 273
Շրվանշահ Զաքարյան - 94, 231-233
Շուշան իշխանուհի - 238

Չամչյան Միքայել - 112, 152, 155
Չորտուանել - 137

Պահլավունիներ - 36, 37, 52, 62, 66, 67, 75, 101, 113, 120, 122, 126,

135, 141, 179, 203
Պարոն (որդի Գր. Խուցեսի) - 94, 95, 231
Պարոն (որդի Գ. Ներսիսանցի) - 93
Պարսիմո - 77
Պետրոս Ա Գետադարձ կթղ. - 21, 22, 25-27, 29, 30, 32-45, 47, 72, 73, 102, 120, 143, 176, 187, 258
Պետրոս Ա Հառիճի վանահայր - 201, 208, 214, 215
Պետրոս Ա Հոռոմոսի վանահայր - 55, 79, 194, 199
Պետրոս առաքյալ - 73
Պետրոս Բ Հառիճի վանահայր - 208, 215
Պետրոս Բ Հոռոմոսի վանահայր - 198, 199
Պետրոս (որդի Պողոսի) - 97
Պողոս առաքյալ - 73
Պողոս Բագնայրի վանահայր - 95, 98, 100
Պողոս երեց - 85
Պողոս (հայր Պետրոսի) - 97

Ջաջ - 197
Ջոջիկ - 163

Ռայբիկ գրիչ - 78, 99
Ռատ Երեւանցի - 96
Ռոմանոս Դ Դիոգենես - 153, 156-158, 161, 162
Ռուբինյաններ - 113

Սադունյաններ - 197
Սահակ Գ Ջորափորեցի կթղ. - 257
Սահակ Պարթեւ - 131
Սամվել Անեցի - 6, 10, 15, 19, 23, 36, 43, 50, 51, 58, 59, 108, 117, 123, 130, 150, 156, 169, 176, 180-187, 219-223, 229, 247, 259, 260
Սայաթ բեկ - 255
Սասնայ ավագ - 80, 81, 90-92,
Սասնայ կրտսեր - 90, 91
Սարա - 273
Սարգիս Ա Անիի եպս. - 56, 77, 78, 137
Սարգիս Ա Հոռոմոսի վանահայր - 194, 196, 199
Սարգիս Ա Սեւանցի կթղ. - 15-23, 25-27, 39, 104, 187, 257
Սարգիս Անեցի վրդ. - 18, 38, 258
Սարգիս ավագերեց Ծմակի - 82
Սարգիս Բ Անիի եպս. - 89, 91
Սարգիս Բ Հոռոմոսի վանահայր - 194, 199
Սարգիս Գ կթղ. - 196
Սարգիս գրիչ (Բագնայր) - 95, 99
Սարգիս կրոնավոր (Հոռոմոս) - 197
Սարգիս Կունդ - 176
Սարգիս Ճոն - 215
Սարգիս (հայր Տիկնացտիկնոջ) - 120
Սարգիս (միաբան Հառիճի) -
Սարգիս (նվիրատու Բագնայրի) - 97
Սարգիս Շնորհալի - 256
Սարգիս (որդի Գ. Ներսիսանցի) - 93
Սարգիս (որդի Խաչոտի) - 93
Սարգիս (որդի Վահրամ հեջուբի) - 211, 213
Սարգիս (սուրբ) - 86
Սարգիս վրդ. (Հոռոմոս) - 197
Սարգիս Տոնկաց Անեցի - 261
Սարգիսյան Ներսես - 59, 71, 76, 79,

97, 197
Սարգսյան Գագիկ - 104
Սարի - 28, 115, 116
Սարկավագ (նվիրատու Բագնայրի) - 96
Սարկավագ (Ս. Անեցու որդի) - 260
Սարչուկ - 182
Սեդա Պահլավունի - 65, 66, 70, 72, 119
Սեդա (Պարսիմոյի ազգական) - 77
Սենեքերիմ Սյունիքի թագ. - 127, 128, 131, 132
Սեն Մարտեն - 140
Սերենոս (Սերինոս) - 222
Սերոբ (Երեւանցի) - 96
Սիմեոն Ա Բագնայրի վանահայր - 76, 78, 84, 98
Սիմեոն Բ Բագնայրի վանահայր - 82-84, 92, 98
Սիմեոն գրիչ - 88, 89, 90, 92, 99
Սիմեոն Երեւանցի կթղ. - 37, 139
Սիմեոն երեց - 97
Սիոն Բավոնեցի կթղ. - 247
Սիսամ - 85
Սիրվարդ - 79
Սմբատ Ա Բագրատունի թագ. - 11, 23, 255
Սմբատ Բ Բագրատունի թագ. - 11, 12, 14, 15, 19, 23, 239, 240, 243, 244, 254
Սմբատ Բագրատունի (9-րդ. դ.) - 239
Սմբատ (հայր Հասանի) - 113, 114, 137
Սմբատ Մագիստրոս - 20, 58-67, 123
Սմբատ պատրիկ - 66
Սմբատ պարոն - 246
Սմբատ Սպարապետ - 113, 116, 151
Սողոմոն Հոռոմոսի վանահայր - 194, 199
Սոս - 78
Սոսթենես Մարմաշենի վանահայր - 140, 145, 240
Սոսթենես (միաբան Հառիճի) - 209
Սոսթենես քհ. - 245
Ստեփանոս Աղվանից կթղ. - 48
Ստեփանոս Ա Հոռոմոսի վանահայր - 194, 195, 199
Ստեփանոս Բ Հոռոմոսի վանահայր - 194, 199
Ստեփանոս Գ Սեւանցի կթղ. - 13, 14
Ստեփանոս Բագնայրի վանահայր - 73, 98
Ստեփանոս գրիչ (Բագնայր) - 93, 99
Ստեփանոս Իմաստասեր - 260
Ստեփանոս Մանուկ - 256
Ստեփանոս Տարոնեցի (Ասողիկ) - 11, 12, 14, 15, 17, 18, 23, 60-62, 187, 192, 247
Ստեփանոս Օրբելյան - 13, 17, 102, 117, 128, 131, 132, 148, 149, 257
Սուլթան Անիի ամիրա - 226, 248, 251

Վահան Ա Սյունեցի կթղ. - 12-14
Վահրամ Զաքարյան - 231
Վահրամ (հայր Սմբատ Մագիստրոսի) 60-62, 65, 66
Վահրամ հեջուբ (ամիրա՞) - 211-214

Վահրամ (հորեղբ. Ն. Շնորհալու) - 122, 125
Վահրամ Չեչկանց - 82, 83
Վահրամ Պահլավունի - 20, 36, 60-65, 74, 75, 89, 103, 136, 140
Վահրամ (որդի Գրիգոր Ա եպս.-ի) - 88
Վաղթանգ իշխան - 240
Վանական եպս. - 140, 141
Վանենի - 137
Վանինե - 137
Վասակ, Անտիոքի դուքս - 136, 151, 162
Վասակ (հորեղբ. Ն. Շնորհալու) - 122, 125, 137
Վասակ Պահլավունի - 37, 65, 109, 121, 122, 139, 140
Վասակ (որդի Գր. Ապիրատի) - 47, 113, 116, 118, 126-130, 133, 137, 139, 222, 223
Վասակ (որդի Խոռասի) - 81
Վասակ Սյունիքի թագ. - 17
Վասիլ Բ կայսր - 17, 26, 31, 32, 33, 105, 110,
Վասիլ (եղբայր Գրիգոր Գ-ի) - 50, 125, 137
Վասիլ (որդի Զորավարի) - 137
Վասիլ (պանդոկատեր Անիում) - 73
Վարդ - 84
Վարդաշահ Աշնակցի - 97
Վարդե տիկին - 92
Վարդան Այգեկցի - 178
Վարդան Արեւելցի - 9, 11, 19, 21, 23, 28, 31, 102, 126-128, 131, 150, 152, 163, 164, 167, 169, 218, 225-228
Վարդան Հառիճի վանահայր - 207, 215
Վարդան Սանահնեցի - 258
Վարդան Օձնեցի վրդ. - 195, 199
Վարդանյան Ռաֆիկ - 43
Վարդանյան Վրեժ - 62, 124
Վարդառյուծ - 85
Վարդերես - 209
Վեստ Սարգիս - 36, 118-120, 136, 137, 220-223

Տալիթիա տիկին - 79
Տեր-Ղեւոնդյան Արամ - 117
Տեր-Միքելյան Արշակ - 150
Տեր-Պետրոսյան Լեւոն - 25, 113, 150, 162
Տիգրան Բ թագ. - 273
Տիգրան Հոնենց - 88, 92, 246
Տիկին - 93
Տիկնացտիկին - 118, 119, 137
Տիկնացտիկին (դուստր Սարգսի) - 120
Տիրամայր - 79
Տիրան թագ. - 265
Տիրանց - 85
Տիրանուն Կապանեցի վրդ. - 18, 258
Տոկարսկի Նիկոլայ - 252
Տրդատ ճարտարապետ - 14, 19
Տրդատ քհ. - 245
Տուղրիլ Բ - 182
Տուղրիլ բեկ - 180, 182
Տուտի - 240

Ուխտատուր - 240

Փառանց - 82, 83
Փատլուն Անիի ամիրա - 51
Փատլուն Գանձակի ամիրա - 128
Փիլարտոս Վարաժնունի - 164
Փիլոն Ալեքսանդրացի - 177

Քասունի Երվանդ - 154, 156
Քատուրա - 265, 273
Քրիստափոր (Թալին) - 249
Քրիստափոր (միաբան Հառիճի) - 209
Քրիստափոր վրդ. - 85, 86, 98
Քրիստոս - 18, 25, 34, 39, 66, 74, 77, 80, 86, 89, 94, 111, 138, 141, 185, 191, 201, 212, 215, 230, 244, 249, 268, 270
Քույրիկ - 97

Օմայաններ - 245
Օշին իշխան - 125
Օրմանյան Մաղաքիա - 13, 20, 22, 39, 43, 52, 55, 173, 192, 198, 256

Տեղանուններ

Ագարակ - 96, 97
Ադանա - 165
Ախուրյան գետ - 19, 96, 216-218, 255
Ակին - 97
Ակնագյուղ - 196
Աղբրի ձոր (Արուճ) - 246
Աղթամար - 12, 14, 49
Աղի աղբյուր - 92
Աղսարայ - 271
Աղվանք - 48, 54
Ամանոս - 159
Ամբերդ - 204, 223
Այգեստան (Վան) - 250
Այրարատ - 219
Այրիվանք - 196
Անդրիուն բերդ - 151, 152, 157
Անի - 5, 6, 9-17, 19-21 եւ այլուր
Անի-Շիրակ - 70, 166, 200, 274
Անիի Աբուղամրենց Ս. Գրիգոր եկ. - 95
Անիի Բեխենց վանք - 79, 207, 229
Անիի Մայր տաճար (Կաթողիկե) - 12, 14, 15, 19, 20, 25, 36, 47, 50, 51, 68, 184, 189, 201, 241, 244, 268
Անիի Ներքին բերդ - 222
Անիի Ս. Առաքելոց եկ. - 53, 63, 75,
Անիի Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկ. - 19
Անիի Ս. Գր. Լուսավորիչ վանք (Տ. Հոնենցի) - 88, 246
Անիի Ս. Հռիփսիմյանց եկ. - 19
Անիի Ս. Սարգիս եկ. - 70
Անիի Ս. Փրկչի եկ. - 245
Անիի Փոքր Կաթողիկե - 11, 12
Անիի «Քահանենց» եկ. - 95, 96
Անիում պարսպի դռներ.
Ավագ դուռ - 16
Գաղտ դուռ - 84
Կարուց դուռ - 96
Ջորդուռ - 96
Անիում տներ, կրպակներ եւ այլն.
Թորոսանց կուղպակ - 82
«Հատաւրհնիկ» ջրաղաց - 96
Պիչարենց հյուրատուն - 87
Սեւքթենց տուն - 83
Վասիլի փնդուկ - 73
Քարգզեմա տներ - 82
Անիում փողոցներ.
Բազազնոց - 77, 92
Նալպանդնոց - 84
Սառաճ փողոց - 83
Ս. Առաքելոցի զուկակ - 75, 76
Փողոցկտեր - 77, 82
Անտառուտ - 204
Անտիոք - 54, 128, 150-156
Անտիոք (Իսավրիայի) - 153, 156, 163
Աշնակ - 85, 90, 91, 97
Աշոտոնց այգի - 78
Առան - 128
Առիճք - 97
Աստրախան - 271
Արագածոտն - 96, 204, 256
Արագածոտնի Ս. Աստվածածին վ. - 257
Արարատ լեռ - 252
Արարատյան դաշտ - 160, 242
Արարատյան նահանգ - 149, 255
Արգինա - 12, 14, 15, 172, 257

Արգինայի Կաթողիկե եկ. - 14
Արեն - 247, 248
Արզականի Ս. Ստեփանոս եկ. - 104
Արծն - 39, 42, 236, 258
Արճեշ - 229
Արշարունիք - 14, 219, 256
Արջո Առիճ լեռ - 58
Արջո Առիճ վանք - 5, 71, 75, 77, 79, 100, 216, 220
Արուճ - 6, 202, 236-247, 251-255
Արուճի Կաթողիկե եկ. - 237-240, 254, 255
Աքերման - 272, 275

Բագավան - 58
Բագարան - 9, 58, 96
Բագնայր - 5, 6, 20, 58-62, 64-69,71-100, 119, 216
Բագնայրի Ս. Աստվածածին եկ. - 67-69, 73, 76, 79, 82, 83, 85, 87, 89-94,
Բագնայրի Ս. Գրիգոր եկ. - 70, 74
Բագնայրի Ս. Երրորդություն եկ. - 71, 79, 80
Բագնայրի Ս. Սիոն - 80
Բագրեւանդ - 257
Բասեն - 107
Բերդի գլուխ -104
Բլար Խաչկա (այգի Արուճում) - 245
Բյուզանդիա - 27, 33, 40, 106, 150, 167, 196, 255
Բջնի - 35, 38, 109, 120, 139, 140-143, 145, 146, 148, 149
Բուժական (Բուժան) - 140, 141, 146

Գաբեղյանք - 219
Գայլաձոր (Ներքին Թալին) - 251
Գայլառիճ գյուղ - 79
Գանձակ - 128, 204
Գարդման - 238
Գետիկ - 206
Գետոց վանք - 109
Գլիձոր - 96
Գյումրի - 200, 206
Գողթ (Կոխթ) գյուղ - 109

Դաշտադեմ - տե՛ս Ներքին Թալին
Դարոյնք - 238
Դվին - 10, 15, 28, 40, 41, 64, 109, 115, 117, 118, 135, 125, 225, 226, 227, 236, 242, 243, 247, 255
Դրուց աշխարհ - 27, 28, 102, 115

Եգիպտոս (Մսր) - 37
Եդեսիա - 50, 151, 155
Երասխ (Արաքս) - 76, 97, 252
Երասխաձոր - 219, 225, 227, 256
Երեւան - 105, 109, 206, 246, 251
Երզնկա - 274
Երվանդաշատ - տե՛ս Մարմետ
Երուսաղեմ - 54

Զեյթուն - 228
Զոր - 252, 253
Զվարթնոց - 19

Էջմիածին - տե՛ս Վաղարշապատ
Էջմիածնի տաճար - 20

Թալին - 6, 102, 103, 116, 206, 236, 237, 239-243, 247-255
Թալինի Կաթողիկե եկ. - 238-240, 254
Թալինի Ս. Աստվածածին եկ. - 237

Թամիր - 96, 97
Թավբլուր - 43, 45, 46
Թեղենյաց այգի - 93
Թեղենիս - 104
Թեոդոսուպոլիս - 25
Թլպաշար - 51
Թրակիա (Ռոդոսթո) - 262, 265

Իկոնիա - 51

Լամբրոն - 165
Լեհաստան - 271
Լմբատավանք - 53, 204
Լոռի - 48, 213

Խաչեր - 104
«Խաչին մարգ» հողամաս - 83
Խաչկանց (այգի Արուճում) - 246
Խծկոնք - 5, 119, 123, 216, 220, 221, 260
Խծկոնքի Ս. Սարգիս եկ. - 220, 221

Ծամնդավ - 46
Ծաղկնուց գավառ - 140, 146
Ծառաքար (Մաղասբերդ) - 6, 53, 119, 216-235, 260
Ծառաքարի Ս. Գեւորգ եկ. - 220, 221
Ծառաքարի Ս. Հովհաննես եկ. - 220
Ծառաքարի Ս. Սեքենոս եկ. - 221, 222
Ծմբո - 59, 62, 64
Ծովք ամրոց - 50, 122, 134
Ծմակ գյուղ - 82

Կաղզվան - 133
Կաղղուց գյուղ - 88, 89
Կամրջաձոր - 21, 169
Կապան - 128, 131
Կասպից ծով - 271
Կարին - 42
Կարմիր վանք (Շիրակ) - 196
Կարմիր վանք (Քեսուն) - 48-50, 256
Կարնո դաշտ - 25
Կարս - 9, 10, 11, 66
Կաֆա - 262-265, 272, 273
Կեչառիս - 20, 67, 103, 105, 107-109, 118, 120, 121, 123, 133, 134, 138-142, 145-149
Կեչառիսի Ս. Գրիգոր եկ. - 104, 135, 138, 140, 141,
Կեչառիսի Ս. Նշան - 141
Կեչրոր - 218,224, 225, 234
Կիլիկիա - 50, 52-55, 95, 125, 150, 152, 158, 160, 163, 165
Կոշ - 204, 239, 246
Կոշավանք - 239
Կոստանդեանց (այգի Թալինում) - 239
Կոստանդնուպոլիս - 22, 24, 38-44, 160, 161, 198, 265, 265
Կովարած (այգի Արուճում) - 245
Կոտայք - 104, 109
Կումիրի - տե՛ս Գյումրի

Հալեպ - 158-160
Հաղբատ - 47, 48, 100, 114, 126, 129, 169-173,183, 189-191, 196, 205, 207, 223, 229
Հայաստան - 5, 15, 26, 42, 45, 46, 49, 52, 53, 55, 57, 87, 99, 105, 120, 121, 123, 127, 138, 172, 173, 192, 200, 203, 205, 219, 221, 236, 243, 250, 251, 255, 265, 265, 273
Հայոց Տուն - 28, 37, 46, 48, 114, 130, 133, 188

Հառիճ - 5, 6, 79, 200-214, 246
Հառիճի Կաթողիկե (Ս. Աստվածածին) եկ. - 200, 202-204, 208
Հառիճի Ս. Գրիգոր եկ. - 200, 202, 204, 208, 214
Հավուց թառ - 20, 108, 110, 111, 114, 120, 123, 134, 229, 232, 235
Հավուց թառի Կաթողիկե եկ. - 108, 109, 135
Հարունիե - 159
Հարունիի դաշտ - 157, 159-161
Հնդկաստան - 244, 254
Հովհաննավանք - 233
Հռոմոս - 5, 6, 27, 55, 56, 74, 79, 90, 92, 99, 100, 192-199, 212, 213, 216, 246
Հռոմոսի Ս. Գեւորգ եկ. - 192, 193
Հռոմոսի Ս. Շողակաթ եկ. - 192
Հռոմոսի Ս. Հովհաննես եկ. - 192, 193, 212
Հռոմ - 140, 142
Հռոմկլա - 52, 53, 55, 123
Հորդանան - 273

Ձորավանք - 34

Ղրիմ - 262, 271

Ճլուտ (մարգ) - 83

Մագուաց գյուղ - 80
Մազոտն (այգի Արուճում) - 246
Մաղասբերդ - տե՛ս Ծառաքար
Մաղարդավանք - 135
Մանազկերտ - 153, 156, 161
Մաստարա - 22
Մարաշ - 152, 159
Մարմաշեն - 5, 20, 37, 60-62, 75, 103, 121, 123, 136, 140, 141, 145
Մարմետ (Երվանդաշատ) - 76, 96, 97
Մեծ Հայք - 28
Միջագետք Հայոց - 38, 121, 136, 139
Մսիս - 158, 165
Մրեն - 5, 38, 216, 246, 248
Մուլուքի հող - 93

Նային ք. - 270, 274
Ներքին Թալին - 247-251
Ներքին Թալինի Ս. Սարգիս եկ. - 249
Նիկիա - 141
Նշենիկ - 151, 154
Նորաղբույրիկ - 89
Նորավանք - 88, 148
Նորս - 89, 90
Նփրկերտ - 106

Շահկան հող - 97
Շամիրանաձոր (Արուճ) - 246
Շատիկ - 24
Շիրակ - 7, 11, 12, 14, 21, 47, 94, 132, 133, 150, 163, 166, 200, 202, 203-207, 213, 219, 236, 242, 245, 265, 273
Շիրակի Տուն - 31, 130, 151, 167
Շիրակվան - 265
Շիրակավան (Երազգավորս) - 9, 11, 12, 83
Շլիկ (այգի Արուճում) - 245
Շնջանկ - 82
Շոկաթն - 140, 147

Ովա գյուղ - 109

Պաղեստին - 265
Պապեռոն - 165
Պարսկաստան - 24, 166, 254

Ջրձորիկ վանք - 92
Ջուղա - 272, 274

Սաղար (այգի Արուճում) - 245
Սամուսատ - 41
Սանահին - 35, 36, 180, 190, 205, 209, 210, 240
Սանկտ Պետերբուրգ - 197
Սասուն - 247
Սարդարապատ - 160
Սարվանդիքար (Սարվանդիկոն) -158, 159
Սեբաստիա - 33, 43-45
Սելեւկիայի լեռներ - 158
Սեւ լեռ - 156, 158, 159
Սեւ ծով - 31, 255
Սեւ քար բերդ - 42
Սեւանի վանք - 13, 15, 34, 119, 155
Սիս - 52, 54, 271
Սյունիք - 17, 54, 127, 128, 131, 132, 148, 256, 257
Սուրմառի - 222

Վալտոլիվադի - 158
Վահանավանք - 132
Վաղարշապատ (Էջմիածին) - 15, 19, 20, 193, 200, 232, 242, 262
Վան - 250, 271
Վանքաձոր (Արուճ) - 246
Վասպուրական - 13, 30, 34, 35, 49, 140, 142, 146
Վարաժնունիք - 109
Վարդենց նորք այգի - 77, 85, 97
Վերի այգի (Աշնակ) - 91
Վերին թաղ (Արուճ) - 246
Վրաստան - 24, 50, 166
Վրկանից աշխարհ - 132, 133

Տայք - 30, 31
Տաշիր - 17
Տարոն - 30, 121, 139, 142
Տարսոն - 54, 160, 165
Տարսոնի դաշտ - 158, 159
Տափկենց (այգի Բագարանում) - 96
Տեկոր - 5, 107, 216
Տիգնիս - 91,
Տլուք - 50
Տրապիզոն - 30, 31, 33, 228
Տփղիս - 54

Ուխտիք (Օլթի) - 225
Ուղտանուտ այգի - 97
Ուռընկար - 229
Ուռհա - տե՛ս Եդեսիա
Ուրծ - 94

Փառիսոս - 169, 190
Փարպի - 204
Փոքր Ասիա - 152
Փոքր Հայք - 45

Քաղին (Քաղենի) - 247, 248
Քաղկեդոն - 45
Քեղի (Գեղի) - 20, 108, 109, 112, 114, 135
Քեսուն - 48-50, 134, 175
Քրիստափորի վանք - 248, 249

Օշական - 77, 78, 96, 97, 246

Ֆրանկ-Հիսար - 271

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5

Անին մայրաքաղաք եւ կաթողիկոսանիստ 9

Հազարամյա Բագնայրի վանքը 58

Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում 101

Գրիգոր Մագիստրոս Պահլավունու արձանագրությունը Կեչառիսում 138

Գրիգոր Պիխտ Շիրակացի 150

Հովհաննես Սարկավագի գործունեությունն Անիում 169

Հոռոմոսի վանահայրերը 192

Հառիճի վանքի պատմությունից 200

Անի քաղաքը եւ Ծառաքար-Մաղասբերդը 11-14-րդ դդ. 216

Դվին-Անի ճանապարհի Արուճ եւ Թալին հանգրվանները 236

«Իմաստասէր» պատվանունն Անիում 256

Աբրահամ Կրետացու «Անի քաղաքի պատմությունը» 262

Անձնանուններ 276

Տեղանուններ 289